Ա. Դյումա

Կոմս Մօնթէ-Քրիստօ

Հ. I, II, III րդ

Կ. Պոլիս 1910 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

84
Դ-60

20 APR 20
19 NOV 2

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ

ԿՈՄՍ
ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՕ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

PRINTED IN TURKEY

Ա. ՆԱՋԷՃԵԱՆ
ԳՐԱՎԱՃԱՌ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Կ. ՊՈԼԻՍ

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Յ. Կ. ԱՇՃԵԱՆ
1910

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ
HARRY G. BERBERIAN
837 WASHINGTON ST.
BOSTON MASS.

5702

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
№ 46

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
64619-62

ԿՈՄՍ
ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՕ

Ա. ԴԻՒՄԱ

«ՓԱՐԱՒՈՆ» ՆԱՒՈՒՆ ՄԱՐՍԻԼԻԱ ԺԱՄԱՆՈՒՄԸ

1815 փետրուար 24ին, Նօթր-Տամ-տը-լա-Կարտի պահնորդը Փարաւոն անուն եռակայմ նաւուն ժամանումը նշան տուաւ, որ Իզմիրէն, Թրիէսթէէն ու Նափոլիէն կուգար: Սովորութեան համաձայն, ծովեզերքի նաւուղիղ մը անմիջապէս նաւահանգիստէն մեկնեցաւ, Իֆ դղեակին քովէն անցաւ, և գնաց նաւուն մօտ հասաւ Մորժիոն հրուանդանին ու Րիոն կղզիին միջեւ: Արդէն ըստ սովորութեան, Ս. Յովհաննու սարաւանդը հետաքրքիր մարդերով լեցուած էր. որովհետեւ հետաքրքրութիւն մը առաջ կուգայ ամէն անգամ որ Մարսիլիա նաւ մը կը հասնի, մանաւանդ երբ այդ նաւը, Փարաւոնի պէս Փոկէայի նաւագործարաններուն մէջ շինուած, սարքուած և յարդարուած քաղաքացի նաւատէրի մը կը պատկանէր:

Այդ միջոցին նաւը կը յառաջանար. յաջողութեամբ անցած էր այն նեղուցէն, զոր հրաբուխի քանի մը ցնցումներ բա-

ցած են Քալասարէնեա կղզիին ու Եարոս կղզիին միջեւ. Փոմէկի առջեւէն հեռացեր էր, ու երեք միջնառագաստներովը ու յառաջակողմի և յետսակողմի մէյմէկ առագաստներովը կը յառաջանար, բայց այնպիսի ծանր և տխուր գնացքով մը, որ հետաքրքիր մարդիկ անոր չարագուշակ շարժումը տեսնելով իրարու կը հարցնէին թէ արդեօք ինչ արկած պատահած էր նաւուն մէջ: Սակայն նաւարկութեան հմուտ անձեր հասկցան որ եթէ արկած մը պատահած իսկ ըլլար, նաւուն գլխուն եկած չէր այդ արկածը, որովհետեւ կամաց բայց աղէկ կառավարուած նաւու մը ամէն հանգամանքներովը կը յառաջանար ան: Խարիսխ նետելու տեղը պատրաստ էր, ցռկակայմին չուանները քակուած էին, ու նաւուղիղին քովը, որ կը պատրաստուէր Փարաւոնը նեղ կիրճէն Մարսիլիայի նաւահանգիստը մտցնելու, ճարպիկ ու գործունեայ նայուածքով երիտասարդ մը կար, որ նաւուն ամէն մէկ շարժմանը ուշ կը դնէր և նաւուղիղին ամէն մէկ հրամանը կը կրկնէր:

Բազմութեան մէջ տարածուած անորոշ տխրութիւնը մասնաւորապէս ազդեց դիտելու համար հոն կեցողներէն մէկուն վրայ, որ նաւուն նաւահանգիստ մտնելուն չսպասելով՝ մակոյկի մը մէջ նետուեցաւ ու հրամայեց նաւավարին որ դէպ ի Փարաւոնը տանի և յիշեալ նաւուն մօտ հասաւ այն ծոցին դիմաց, որուն մէջ նաւախումբ մը կար:

Երիտասարդ նաւաստին երբ տեսաւ այդ մարդուն գալը, թողուց իր գործը, ու գլխարկը ձեռքը բռնած, նաւուն պատուարին կռթընեցաւ: Քսանըհինգ տարեկան, բարձրահասակ, դիւրաշարժ, գեղեցիկ սեւ աչքերով ու սեւ մազերով մարդ մըն էր, և իր անձին վրայ կը տեսնուէր այն հանդարտութիւնը և արիութիւնը, որ մանկութենէն վտանգի դէմ կռուելու սովորած մարդերուն բնական է:

—Ո՛հ, Տանթէս, դո՞ւն ես, գոչեց մարդը մակոյկին մէջէն: Ի՞նչ պատահեցաւ, ինչո՞ւ այդպէս տրտմութիւն մը պատեր է բոլոր նաւուդ վրայ:

—Մեծ աղէտ մը պատահեցաւ, Պ. Մորէլ, պատասխանեց

երիտասարդը, մեծ աղէտ մը, մանաւանդ ինծի համար: Չիվիթա-Վէքքիային բացերը մեր ազնիւ Լըքլէր նաւապետը կորսընցուցինք:

—Նաւուն բեռը ի՞նչ եղաւ, հարցուց նաւատէրը փութով:

—Անվտանգ հասաւ, Պ. Մորէլ, ու կարծեմ որ գոհ պիտի ըլլաք այդ մասին: Բայց խեղճ Լըքլէր նաւապետը...:

—Արդեօք ի՞նչ պատահեցաւ, հարցուց նաւատէրը, որուն սիրտը յայտնապէս հանգստացած կ'երեւէր, ի՞նչ պատահեցաւ այդ ազնիւ նաւապետին:

—Մեռաւ:

—Ի՞նչպէս, ծո՞վը ինկաւ:

—Ո՛չ, պարոն, ուղեղային տենդէ մեռաւ, սոսկալի հիւանդութիւն մը քաշելէն յետոյ:

Ապա իր մարդիկներուն դառնալով,

—Օ՜ն, ըսաւ, իւրաքանչիւր ոք իր գործին նայի. խարիսխը նետելու պատրաստուեցէ՛ք:

Նաւաստիները հնազանդեցան. նոյն վայրկեանին՝ նաւուն մէջ գտնուող ութը կամ տասը նաւաստիները նետուեցան, ոմանք առագաստակալներուն, ոմանք կայմերուն և ուրիշներ չուաններուն վրայ:

Երիտասարդ նաւապետը հարեւանցիօրէն դիտեց գործի ձեռնարկելնին, ու տեսնելով որ իր հրամանները կը կատարուէին, դարձաւ իր խօսակցին մօտ:

—Ըսէ՛, նայիմ ի՞նչպէս պատահեցաւ այդ դիպուածը, ըսաւ նաւատէրը՝ շարունակելով խօսքը այն տեղէն ուր երիտասարդ նաւապետը ձգած էր:

—Ո՜հ, բոլորովին անսպասելի կերպով մը: Նաւահանգիստին հրամանատարին հետ երկար ատեն խօսակցելէն յետոյ, Լըքլէր նաւապետը բոլորովին անհանգիստ ըլլալով Նէապոլիսէն մեկնեցաւ, քանըչորս ժամ ետքը տենդով պառկեցաւ, ու երեք օրուան մէջ մեռաւ: Սովորական յուղարկաւորութիւնը կատարեցինք, ու վայելուչ առկախ մահիճի մը մէջ փաթթուած կը հանգչի Էլ Ճիլիօ կղզիին բացերը, ոտքերուն ու

գլխին վրայ մէյմէկ խոշոր Թնդանօթի ռումբով. անոր պատուոյ խաչը ու սուրը այրի կնոջը կը տանինք։ Ի՛նչ օգուտ, շարունակեց երիտասարդը տխուր ժպիտով մը, տասը տարի Անգլիացիներուն հետ պատերազմիլ, ու յետոյ գալ մեռնիլ ուրիշներուն պէս իր անկողնին մէջ։

—Ա՜խ, ի՛նչ կրնանք ընել, Պ. Էտմոն, ըսաւ նաւատէրը, որ քիչ քիչ մխիթարուած կ'երեւէր, ամէնքս ալ մահկանացու ենք, ու պէտք է որ հիները նորերուն տեղ բանան. առանց ատոր՝ յառաջադիմութիւն չըլլար. ու քանի որ զիս կ'ապահովցնես թէ բեռները...։

—Շատ աղէկ վիճակի մէջ են, Պ. Մորէլ, հաւատա՛ ինծի։ Այս ճամբորդութեան շահը խորհուրդ կուտամ քեզի, քսանըհինգ հազար ֆրանքի չփոխել։

Այս միջոցին Ռօնտ աշտարակին առջեւէն կ'անցնէին։

—Միջնակայմին առջեւի ու ետեւի առագաստները ամփոփելու պատրաստուեցէ՛ք, պոռաց երիտասարդ նաւապետը։

Հրամանը այնչափ շուտով կատարուեցաւ, որչափ կրնայ ըլլալ մարտանաւու մը մէջ։

—Վա՛ր առէք ու ամէն կողմէն ամփոփեցէ՛ք։

Վերջին հրամանին վրայ՝ բոլոր առագաստները իջան, ու նաւը գրեթէ անզգալի կերպով կը յառաջանար՝ միայն առագաստներուն տուած ուժովը։

—Հիմա, Պ. Մորէլ, եթէ կ'ուզես վեր ելլել, ըսաւ Տանթէս նաւատէրին անհամբերութիւնը տեսնելով, ահա քու հաշուակալ գրագիրդ Պ. Տանկլար իր սենեակէն դուրս կ'ելլէ, և ուզած բոլոր տեղեկութիւններդ կուտայ։ Իսկ ես խարիսխը նետուելուն վրայ պիտի հսկեմ, և սուգի նշան պարզել պիտի տամ։

Առանց ատեն անցընելու, նաւատէրը բռնեց Տանթէսին իրեն նետած չուանը, ու այնպիսի ճարպիկութեամբ մը որ ծովային մարդու մը պատիւ կը բերէր, նաւուն կողին վրայ գամուող հաստատուն սանդուխէն վեր ելաւ. իսկ Տանդէս նորէն իր տեղը դառնալով, թողուց որ խօսակցի Տանկլարին հետ, որ իր սենեակէն ելլելով նաւատէրին կը մօտենար։

Այդ նորեկը քսանըհինգ կամ քսանըվեց տարեկան մարդ մըն էր, որ իրմէ մեծերուն առջեւ տխուր ու յարգալից կ'երեւէր, և իր հրամանին տակ եղողներուն հետ յանդգնօրէն կը վարուէր. ասկէ զատ հաշուակալ-գործակալի պաշտօնը ունենալով՝ (որ ատելի անուն մըն է նաւաստիներուն մէջ) ընդհանրապէս զինքը աղէկ աչքով չէին դիտեր նաւուն մէջ եղողները. մինչ ընդհակառակը՝ Տանթէս ամէնուն սիրելի եղած էր։

—Պ. Մորէլ, ըսաւ Տանկլար, կարծեմ գիտես մեզի պատահած ձախորդութիւնը, այնպէս չէ՞։

—Այո՛, այո՛, խեղճ Լըքլէր նաւապետը. ի՛նչ ազնիւ ու առաքինի մարդ մըն էր։

—Նաեւ քաջահմուտ նաւապետ մըն էր, երկինքի ու ջուրի մէջտեղը անցուցած իր կեանքը, ինչպէս կը վայելէ այնպիսի մարդու մը, որուն յանձնուած է համբաւաւոր վաճառատան մը գործերը, ինչպէս է Մորէլի և Որդւոց վաճառատունը, պատասխանեց Տանկլար։

—Բայց, Տանկլա՛ր, ըսաւ նաւատէրը, Տանթէսի վրայ դարձնելով իր աչքերը, որ խարիսխ նետելու տեղը կը դիտէր, ինծի այնպէս կը թուի որ արհեստը աղէկ սորվելու համար պէտք չկայ այնքան հին նաւաստի ըլլալու ի՛նչպէս կ'ըսես։ Ահա մեր Էտմոն բարեկամը իր պաշտօնը կը կատարէ, և կարծեմ բնաւ պէտք չզգար խորհուրդ հարցնելու մէկուն։

—Այո՛, ըսաւ Տանկլար Տանթէսին նայելով չեղակի ու ատելութեամբ լցուա՛ծ. այո՛, դեռ երիտասարդ է, և այդ բանը ամէն տարակոյս կը ցրէ։ Նաւապետը մեռնելուն պէս՝ առանց մէկու մը հարցնելու՝ նաւուն կառավարութիւնը ձեռք առաւ. մէկ ու կէս օր կորսնցուցինք Էլպա կղզին՝ փոխանակ ուղղակի Մարսիլիա դառնալու։

—Նաւուն կառավարութիւնը առնելը, ըսաւ նաւատէրը, իր պարտքն էր իբր հանդուցեալ նաւապետին երկրորդը. բայց Էլպա կղզին մէկ ու կէս օր կորսնցնելուն համար յանցաւոր է, եթէ նաւը որ և է նորոգութեան կարօտ չէր։

—Նաւը ինծի պէս աղէկ վիճակի մէջ էր, ինչպէս կը փափաքիմ որ ձերն ալ նոյնպէս ըլլայ, հետեւաբար այն մէկ ու կէս օրը իր հաճոյքին համար կորսուեցաւ բոլորովին, որպէս զի ցամաք ելլէ. ահա պատճառը:

—Տանթէս, ըսաւ նաւատէրը դէպ ի երիտասարդը դառնալով, հո՛ս եկու:

—Ներեցէ՛ք, պարոն, ըսաւ Տանթէս, հիմա կու գամ: Յետոյ նաւաստիներուն դառնալով, խարիսխը նետեցէ՛ք, ըսաւ:

Անմիջապէս խարիսխը ձգեցին, ու շղթան շառաչիւնով մը իջաւ: Տանթէս իր տեղը կեցաւ (թէեւ նաւուղիղը ներկայ էր), մինչեւ որ այս վերջին գործը աւարտեց: Յետոյ ըսաւ.

—Կայմին մէջտեղը իջեցուցէ՛ք եռագոյն դրօշակը, մեծ դրօշակը ամփոփած թողուցէք, ու առագաստակալները՝ խաչաձեւ:

—Կը տեսնէ՞ք, ըսաւ Տանկլար, ինքզինքը նաւապետ տեղ դրեր է:

—Իրօք այդպէս է, ըսաւ նաւատէրը:

—Այո՛, բայց դեռ զինքը հաստատած չէք այդ պաշտօնին մէջ:

—Է՜հ, ինչո՞ւ անոր չյանձնենք այս գործը, ըսաւ նաւատէրը. գիտեմ որ երիտասարդ է, բայց ինծի այնպէս կը թուի որ այդ գործին յարմար է և քաջավարժ:

Այդ խօսքին վրայ՝ Տանկլարին դէմը նետեց:

—Ներեցէք, Պ. Մորէլ, ըսաւ Տանթէս մօտենալով. հիմայ որ նաւը խարսխած է, բոլորովին ձեր տրամադրութեան ներքեւ կը գտնուիմ. կարծեմ զիս կանչեցիք:

Տանկլար ետ քաշուեցաւ քայլ մը:

—Կ՚ուզէի քեզի հարցնել թէ ի՞նչ պատճառով Էլպա կղզին կեցաք:

—Չեմ գիտեր, պարոն, բայց Լըքլէր նաւապետին վերջին պատուէրը կատարելու համար էր. ան մեռնելու ատենը ծրար մը տուաւ որպէս զի Պերթրան մարաջախտին տամ:

—Հապա, ուրեմն տեսա՞ր զայն:

—Ո՞վ:

—Մեծ մարաջախտը:

—Այո՛:

Մորէլ չորս կողմը նայելով, Տանթէսը մէկդի քաշեց:

—Ի՞նչպէս է Կայսրը, հարցուց փութով:

—Աղէկ է, որչափ որ կրցայ դատել մէկ տեսնելուս:

—Ուրեմն Կայսրը տեսա՞ր:

—Մարաջախտին մօտ եկաւ, երբ ես հոն էի:

—Խօսեցա՞ր անոր հետ:

—Ան ինծի հետ խօսեցաւ, պարոն, ըսաւ Տանթէս ժպտելով:

—Ի՞նչ ըսաւ քեզի:

—Նաւուն նկատմամբ հարցումներ ըրաւ. թէ ե՞րբ Մարսիլիայէն մեկնած է, ի՞նչ ճամբով եկած է ու ի՞նչ բեռ ունի: Կարծեմ թէ եթէ պարապ ըլլար ու տէրն ես ըլլայի, մտադրութիւն ունէր զայն գնելու: Բայց ըսի թէ ես երկրորդ նաւապետ մըն եմ, և թէ նաւը Մորէլ և Որդւոց վաճառատան կը վերաբերի: Կը ճանչնամ, ըսաւ Կայսրը, Մորէլները որդւոց որդի նաւատէր են, ու Մորէլ մը կար, որ ինծի հետ միեւնոյն գունդին մէջ կը ծառայէր, երբ ես Վալանս բերդաքաղաքին զօրագունդին մէջ կը գտնուէի:

—Ստուգիւ այդպէս է, ըսաւ նաւատէրը ուրախութեամբ: Բոլիքար Մորէլ հօրեղբայրս էր ան որ նաւապետ եղաւ: Տանթէս, ըսէ՛ հօրեղբօրս թէ Կայսրը զինքը յիշեց, ու այն ատեն պիտի տեսնես որ ծերուկին պիտի լայ: Շատ աղէկ ըրիր, Տանթէս, շարունակեց նաւատէրը, երիտասարդին ուսին կամաց մը զարնելով ինչպէս բարեկամութեան, շատ աղէկ ըրիր որ Լըքլէր նաւապետին պատուէրը բռնեցիր, ու Էլպա կղզին կեցար. եթէ գիտնային որ դուն մարաջախտին ծրար մը տուած ու Կայսեր հետ խօսակցած ես, կրնար վնասել քեզի այդ բանը:

—Ի՞նչ բանի մէջ, պարոն, վնաս պիտի կրէի, ըսաւ Տանթէս. տարածս ի՛նչ ըլլալը չէի գիտեր, և կայսրը ինծի այնպիսի հարցումներ ըրաւ որ կրնար ուրիշի մըն ալ ընել: Բայց,

ներեցէ՛ք, ահա առողջապահական և մաքսային գործակալները կուգան, ներեցէք որ երթամ:

—Գործդ նայէ, սիրելիդ իմ Տանթէս:

Երիտասարդը հեռացաւ, ու որքան կը հեռանար, Տանկլարն ալ այնքան նաւատէրին կը մօտենար:

—Կ'երեւի որ, հարցուց Տանկլար, իրաւացի պատճառներ առաջ բերաւ ձեզի, Փորթօ-Ֆէրրայօ խարսխելու համար:

—Այո՛, սիրելիդ իմ Տանկլար:

—Շատ աղէկ, պատասխանեց Տանկլար, մարդու դժուար կուգայ տեսնել ընկեր մը որ իր պարտքը չի կատարեր:

—Տանթէս իր պարտքը կատարեց, պատասխանեց նաւատէրը, ատոր խօսք չունիմ: Լըքլէր նաւապետը պատուիրեր է անոր հոն խարիսխ նետելու:

—Աղէկ ըսիք, Լըքլէր նաւապետէն նամակ մը չտուա՞ւ ձեզի:

—Ինծի՞, ո՛չ. ուրեմն անկէ նամակ մը ունէր ինծի համար:

—Կը կարծէի որ ծրարէն զատ Լըքլէր նաւապետը այդ նամակն ալ յանձնած էր անոր:

—Ո՞ր ծրարին համար կը խօսիս. Տանկլար:

—Այն ծրարին համար զոր Տանթէս տեղը տուաւ Փորթօ-Ֆէրրայօէն անցած ատեն:

—Ի՞նչէն գիտես որ Փորթօ-Ֆէրրայօ յանձնելու նամակ մը ունէր:

Տանկլար կարմրեցաւ:

—Նաւապետին դրանը առջեւէն կ'անցնէի, որ կիսաբաց էր, երբ տեսայ որ ծրարն ու նամակը Տանթէսին կը յանձնէր:

—Այդ մասին բան մը չըսաւ ինծի, յարեց նաւատէրը, բայց եթէ այդ նամակը քովն է, ի հարկէ ինծի պիտի տայ:

Տանկլար մտածեց պահ մը:

—Ուրեմն Պ. Մորէլ, կ'աղաչեմ, Տանթէսին բան մի ըսէք. սխալած ըլլալու եմ:

Այդ միջոցին երիտասարդը կը դառնար՝ ուստի Տանկլարն ալ հեռացաւ:

—Ուրեմն, սիրելի Տանթէս, գործդ լմնցուցի՞ր, հարցուց նաւատէրը:

—Այո՛, պարոն:

—Երկար չտեւեց գործդ:

—Ո՛չ. մաքսատան մարդոց տուի մեր բեռներուն ցուցակը, իսկ օտարահամարը ծովեզերքի նաւուղիղին հետ մարդ մը ղըրկուած էր, մեր թուղթերը յանձնեցի անոր:

—Ուրեմն հիմա ուրիշ գործ չունի՞ս ընելու:

Տանթէս իր չորս կողմը աղէկ մը նայեցաւ բոլորն:

—Ո՛չ, ամէն բան կարգի դրուած է, ըսաւ:

—Ուրեմն կրնա՞ս մեզի հետ ճաշել:

—Ներողութիւն, Պ. Մորէլ, կ'աղաչեմ, ամէնէն առաջ հօրս պիտի երթամ. ձեր ըրած պատիւին համար շնորհակալ եմ:

—Ստուգիւ, Տանթէս, իրաւունք ունիս, գիտեմ որ բարի զաւակ մըն ես:

—Հայրս... հարցուց Տանթէս տատամսոտ, ի՞նչպէս է. գիտէ՞ք արդեօք:

—Կարծեմ աղէկ է, սիրելիս Էտմոն, թէեւ տեսած չեմ զայն:

—Իր խցիկին մէջ փակուած է անշուշտ:

—Ուրեմն յայտնի է որ բանէ մը զրկուած չէ՛ քու բացակայութեանդ միջոցին:

Տանթէս ժպտեցաւ:

—Հայրս մեծամիտ է, պարոն, եթէ ամէն բանի ալ կարօտ ըլլայ, կարծեմ Աստուծմէ զատ ոչ մէկէն բան չուզեր:

—Ուրեմն յուսալի է որ այդ առաջին այցելութենէն յետոյ մեզի կուգաս:

—Դարձեալ ներեցէք, Պ. Մորէլ. առաջին այցելութենէս յետոյ ուրիշ երկրորդ այցելութիւն մըն ալ ունիմ, որ խիստ անհրաժեշտ է:

—Ո՜հ, այո՛, մոռցայ որ Քաթալանի մէջ մէկը կայ, որ հօրդ պէս անհամբերութեամբ կը սպասէ քեզի, այսինքն գեղանին Մէրսէտէս:

Տանթէս կարմրեցաւ։

— Չեմ զարմանար, ուրեմն, ըսաւ նաւատէրը. ան երեք անգամ եկաւ Փարաւոնի մասին լուր առնելու. Է՛տմոն, ամենեւին տրտնջելու պատճառ չունիս, որովհետեւ տիկինդ գեղեցիկ է։

— Տիկինս չէ, պարոն, ըսաւ երիտասարդ նաւաստին ծանր շեշտով, այլ նշանածս է։

— Միեւնոյն բանն է։

— Մեզի համար չէ, պարոն, պատասխանեց Տանթէս։

— Գնա՛, գնա՛, սիրելի Էտմոն, շարունակեց նաւատէրը, քեզի արգելք չըլլամ։ Իմ գործերս աղէկ կատարեցիր, ես ալ հիմա պարապուրդ կուտամ որ քու գործերդ տեսնես։ Ստակի պէտք ունի՞ս։

— Ո՛չ, պարոն, ճամբորդութեանս գրեթէ երեք ամսականները առած եմ։

— Բարի տղայ մըն ես, Է՛տմոն։

— Մանաւանդ թէ խեղճ հայր մը ունիմ, Պ. Մորէլ։

— Այո՛, այո՛, գիտեմ որ բարի զաւակ մըն ես։ Գնա՛ ուրեմն հայրդ տեսնելու։ Ես ալ որդի ունիմ, ու շատ կը բարկանայի, եթէ երեք ամիս ուղեւորութենէ յետոյ իմ քովս ուշանար գալու։

— Ուրեմն հրաման կուտա՞ք, ըսաւ Տանթէս, ողջունելով։

— Այո՛, եթէ ուրիշ ըսելիք մը չունիս։

— Ո՛չ։

— Լըքլէր նաւապետը մեռնելու ատեն ինծի համար նամակ մը չտուա՞ւ։

— Չկրցաւ գրել, պարոն. բայց այդ առթիւ միտքս ինկաւ որ քանի մը օրուան հրաման պիտի խնդրեմ ձենէ։

— Ամուսնանալո՞ւ համար։

— Առաջ... յետոյ Փարիզ երթալու եմ։

— Շատ լաւ, Տանթէս, որչափ ժամանակ որ կ՚ուզես, նաւուն բեռները պարպելու համար վեց շաբաթ պէտք է, ու գրեթէ երեք ամիսէն առաջ չպիտի կրնաք ճամբայ ելլել։ Երեք

ամիսէն հոս գտնուելու ես։ Փարաւոնը առանց իր նաւապետին չի կրնար ճամբայ ելլել, կրկնեց նաւատէրը, երիտասարդին ուսը գգուելով։

— Առա՞նց իր նաւապետին, ըսաւ Տանթէս ուրախութեամբ լեցուած. պարոն, լաւ ուշադրութիւն ձեր ըսածին, որովհետեւ սրտիս բաղձանքներուն կը պատասխանէք։ Արդեօք միտք ունի՞ք Փարաւոնին նաւապե՞տ կարգելու զիս։

— Եթէ միայն ես ըլլայի, խօսք կուտայի քեզի, սիրելիս Տանթէս, ու կ՚ըսէի որ նաւապետ ես։ Բայց ընկեր մըն ալ ունիմ. գիտես Իտալերէն այն առակը որ կ՚ըսէ. Ով որ ընկեր ունի՝ տէր ունի. բայց գործին կէսը լմնցած է, գոնէ երկու ձայնին մէկը ստացար, և ձեռքէս եկածը պիտի ընեմ՝ միւս ձայնն ալ ձեռք բերելու համար։

— Պ. Մորէլ, ըսաւ երիտասարդ նաւաստին, աչքերը արտասուքով լեցուած և նաւատէրին ձեռքերը բռնելով, հօրս ու Մէրսէտէսին կողմէ շնորհակալ եմ ձեզ։

— Շատ լաւ, Էտմոն, չես գիտեր որ Աստուած ազնիւ մարդոց օգնական է։ Ուրեմն գնա՛ հայրդ ու Մէրսէտէսը տեսնելու. յետոյ իմ մօտս եկուր։

— Չէ՞ք ուզեր որ ցամաքը հանեմ ձեզ։

— Ո՛չ, շնորհակալ եմ, Տանկլարին հետ պիտի կարգադրեմ հաշիւներս։ Ճամբորդութեան միջոցին գո՞հ էիր անկէ։

— Չեմ կրնար այդպէս ըսել, պարոն. բարի ընկեր մը չէ, որովհետեւ կը կարծեմ թէ ան զիս չսիրեր այն օրուընէ ի վեր, որ մէջերնիս պզտիկ կռիւ մը պատահած ըլլալով՝ անմտութեամբ առաջարկեցի որ Մօնթէ-Քրիսթօ կղզին մէջ տասը վայրկեան սպասենք՝ կռիւը վերջացնելու համար. պէտք չէր որ այդ առաջարկութիւնը ընէի անոր, ու ան ալ իրաւունք ունէր ինծի հակառակելու։ Եթէ իր գրագրութեան համար այս հարցումը կ՚ընէք, կարծեմ ըսելիք չկայ. գոհ պիտի ըլլաք, երբ տեսնէք թէ ինչպէս կատարած է իր գործը։

— Բայց, Տանթէս, հարցուց նաւատէրը, եթէ Փարաւոնին նաւապետ ըլլաս, Տանկլարը պիտի պահե՞ս հաճութեամբ։

—Թէ՛ առաջին նաւապետ ըլլամ և թէ երկրորդ, Պ. Մորէլ, պատասխանեց Տանթէս, միշտ պիտի յարգեմ այն անձերը, որոնք իմ տէրերուս մտերմութիւնը շահած են։

—Շատ լաւ, Տանթէս, կը նայիմ որ ամէն բանի մէջ բարի մարդ մըն ես։ Արգելք չըլլամ քեզի, գնա՛, որովհետև կը տեսնեմ որ շատ փափաք ունիս երթալու։

—Մնաք բարով Պ. Մորէլ, շատ շնորհակալ եմ։

—Երթաս բարով, սիրելի Էտմոն, յաջողութիւն կը մաղթեմ քեզի։

Երիտասարդ նաւաստին մակոյկին մէջ նստելով, գնաց ցռուկին կողմը նստաւ, ու հրամայեց որ Գանըպիէրի նաւամատոյցը հանեն զինքը։ Երկու նաւավարները սկսան թիավարել, և մակոյկը շուտով անցաւ նաւակներուն և նաւերուն մէջտեղէն, որոնք Օռլէան բռնած նաւահանգիստը լեցուած էին։

Նաւատէրը ժպտադէմ, աչքերը անոր վրայէն չհեռացուց մինչև որ Տանթէս եզերքը հասաւ, քարափը ելաւ, ու անմիջապէս անհետացաւ հետաքրքիրներու բազմութեան մէջ, որոնք առտուան ժամը 5էն մինչև ժամը իրիկուան 9ը Գանըպիէր համբաւաւոր փողոցը կը լեցուէին։ Այդ փողոցին վրայ արդէն Մարսիլիացիները կը պարծենան, ազդուօրէն ըսելով։ «Եթէ Բարիզ Գանըպիէրը ունենար, փոքր Մարսիլիա մը կրնար ըլլալ»։

Նաւատէրը ետին դառնալով տեսաւ որ Տանկլար հոն կանգնած է ու այնպէս մը կը ձևացնէր որ իր հրամանին կը սպասէ, բայց իրօք երիտասարդ նաւաստիին կը նայէր տխրոջ պէս։

Միայն թէ մեծ տարբերութիւն կար այդ երկու մարդոց նայուածքին միջև։

Բ. ԳԼՈՒԽ

ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՆ

Թողլով Տանկլարը, որ ատելութեան ոգւով վառուած իր ընկերին դէմ անհիմն խօսքեր ընէ նաւատէրին, գանք Տանթէսին. ան Գանըպիէրի հրապարակէն անցնելէն յետոյ, Նօայլի փողոցը ուղղուեցաւ, ու Մէյլանի նեղ փողոցներուն ձախ կողմը գտնուող պզտիկ տուն մը մտաւ, որուն մութ սանդուխէն չորրորդ յարկը ելաւ շուտ մը, մէկ ձեռքը սանդուխին բազրիքը բռնելով ու միւսովը սրտին բաբախումը զսպելով, և կիսաբաց դրան մը առջև կեցաւ, ուսկից պզտիկ սենեակի մը ներսի կողմը կը տեսնուէր։

Տանթէսի հայրը հոն կը բնակէր։

Ծերունին դեռ իմացած չէր Փարաւոնի ժամանումը։ Աթոռի մը վրայ կանգնած, դողդոջուն ձեռքովը զբաղած էր բարակ փայտեր անկելու քանի մը տունկերու բոլորտիքը, որոնք փաթթուելով մինչև իր պատուհանին վանդակներուն հասած էին։

Յանկարծ ծերունին զգաց որ մէկը կը գրկէր զինքը, ու իր ետին խիստ ծանօթ ձայն մը լսեց որ կ'ըսէր. «Հայր իմ, բարի՛ հայր իմ»։

Ծերունին ձայն մը ձգեց ու ետին դարձաւ։ Այս անակնկալ ժամուն մէջ զաւակը տեսնելուն պէս՝ բոլորովին դունատեցաւ ու դողդղալով՝ անոր թևերուն մէջ ինկաւ։

—Ի՞նչ ունիս, հայր, ըսաւ երիտասարդը տխրագին. հիւա՞նդ ես արդեօք։

—Ո՛չ, սիրելի Էտմոն, զաւակս, ո՛չ. բայց բնաւ չէի սպասեր քեզի, ու այսպէս յանկարծ քեզ տեսնելու ուրախութիւնս... ո՛հ, կարծեմ պիտի մեռնիմ...։

—Տէ՛ր Աստուած, հանդարտէ՛, հայր իմ։ Ես եմ, ուրիշ մէկը չէ։ Ուրախութիւնը վնաս մը չի պատճառեր, անոր հա-

մար չիմացուցած՝ ներս մտայ: Փոխանակ այլայլած աչքերով ինծի նայելու, հայր իմ, ուրախութիւն ցուցուր: Ահա՛ ես ե-կայ․ այսուհետեւ երջանիկ պիտի ըլլանք:

—Ո՛հ, երանի՜ թէ, ըսաւ ծերունին, բայց ինչպէս երջա-նիկ պիտի ըլլանք: Արդեօք ա՛լ չպիտի բաժնուիս ինէ․ ըսէ նայինք ինչ է այդ երջանկութիւնը:

—Աստուած չընէ, ըսաւ երիտասարդը, որ ես ընտանիքի մը սուգովը ձեռք բերած երջանկութեանս վրայ ուրախանամ: Բայց Աստուած գիտէ որ ես բնաւ չուզեցի այդ երջանկութիւնը: Այսպիսի բան մը պատահեցաւ ինծի, ու ես չեմ կրնար անոր վրայ տխրիլ: Ազնիւ Լըքլէր նաւապետը մեռաւ, ու հաւանական է որ Պ. Մորէլին պաշտպանութեամբը անոր տեղը անց-նիմ...: Քսան տարուան հասակիս մէջ նաւապետ պիտի ըլլամ հարիւր ոսկի թոշակով ու գոյացած շահուն մէկ մասովը: Ասկէ աւելի ինչ կրնար յուսալ ինծի պէս խեղճ նաւաստի մը:

—Այո՛, զաւակս, այո՛, այնպէս է, ըսաւ ծերունին․ մեծ երջանկութիւն մըն է ատ:

—Ուստի կ'ուզեմ որ առաջին անգամ ձեռքս անցած դրա-մովը փոքր տուն մը ունենաս պարտէզով մը, որպէս զի անոր մէջ կարենաս ուզած բոյսերդ տնկել: Բայց ինչ ունիս, հայր, ինծի այնպէս կը թուի որ տկարութիւն ունիս:

—Քիչ մը համբերէ, կ'անցնի, բան մը չէ:

Ծերունիին ոյժը սպառելով կռնակին վրայ ինկաւ:

—Քիչ մը գինի՛, հա՛յր իմ, քիչ մը գինի որպէս զի ոյժդ տեղը գայ․ ո՞ւր տեղ է գինիդ:

—Չէ՛, շնորհակալ եմ, մի՛ փնտռեր, պէտք չունիմ, ըսաւ ծերունին զաւկին ձեռքէն բռնելով:

—Ո՛չ, ո՛չ, հայր իմ, տեղը ցոյց տուր ինծի:

Երկու երեք պահարաններ բացաւ:

—Ի զուր կ'աշխատիս... ըսաւ ծերունին, գինիս հա-տած է...:

—Ինչ, գինի չունի՞ս․ ըսաւ Տանթէս, գոյնը նետած, ու փոփոխակի մերթ հօրը նիհար և այլայլած երեսը կը նայէր,

մերթ պարապ պահարանները կը փնտռէր: Ինչ գինի չունի՞ս, հա՛յր իմ, միթէ դրամդ լմնցա՞ւ:

—Բան մը պակսած չէ ինծի, ահա՛ դուն հոս ես ու ամէն բան ունիմ, ըսաւ ծերունին:

—Բայց, ըսաւ Տանթէս հատկտեալ ձայնով ու ճակատէն վազած քրտինքը սրբելով, երեք ամիս առաջ, գացած ատենս, երկու հարիւր ֆրանք ձգած էի քեզի:

—Այո՛, Էտմոն, ստոյգ է: Բայց երթալու միջոցիդ մեր Քատրուս դրացիին ունեցած պարտքդ վճարելու մոռցած էիր․ ան ալ ինձմէ ուզեց, ըսելով որ եթէ ես քեզի համար չվճա-րեմ, Մորէլի վաճառատունէն պիտի ուզէ: Ես ալ վախնալով որ այդ բանը քեզի վնաս մը կը բերէ...:

—Ուրե՞մն:

—Վճարեցի:

—Բայց Քատրուսի ունեցած պարտքս հարիւր քառասուն ֆրանք էր... քեզի ձգած երկու հարիւր ֆրանքէ՞ս վճարեցիր:

Ծերունին գլուխը ծռելով, այո՛, ըսաւ:

—Ուրեմն վաթսուն ֆրանքով ապրեցա՞ր երեք ամիս:

—Զաւակս, գիտես որ ես քիչով կ'ապրիմ:

—Ա՛հ, տէր Աստուած թողութիւն կը խնդրեմ քենէ, հա՛յր իմ, ըսաւ Էտմոն, ծերունիին առջև ծնրադրելով:

—Ի՞նչ կ'ընես, տղաս:

—Ո՛հ, շատ կը ցաւի սիրտս:

—Բան մը չէ, ըսաւ ծերունին ժպտելով, ամէն բան կը մոռ-ցուի, հիմա դուն հոս ես, բան մը պակաս չէ:

—Այո՛, հոս եմ, ապագայ երջանկութեան յոյսով ու քիչ մըն ալ դրամով: Ա՛ռ ասոնք, հայր իմ, ա՛ռ ասոնք ու շուտով ղրկէ՛, քիչ մը բան բերել տալու համար:

Երիտասարդը քսակը սեղանին վրայ պարպեց, որուն մէջէն տասներկու ոսկի, հինգ կամ վեց հատ 5 ֆրանքնոց թալէր, ու քիչ մը մանր դրամ ելաւ:

Ծերունին ուրախ դէմքով մը ըսաւ․

—Որո՞ւնն են ասոնք:

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀԱՍՌ-Арм ССР

—Իմս, քուկդ, մերը. պէտք եղած բաները գնէ, ու հանգիստ եղիր, վաղը ուրիշ բաներ ալ կը գնենք:

—Կեցի՛ր, կեցի՛ր, ըսաւ ծերունին ժպտելով, եթէ կ'ուզես՝ չափաւորութեամբ գործածելու եմ քու դրամդ. եթէ շատ գնելս տեսնեն, պիտի կարծեն թէ քու դառնալուդ կը սպասէի՝ գնելու համար:

—Ինչպէս կ'ուզես ա՛յնպէս ըրէ, հայր, բայց ամէն բանէ առաջ, ծառայ մը բռնէ՛: Չեմ ուզեր որ ա՛լ մինակ մնաս: Մաքսէն փախուցած սուրճ և ընտիր ծխախոտ ունիմ, զոր փոքրիկ սնտուկի մէջ նաւուն խորշը պահած եմ, վաղը ձեռքդ կը հասնին: Բայց լո՛ւռ կեցիր, մէկը կուգայ:

—Գատրուսն է, որ քու գալուստդ իմանալով անշուշտ բարով եկար ըսելու համար կուգայ:

—Զարմանալի՜ բան, այս մարդուն շրթունքը ուրիշ բան կ'ըսէ և սիրտէն ուրիշ բան կ'անցնի, ըսաւ Էտմոն կամաց մը, բայց հոգ չէ, մեր դրացին է ու ատենօք մեզի ծառայութիւն ըրած է, պէտք է որ սիրով ընդունինք:

Երբ Էտմոն ցած ձայնով խօսքը վերջացուց, սենեկին դրանէն Գատրուսի սև ու մօրուսաւոր գլուխը տեսնուեցաւ: Քըսանըհինգ կամ քսանը վեց տարեկան մարդ մըն էր, ու դերձակ ըլլալով՝ ձեռքը ասուիի կտոր մը ունէր, ուրկէ հանդերձի օձիք պիտի շինէր:

—Ո՜հ, բարի եկեր ես, Էտմոն, ըսաւ բոլորովին Մարսիլիացի արտասանութեամբ և այնպէս մը ծիծաղելով որ փղոսկրի պէս ճերմակ ակռաները կ'երևէին:

—Այո՛, բարեկամ, հիմայ եկայ ու ամէն բանի մէջ ձեզի հաճելի ըլլալու պատրաստ եմ, պատասխանեց Տանթէս իր ցուրտ վարմունքը այդ քաղաքավարական խօսքերուն ներքև դժուարաւ ծածկելով:

—Շնորհակալ եմ, բարեբախտաբար բանի մը պէտք չունիմ, բայց երբեմն ուրիշները ինծի պէտք կ'ունենան: —Տանթէս շարժում մը ըրաւ: —Քեզի համար չեմ ըսեր. ես քեզի դրամ փոխ տուի, դուն ալ ինծի վճարեցիր. այդ բանը բարի դրացիներու

միջև միշտ կը պատահի ու մենք հիմայ առնելիք տալիք չունինք:

—Մեզի բարեկամութիւն ընողներուն միշտ կը պարտինք, ըսաւ Տանթէս, որովհետև եթէ անոնց դրամ տալիքնիս չմնայ, երախտագիտութեան պարտքերնիս կը մնայ գոնէ:

—Ինչ օգուտ անոր վրայ խօսելէ, անցածը անցած է. քու բարեբաստիկ դարձիդ վրայ խօսինք: Նաւահանգիստը գացած էի ասուի գնելու, երբ Տանկլար բարեկամս դիմացս ելաւ:

«—Մարսի՞լիա կը գտնուիս, հարցուցի:

«—Այո՛, ըսաւ:

«—Կը կարծէի թէ Իզմիր էիր:

«—Հոն ալ գացի, և հիմա անկէ կուգամ:

«—Ո՞ւր է Էտմոն երկրորդ նաւապետը:

«—Անշուշտ իր հօրը տունը պիտի ըլլայ», պատասխանեց Տանկլար. այդ բանը լսելուս պէս՝ հոս եկայ որպէս զի բարեկամս տեսնելու ուրախութիւնը ունենամ:

—Այս բարի Գատրուսը շատ կը սիրէ մեզ, ըսաւ ծերունին:

—Արդարև կը սիրեմ ու կը պատուեմ իսկ, որովհետև համեստ մարդիկ շատ հազուագիւտ են...: Բայց կ'երևի թէ հարստացած ես, շարունակեց դերձակը աչքը տնկած ափ մը ոսկիին ու արծաթ դրամին վրայ զոր Տանթէս սեղանին վրայ դրած էր:

Երիտասարդը տեսնելով որ դրացին աչքերը բացած ցանկութեամբ կը դիտեր անհոգ շեշտով մը ըսաւ.

—Այս դրամը իմս չէ. հօրս հարցուցի թէ արդեօք իմ բացակայութեանս ատեն բանի մը պակասութիւն ունեցա՞ծ էր. ան ալ զիս վստահացնելու համար սեղանին վրայ պարպեց քսակը: Հայր իմ, շարունակեց Տանթէս իր հօրը դառնալով, այդ դրամը նորէն քսակիդ մէջ դիր, եթէ Գատրուս բարեկամիս պէտք չունի անոր, եթէ ունի, սիրայօժար կուտանք անոր:

—Ո՛չ, ըսաւ Գատրուս, բանի մը պէտք չունիմ. փա՛ռք Աստուծոյ, իմ արհեստովս ապրուստ կը ճարեմ. դրամդ պահէ, գուցէ քեզի պէտք ըլլայ: Սակայն շնորհակալ եմ քու բարեկամութեանդ համար, առածի չափ եղայ:

—Սրտանց կ'ուզէի ծառայութիւն մը ընել քեզի, ըսաւ Տանթէս։

—Տարակոյս չունիմ այդ մասին։ Կը տեսնեմ որ Պ. Մորէլ շատ կը սիրէ քեզ։

—Պ. Մորէլ միշտ բարիք ըրած է ինծի, պատասխանեց Տանթէս։

—Ուրեմն մերժելու չէիր անոր ճաշի հրաւէրը։

—Ի՜նչ, ճա՞շը մերժել, ըսաւ ծերունին Տանթէս, ուրեմն ճաշի՞ հրաւիրած էր քեզ։

—Այո՛, հայր, ըսաւ Էտմոն, այսպիսի մեծ պատիւ մը չընդունելուն համար՝ հօրը զարմացման վրայ խնդալով քթին տակէն։

—Ինչո՞ւ չընդունեցիր, տղաս, հարցուց ծերունին։

—Անոր համար որ աւելի շուտով քովդ գամ, հա՛յր իմ, պատասխանեց երիտասարդը, որովհետեւ շատ կը փափաքէի քեզ տեսնելու։

—Մի գուցէ ըրածդ բարեխիրտ Մորէլին հակառակ ընթացք մը համարուի, ըսաւ Կադրուս։ Երբ մարդ նաւապետ ըլլալու դիտաւորութիւն ունի, շատ գէշ կ'ընէ նաւուն տիրոջը դէմ կենալով։

—Զընդունելուս պատճառը յայտնեցի, ըսաւ Տանթէս, եւ կը յուսամ որ միտքս հասկցաւ ան։

—Ա՜խ, նաւապետ ըլլալու համար պէտք է քիչ մը շողոքորթութիւն ընել իր տէրերուն։

—Առանց ատոր ալ կը յուսամ նաւապետ ըլլալ, պատասխանեց Տանթէս։

—Շատ լաւ, այդ բանը բոլոր հին բարեկամներդ պիտի ուրախացնէ։ Ես Ս. Նիկողոսի ամրոցին ետեւի կողմը մէկը գիտեմ որ շատ պիտի ուրախանայ այդ բանը լսելով։

—Մերսէտէ՞սը, ըսաւ ծերունին։

—Այո՛, հա՛յր, ըսաւ Տանթէս, հիմա որ քեզ տեսայ, եւ գիտեմ որ աղէկ վիճակի մէջ ես եւ պէտք եղած բաները ունիս, կը խնդրեմ որ ինծի հրաման տաս, այցելութիւն տալու համար Գաթալաններուն։

—Գնա՛, զաւակս, գնա՛, ըսաւ ծերունին Տանթէս, Աստուած կնոջդ հետ քեզ օրհնէ, ինչպէս որ զիս օրհնեց զաւակիս հետ։

—Կի՞նը մի, ըսաւ Կադրուս, ի՜նչ կ'ըսես, կարծեմ անոր կինը չէ դեռ։

—Այո՛, բայց հաւանաբար շատ չանցած կինս պիտի ըլլայ, պատասխանեց Էտմոն։

—Հոգ չէ, ըսաւ Կադրուս, շատ աղէկ ըրիր շուտ գալով։

—Ինչո՞ւ համար։

—Անոր համար որ Մերսէտէս գեղեցիկ աղջիկ մըն է, ու գեղեցիկ աղջիկները տարփածուներ կ'ունենան, մանաւանդ Մերսէտէս որ շատ ուզողներ ունի։

—Իրա՞ւ կ'ըսես, յարեց Էտմոն այնպիսի ժպիտով մը, ուր քիչ մ'ալ տրտմութիւն կար։

—Այո՛, պատասխանեց Կադրուս, եւ բաւական հարուստ մարդիկ, բայց խորհէ որ նաւապետ պիտի ըլլաս, հետեւաբար չեն կրնար մերժել քեզ։

—Ըսել է որ, եթէ նաւապետ չըլլայի... ըսաւ Տանթէս այնպիսի ժպիտով մը, որ չէր կրնար իր արտնեղութիւնը ծածկել։

—Է՜հ, ո՞վ գիտէ, ըսաւ Կադրուս։

—Հոգ մի՛ ըներ, ըսաւ երիտասարդը, առհասարակ կիներուն վրայ ես քեզմէ աւելի լաւ գաղափար ունիմ, եւ մանաւորաբար Մերսէտէսին վրայ, շատ աղէկ գիտեմ որ նաւապետ ըլլամ կամ ոչ՝ Մերսէտէս հաւատարիմ պիտի մնայ ինծի։

—Լաւ, լաւ, ըսաւ Կադրուս, շատ աղէկ բան է որ ամուսնացողը վստահութիւն ունենայ։ Բայց ինչ եւ է. եթէ կը հաւատաս ինծի առանց ժամանակ կորսնցնելու գալուստդ իմացուր անոր եւ ակնկալութիւններդ յայտնէ։

—Ահա՛ կ'երթամ, ըսաւ Էտմոն, սիրով հայրը ողջունելով եւ գլխով ալ Կադրուսը, դուրս ելաւ դռնէն։

Կադրուս քիչ մըն ալ կեցաւ, յետոյ ծերունի Տանթէսէն հրաման խնդրելով, ինքն ալ իջաւ ու Տանկլարին մօտ գնաց, որ իրեն կը սպասէր Սէնաք փողոցին մէկ անկիւնը։

—Տանթէսը տեսա՞ր, ըսաւ Տանկլար։

—Հիմա միասին էինք, ըսաւ Քատրուս։

—Նաւապետ ըլլալու յոյս յայտնե՞ց։

—Այնպէս կը խօսի որ կարծես թէ եղած է արդէն։

—Համբերելու է, ըսաւ Տանկլար, կարծեմ շատ կ'աճապարէ։

—Զարմանալի՛ բան կ'երեւայ թէ Մորէլ խօսք տուած է։

—Շատ ուրախ ըլլալու է։

—Զափազանց. արդէն երեւելի մարդ մը եղածի պէս՝ մեծ խոստումներ ըրաւ ինծի, ուզեց որ դրամ փոխ տայ, իբր թէ սեղանաւոր մը եղած ըլլար։

—Մերժեցի՞ր։

—Այո՛, թէեւ կրնայի ընդունիլ, որովհետեւ առաջին անգամ անոր դրամ տուի որ գործի մանէ. բայց հիմայ Պ. Տանթէս մէկուն կարօտ չէ, քանի որ նաւապետ պիտի ըլլայ։

—Չեմ կարծեր, դեռ նաւապետ չէ ան, ըսաւ Տանկլար։

—Ստուգիւ, աւելի լաւ է որ չըլլայ, ըսաւ Քատրուս, որովհետեւ ալ մէկը պիտի չի կրնար անոր հետ խօսիլ։

—Եթէ ուզենք, ներկայ վիճակին մէջ կը մնայ ան եւ դուցէ աւելի գէշ, ըսաւ Տանկլար։

—Ի՞նչ կ'ըսես։

—Ոչինչ, ինքնիրենս կը խօսիմ։ Գեղանի Քաթալանցին սիրահարուա՞ծ է միշտ։

—Զափազանց, հիմայ անոր մօտ գնաց. բայց եթէ չեմ սխալիր, այդ մասին շատ նեղութիւն պիտի կրէ։

—Ի՞նչպէս, ըսէ նայինք։

—Ի՞նչ օգուտ կ'ելլէ ըսելէս։

—Կարծածէդ աւելի. Տանթէսը չե՛ս սիրեր, այնպէս չէ՞։

—Գոռոզ մարդիկը չեմ սիրեր։

—Ըսէ՛ ուրեմն, Քաթալանցի աղջկան մասին ինչ տեղեկութիւն ունիս։

—Ստոյգ բան մը չեմ գիտեր, միայն այնպիսի բաներ տեսայ որ ինծ հաւատալ տուին, ինչպէս ըսի, թէ ապագայ նաւապետը Վիէյլ Էնֆիրմըրի ըսուած ճամբուն կողմերը նեղութիւն պիտի կրէ։

—Ի՞նչ տեսար, ըսէ՛ նայինք։

—Ամէն անգամ որ Մերսէտէս քաղաք կուգար, սեւ աչուի, կարմրադէմ, շատ թուխ եւ խիստ եռանդոտ, յանդուգն Քաթալանցիի մը հետ կը գտնուէր, որուն համար կ'ըսէր թէ հօրեղբօրորդիս էր։

—Ճի՞շդ ըսէ, կը կարծե՞ս որ այդ հօրեղբօրորդին անոր տարփածուն ըլլայ։

—Այնպէս կը կարծեմ։ Քսան տարեկան երիտասարդ մը ի՞նչ գործ կրնայ ունենալ տասնըեօթը տարեկան աղջկան հետ։

—Տանթէս Քաթալանցիներուն մօտ գնաց ըսիր։

—Ես հոն էի գացած միջոցին։

—Եթէ նոյն կողմէն երթայինք, Ռամֆիլ պանդոկապետին տունը լրտեսելու կը մանէինք, ու գաւաթ մը Լամալկի գինի խմելով՝ կը սպասէինք որ լուր առնենք։

—Ո՞վ լուր պիտի տար մեզի։

—Ճամբուն վրայ կը գտնուէինք ու Տանթէսի ըրածները յայտնի կը տեսնէինք։

—Երթա՛նք, ըսաւ Քատրուս, բայց գինիին դրամը դուն պիտի վճարես։

—Այո՛, պատասխանեց Տանկլար։

Երկուքնին ալ արագ քալելով՝ յիշեալ տեղը գացին. հոն հասնելնուն, մէկ շիշ գինի եւ երկու գաւաթ բերել տուին։

Ռամֆիլ պանդոկապետը տեսած էր Տանթէսին տասը վայրկեան առաջ անցնիլը։

Հասկնալով որ Տանթէս Քաթալան գացեր է, Տանկլար ու Քատրուս սօսի ու ժանտաթզենիի ծառերուն տակը նստան, որոնց ոստերուն մէջ թռչուններու կայտառ խումբ մը՝ գարնան առաջին գեղեցիկ օրերէն մէկը՝ կ'երգէր։

Գ. ԳԼՈՒԽ

ՔԱԹԱԼԱՆՆԵՐԸ

Հարիւր քայլ անդին (ուր երկու բարեկամները աչքերնին դէպ ի հորիզոն դարձուցած և ականջնին սրած, Լամալկի ազնիւ գինին կը խմէին), արևէն և հիւսիսային արևմտեան հովէն ամայացած բլուրի մը ետին Քաթալաններուն պզտիկ գիւղը կը տեսնուէր:

Օրին մէկը, անծանօթ գաղթականներ Սպանիայէն հեռանալով հրուանդանին վրայ ելան, ուր մինչև հիմա կը բնակին, դեռ չգիտցուիր թէ ո՛ւրկից եկած են. անծանօթ լեզու մը կը խօսին անոնք: Գլխաւորներէն մէկը, որ գաւառական լեզուն կը հասկնար, Մարսիլիայի հասարակութենէն խնդրեց որ նոյն ամայի ու անբեր հրուանդանը իրենց տան, ուր նաւերնին քաշած էին հինաւուրց նաւաստիներու պէս: Իրենց խնդիրքը ընդունուեցաւ, և երեք ամիս ետքը, այս ծովային գնչուները բերող տասներկու կամ տասնը հինգ նաւերուն բոլորտիքը փոքրիկ գիւղ մը ձևացած էր:

Այդ գիւղը, տարօրինակ ու նկարչագեղ, կէս մը մաւրիտանական և կէս մը սպանիական ձևով շինուած է, այն գիւղն է՝ ուր հիմա այս գաղթականներուն սերունդը կը բնակի, և որոնք իրենց նախահարց լեզուն կը խօսին: Երեք կամ չորս դարերէ ի վեր կը բնակին այս փոքրիկ հրուանդանին վրայ ուր ծովային թռչուններու երամի մը նման իջած են, առանց Մարսիլիացի ժողովրդեան խառնուելու, իրենց մէջէն ընտրելով իրենց ամուսնական ընկերը, և իրենց հայրենիքին սովորութիւնը ու օրէնքը պահելով, ինչպէս պահած էին իրենց լեզուն:

Մեր ընթերցողները պէտք է որ մեզի հետ այդ փոքրիկ գիւղին միակ փողոցը երթան, և միասին այն տեղի տուներէն մէկը մտնեն, որուն դուրսի կողմը արեգակը գեղեցիկ դեղին

գոյն մը տուած է, որ տեղական յիշատակարաններուն յատուկ է, և ներսի կողմը դեղնագոյն ծեփ մը ունի, որ սպանիական պանդոկներուն միակ զարդն է:

Սևաչուի, թուխ ու փայլուն մազերով գեղեցիկ աղջիկ մը ոտքի վրայ կանգուն, պատին կռթնած էր, և իր երկար ու գեղեցկաձև մատներովը անմեղ տունկ մը կը փետրտէր, անոր ծաղիկները կը փրցնէր ու գետինը կը թափէր: Ասկէ զատ՝ բազուկները բաց էին մինչև արմուկները և իր թխագոյն թևերը, որոնք Արլի Աստղկան արձանին թևերուն կը նմանէին, անհամբերութեամբ կը դողդղային, և իր դիւրաթեք ու քնքուշ ոտքովը գետինը կը զարնէր, այնպէս որ իր սրունքին վայելուչ ձևը կը տեսնուէր բամպակէ գունաւոր գուլպային վրայէն:

Իրմէ երեք քայլ անդին, քսան կամ քսաներկու տարեկան բարձրահասակ պատանի մը կար, որ աթոռի մը վրայ նստած, և իր արմուկը հին ու որդնահար կարասիի մը կըռթընցուցած, կ'օրուէր ու աղջկան կը նայէր այնպիսի դէմքով մը՝ ուր սրտնեղութիւնը և զայրոյթը գոգցես իրարու հետ կ'ոգորէին: Իր աչքերը բան մը հարցնելու երևոյթ ունէին, բայց մանկամարդ աղջկան հաստատ ու անթարթ նայուածքը կարծես իր խօսակցին վրայ կը տիրէր:

—Ահա՛, Մէրսէտէս, ըսաւ երիտասարդը, Զատիկը մօտ է, հարսնիքը պիտի ընե՞նք, պատասխան տուր:

—Հարիւր անգամ պատասխան տուած եմ քեզի Ֆէրնան, և ստուգիւ անձիդ թշնամի ըլլալու ես որ նորէն այդ հարցումը կ'ընես ինծի:

—Դա՛րձեալ կրկնէ, կ'աղաչեմ, որպէս զի կարենամ հաւատալ. ըսէ՛ անգամ մըն ալ թէ իմ սէրս կը մերժե՞ս, սէր մը որուն հաճութիւն կուտար մայրդ. յայտնէ՛ թէ իմ երջանկութիւնս կը ծաղրե՞ս. որովհետև իմ կեանքս ու մահս քեզի համար նշանակութիւն չունին: Ո՜հ, Տէր Աստուած, տասը տարի քու ամուսինդ ըլլալու վրայ խորհելէ յետոյ հիմա ինչպէս կորսնցընեմ այն յոյսը, որ իմ կեանքիս միակ նպատակն է:

—Բայց, Ֆէրնան, գոնէ ես չեմ քաջալերած այդ յոյսդ, պատասխանեց Մէրսէտէս․ այդ կողմէն զիս յանդիմանելու իրաւունք չունիս․ միշտ քեզի կ'ըսէի թէ եղբօր պէս կը սիրեմ քեզ՝ այս եղբայրական սէրէն աւելի բան մի՛ պահանջեր ինէ, որովհետեւ իմ սիրտս ուրիշին տուած եմ․ այս խօսքը շատ անգամ ըսա՞ծ չեմ քեզի Ֆէրնան։

—Այո՛, ես ալ գիտեմ, Մէրսէտէս, պատասխանեց երիտասարդը, այո՛, այդ բանը համարձակօրէն ըսելէն չի քաշուեցար․ բայց չե՞ս գիտեր որ Քաթալաններուն համար իրենց մէջէն ամուսին ընտրելը սրբազան օրէնք մըն է։

—Կը սխալիս, Ֆէրնան․ օրէնք մը չէ այդ, այլ սովորութիւն մը և ոչ ուրիշ բան, հաւատա՛ խօսքիս․ քու օգտիդ համար այդ սովորութիւնը օգնութեան մի՛ կոչեր։ Զինուոր գրուած ես, Ֆէրնան, ու այն ազատութիւնը զոր հիմա կը վայելես՝ թոյլտուութիւն մըն է միայն․ վայրկենէ վայրկեան կրնաս զէնքի տակ կոչուիլ․ այն ատեն ի՞նչ պիտի ընես զիս, խեղճ ու որբ աղջիկ մը, տրտում ու աղքատ, որուն բովանդակ ունեցածը խրճիթ մըն է, ան ալ գրեթէ աւերակ, և որուն մէջ քանի մը հին ցանցեր կախուած են․ խե՛ղճ ժառանգութիւն մը, որ հայրս թողուց մօրս, և մայրս ալ ինծի։ Տարի մը կ'ընէ անոր մեռնիլը, մտածէ՛, Ֆէրնան, ու այն ատենէն ի վեր հանրային ողորմութեամբ կ'ապրիմ։ Երբեմն այնպէս կը ձեւացընես որ քեզի օգտակար եմ․ և ատ ալ սա պատճառաւ որ ձկնորսութիւնդ ինծի հետ բաժնելու իրաւունք ունենաս․ կ'ընդունիմ, որովհետեւ դուն հօրեղբօրորդիս ես և մէկտեղ մեծցած ենք՝ ատկէ աւելին կայ․ գիտեմ որ եթէ չընդունիմ՝ մերժումս սրտնեղութիւն պիտի պատճառէ քեզի։ Բայց կը տեսնեմ թէ այն ձուկը զոր ես ծախելու կը տանիմ, և անոր դրամովը գնած կանեփս զոր կը մանեմ, Ֆէրնան, կը զգամ թէ ողորմութիւն մըն է ինձ։

—Ո՛հ, հոգ չէ, Մէրսէտէս․ դուն այդպէս աղքատ ու անօգնական ես՝ ամենէն հարուստ սեղանաւորին աղջիկէն աւելի յարմար կ'երեւիս ինծի։ Մեզի պէս մարդոց ի՞նչ պէտք է, բայց եթէ համեստ ու տանտիկին ընկեր մը։ Այդ մասին քենէ աւելի լաւը ո՞ւր գտնեմ։

—Ֆէրնան, պատասխանեց Մէրսէտէս, գլուխը շարժելով, տունը չհոգացող ու համեստութիւնը չպահող կինը իր ամուսինէն զատ ուրիշ մարդ կը սիրէ։ Գո՛հ եղիր իմ բարեկամութենէս․ որովհետեւ ես միայն այն բանին համար խօսք կուտամ, զոր ապահով եմ թէ պիտի կատարեմ։

—Այո՛, կը հասկնամ միտքդ, ըսաւ Ֆէրնան, թշուառութեանդ համբերութեամբ կը տոկաս, բայց իմ աղքատութենէս կը վախնաս։ Գիտցած ըլլաս, Մէրսէտէս, որ եթէ սիրելի ըլլամ քեզի, բախտս պիտի փորձեմ, երջանկութիւն պիտի բերես ինծի, ու հարուստ պիտի ըլլամ, կրնամ իբրեւ գրագիր վաճառատուն մը մտնել և կամ առուտուրով պարապիլ ինքնագլուխ։

—Ատոնց և ոչ մէկն ալ չես կրնար ընել, Ֆէ՛րնան․ որովհետեւ զինուոր ես, ու եթէ հիմայ հոս ես, պատճառը սա է որ պատերազմ չկայ․ ուրեմն միշտ ձկնորսութիւն ըրէ․ բնաւ մի՛ երազեր, ինչ որ իրականութենէն աւելի գէշ կը ցուցընէ քեզի․ գո՛հ եղիր իմ բարեկամութենէս, ու ուրիշ բան մի՛ սպասեր ինէ։

—Այո՛, իրաւունք ունիս, Մէրսէտէ՛ս, նաւաստի պիտի ըլլամ, ու մեր նախնեացը զգեստին տեղ, որ քու աչքիդ գէշ կ'երեւի, փայլուն գլխարկ մը պիտի դնեմ, գծաւոր շապիկ և խարսխազարդ ունեցող կոճակներով կապոյտ բաճկոն մը պիտի հագնիմ։ Այսպէս հագուելու չէ՞ հաճելի ըլլալու համար քեզի։

—Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց Մէրսէտէս սէգ նայուածքով մը, չեմ հասկնար ըսածդ։

—Մէրսէտէ՛ս, սա ըսել կ'ուզեմ որ այսպէս հագուած մէկու մը կը սպասես, և անոր համար է որ ինծի հետ այդպէս խըստութեամբ ու անգթութեամբ կը վարուիս, բայց գուցէ փոփոխամիտ մէկն է ան, և եթէ ինք այնպէս չէ, ծովը այնպէս է անոր համար։

—Ֆէրնա՛ն, ըսաւ Մէրսէտէս, բարեսիրտ կը կարծէի քեզ, բայց սխալեր եմ․ Ֆէրնա՛ն, գէշ սիրտ ունիս, ու նախանձէդ,

Աստուծոյ բարկութիւնը օգնութեան կը կոչես։ Այո՛, բան մը չեմ պահեր, կը սպասեմ, ու ըսած մարդդ կը սիրեմ. եթէ գալու չըլլայ ան, յիշած փոփոխամտութիւնդ մեղադրելու տեղ, պիտի ըսեմ որ զիս սիրելով մեռաւ ան։

Երիտասարդ Քաթալանցին բարկութեան շարժում մը ըրաւ։

—Կը հասկնամ, Ֆէրնան. քեզ չսիրելուս համար անոր հետ պիտի ատես, ու մենամարտի պիտի ելլես։ Ինչ պիտի շահիս ասկէ, եթէ ոչ իմ բարեկամութիւնս պիտի կորսնցնես՝ եթէ յաղթուիս, և կամ իմ բարեկամութիւնս ատելութեան պիտի փոխուի՝ եթէ յաղթես։ Հաւատա ինծի, կնոջ մը հաճելի ըլլալու համար՝ անոր սիրելիին հետ կռիւ հանելը դէշ միջոց մըն է։ Ո՛չ, Ֆէրնան, ինքզինքդ չպիտի թոյլատրես այդպիսի գէշ խորհուրդներ մտածելու. կարելի չէ որ քու կինդ ըլլամ, գոհ եղիր որ միայն քու բարեկամդ և քոյրդ կրնամ ըլլալ։ Սակայն, կրկնեց աղջիկը, աչքերը այլայլած ու արտասուքով լեցուած. կեցի՛ր, կեցի՛ր, Ֆէրնան, հիմա ինծի ըսիր թէ ծովը նենգաւոր է, չորս ամիս կ'ընէ անոր մեկնիլը, ու այսքան ատենէ ի վեր ո՛րչափ ալեկոծութիւններ պատահեցան։

Ֆէրնան անխռով մնաց ու չուզեց Մէրսէտէսը մխիթարել, անոր թափած արցունքը ցամքեցնելու համար, թէպէտև այդ արցունքներուն ամէն մէկ կաթիլին համար իր արիւնէն գաւաթ մը տալու յօժար ըլլար, եթէ իր սիրոյն համար թափուած ըլլային. բայց անոնք ուրիշի մը համար էին։ Երիտասարդը ոտքի ելաւ, ու անգամ մը խրճիթին մէջ դարձաւ, թախծոտ աչքերով ու բռունցքը սեղմելով գնաց Մէրսէտէսին դիմացը կայնեցաւ։

—Մէրսէտէ՛ս, անգամ մըն ալ պատասխա՛ն տուր... ա՞յսպէս որոշած ես ուրեմն։

—Այո՛, Էտմոն Տանթէսը կը սիրեմ, ըսաւ աղջիկը ցուրտ չեչտով, ու Էտմոնէն զատ մէկը չեմ ընդունիր։

—Մի՛շտ պիտի սիրե՞ս զայն։

—Որչափ որ ապրիմ։

Ֆէրնան վհատած մարդու մը պէս այնպիսի խորունկ հառաչ մը արձակեց որ հեծութեան կը նմանէր, գլուխը վար կախեց. յետոյ յանկարծ վեր առնելով, ակռաները սեղմելով ու քիթին ծակերը քիչ մը բանալով, ըսաւ.

—Բայց եթէ մեռա՞ծ ըլլայ։

—Եթէ մեռած ըլլայ, ես ալ կը մեռնիմ։

—Բայց եթէ մոռցա՞ծ է քեզ։

—Մէրսէտէ՛ս. ուրախալից ձայն մը լսուեցաւ դուրսէն։

—Ո՜հ, պոռաց աղջիկը ուրախութենէն կարմրելով և սիրոյ ուժգնութենէն ոստոստելով. կը տեսնե՞ս որ զիս մոռցած չէ. ահա եկաւ...

Դէպ ի դուռ վազելով, բացաւ զայն։

—Բարի՛ եկար, Էտմոն. բարի՛ եկար, ըսաւ, ահա հոս եմ։

Ֆէրնան գունատած ու դողդոջուն, ետ ետ քաշուեցաւ, ինչպէս որ ուղեւոր մը օձ տեսնելու ատեն կ'ընէ, և իր աթոռին հանդիպելով հոն ինկաւ։

Էտմոն ու Մէրսէտէս իրարու գիրկ նետուած էին. Մարսիլիայի տաք արեգակը, որ դռնէն ներս կը թափանցէր, մեծապէս կը լուսաւորէր զանոնք։ Սկզբան չտեսան իրենց բոլորտիքը եղածը, որովհետև անպատմելի ուրախութիւն մը պատած էր զիրենք ու միայն հատկտեալ բառերով կը խօսակցէին, երբ հետեւանք բուռն ուրախութեան. կարծես տրտմութեան խօսքեր ըլլային անոնք։

Յանկարծ Էտմոն շուքին մէջ տեսաւ Ֆէրնանի տխուր դէմքը, որ բարկացած, գունատած ու սպառնական կ'երեւէր, և այնպիսի շարժումով մը, որ գուցէ ինքն ալ չէր գիտեր, երիտասարդ Քաթալանցին իր ձեռքը մէջքի դանակին վրայ դրած էր։

—Ո՜հ, ներէ՛, ըսաւ Տանթէս, անոր պէս դէմքը կնճռելով, ներէ՛, վասն զի չտեսայ քեզ։

Յետոյ Մէրսէտէսին դառնալով հարցուց.

—Ո՞վ է այս պարոնը։

—Այս պարոնը ազնիւ բարեկամդ պիտի ըլլայ, Տանթէս, որովհետեւ իմ բարեկամս է, հօրեղբօրորդիս Ֆէրնան եղբայրս է,

այսինքն այն մարդը զոր քենէ ետքը ամէնէն աւելի կը սիրեմ աշխարհիս մէջ։

Էտմոն առանց Մերսէտէսը ձգելու, որուն ձեռքէն բռնած էր, միւս ձեռքը Քաթալանցիին երկնցուց անկեղծ մտերմութեամբ։ Բայց Ֆէրնան փոխանակ այդ բարեկամական շարժման պատասխանելու, արձանի պէս լուռ ու անշարժ մնաց։ Այն ատեն Էտմոն իր հետաքրքիր նայուածքը սարսափահար ու սրտաբեկ Մերսէտէսէն դարձուց տրտում ու սպառնական Ֆէրնանին վրայ։

Այդ միակ նայուածքով ամէն բան հասկնալով սիրտը նեղացաւ։

—Չէի կարծեր, Մերսէտէս, որ այսպէս աճապարանքով գամ ու տունդ թշնամի մը գտնեմ։

—Թշնամի մը, ըսաւ Մերսէտէս բարկութեամբ անոր նայելով, թշնամի՛ մը իմ տունս կ'ըսես, Էտմոն, եթէ ըսածդ ստոյգ ըլլար, քեզի հետ Մարսիլիա կ'երթայի տունս ձգելով ու մէյ մըն ալ չէի դառնար։

Այս խօսքին վրայ, Ֆէրնան ծուռ աչքով մը նայեցաւ աղջկան։

—Եթէ ձախորդութիւն մը պատահելու ըլլար քեզի, սիրելիդ իմ Էտմոն, շարունակեց աղջիկը նոյն հանդարտութեամբ, ցուցնելու համար Ֆէրնանին թէ իր չար խորհուրդը լաւ ըմբռնած էր, եթէ ձախորդութիւն մը պատահելու ըլլար քեզի, Մորժիոն հրուանդանին վրայ ելլելով՝ գլխիվար ժայռերէն վար կը նետէի ինքզինքս։

Ֆէրնանին գոյնը բոլորովին նետեց։

—Բայց սխալեցար, Էտմոն, շարունակեց աղջիկը, բնաւ թշնամի չունիս հոս, իմ Ֆէրնան եղբօրմէս զատ ուրիշ մէկը չկայ, որ անձնուէր բարեկամի տեղ դնելով քեզ՝ ձեռքդ պիտի սեղմէ ի նշան հաշտութեան։

Յետոյ աղջիկը իր սէգ նայուածքը Քաթալանցիին վրայ դարձուց, որ այս նայուածքէն կարծես դիւթուած կամաց մը Էտմոնին մօտեցաւ ու ձեռքը երկնցուց անոր։

Իր ատելութիւնը, անզօր կոհակի մը նման, թէեւ սաստիկ

էր, բայց Մերսէտէսին անոր վրայ ի գործ դրած ազդեցութեանը բաղխելով կը խորտակէր։ Բայց Էտմոնին ձեռքը բռնելուն պէս զգաց թէ կրցածը ըրեր էր, ու դռնէն դուրս նետուեցաւ անմիջապէս։

—Ահ, կը պոռար խելագարի մը պէս վազելով ու ձեռքերը գլխուն մազերուն մէջ մխրճելով, ա՜հ, ո՞վ այս մարդէն պիտի ազատէ զիս, ափսո՜ս ինծի, ափսո՜ս։

—Ո՞ւր, Ֆէրնա՛ն, ո՞ւր կը վազես, ըսաւ ձայն մը։

Երիտասարդը յանկարծ կենալով, շուրջը նայեցաւ ու Քատրուսը տեսաւ, որ Տանկլարի հետ սեղան նստած էր սարփինայի մը տակ։

—Ինչո՞ւ չես գար, ըսաւ Քատրուս, այնքան անհրաժեշտ գործե՞ր ունիս որ ատեն չես գտներ բարեկամներուդ բարեւ տալու։

—Մանաւանդ երբ առջեւնին շիշ մը գինի ունին գրեթէ լեցուն, ըսաւ Տանկլար։

Ֆէրնան ապշութեամբ նայեցաւ երկու բարեկամներուն, ու բան մը չպատասխանեց.

—Բոլորովին շուարած կ'երեւի, ըսաւ Տանկլար, ծունկովը Քատրուսը հրելով. պիտի սխալի՞նք արդեօք, մեր գուշակութեան հակառակ՝ Տանթէսի ուզա՞ծը պիտի ըլլայ։

—Ո՛հ, տեսնենք, ըսաւ Քատրուս, եւ դէպ ի երիտասարդը դառնալով, ըսէ՛ նայինք, Քաթալանցի, ի՞նչ կը խորհիս։

Ֆէրնան իր երեսին քրտինքը սրբեց, ու դալարազարդ հովանոցակին մէջ մտաւ, որուն ստուերը կարծես թէ իր խորհուրդներուն քիչ մը հանդարտութիւն կ'ընծայէր, եւ զովութիւնը տկարացած մարմնոյն զօրութիւն կուտար։

—Բարեւ ձեզ. զիս կանչեցիք կարծեմ. ըսաւ ու սեղանին բոլորտիքը եղած աթոռներէն մէկուն վրայ նստաւ իսկոյն։

—Այո՛, ես քեզ կանչեցի, որովհետեւ խենդի պէս կը վազէիր, վախցայ որ գուցէ երթաս ինքզինքդ ծովը նետես, ըսաւ Քատրուս ծիծաղելով։ Չե՞ս գիտեր որ երբ մարդ բարեկամներ ունենայ, ոչ թէ միայն գաւաթ մը գինի տալու է անոնց, այլ քանի մը դոյլ ջուր խմելուն արգելք ըլլալու է։

Ֆէրնան հեծեծելու պէս բուռն հառաչանք մը արձակեց, ու գլուխը իր երկու դաստակներուն կռթնցուց, զորս սեղանին վրայ դրած էր խաչաձեւ:

—Կ'ուզե՞ս որ քեզի ըսեմ, Ֆէրնան, կրկնեց Գատրուս սինլքոր մարդոց սովորական բրտութեամբ մը, որոնք հետաքրքրութեան սիրոյն, բոլորովին կը մոռնան քաղաքավարութիւնը, դուն յուսահատ տարփածուի կը նմանիս:

Այս կատակէն յետոյ սկսաւ ծիծաղիլ բարձրաձայն:

—Ի՞նչ կ'ըսես, պատասխանեց Տանկլար,ատանկ տղայ մը կարելի բան չէ որ արհամարհուի, կը սխալիս Գատրուս:

—Ո՛չ, կրկնեց Գատրուս, նայէ՛ անգամ մը ինչպէս կը հեծէ: Ֆէրնա՛ն, գլուխդ վեր առ, ու պատասխան տուր մեզի: Անվայել բան է պատասխան չտալ մեր որպիսութիւնը հարցնող բարեկամներուն:

—Իմ որպիսութիւնս լաւ է, ըսաւ Ֆէրնան, իր բռունցքը սեղմելով, բայց առանց գլուխը վերցնելու:

—Կը տեսնե՞ս, Տանկլար, ըսաւ Գատրուս, աչքին ծայրովը իր բարեկամին նշան մը ընելով, Ֆէրնան՝ որ բարի ու ազնիւ Քաթալանցի մըն է, ու Մարսիլիայի լաւագոյն ձկնորսներէն մէկը, Մէրսէտէս անունով գեղեցիկ աղջկան մը սիրահարած է, բայց դժբախտաբար կ'երեւի թէ այս գեղեցիկ աղջիկն ալ Փարաոն նաւուն երկրորդ նաւապետը կը սիրէ, և որովհետեւ Փարաոն նաւը այսօր նաւահանգիստը հասաւ, չե՞ս հասկընար, թէ ինչ պատահած է:

—Չէ՛, չեմ հասկնար, ըսաւ Տանկլար:

—Խեղճ Ֆէրնանին ճամբայ տրուած է, շարունակեց Գատրուս:

—Ետքը՞, ըսաւ Ֆէրնան գլուխը վեր առնելով և Գատրուսին նայելով այնպիսի մարդու մը պէս, որ առիթ կը փնտռէ իր բարկութիւնը թափելու. ուրեմն կը կարծե՞ս որ Մէրսէտէս մէկէն կախում չունի, ու ազա՞տ է իր ուզածը սիրելու:

—Եթէ այդպէս է, ըսաւ Գատրուս, այդ ուրիշ բան է. Քաթալանցի կը ճանչնամ քեզ, և լսած եմ որ Քաթալանները իրենց ոտք կոխած տեղը երբեք մրցակիցի մը չեն տար, մանաւանդ Ֆէրնանը, որուն վրէժխնդրութիւնը սոսկալի է, կ'ըսեն:

Ֆէրնան անփութօրէն ժպտելով ըսաւ.

—Սիրահար մը երբեք սոսկալի չէ:

—Խե՜ղճ տղայ, կրկնեց Տանկլար, երիտասարդին սրտանց ցաւակից ձեւացնելով ինքզինքը. ինչ ընէ, ամենեւին չէր յուսար որ այսպէս յանկարծ պիտի գայ Տանթէս: Թուցէ մեռած կամ անհաւատարիմ կը կարծէր զայն, ո՞վ գիտէ, այդ բաները յանկարծ պատահելուն համար. աւելի ցաւ կ'առթեն մեզի:

—Ճշմարիտ է, ըսաւ Գատրուս, որ կը խօսէր ու կը խմէր, և որուն վրայ Լամալկի գինին սկսած էր իր ազդեցութիւնը զգալի ընել, Տանթէսի յաջող ժամանումը միայն Ֆէրնանին չվնասեց, այնպէս չէ՞, Տանկլար:

—Այո՛, կը համարձակիմ ըսելու որ այդ բանը աղէտ մը պիտի բերէ անոր գլխուն:

—Բայց ի՛նչ փոյթ, կրկնեց Գատրուս Ֆէրնանի գաւաթը գինի լեցնելով, ու իր գաւաթին մէջ ալ, զոր ութը կամ տասը անգամ խմած ու պարպած էր. իսկ Տանկլար հազիւ թէ իր գաւաթէն քիչ մը խմած էր, ինչ փոյթ, Տանթէս գեղեցիկ Մէրսէտէսի հետ պէտք է ամուսնանայ. այդ բանին համար եկած է ան:

Այդ միջոցին Տանկլար սուր նայուածքով մը կը դիտէր երիտասարդը, որուն սրտին վրայ հալած կապարի պէս կ'իջնէին Գատրուսի խօսքերը:

—Հարսանիքը ե՞րբ պիտի ըլլայ, հարցուց:

—Եղած չէ դեռ, մրմնջեց Ֆէրնան:

—Եղած չէ, բայց պիտի ըլլայ. ըսաւ Գատրուս. ինչպէս ստոյգ է Տանթէսի Փարաոն նաւուն նաւապետ ըլլալն ալ, այնպէս չէ՞, Տանկլար:

Հաչուակալը այդ անյուսալի խօսքէն մղուած, Գատրուսին դարձաւ ու անոր երեսը նայեցաւ, հասկնալու համար թէ արդեօք դիտմա՞մբ կ'ըսէր, բայց գինովութենէն գրեթէ ան-

զգայ եղած ըլլալով, նախանձէն զատ ուրիշ բան չտեսաւ Քատրուսի դէմքին վրայ:

—Օ՜ն, ըսաւ Տանկլար, գաւաթները լեցնելով, խմենք Էտմոն Նաւապետին ու Մերսէտէսի ամուսնոյն կենացը:

Քատրուս ծանրացած ձեռքով մը վերցուց գաւաթը և մէկ ումպով խմեց. Ֆէրնան իր գաւաթը առաւ ու գետինը զարկաւ կոտրեց:

—Ա՛ ա՛, ըսաւ Քատրուս, ի՞նչ կը տեսնեմ հոն, դէպ ի Քաթալաններու կողմը բլուրին վրայ նայէ՛. Ֆէրնան, դուն ինէ աւելի սրատես ես. կարծեմ թէ պղտոր կը տեսնեն աչքերս... որովհետեւ ինչպէս գիտես գինին խաբեբայ է...: Կարծես երկու տարփածուներու նման քով քովի ու ձեռք ձեռքի տուած՝ կը քալեն...: Ո՜հ, մտքերնուն չեն անցներ որ զիրենք կը տեսնենք. տեսէք գիրկընդխառնուած կ'ընթանան իրարու հետ:

Տանկլար լաւ կը դիտէր Ֆէրնանին բոլոր սրտնեղութիւնը և դէմքին այլայլութիւնը:

—Կը ճանչնա՞ս զանոնք, Պարոն Ֆէրնան:

—Այո՛, պատասխանեց Ֆէրնան ցած ձայնով, Պ. Էտմոնը ու օրիորդ Մերսէտէսն են:

—Ա՜հ, կը տեսնե՛ս, ըսաւ Քատրուս, ինչպէս ճանչցայ զանոնք:

—Տանթէ՛ս, գեղանի աղջիկ, քիչ մը այս կողմը եկէ՛ք ու ըսէ՛ք մեզի թէ ե՞րբ պիտի ըլլայ ձեր հարսանիքը, որովհետեւ Պարոն Ֆէրնան չուզեր մեզի ըսել:

—Լո՛ւռ կեցիր, ըսաւ Տանկլար, Քատրուսը բռնել ձեւացընելով, որ գինովներու յամառութեամբ, կը ջանար սարփինայէն դուրս ելլել. ուղիղ կայնէ, ու ձգէ որ սիրահարները հանդարտօրէն սիրեն զիրար. նայէ՛ Պ. Ֆէրնանը, և օրինա՛կ առ անկէ. տե՛ս ինչպէս խելօք է ան:

Գուցէ Ֆէրնան համբերութիւնը սպառած և Տանկլարի խօսքերէն գրգռուած, ինչպէս ցուլը՝ կարմիր դրօշակէն, դուրս պիտի նետուէր. որովհետեւ ոտքի վրայ ելած արդէն, կարծես

կը պատրաստուէր իր ախոյեանին վրայ յարձակելու. բայց Մերսէտէս զուարթադէմ և ուղիղ կայնած՝ իր գեղեցիկ գլուխը վեր առաւ ու վառվռուն աչքերովը նայեցաւ Ֆէրնանի: Այս վերջինը յիշեց այն ատեն աղջկան ըրած սպառնալիքը, թէ ինքն ալ պիտի մեռնէր եթէ Էտմոն մեռնելու ըլլար, ու վհատած, իր աթոռին վրայ նստաւ նորէն:

Տանկլար, փոփոխակի, այդ երկուքին նայեցաւ, որոնց մէկը գինովութենէ անզգայացած, իսկ միւսը սիրոյ զօրութենէն յաղթուած էր:

—Այս անմիտներէն բան մը հասկընալիք չունիմ, ըսաւ ցած ձայնով. կը վախնամ որ գինովի մը և վատ մարդու մը միջեւ կը գտնուիմ հոս. ահա նախանձոտ մը որ գինիով կը զուարճանայ, մինչ սրտին դառնութենէն բարկանալու էր. ահա՛ տկարամիտ մըն ալ, որուն ձեռքէն կ'առնեն տարփածուն, և ինքը գոհ կ'ըլլայ տղու պէս լալով և գանգատելով: Բայց անիկա բոցավառ աչքեր ունի այն Սպանիացիներուն, Սիկիլիացիներուն և Քալապրացիներուն պէս, որոնք շատ լաւ գիտեն իրենց վրէժը լուծել և այնպիսի բռունցքներ ունի, որոնք մսագործի լախտին պէս կարող են եզան գլուխ մը ջախջախելու: Ստուգիւ Էտմոնին բախտը յաջող է, այդ գեղեցիկ աղջկան հետ պիտի ամուսնանայ, նաւապետ պիտի ըլլայ ու խայտառակ պիտի ընէ մեզ... եթէ ես այս գործին մէջ չխառնուիմ, ըսաւ Տանկլար տխուր քմծիծաղով մը:

—Էտմո՜ն, գոչեց Քատրուս, կէս մը ոտքի ելած ու բռունցքը սեղանին վրայ կռթընցուցած, Էտմո՜ն, բարեկամներդ չե՞ս տեսներ, միթէ հիմակուընէ հպարտացած ըլլալով, մեզի հետ չե՞ս ուզեր խօսիլ:

—Ո՛չ, սիրելիդ իմ Քատրուս, պատասխանեց Տանթէս, հպարտութիւն չեմ զգար, բայց երջանիկ եմ: Այնպէս կը կարծեմ որ երջանկութիւնը հպարտութենէն աւելի կը մթագնէ մարդուն աչքերը:

—Շա՛տ լաւ, հիմայ հասկըցայ, ըսաւ Քատրուս: Բարեւ լո՛յս, տիկին Տանթէս:

Մերսէտէս ծանրութեամբ բարեւելով, ըսաւ.

—Այդպէս չեմ կոչուիր դեռ. և մեր քաղաքին մէջ ամուսնանալէ առաջ եթէ աղջիկները իրենց նշանածին անունովը կոչուին, ձախորդութեան կը հանդիպին. կ'ըսեն. կ'աղաչեմ, Մերսէտէս կոչէ՛ զիս:

—Պէտք է ներողամիտ գտնուիլ բարեխիղճ Գատրուսին, ըսաւ Տանթէս, որովհետեւ ոչինչ բաներու մէջ կը սխալի:

—Ուրեմն, շատ չանցած, հարսնիքը պիտի ըլլայ, Պ. Տանթէս, ըսաւ Տանկլար, բարեւելով զանոնք:

—Կարելի եղածին չափ շուտով պիտի ընենք, Պ. Տանկլար. այսօր մեր տունը ամուսնութեան պայմանագրութիւնը պիտի կնքենք, ու վաղը կամ գուցէ հետեւեալ օրը, հոս նշանտուքի ճաշը պիտի ընենք: Յուսամ թէ բարեկամներս իրենց ներկայութեամբը պիտի պատուեն զիս. ըսել կ'ուզեմ որ հրաւիրուած էք, Պարոն Տանկլար, ինչպէս նաեւ դուն, Գա՛տրուս:

—Ֆէրնա՞նը, ըսաւ Գատրուս, քթին տակէն ծիծաղելով, ան ալ հրաւիրուա՞ծ է:

—Կնոջս եղբայրը իմ եղբայրս է, ըսաւ Էտմոն. խորապէս պիտի ցաւէինք ես ու Մերսէտէս, եթէ այդպիսի ուրախալից ատեն մը մեր մէջ չգտնուի:

Ֆէրնան բերանը բացաւ պատասխան տալու համար, բայց ձայնը քաշուելով, չկրցաւ բառ մը արտասանել:

—Այսօր խօսքը պիտի կտրուի՛, վաղը կամ միւս օրը նշանտուքը պիտի ըլլայ. ո՜հ, որքան կ'աճապարէք Պ. Նաւապետ:

—Պ. Տանկլար, կրկնեց Էտմոն ժպտելով. ինչպէս Մերսէտէս հիմա Գատրուսին ըսաւ, ես ալ քեզի կ'ըսեմ. մի՛ տար ինծի այն անունը որ դեռ չի պատշաճիր. գուցէ ձախորդութեան մը հանդիպիմ:

—Ներեցէ՛ք, պատասխանեց Տանկլար, ձեզի ըսի թէ շատ կը շտապէք. ինչո՞ւ համար, դեռ ատեն ունինք, Փարաւոն նաւը երեք ամիսէն առաջ ճամբայ պիտի չելլէ:

—Մարդ միշտ կ'աճապարէ երջանիկ ըլլալու, Պ. Տանկլար. որովհետեւ երբ երկար ատեն նեղութիւն քաշած է, իր երջա-

նիկ ըլլալուն դժուարաւ կը հաւատայ: Միայն անձնասիրութիւնը չէ որ ինծի այդպէս ընել կուտայ, այլ պէտք է որ Բարիզ երթամ:

—Ո՜հ, իրա՞ւ կ'ըսես. առաջին անգամն է որ Բարիզ կ'երթաս, Տանթէս:

—Այո՛:

—Գո՞րծ ունիս հոն:

—Ինծի համար չեմ երթար, այլ մեր խեղճ Լըքլէր նաւապետին վերջին հրամանը կատարելու համար, գիտես. Տանկլար, որ այս բանը նուիրական պարտք մըն է: Բայց անհոգ եղիր, երթ ու դարձի համար շատ ժամանակի պէտք չկայ:

—Այո՛, այո՛, կը հասկընամ, ըսաւ Տանկլար բարձրաձայն:

Յետոյ կամաց մը:

—Բարիզ պիտի երթայ, անտարակոյս մեր նաւապետին տուած նամակը տեղը յանձնելու համար: Այս նամակը բան մը կը ձգէ միտքս, սքանչելի խորհուրդ մը: Ա՜հ, Տանթէս բարեկամս, դեռ Փարաւոնին նաւապետ չեղար:

Յետոյ դէպ ի Էտմոնը դառնալով, որ արդէն կը հեռանար,

—Երթա՛ս բարով, գոչեց:

—Շնորհակալ եմ, պատասխանեց Էտմոն, գլուխը ետին դարձնելով ու բարեկամական շարժում մը ընելով: Յետոյ երկու սիրահարները հանդարտութեամբ և ուրախութեամբ իրենց ճամբան շարունակեցին:

Դ. ԳԼՈՒԽ

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ

Տանկլար աչքը չհեռացուց Էտմոնի և Մէրսէտէսի վրայէն մինչև որ երկու սիրահարները Ս. Նիքօլայի ամրոցին անկիւններէն մէկուն ետին աներևոյթ եղան. յետոյ ասդին դառնալով՝ տեսաւ որ Ֆէրնան, գունատած, աթոռին վրայ նստած էր նորէն և կը դողդղար, իսկ Գատրուս գինիի երգի մը բառերը կակազելով կ'երգէր:

—Ահ, սիրելի պարոն, ըսաւ Տանկլար, խօսքը Ֆէրնանին ուղղելով, այս ամուսնութիւնը ամէն մարդու հաճելի չպիտի թուի կարծեմ:

—Յուսահատութիւն կը պատճառէ ինծի, պատասխանեց Ֆէրնան:

—Մէրսէտէսը կը սիրէի՞ր միթէ:

—Իրար ճանչնալէս ի վեր, միշտ սիրած եմ զայն:

—Եւ փոխանակ այդ բանին ճարը գտնելու, մազե՞րդ կը փետտես հիմա: Զարմա՛նք. չէի կարծեր որ քու ազգիդ պատկանողները այդպէս կը շարժին:

—Ի՞նչ կ'ուզես որ ընեմ, հարցուց Ֆէրնան:

—Էհ, ես ի՞նչ գիտնամ, ինծի վերաբերող բան մը չէ: Կարծեմ թէ օրիորդ Մէրսէտէսի սիրահարուողը ես չեմ, այլ դուն: Փնտռեցէք եւ կը գտնէք, կ'ըսէ Աւետարանը:

—Արդէն գտած էի ես:

—Ի՞նչ բան:

—Մարդը դաշոյնով զարնելու մտադիր էի, բայց կինը ըսաւ որ եթէ նշանածին գլխուն դժբաղդութիւն մը գայ, ինքզինքը պիտի մեռցընէ:

—Կը հաւատա՞ս, այդ բանը կ'ըսեն, բայց երբեք չեն կատարեր:

—Մէրսէտէսը չես ճանչնար, պարոն. իր ըրած սպառնալիքը գործքով կը կատարէ ան:

—Յիմա՛ր, ըսաւ Տանկլար կամաց մը. աղջիկը ինքզինքը մեռցնէ կամ ոչ, իմ ի՞նչ փոյթս է, միայն թէ Տանթէս նաւապետ չըլլայ:

—Բայց Մէրսէտէսը մեռնելէն առաջ, ես աւելի յօժարութեամբ կը մեռնիմ, պատասխանեց Ֆէրնան այնպիսի ձայնով մը, որ հաստատամտութիւնը ցոյց կուտար:

—Ի՜նչ սիրահարութիւն է աս, ըսաւ Գատրուս, որուն լեզուն գինիէն ծանրացած էր. և կամ թէ ես բան մը չեմ հասկընար:

—Տեսնե՛նք, ըսաւ Տանկլար, դուն ազնիւ երիտասարդ մը կ'երեւաս, քեզ այդ նեղութենէն ազատել կ'ուզեմ, բայց...:

—Այո՛, տեսնենք, ըսաւ Գատրուս:

—Սիրելիս, պատասխանեց Տանկլար, դուն երեք քառորդ գինովցած ես, շիշդ լմնցո՛ւր, որ կատարեալ խմած ըլլաս. խմէ՛, ու մեր ըրածին մի՛ խառնուիր: Այս գործը ընողին խելքը գլուխը ըլլալու է:

—Ո՞վ, ե՞ս խմած եմ, ըսաւ Գատրուս, գնա՛ բանդ. այդ շիշերուն չորս հատն ալ կրնամ խմել, որոնք Գօլօնիայ ջուրի սրուակներէն մեծ չեն.... հայր Բամֆիլ, գինի՛ բեր:

Ու բառը գործով ապացուցանելու համար, գաւաթը սեղանին զարկաւ:

—Ի՞նչ կ'ըսէիք, պարոն, հարցուց Ֆէրնան, անհամբերութեամբ ընդմիջուած խօսքին հետեւութիւնը հասկնալու համար:

—Ի՞նչ կըսէի, միտքէս ելաւ: Սա գինով Գատրուսը խօսքիս թելը կորսնցնել տուաւ ինծի:

—Որչա՛փ կ'ուզես գինով ըսէ. վա՜յ անոնց որ գինի չեն խմեր, որովհետեւ կը վախնան որ գինին իրենց չար դիտաւորութիւնը սիրտերնէն դուրս կը հանէ:

Գատրուս սկսաւ այն ատենները մեծ հռչակ հանած երգի մը վերջին երկու տողը երգել.

Բոլոր չար մարդիկ ջուր միայն կ'ըմպեն
Ինչ որ լաւ գիտենք մեծ Ջրհեղեղէն:

—Ձիս նեղութենէ ազատել կ'ուզէիր, կրկնեց Ֆէրնան, բայց.... ըսելով ձգեցիր:

—Այո՛, բայց... քեզ նեղութենէ ազատելու համար՝ բաւական է որ Տանթէս քու սիրած աղջկանդ հետ չամուսնանայ. կարծեմ այդ ամուսնութիւնը շատ լաւ կրնայ ետ մնալ, առանց Տանթէսի մեռնելուն:

—Միայն մահը կրնայ իրարմէ բաժնել զանոնք, ըսաւ Ֆէրնան:

—Բա՛րեկամ, դուն ծովային խեցիի մը պէս կը տրամաբանես, ըսաւ Քատրուս, ահա՛ Տանկլար որ խորամանկ, խորամիտ և նենգամիտ է, սխալած ըլլալդ փաստերով պիտի ապացուցանէ հիմա: Հաստատէ՛ ըսածս, Տանկլար, քեզի համար երաշխաւոր եղայ, հասկցո՛ւր Ֆէրնանին որ հարկ չկայ Տանթէսի մեռնելուն. ասկէ զատ՝ մեղք է որ Տանթէս մեռնի. բարի երիտասարդ մըն է, ու ես կը սիրեմ զայն, կենա՛ցդ, Տանթէս:

Ֆէրնան տեղէն ելաւ անհամբերութեամբ:

—Թո՛ղ ուզածը ըսէ, ըսաւ Տանկլար, երիտասարդը բռնելով, հակառակ գինով ըլլալուն, սխալ չէ ըսածը, բացակայութիւնը մահուան պէս ամէն բան իրարմէ կը զատէ. ենթադրենք որ Էտմոնի և Մէրսէտէսի միջեւ բանտի մը պատեր ըլլան. մէկին վրայ գերեզմանի քար մը գտնուածի պէս անպատճառ պիտի զատուին իրարմէ:

—Այո՛, բայց բանտէն կրնայ ելլել, ըսաւ Քատրուս, որ մնացած քիչ մը իմացականութեամբ կը ջանար խօսակցութեան խառնուիլ. մարդ մը երբ բանտէն ելլէ ու անոր անունը Էտմոն Տանթէս ըլլայ. անշուշտ կը լուծէ իր վրէժը:

—Փոյթ անգամ չէ, ըսաւ Ֆէրնան մեղմաձայն:

—Բայց ինչո՞ւ Տանթէսը բանտ պիտի դնեն, ըսաւ Քատրուս, ան ո՛չ գողութիւն ըրած է և ո՛չ ալ մարդասպանութիւն:

—Լռէ՛ դուն, ըսաւ Տանկլար:

—Չէ՛, չեմ ուզեր լռել, ըսաւ Քատրուս, կ'ուզեմ որ ինծի ըսէք թէ ինչո՞ւ համար Տանթէս պիտի բանտարկուի: Ես Տանթէսը կը սիրեմ. կենա՛ցդ, Տանթէս:

Ու նորէն գաւաթ մը գինի կլլեց Քատրուս:

Տանկլար դերձակին տկարացած աչքերուն մէջ գինովութեան յառաջադիմութիւնները կը դիտէր. յետոյ Ֆէրնանին դառնալով ըսաւ.

—Ուրեմն կը տեսնես որ մեռցնելու պէտք չկայ:

—Ստուգիւ այնպէս է. քիչ մը առաջ ըսածիդ պէս, եթէ Տանթէսը բանտարկելու միջոց մը գտնուի....: Բայց այդ միջոցը ի՞նչպէս գտնելու է

—Եթէ փնտռենք՝ կրնանք. գտնել, ըսաւ Տանկլար: Բայց ի՞նչու այս գործին խառնուիմ: Ինծի վերաբերող բա՞ն մըն է:

—Այս գործին քեզի հետ վերաբերութիւն ունենալը չեմ գիտեր, ըսաւ Ֆէրնան, անոր թեւը բռնելով. բայց սա գիտեմ որ Տանթէսի դէմ մասնաւոր ատելութիւն մը ունիս: Ո՛վ որ կ'ատէ մէկը՝ ուրիշ ատողի մը զգացումները լաւ կը ճանչնայ:

—Ե՞ս Տանթէսի դէմ ատելութիւն ունենամ: Բնաւ երբեք, հաւատա՛ խօսքիս: Դժբախտ տեսայ քեզ, և քու դժբախտութիւնդ շարժեց գութս, և ոչ ուրիշ բան: Բայց որովհետեւ դուն կը կարծես որ ես իմ օգտիս համար կ'աշխատիմ. մնա՛ս բարով, սիրելի բարեկամս, ինքնիրենդ գլխուդ ճարը տե՛ս:

Ու Տանկլար ոտքի ելլելու պէս ըրաւ:

—Չէ՛, ըսաւ Ֆէրնան, բռնելով զայն. կեցի՛ր, Տանթէսի հետ թշնամութիւն ունենաս կամ ոչ, հոգս չէ. ես թշնամութիւն ունիմ, և յայտնապէս կը խոստովանիմ: Միջոց մը գտիր և ես ի գործ կը դնեմ, միայն թէ մէկը չմեռնի, որովհետեւ Մէրսէտէս ըսաւ որ եթէ Տանթէս մեռնի՝ ինքն ալ անձնասպան պիտի ըլլայ:

Քատրուս, որ գլուխը սեղանին վրայ կռթնցուցած էր, վեր առաւ և ծանրացած ու կարմրած աչքով Ֆէրնանին ու Տանկլարին նայելով, ըսաւ.

—Տանթէսը մեռցնե՞լ կ'ուզէք...: Ո՞վ է այն մարդը որ Տանթէսը մեռցնելու խօսք կ'ընէ: Ես չեմ ուզեր որ զայն մեռցընեն. ... իմ բարեկամս է ան...: Այս առտու ինծի դրամ տալ ուզեց, ինչպէս անգամ մը իրեն տուի... ես չեմ ուզեր որ Տանթէսը մեռցնեն...:

—Ցի՛մար, Տանթէսը մեռցնենք ըսողը ո՞վ է, ըսաւ Տանկ-

լար: Պարզ կատակ մըն է բաժնիս: Խմէ՛ անոր կենացը, և հանդա՛րտ ձգէ զիս, ըսելով, Քատրուսի գաւաթը գինի լեցուց:

—Այո՛, այո՛, Տանթէսի կենա՛ցը, ըսաւ Քատրուս գաւաթը պարպելով, անոր կենա՛ցը. անոր կենա՛ցը... ահա...:

—Բայց միջոցը... ի՞նչ միջոց գտնելու է, ըսաւ Ֆէրնան:

—Դեռ չգտա՞ր:

—Չէ՛, դուն վրադ առիր այդ բանը:

—Ճշմարիտ է, պատասխանեց Տանկլար, Ֆրանսացիները Սպանիացիներուն վրայ սա գերազանցութիւնը ունին որ Սպանիացիները կը խորհին, իսկ Ֆրանսացիները կը հնարեն:

—Հնարէ՛ ուրեմն, ըսաւ Ֆէրնան անհամբերութեամբ:

—Տղա՛յ, կանչեց Տանկլար, գրիչ մը, մելան և թուղթ բեր:

—Գրի՞չ, մելա՞ն և թո՞ւղթ, կրկնեց Ֆէրնան կամաց մը:

—Այո՛, ես հաշուակալ գործակալ եմ. գրիչը, մելանը ու թուղթը իմ գործիքս են, և ատոնց առանց՝ գործ չեմ կրնար տեսնել:

—Գրի՛չ մը, մելան և թուղթ բերէ՛ք, ըսաւ Ֆէրնան ևս:

—Ահա՛, ըսաւ մանչը, խնդրուած բաները բերելով:

—Երբ կը խորհիմ, ըսաւ Քատրուս ծանրացած ձեռքը թուղթին վրայ դնելով, թէ ատոնցմով աւելի դիւրաւ կարելի է մարդ մեռցնել, քան թէ անտառի մը մէկ ծայրը սպասելով, ես միշտ աւելի վախցած եմ գրիչէ, կաղամարէ և թերթ մը թուղթէ քան թէ սուրէ կամ ատրճանակէ:

—Գարշելին, երևցածին չափ արբեցած չէ դեռ, ըսաւ Տանկլար. գաւաթը լեցո՛ւր որ խմէ, Ֆէրնան:

Այս վերջինը Քատրուսին գաւաթը լեցուց, ու դերձակը ճշմարիտ գինեմոլի մը պէս, թղթին վրայէն ձեռքը բարձրացուց ու գաւաթը առաւ:

Քաթալանցին անդադար կը դիտէր դերձակին շարժումները, մինչև որ Քատրուս վերջին խմածէն յաղթուելով, գաւաթը սեղանին վրայ ձգեց քան թէ վար դրաւ:

—Ուրեմն... ըսաւ Քաթալանցին, տեսնելով որ վերջին գաւաթէն ետքը, Քատրուս սկսած էր անզգայանալ:

—Ուրեմն, օրինակի համար կ'ըսէի, կրկնեց Տանկլար, թէ Տանթէսի ըրած վերջին ուղևորութենէն ետքը, որուն մէջ Նէապօլիս և Էլպա կղզին հանդիպեցաւ, եթէ մէկը ընդհանուր դատախազի օգնականին մատնէր զայն իբր Պոնաբարդեան պաշտօնեայ մը...:

—Ե՛ս կը մատնեմ, ըսաւ երիտասարդը աշխուժով:

—Այո՛, բայց այն ատեն մատնութեան թուղթդ ստորագրել կուտան քեզի և մատնած մարդուդ հետ երես երեսի կը բերեն: Ես գիտեմ թէ ի՛նչ պէտք է ըրած ամբաստանութիւնդ հաստատելու համար. կը հաղորդեմ քեզի. բայց Տանթէս յաւիտեան բանտը չկրնար մնալ, օրին մէկը բանտէն կ'ելլէ և ելած օրը վա՛յ այն մարդուն, որ պատճառ եղած է բանտ մտնելուն:

—Ո՛հ, ես ալ ատ կ'ուզեմ, ըսաւ Ֆէրնան. թող գայ ինծի հետ կռուի:

—Այո՛, բայց Մէրսէտէ՛ս, Մէրսէտէ՛ս. ան որչափ պիտի ատէ քեզ, եթէ իր սիրեցեալ Էտմոնին վերնամաշկը միայն ճանկռտելու դժբախտութիւնը ունենաս:

—Իրաւ է, ըսաւ Ֆէրնան:

—Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Տանկլար, ատանկ բանի մը յանձնառու եղողը, իմ ըրածիս նման, սա գրիչը առնելու, մելանին մէջ թաթխելու և գիրը չճանչցուելու համար, ձախ ձեռքով հետևեալ փոքրիկ ամբաստանութիւնը գրելու է պարզապէս:

Եւ Տանկլար, օրինակ մը տալու համար, ձախ ձեռքովը և իր սովորական գիրին բնաւ չնմանող չեղ գիրերով՝ հետևեալ տողերը գրեց ու Ֆէրնանին տուաւ, որ ցած ձայնով կարդաց.

Արքայական գահու եւ կրօնքի բարեկամ մը ընդհանուր դատախազի օգնականին կ'իմացնէ որ Փարաւոն նաւուն երկրորդ նաւապետ Էտմոն Տանթէս, որ այս առտու Իզմիրէն հասաւ, Նէապոլիս եւ Փորթօ-Ֆէրրայօ հանդիպելէ յետոյ, Միւրայէն յափշտակիչին նամակ մը տարաւ եւ յափշտակիչէն Բարիզի Պոնաբարդեան ժողովրդեան ուղղուած նամակ մը բերած է իր հետ:

Տանիքի յանցանքին ապացոյցը ձեռք կրնայ բերուիլ, զայն բանտարկելով, որովհետեւ յիշեալ նամակը կամ իր վրայ, կամ հօրը տանը եւ կամ Փարաւոն նաւուն մէջ իր սենեակը պիտի գտնէք:

—Շատ լաւ, շարունակեց Տանկլար, այս ձեւ վրէժխնդրութիւնդ սովորական նշանակութիւն մը կրնայ ունենալ. այն ատեն բնաւ քու վրադ չկրնար ծանրանալ եւ գործը ինքնին կը քալէ: Կը մնայ նամակը ծալել, ինչպէս որ կ'ընեմ, եւ վրան գրել. «*Պարոն օգնական ընդհանուր դատախազի*»: Ասանկով ամէն բան կը յաջողի:

Ու Տանկլար հասցէն գրեց:

—Այո՛, ամէն բան կը յաջողի, ըսաւ, Քատրուս, որ խմացականութեան վերջին ճիգ մը ընելով նամակին կարդացուելուն ականջ դրած էր, եւ բնազդաբար կը հասկնար թէ այսպիսի ամբաստանութիւն մը ո՛րչափ դժբախտութիւններ կրնար առաջ բերել. այո՛, ամէն բան կը յաջողի, միայն թէ անիրաւութիւն մըն է եղածը:

Քատրուս ձեռքը երկնցուց որ նամակը առնէ:

—Այսպէս, ըսաւ Տանկլար, նամակը Քատրուսի ձեռքէն հեռացնելով, ինչ որ կ'ըսեմ եւ ինչ որ կ'ընեմ, զուարճութեան համար է, ամէնէն առաջ ես պիտի ցաւիմ եթէ Տանթէսի գլխուն բան մը գայ, այդ բարի Տանթէսին: Ուստի, ահա՛... նամակը ձեռքերուն մէջ առնելով ճմռթկեց ու դալարազարդ հովանոցակին մէկ անկիւնը նետեց:

—Շատ լաւ, ըսաւ Քատրուս, Տանթէս իմ բարեկամս է եւ չեմ ուզեր որ գէշութիւն մը ընեն անոր:

—Է՜հ, ո՞վ է անոր գէշութիւն ընել ուզողը, ո՛չ ես եմ եւ ո՛չ ալ Ֆէրնան, ըսաւ Տանկլար, ոտքի ելլելով ու երիտասարդին նայելով, որ նստած տեղէն, աչքին ծայրովը, կաթոգին կը նայէր անկիւնը նետուած ամբաստանութեան թղթին:

—Ուրեմն եթէ այդպէս է, ըսաւ Քատրուս, գինի թող բերեն. Էտմոնի ու գեղեցիկ Մէրսէտէսի կենացը գինի խմել կ'ուզեմ:

—Արդէն շատ խմած ես, գինեմոլ, ըսաւ Տանկլար. եթէ

աւելի խմես, պիտի հարկադրուիս հոս պառկիլ, որովհետեւ չպիտի կրնաս ոտքի ելլել:

—Ե՞ս, ե՞ս չպիտի կրնամ ոտքի ելլել, ըսաւ Քատրուս արբեցած մարդու ինքնավստահութեամբը ոտքի ելլելով: Գրաւ կը դնեմ, որ Աքուլեան զանգակատունը կրնամ ելլել առանց տատանելու:

—Շատ լաւ, կ'ընդունիմ գրաւդ, ըսաւ Տանկլար. բայց թո՛ղ վաղուան մնայ: Հիմա տուն դառնալու ատեն է. Թեւդ տո՛ւր որ երթանք:

—Երթա՛նք, ըսաւ Քատրուս, բայց թեւիդ պէտք չունիմ ատոր համար: Ֆէրնան, դուն ալ մեզի հետ Մարսիլիա պիտի գաս:

—Ո՛չ, ըսաւ Ֆէրնան, ես Քաթալան կը դառնամ:

—Պէտք չէ որ հոն երթաս. մեզի հետ Մարսիլիա եկո՛ւր կ'ըսեմ քեզի:

—Մարսիլիա գործ չունիմ եւ չեմ ուզեր երբեք հոն երթալ:

—Ինչո՞ւ ատանկ կ'ըսես, չե՞ս ուզեր գալ, սիրելիս. ուրեմն ուզածիդ պէս ըրէ. ամէն մարդ ազատ է: —Եկո՛ւր, Տանկլար, թողունք որ պարոնը Քաթալան երթայ, որովհետեւ այնպէս կ'ուզէ:

Տանկլար, Քատրուսի հաճութիւնը տեսնելով, դէպ ի Մարսիլիայի կողմը ուղղուեցաւ, եւ որպէս զի Ֆէրնանը կարճ եւ դիւրին ճամբէ մը առաջնորդէ, փոխանակ Րիվ-Նէօվ ըսուած նաւամատոյցէն անցնելու, Սէն-Վիքթօր ըսուած դռնէն անցաւ:

Քատրուս երերալով ու Տանկլարին բազկին կռթնած, միասին կը յառաջանար:

Երբ քանի քայլ չափ հեռացան, Տանկլար ետին դարձաւ ու տեսաւ որ Ֆէրնան վազելով առաւ թուղթը, ծոցը դրաւ, յետոյ անմիջապէս հովանոցակէն դուրս նետուելով, Փիլօնի կողմը գնաց:

—Ինչ կ'ընէ ան, յարեց Քատրուս, ուրեմն մեզ խաբեց Քաթալան պիտի երթամ ըսելով, բայց կը տեսնեմ որ քաղաք կը դառնայ: Ֆէրնա՛ն, կը սխալիս, տղա՛ս: Ուզած տեղդ չերթուիր ատկէ:

—Ո՛չ, աչքերդ պղտոր կը տեսնեն, ըսաւ Տանկլար, ուղղակի Վիէյլ-Էնֆիրմըրի կոչուած ճամբան բռնեց:

—Ճիշդ է, ըսաւ Քատրուս, ինծի այնպէս թուեցաւ որ աջ կողմը կը դառնայ. ստուգիւ գինին խաբեբայ է: Երթանք ուրեմն:

—Կարծեմ գործը ճամբուն մէջն է. թողունք որ ինքնիրեն քալէ, մրմնջեց Տանկլար:

Ե. ԳԼՈՒԽ

ՆՇԱՆՏՈՒՔԻ ՃԱՇԸ

Հետեւեալ օրը օդը պարզ ու գեղեցիկ էր, արեւը շողշողուն եւ պայծառ ծագեցաւ, եւ առաւօտեան ծիրանեգոյն ճառագայթները խայտաբղէտ կը դարձնէին ալիքներուն փրփրադէզ կատարները:

Ճաշը պատրաստուած էր նոյն Րէզէրվին առաջին յարկը, որուն դալարազարդ հովանոցակին նկատմամբ ընթերցողները տեղեկութիւն ունին արդէն: Մեծ սրահ մըն էր հինգ-վեց պատուհաններով լուսաւորուած, որոնց իւրաքանչիւրին վրայ (չենք գիտեր ի՛նչ մտքով) Ֆրանսայի մեծ քաղաքներէն մէկուն անունը գրուած էր:

Պատուհաններուն վարէն վեր ունեցած վանդակորմերը փայտէ էին, ինչպէս նաեւ ամբողջ տունը:

Թէեւ ճաշը կէս օրին որոշուած էր, բայց առաւօտեան ժամը տասնըմէկէն ի վեր անհամբեր պտըտողներ լեցուած էին վանդակապատներուն առջեւ: Ասոնք Փարաւոնի նաւուն նաւաստիները ու Տանթէսի բարեկամներէն քանի մը զինուորներ էին: Ամէն ոք, աւելի պատիւ մը ընծայելու համար խօսեցեալներուն, իրենց զգեստներուն ամէնէն ընտիրը հագած էր:

Այս հրաւիրեալներուն մէջ զրոյց շրջած էր թէ Փարաւոնի նաւուն տէրերն ալ իրենց ներկայութեամբը պիտի պատուէին Տանթէսի նշանտուքի ճաշը. այդ բանը իրենց կողմէն այնքան մեծ պատիւ մը կը համարէին Տանթէսի համար, որ ոչ ոք չէր համարձակեր հաւատալու:

Սակայն Տանկլար Քատրուսի հետ գալով հաստատեց այդ լուրը. առտուն, Պ. Մորէլը տեսած էր, ու ան ըսած էր թէ Րէզէրվ պիտի գայ միասին ճաշելու:

Արդարեւ, Տանկլարի ու Քատրուսի հասնելէն քիչ մը ետքը, Պ. Մորէլ եկաւ և Փարաւոնին նաւաստիները ուրախութեան միահամուռ աղաղակներով բարեւեցին զայն: Նաւատէրին ներկայութիւնը հաստատեց սա խօսքը, որ արդէն ամէն տեղ տարածուէր էր, թէ Տանթէս նաւապետ պիտի ըլլայ, և որովհետեւ Տանթէս շատ սիրելի էր այդ նաւուն մարդոց, այս բարեսիրտ անձերը նաւատէրին շնորհակալ կ'ըլլային սա բանին համար որ առաջին անգամ ըլլալով ան իրենց բաղձանքին համաձայն կը կատարէր նաւապետին ընտրութիւնը: Պ. Մորէլ սրահ մտնելուն պէս՝ Տանկլարը ու Քատրուսը ղրկեցին Տանթէսին մօտ, երեւելի մարդուն գալուստը իմաց տալու և ըսելու համար որ շուտ գայ. նաւատէրին ներկայութիւնը մեծ տպաւորութիւն առաջ բերած էր ամէնուն վրայ:

Տանկլար և Քատրուս վազելով հեռացան, բայց հարիւր քայլ չառած, վառօդարանին բացերը տեսան փոքր խումբին գալը:

Այս խմբակը կը բաղկանար չորս Քաթալանցի մանկամարդ աղջիկներէ, որոնք Մէրսէտէսի բարեկամուհիները ըլլալով, անոր ընկերացեր էին: Էտմոն իր թեւը տուած էր իր նշանածին, որուն քովէն Տանթէսի հայրը կը քալէր. անոնց ետեւէն Ֆէրնան կուգար, որուն տխուր դէմքին վրայ կեղծ ու չար ժպիտ մը կ'երեւար:

Ո՛չ Մէրսէտէս և ո՛չ Էտմոն չէին տեսներ Ֆէրնանին այդ ժպիտը: Խեղճ երիտասարդները այնպէս երջանիկ էին որ մէյ մը ինքզինքնին միայն կը տեսնէին և մէյ մըն ալ այն պայծառ երկինքը՝ որ զիրենք կ'օրհնէր:

Տանկլար և Կատրուս իրենց տուած հրամանը հաղորդեցին անոնց. յետոյ Էտմոնին ձեռքը սիրտ բարեկամութեամբ թօթուեցին.՝Տանկլար՝ Ֆէրնանին ու Կատրուս՝ Տանթէսի հօրը քովէն կ'երթային, որ հանրային ուշադրութեան կեդրոնն էր:

Ծերունին Տանթէս պողպատէ անկիւնաւոր և լայն կոճակներով զարդարուն թաֆթայէ գեղեցիկ զգեստ մը հագած էր: Իր նիհար բայց ջղուտ ոտքերը վայելուչ կ'երևէին խայտաբղէտ բամբակէ գեղեցիկ գուլպաներուն մէջ, որոնց մաքսանենգ անգլիական ապրանք ըլլալը հեռուէն կը տեսնուէր: Իր եռանկիւնի գլխարկէն ճերմակ ու կապոյտ ժապաւէններ կախուած էին. վերջապէս, գլխակոր փայտէ գաւազան մը ունէր ձեռքը: Ծերունին տեսնողը՝ Լիւքսէնպուրկի և Թիւյըլրիի նոր բացուած պարտէզներուն մէջ շրջագայող ցուցամոլ պչրասէրներէն մէկուն պիտի նմանցնէր:

Ծերունիին քովէն, ինչպէս ըսինք, Կատրուս կ'երթար, որ փառաւոր հացկերոյթի մը յոյսով, Տանթէսի ընտանիքին հետ հաշտուած էր, և առջի իրիկուան պատահածներէն հազիւ անորոշ յիշատակ մը մնացած էր մտքին մէջ, գիշերը երազ տեսնող մարդուն պէս, որ առտուն արթննալով, հազիւ կը յիշէ անոր ստուերը:

Տանկլար, Ֆէրնանին մօտենալով, մերժուած սիրահարը լաւ մը կը դիտէր: Ֆէրնան ապագայ ամուսիններուն ետևէն կը յառաջանար, բոլորովին մոռցուած Մէրսէտէսէն, որ երիտասարդական անձնասիրութեամբ և սիրով վառուած, Էտմոնէն զատ մէկը չէր տեսներ:

Ֆէրնան, որ գունատած էր, քիչ մը ետքը յանկարծ կարմրեցաւ, այնպէս որ փոփոխակի երբեմն կը կարմրէր ու երբեմն կը դեղնէր: Մերթ դէպ ի Մարսիլիա կը նայէր, ու ջըղային սաստիկ ցնցումով մը կը սարսռային անդամները: Ֆէրնան բանի մը կը սպասէր, և կամ մեծ աղէտ մը կը գուշակէր:

Տանթէս պարզ հագուած էր. ծովային վաճառականութեան մէջ գտնուելուն, հագուստը քիչ մը զինուորական համազգեստի կը նմանէր և քիչ մըն ալ քաղաքային սովորական հագուստին. զուարթ երևոյթ մը ունէր, ինչ որ իր նշանածին ուրախութեանը և գեղեցկութեանը վրայ աւելնալով: Կատարեալ կը դարձնէր զուարթութիւնը:

Մէրսէտէս գեղեցիկ էր սև աչքեր ու բուստի գոյն շըրթունքներ ունեցող Կիպրոսի կամ Քիոսի հելլէնուհիներուն պէս, Արլէզուհիներուն և Անտալուզցիներուն նման համարձակ կը քալէր: Քաղաքացի աղջիկ մը թերևս իր ուրախութիւնը ջանար ծածկել քօղի մը կամ իր արտևանունքին տակ, բայց Մէրսէտէս զուարթադէմ էր և իր շուրջը գտնուողներուն կը նայէր, թէ իր զուարթութիւնը և թէ իր նայուածքը յայտնապէս կ'ըսէին. թէ բարեկամներս էք, ուրախացէք ինծի հետ. որովհետև շատ երջանիկ եմ:

Երբ նշանածները ու ընկերակիցները Ռէզէրվի մօտեցան, Պ. Մորէլ վար իջաւ ու զանոնք դիմաւորեց. անոր հետևեցան նաւաստիներն ու զինուորները, որոնց կրկնած էր իր կողմէն Տանթէսի եղած խոստումը թէ Լըքլէր նաւապետին տեղը պիտի անցնի: Էտմոն երբ տեսաւ Պ. Մորէլի գալը, Մէրսէտէսը յանձնեց անոր թևերուն: Նաւատէրը ու մանկամարդ աղջիկը փայտաշէն սանդուխէն վեր ելան, որ դէպ ի սենեակը կը տանէր. հոն պատրաստուած էր ճաշը:

—Հա՛յր իմ, ըսաւ Մէրսէտէս, սեղանին մէջ տեղը կանգնելով, դուն աջ կողմս նստէ, կ'աղաչեմ. կ'ուզեմ որ ձախ կողմս նստի ինծի եղբայրութիւն ընողը—: Այդ խօսքը այնպէս քաղցրութեամբ մը արտասանեց, որ դաշոյնի մը հարուածի պէս Ֆէրնանի սրտին խորը թափանցեց. անոր շրթունքները այլագունեցան, և առնական դէմքէն թուխ մոյնքին վրայ ալ արիւնը քիչ քիչ անհետացաւ դարձեալ ու բոլորովին գունատեցաւ ան:

Նոյն միջոցին Տանթէս հրաւիրեալները տեղաւորելու կը ջանար. իր աջ կողմը, Պ. Մորէլը նստեցուց, ու ձախ կողմը՝ Տանկլարը. յետոյ իր ձեռքովը նշան ըրաւ իւրաքանչիւրին որ ուզած տեղերնին նստին:

Սեղանին վրայ տեսակ տեսակ կերակուրներ և ընտիր աղանդերներ կային, ինչպէս երշիկներ, խեչափառներ, խեցեմորթներ, ոստրէներ, ևայլն:

—Ինչո՞ւ լուռ կեցեր ենք, ըսաւ ծերունին բաժակ մը տօպազինի պէս դեղնագոյն գինի խմելով, զոր Բանֆիլ անձամբ բերելով Մէրսէտէսի առջև դրած էր։ Կարծես թէ ուրախութիւն ընելու համար հաւաքուած չենք հոս։

—Է՛հ, ամուսին մը ամէն ատեն ուրախ չի կրնար ըլլալ, ըսաւ Գատրուս։

—Իրողութիւնը սա է որ, ըսաւ Տանթէս, այս վայրկեանիս, չափազանց երջանկութենէս, չեմ կրնար ուրախ ըլլալ։ Եթէ այդ մտքով կը խօսիս, բարեկամ, իրաւունք ունիս։ Ուրախութիւնը երբեմն անսովոր ազդեցութիւն մը կ՚ընէ, տրտմութեան պէս մարդը կը նեղէ։

Տանկլար դիտեց Ֆէրնանը, որուն դիւրազգրգիռ բնութիւնը մերթ կը ծածկէր և մերթ կը յայտնէր սրտին յուզումները։

—Ի՞նչ ունիս, ըսաւ, բանէ մը կը վախնա՞ս. ընդհակառակը ես կը կարծեմ թէ ամէն ինչ բաղձանքիդ համաձայն կ՚ընթանայ։

—Ես ալ ճիշդ այդ բանէն կը վախնամ, ըսաւ Տանթէս, կարծեմ թէ մարդ այսպէս դիւրութեամբ երջանիկ ըլլալու համար ծնած չէ։ Երջանկութիւնը կը նմանի դիւթական կղզիներու այն պալատներուն, որոնց դռները վիշապներու կողմէ կը պահպանուին։ Պէտք է կռուիլ ձեռք ձգելու համար. ճշմարիտ կ՚ըսեմ որ ես ալ չեմ գիտեր թէ ի՛նչ բանով արժանացայ Մէրսէտէսի ամուսինը ըլլալու։

—Անոր ամուսինը, անոր ամուսինը կ՚ըսես, ըսաւ Գատրուս ծիծաղելով. բայց տակաւին եղած չես, Պարոն Նաւապետ, անգամ մը փորձէ՛ նայինք, ի՛նչպէս անոր էրիկը պիտի ըլլաս և ի՛նչպէս պիտի ընդունուիս։

Մէրսէտէս կարմրեցաւ։

Ֆէրնան, իր աթոռին վրայ նստած, սիրտը կը հատնէր. թեթև ձայն մը առնելուն պէս կը սարսռէր, և ատեն ատեն իր քրտինքները կը սրբէր, որոնք մրրկայոյզ անձրևի մը առաջին կաթիլներուն պէս, իր ճակատին վրայ կը շարուէին Մարգըրտի նման։

—Արդարև, դրացի Գատրուս, ըսաւ Տանթէս, չարժեր որ այսչափ փոքր բանի մը մէջ զիս սուտ հանես։ Ստոյգ է, տակաւին իմ կինս չէ Մէրսէտէս...։

Ժամացոյցը հանեց։

—Բայց մէկ ու կէս ժամէն պիտի ըլլայ։

Այս խօսքին վրայ՝ ամէն ոք զարմացական ձայներ հանեց, բացի Տանթէսի հօրմէն, որուն գեղեցիկ ակռաները կը տեսնուէին, բարձրաձայն ծիծաղելուն համար։ Մէրսէտէս ժպտեցաւ, բայց այս անգամ չկարմրեցաւ։ Ֆէրնան, կատղած, ձեռքը դանակին տարաւ։

—Ի՞նչ կ՚ըսես. մէկ ժամէն, հարցուց Տանկլար գոյնը նետած, ի՞նչպէս կրնայ ըլլալ։

—Այո՛, բարեկամներ, պատասխանեց Տանթէս, շնորհակալ եմ Պ. Մորէլին, որուն հօրմէս ետքը ամենէն շատ երախտապարտ եմ աշխարհիս մէջ, բոլոր դժուարութիւնները հարթելու համար. հարսանիքի հրամանը առած ենք, և ժամը երկուք ուկէսին Մարսիլիայի քաղաքապետը քաղաքապետարանին մէջ մեզի կը սպասէ։ Եւ որովհետև հիմա ժամը մէկը քառորդ անցած է, կարծեմ թէ չեմ սխալիր, ըսելով որ մէկ ժամ ու երեսուն վայրկեանէն՝ Մէրսէտէս տիկին Տանթէս պիտի անուանի։

Ֆէրնան աչքերը գոցեց. արտևանունքը կրակի պէս կ՚այրէին. սեղանին կռթնեցաւ, որպէս զի չնուաղի. բայց հակառակ իր ջանքերուն՝ չկրցաւ իր գաղտնի հեծկլտուքը բռնել, որ բազմութեան ծիծաղին ու խնդակցութեան ժխորին մէջ չլսուեցաւ։

—Շուտ գործ տեսնել չէ՞ սա, հէ՛, ըսաւ Տանթէսի Հայրը։ Չէ՞ք կարծեր որ ատեն չկորսնցնելու համար է։ Երէկ առտու գալ, այսօր ժամը երեքին ամուսնանալ։ Ստոյգ է ուրեմն սա խօսքը թէ նաւաստիները շուտ գործ կը լմնցնեն։

—Բայց միւս արարողութիւնները, ըսաւ Տանկլար վախով. պայմանագրութիւնը ու գրութիւնը...։

—Պայմանագրութիւնը, ըսաւ Տանթէս ծիծաղելով, լըմըն-

ցած է․ թէ՛ Մէրսէտէս և թէ՛ ես բան մը չունինք։ Հասարակաց կամքին համեմատ պիտի ամուսնանանք։ Գրելու համար շատ ատեն չանցաւ, և սուղի չպիտի նստի մեզի։

Այս կատակին վրայ՝ ուրախութեան և կեցցէներու ձայներ լսուեցան։

—Ուրեմն նշանտուքի ճաշ կարծածնիս, ըսաւ Տանկլար, անտարակոյս, հարսանիքի ճաշն է։

—Ո՛չ, ըսաւ Տանթէս, բան մը չես կորսնցըներ, ապահով եղիր։ Վաղը առտու Բարիզ կ'երթամ։ Չորս օր պէտք է երթալու, չորս օրէն դառնալու, ու մէկ օր ալ ինծի յանձնուած պաշտօնը կատարելու համար մարտ մէկին հոս կ'ըլլամ․ ուստի մարտ երկուքին բուն հարսանիքի ճաշը տեղի պիտի ունենայ։

Երբ նորէն ճաշի խօսք եղաւ, ամենուն խնդութիւնը աւելցաւ, այնպէս որ Տանթէսի հայրը, որ սկզբան տիրող լռութեան համար կը գանգատէր, այդ միջոցին ամէնքը մէկանց խօսած ատեն 'ի զուր կը ջանար ապագայ ամուսիններուն երջանկութեանը համար բարեմաղթութիւններ ընել։

Տանթէս հասկըցաւ նորէն միտքը և սիրալիր ժպիտով մը պատասխանեց։

Մէրսէտէս սրահին ժամացոյցը նայեցաւ ու պզտիկ նշան մը ըրաւ Էտմօնին։

Սեղանին շուրջը կը տիրէր այն խնդալից ուրախութիւնը և այն ազատութիւնը, որ ստորադաս վիճակի մարդոց յատուկ է ճաշերուն վերջը։ Անոնք որ իրենց տեղէն գոհ չէին, սեղանէն ելլելով ուրիշ ընկերներու քով գացած էին։ Ամէն մարդ կը սկսէր միեւնոյն ատեն խօսիլ, և ոչ ոք իր խօսակցին պատասխան տալու հոգը չէր ըներ, բայց միայն իր ըսածին վրայ կը խորհէր։

Ֆէրնանի դեղնութիւնը կարծես Տանկլարի այտերուն վրայ փոխադրուած էր։ Իսկ Ֆէրնանի վրայ կենդանութիւն մնացած չէր․ հրալից լճի մէջ մնալու դատապարտուած մարդու մը կը նմանէր։

Ամէնէն առաջ ոտք ելած ու սրահին մէկ ծայրէն միւսը

կ'երթար, երգերը ու գաւաթները իրարու զարնելու ձայները չլսելու համար։

Քատրուս մօտեցաւ Ֆերնանի, երբ Տանկլար, որմէ հեռանալ կը ձեւացնէր, սրահին մէկ անկիւնը հասաւ իր մօտ։

--Ստուգիւ, ըսաւ Քատրուս, որուն սրտին մէջ Տանթէսի քաղաքավար վարմունքը, և մանաւանդ Բանֆիլի ընտիր գինին ոչնչացուցած էին Տանթէսի անակնկալ երջանկութեան պատճառած ատելութեան բողբոջները, Տանթէս ազնիւ տղայ մըն է․ և երբ իր նշանածին քովը նստած կը տեսնեմ զայն, միտքէս կ'ըսեմ թէ շատ գէշ ըրիք երէկ դաւադրութիւն մը սարքելով անոր դէմ։

--Բայց, ըսաւ Տանկլար, կը տեսնես որ հետեւութիւն չունեցաւ այն, այս խեղճ Պարոն Ֆէրնանը այնքան տակն ու վրայ եղած էր, որ սկզբան մեղքցայ անոր վրայ, բայց երբ կը տեսնեմ որ մրցակիցին հարսանիքին պատուոյ առաջին երիտասարդը ինք եղած է, ալ ըսելիք չմնաց։

Քատրուս Ֆէրնանին նայեցաւ, որ նախանձէն գունատած էր։

—Ֆէրնանին ըրած զոհողութիւնը շատ մեծ է, շարունակեց Տանկլար, որովհետեւ գեղեցիկ աղջիկ մը կը զրկուի։ Ո՜հ, ո՜րքան երջանիկ է իմ ապագայ նաւապետս․ երանի՜ թէ անունս Տանթէս ըլլար տասներկու ժամ միայն։

—Երթա՞նք, հարցուց Մէրսէտէս քաղցր ձայնով մը․ ժամը երկուք կը զարնէ․ երկուքը քառորդ անցած մեզի կը սպասեն։

—Այո՛, այո՛, երթանք, ըսաւ Տանթէս՝ ոտքի ելլելով իսկոյն։

—Երթա՛նք, ըսին խմբովին բոլոր հանդիսականները։

Այդ միջոցին, Տանկլար կը դիտէր Ֆէրնանը, որ պատուհանին առջեւ նստած և աչքերը մոլեգնօրէն բացած ոտքի ելաւ կարծես ցնցողական շարժում մը մղուած, ու տեղը նստաւ նորէն։ գրեթէ նոյն միջոցին սանդուխին վրայ շշնչիւն մը լսուեցաւ․ յամր ոտնաձայն մը, և զէնքի շառաչման հետ խառնուած շփոթ աղմուկ մը հանդիսականներուն ուրախութեան ձայները խափանեցին, և ամենուն ուշադրութիւնը գրաւեցին․ տխուր լռութիւն մը տիրեց անմիջապէս։

Ձայնը մօտեցաւ, երեք անգամ դուռը զարնուեցաւ. Իւրաքանչիւր ոք իր քովը նստողին կը նայէր տխուր դէմքով մը:

—Յանո՛ւն օրինաց, աղաղակեց մէկը ազդու ձայնով, որուն չհամարձակեցաւ ոչ ոք պատասխանել:

Իսկոյն դուռը բացուեցաւ, և ոստիկանութեան գործակալ մը իւր ուսընդանութ թևակալը դրած, չորս զինուորներ, և տասնապետ մը սրահը մտան:

Յանկարծ երկիւղի փոխուեցաւ կասկածնին:

—Ի՞նչ կայ, հարցուց նաւատէրը գործակալին մօտենալով, զոր կը ճանչնար. պարոն, անշուշտ սխալ մը պատահած ըլլալու է:

—Եթէ սխալ կայ, Պ. Մորէլ, պատասխանեց գործակալը, գիտցիր որ շուտով կ'ուղղուի. սակայն հանդերձ ձերբակալման հրամանագիր մը բերած եմ. թէև մեծ ցաւով կը կատարեմ ինծի հրամայուած պաշտօնը, բայց անհնար է որ 'ի գործ չդնեմ: Ուստի, պարոններ, Էտմոն Տանթէսը ո՞վ է մէջերնիդ:

Ամենուն նայուածքը երիտասարդին վրայ դարձաւ որ այլայլած, բայց առանց բան մը յայտնելու, քայլ մը յառաջանալով, ըսաւ.

—Ես եմ, պարոն, ի՞նչ կ'ուզէք:

—Էտմոն Տանթէս, կրկնեց գործակալը, յանո՛ւն օրինաց, կը ձերբակալեմ քեզ:

—Զիս կը ձերբակալե՞ս, ըսաւ Էտմոն քիչ մը գունատած. ի՞նչ բանի համար կը ձերբակալես:

—Ես չեմ գիտեր, պարոն, բայց հարցաքննութեան ատեն կ'իմանաս:

—Պ. Մորէլ հասկցաւ որ անկարելի էր այդ բանին դէմ կենալը. անգամ մը որ գործակալ մը իր պաշտօնին թևակալը դրած է կարծես թէ ալ մարդու կերպարանք չունի, այլ օրէնքի անշարժ, խուլ և համր արձանին կը նմանի:

Ընդհակառակը՝ ծերունին պաշտօնատարին քով վազեց. երբեմն այնպիսի բաներ կան, զորս ծնողքին միտքը ընաւ չի հասկնար. ծերունին անոր հետ խօսեցաւ, աղաչեց, թախանձեց, բայց ո՛չ արցունք և ոչ պաղատանք չկրցան անոր սիրտը շարժել: Վերջապէս ծերունին անանկ յուսահատութեան մը մատնուեցաւ որ գործակալին գութը շարժեցաւ:

—Պարոն, ըսաւ, հանդարտէ՛, գուցէ որդիդ մաքսային կամ առողջապահական օրէնքին դէմ զանցառութիւն մը ըրած է. շատ հաւանական է որ պահանջուած տեղեկութիւններն առնուելէն ետքը ազատ թողուն զինքը:

—Աս ի՞նչ բան է, ի՞նչ ըսել կ'ուզէ, հարցուց Քատրուս, յօնքը պռստելով և խօսքը Տանկլարին ուղղելով որ ապշութիւն կը ձևացընէր:

—Ի՛նչ գիտնամ, ըսաւ Տանկլար, ես ալ քեզի պէս եղածը կը տեսնեմ ու բան մը չեմ հասկնար, շուարեր մնացեր եմ:

Քատրուս չորս կողմը նայեցաւ որ Ֆէրնանը տեսնէ, բայց աներևոյթ եղած էր ան:

Առջի իրիկուան պատահած բոլոր բաները իր մտքին առջև ներկայացան սոսկալի յստակութեամբ մը. կարծես թէ այս աղետալի դէպքը վերցուցած էր այն քօղը, զոր առջի իրիկուան արբեցութիւնը ձգած էր իր և յիշողութեան միջև:

—Ո՛հ, ըսաւ կերկերուն ձայնով մը, ձեր կատակին հետեւանքն է արդեօք, որուն վրայ երէկ կը խօսէիք, Տանկլար: Ուստի վա՛յ անոր որ այս գործը ըրած է, որովհետև գէշ բան մըն է ըրածը:

—Երբե՛ք, ըսաւ Տանկլար. ընդհակառակը դուն լաւ գիտես որ պատռեցի այն թուղթը:

—Չպատռեցիր զայն, ըսաւ Քատրուս. ձեռքիդ մէջ ճմրթկեցիր ու անկիւն մը նետեցիր:

—Լռէ՛, դուն գինով էիր, բան մը չտեսար:

—Ո՞ւր է Ֆէրնան, հարցուց Քատրուս:

—Ես գիտե՞մ, պատասխանեց Տանկլար, հաւանական է որ իր գործին գացած ըլլայ: Բայց փոխանակ այդ բանը հոգերնիս ընելու, վշտակիր խեղճերուն օգնելու երթանք:

Այդ խօսակցութեան միջոցին Տանթէս ժպիտով մը իր բոլոր բարեկամներուն ձեռքը սեղմեց, և զինուորներուն անձնատուր

ըլլալով, —Հոգ մի՛ ընէք, ըսաւ, սխալը շուտով երեւան պիտի ելլէ. կարելի է որ բանտ ալ չերթամ:

—Ո՛հ, անշուշտ, ես ապահով եմ, ըսաւ Տանկլար, որ այդ պահուն գլխաւոր խումբին կը մօտենար, ինչպէս վերը ըսինք:

Տանթէս սանդուխէն վար իջաւ. առջեւէն ոստիկանութեան գործակալը կ'երթար՝ զինուորներով շրջապատուած. դրան առջեւը կառք մը կը սպասէր, որուն դռնակը կռնակի վրայ բաց էր. անոր մէջ մտաւ, երկու զինուորները ու գործակալը ետեւէն մտան, դռնակը գոցուեցաւ, ու կառքը Մարսիլիայի ճամբան բռնեց:

—Երթա՛ս բարով, Էտմոն, գոչեց Մէրսէտէս, պատուհանը ելլելով:

Կալանաւորը լսեց իր նշանածին վշտաբեկ սրտէն հեծեծանքի պէս թռած այդ վերջին ձայնը, գլուխը դռնակին ծակէն դուրս հանեց. —Մէրսէտէս, Աստուծով դարձեալ կը տեսնուինք. ըսաւ, ու կառքը Ս. Նիքօլայի ամրոցին մէկ անկիւնը աներեւութացաւ:

—Հոս սպասեցէք ինծի, ըսաւ նաւատէրը. հանդիպած առաջին կառքը կը հեծնեմ, Մարսիլիա կ'երթամ, ու լուր կը բերեմ ձեզի:

—Գացէ՛ք ու շուտով ետ դարձէ՛ք. ըսին բոլորն ալ:

Այդ երկու անձերուն երթալէն յետոյ, մնացողները ահարկու ապշութեան մը մատնուեցան:

Ծերունին ու Մէրսէտէս պահ մը մեկուսի կեցած՝ իւրաքանչիւրը իր ցաւովը կը տանջուէր: Բայց վերջապէս աչքերնին իրարու դարձուցին: Մի եւ նոյն հարուածով զարնուած երկու զոհեր ըլլալնին հասկնալով՝ իրարու գիրկ նետուեցան:

Նոյն միջոցին Ֆէրնան ներս մտաւ, գաւաթ մը ջուր լեցուց ու խմեց, եւ գնաց աթոռի մը վրայ նստաւ:

Բախտը այնպէս բերաւ որ Մէրսէտէս ծերունիին գիրկէն զատուած ատեն Ֆէրնանի մօտ աթոռի մը վրայ ինկաւ, եւ ան բնազդումով ետ քաշեց իր աթոռը:

—Ան է պատճառը, ըսաւ Գատրուս, որ չարունակ Գաթալանցին կը դիտէր, խօսքը Տանկլարի ուղղելով:

—Չեմ կարծեր, պատասխանեց Տանկլար, որովհետեւ անմիտ է, ինչ եւ է, անշուշտ ընողը պիտի քաշէ պատիժը:

—Խրատ տուողին համար բան մը չե՞ս ըսեր, ըսաւ Գատրուս:

—Ո՛հ, ըսաւ Տանկլար, մարդ ամեն պարապ խօսքի համար պատասխանատո՞ւ է միթէ:

—Այո՛, երբ այդ պարապ խօսքը սուր ծայրովը կ'իյնայ, տեղը կը հասնի:

Այդ միջոցին հրաւիրեալները զանազան մեկնութիւններ կուտային Տանթէսի ձերբակալուելուն:

—Եւ դուն, Տանկլարը. ըսաւ մէկը. ի՞նչ կը խորհիս եղածին վրայ:

—Գուցէ քանի մը հատ արգիլեալ ապրանք բերած ըլլայ:

—Բայց եթէ այդպիսի բան մը ըլլար, դուն իբր հաշուակալ պաշտօնեայ, գիտնալու էիր:

—Այո՛, իրաւ է, բայց հաշուակալ պաշտօնեան իրեն ծանուցուած բեռները գիտէ միայն: Գիտեմ որ նաւուն մէջ բամբակէն զատ ուրիշ ապրանք չկար, զոր Աղեքսանդրիա պարոն Փասթրէ բեռնաւորեց, եւ Իզմիր պարոն Փասկալ. աս է իմ գիտցածս, ուրիշ բան մի՛ հարցնէք ինծի:

—Ո՛հ, հիմա միտքս ինկաւ, ըսաւ կամաց մը Տանթէսի խեղճ հայրը. երէկ ըսաւ թէ մէկ տուփ խահվէ եւ մէկ տուփ ծխախոտ բերած է ինծի համար:

—Կը տեսնէ՞ք, ըսաւ Տանկլար, աս է պատճառը. մեր բացակայութեան միջոցին մաքսատան գործակալը Փարաւոն նաւուն մէջ խուզարկութիւն ըրած եւ գտած ըլլալու է:

Մէրսէտէս այդ խօսքերէն եւ ոչ մէկուն չէր հաւատար. իր ցաւը՝ որ մինչեւ այն ատեն կրցած էր զսպելու, հեծկլտանքով յայտնուեցաւ յանկարծ:

—Ո՛ն, յուսանք, ըսաւ Տանթէսի հայրը, առանց գիտնալու թէ ի՛նչ կ'ըսէ:

—Յուսա՛նք, կրկնեց Տանկլար:

—Յուսա՛նք, ջանաց ըսել Ֆէրնան, մեղմաձայն, բայց այդ խօսքը կը խեղդէր զինքը, շրթունքները շարժեցան, բայց ձայն մը չելաւ բերնէն:

—Պարո՛ններ, գոչեց հրաւիրեալներէն մէկը, որ վանդակասիւններուն վրայ կանգնած կը դիտէր, պարո՛ններ, կառք մը...։ Ա՛հ, պարոն Մորէլն է։ Սի՛րտ առէք, սիրտ առէք, անշուշտ աղէկ լուրեր կը բերէ մեզի։

Մէրսէտէս ու ծերունին դուռը վազելով՝ նաւատէրին դէմն ելան. Մորէլի երեսին գոյնը նետած էր։

—Ի՞նչ լուր կայ, աղաղակեցին երկուքը միաձայն...։

—Ի՞նչ լուր կ'ուզէք, բա՛րեկամներ, պատասխանեց նաւատէրը գլուխը շարժելով, գործը մեր կարծածէն աւելի ծանր է։

—Ա՛հ, պարոն, հառաչեց Մէրսէտէս, Տանթէս անմեղ է։

—Կը հաւատամ, պատասխանեց Մորէլ, բայց անոր դէմ ամբաստանութիւն եղած է։

—Ի՞նչ ամբաստանութիւն, հարցուց ծերունին Տանթէս։

—Թէ Պոնաբարդեան գործակալ է։

Այդ դէպքին ժամանակակից եղող յարգելի ընթերցողները կրնան յիշել թէ այն ատեն ի՛նչ սոսկալի ամբաստանութիւն էր պարոն Մորէլի ըսածը։

Մէրսէտէս հառաչանք մը արձակեց սրտէն, և ծերունին թուլցած, ինքզինքը աթոռի մը վրայ ձգեց։

—Վա՛յ, ըսաւ Գատրուս կամաց մը, դուք զիս խաբեցիք, Տանկլար, կատակը իրաւի դարձուցիք։ Բայց ես չեմ ուզեր որ այս ծերունին ու նորատի աղջիկը տրտմութենէ մեռնին. հիմա ամէն բան պէտք է յայտնեմ անոնց։

—Լռէ՛, թշուառական, գոռաց Տանկլար, Գատրուսի ձեռքը բռնելով, եթէ՛ ոչ դուն ալ վտանգի մէջ կ'իյնա՛ս, չեմ խառնուիր։ Քեզի ո՞վ կ'ըսէ թէ Տանթէս իրապէս յանցաւոր չէ։ Նաւը Էլպա կղզին հանդիպեցաւ, Տանթէս հոն ցամաք ելաւ. բոլոր օրը Բորթօ-Ֆէրրայօ անցուց։ Եթէ քովէն նամակ մը գտնուի, որով յանցաւոր ելլէ, պաշտպանողներն ալ մեղսակից կը համարուին։

Գատրուս անձնասիրութեան բնազդումովը այդ պատճառին ճշդութիւնը լիովին ըմբռնեց։ Վախով և տրտմութեամբ թմրած աչքերով, Տանկլարին նայեցաւ, և յառա-

ջացած մէկ քայլին փոխարէն, երկու քայլափոխ ետ քաշուեցաւ։

—Ուրեմն սպասենք, ըսաւ կամաց մը։

—Այո՛, սպասենք, ըսաւ Տանկլար. եթէ անմեղ է, ազատ պիտի ձգեն զայն, իսկ եթէ յանցաւոր, անօգուտ է որ ապըստամբութեան դաւակցի մը համար մարդ վտանգի մէջ դնէ իր անձը։

—Ուրեմն, երթա՛նք, չեմ կրնար երկար ատեն հոս մնալ։

—Այո՛, եկո՛ւր, ըսաւ Տանկլար, ուրախանալով որ հեռանալու համար ընկեր մը գտած էր. եկո՛ւր, թողունք որ իրենց գլխուն ճարը նային կրցածնուն չափ։

Ու մեկնեցան անոնք. Ֆէրնան՝ ծաղկատի աղջկան նեցուկը ըլլալով նորէն Մէրսէտէսին ձեռքը բռնեց ու Գաթալան տարաւ զայն։ Իսկ Տանթէսի բարեկամները սրտաբեկ և գրեթէ նուաղած ծերունին ընկերակցելով, Մէյլանի ծառուղարդ ճամբէն յառաջացան։

Տանթէսի իբր Պօնաբարդեաններուն կուսակից ձերբակալուելուն շշնչիւնը ամբողջ քաղաքին մէջ տարածուեցաւ շուտ մը։

—Սանկ կասկած մը ունէիք, ըսաւ Պ. Մորէլ, իր գրագիրն ու Գատրուսին հանդիպելով, որովհետև ան ալ աճապարանքով քաղաքը կ'երթար, Էտմօնի մասին ուղղակի լուր մը առնելու համար ընդհանուր դատախազի օգնական Պ. Վիլֆորէն, որուն հետ քիչ մը ծանօթ էր, այդպիսի կասկած մը ունեցա՞ծ էիք։

—Ո՛հ, պարոն, պատասխանեց Տանկլար, ձեզի ըսած եմ թէ Տանթէս առանց պատճառի Էլպա կղզին հանդիպեցաւ, և հոն ատեն անցնելը կասկած ներշնչած էր ինծի։

—Կասկածներդ ինձմէ զատ ուրիշի իմացուցա՞ծ էիր։

—Շատ զգուշաւոր եմ այդ մասին, պարոն, ըսաւ Տանկլար մեղմաձայն։ Գիտէք որ ձեր Պ. Փոլիքար Մորէլ հօրեղբօրը պատճառաւ, որ միւսին (Նաբոլէոնի) ժամանակ ծառայութիւն ըրած է և իր գաղափարները չի ծածկեր, ձեր վրայ իսկ կը կասկածին թէ Նաբոլէոնը կը մեղքնաք։ Ուստի վախցայ որ մի գուցէ Էտմօնին և հետևաբար ձեզի վնաս մը գայ. բաներ կան զորս հպատակ մը պարտաւոր է իր տէրոջը ըսելու և ուրիշներէն պահելու։

—Լաւ, Տանկլար, լաւ, ըսաւ նաւատէրը, դուն ազնիւ պատանի մըն ես. քեզ ալ միտքէս չէի հանած, երբ խեղճ Տանթէսի հետ կը խօսէի Փարաւոնին նաւապետ ըլլալու մասին։

—Ի՞նչպէս, պարոն։

—Այո՛, նախ հարցուցի Տանթէսին թէ ի՞նչ կը խորհէր քու վրադ և թէ դժկամակութիւն ունէ՞ր քեզ պաշտօնիդ մէջ պահելու. չեմ գիտեր ի՛նչ պատճառաւ քու և անոր միջև ցրտութիւն մը նշմարած էի։

—Ի՞նչ պատասխան տուաւ ձեզի։

—Կը կարծէր թէ առթիւ մը, որուն ինչ ըլլալը չըսաւ, քեզի դէմ յանցանք մը գործած էր, բայց թէ միշտ պիտի յարգէր այն անձերը որոնք նաւուն տէրերուն մտերմութիւնը կը վայելեն։

—Կեղծաւո՛րը, ըսաւ կամաց մը Տանկլար։

—Խեղճ Տանթէս, ըսաւ Քատրուս, ստուգիւ ազնիւ տղայ մըն էր։

—Այո՛, բայց առ այժմ, ըսաւ Պ. Մորէլ, Փարաւոն նաւը առանց նաւապետի մնաց։

—Ո՛հ, ըսաւ Տանկլար, դեռ յոյս ունինք, տակաւին երեք ամիս կայ մեկնելու, ու մինչեւ այն ատեն Տանթէս կ'ազատի։
Անտարակոյս, բայց մինչեւ այն ատե՞ն։

—Է՛հ, մինչև այն ատեն ահա ես կամ, պարոն Մորէլ, ըսաւ Տանկլար. գիտէք որ կեանքը նաւապետութեամբ անցուցած առաջին նաւապետի պէս շատ լաւ կը ճանչնամ նաւու մը կառավարութիւնը. գիս այդ ծառայութեան մէջ առնելնուդ օգտակարութիւնը սա պիտի ըլլայ որ Էտմոն բանտէն ելլելէն յետոյ պիտի չպարտաւորիք վարձած նաւապետնիդ ճամբելու. կրկին իր տեղը պիտի անցնի ան և ես՝ իմս։

—Շնորհակալ եմ, Տանկլար, ըսաւ նաւատէրը. այդ բանը շատ հաճոյ կը թուի ինծի։ Ուրեմն նաւուն հրամանատարութիւնը դուն ստանձնէ. ես հրաման կուտամ քեզի և նաւուն բեռները ցամաք հանելուն վրայ հսկէ։ Պէտք չէ որ մարդոց գլխուն եկած դիպուածներուն համար գործերը ետ մնան։

—Պարոն, անհոգ եղիք այդ մասին։ Բայց կարելի չէ՞ գոնէ տեսնել սա բարի Էտմոնը։

—Հիմա կ'իմացնեմ քեզի, Տանկլար։ Պիտի երթամ Պ. Վիլըֆորի հետ խօսելու և պիտի աղաչեմ որ կալանաւորը ազատէ։ Գիտեմ որ նա կատաղի արքայական մըն է. բայց ի՞նչ կ'ըլլայ, ո՛րքան ալ արքայական և թագաւորին գործակալը համարուի, ան ալ մարդ է, և չեմ կարծեր որ չար մէկը ըլլայ։

—Չէ՛, ըսաւ Տանկլար, բայց լսած եմ թէ փառասէր մէկն է, ինչ որ յայտնի կ'երեւայ։

—Վերջապէս, ըսաւ Պ. Մորէլ հառաչանքով մը, տեսնենք, դուն նա՛ւը գնա, և ես կուգամ կը գտնեմ քեզ։

Պ. Մորէլ երկու բարեկամները թողլով դատական պաշտօնատան ճամբան բռնեց։

—Կը տեսնե՞ս, ըսաւ Տանկլար Քատրուսին, գործը ի՞նչպէս փոխուեցաւ. դեռ կը փափաքի՞ս երթալ Տանթէսը պաշտպանել.

—Ո՛չ, անտարակոյս, սակայն սոսկալի բան է այսպիսի հետեւանք ունեցող կատակ մը։

—Է՛հ, ո՞վ ըրաւ, ո՛չ ես և ո՛չ դուն, այնպէս չէ՞, այլ Ֆէրնան։ Գիտես որ թուղթը անկիւն մը նետեցի. կարծեմ թէ պատռած ալ էի։

—Ո՛չ, ո՛չ, ըսաւ Քատրուս։ Այդ մասին ապահով եմ, իրաւ է որ դուն նամակը ճմռթկեցիր, ու հովանոցակին մէկ անկիւնը նետեցիր, բայց երանի՜ թէ հիմայ ալ հոն ըլլալը տեսնէի։

—Ես ի՞նչ ընեմ, գուցէ Ֆէրնան առած, գուցէ օրինակած տուած է, և գուցէ այդ նեղութիւնը կրած չէ բնաւ, և գուցէ... ո՛վ Աստուած, բուն իմ գրածս ղրկած է։ Բարեբախտաբար տարբեր կերպով գրած էի։

—Բայց գիտէ՞իր որ Տանթէս ապստամբելու գաղափար ունէր։

—Բնաւ բան մը չէի գիտեր։ Ինչպէս քեզի ըսի. կատակ մը ընել ուզեցի և ոչ ուրիշ բան։ Կ'երեւի թէ Արլըքէնի պէս կատակով ճշմարտութիւնը յայտնած եմ։

—Միեւնոյն բանն է, ըսաւ Քատրուս, սիրայօժար շատ բան պիտի տայի որ այս դէպքը չպատահէր, կամ գոնէ այս գործին մէջ երբեք խառնուած չըլլայի. պիտի տեսնես, Տանկլար, որ այս բանը ձախորդութիւն մը պիտի բերէ մեզի։

—Եթէ մէկու մը ձախորդութիւն բերէ, ճշմարիտ յանցա-

ւորն է, և ճշմարիտ յանցաւորը Ֆէրնան է, և ոչ մենք։ Ինչ ձախորդութիւն կրնայ պատահիլ մեզի։ Միայն մենք հանդարտ կենանք, եղածներուն վրայ թուլբերանութիւն չընենք, որպէս զի փոթորիկը առանց կայծակ իյնալու անցնի։

—Ամէն, ըսաւ Քատրուս, հրաժեշտի ողջոյնի նշան մը ընելով Տանկլարին և դէպի Մէյլանի ծառուղիները յառաջանալով. ան գլուխը կը շարժէր և ինքնիրենը կը խօսէր, ինչպէս սովոր են ընելու բազմազբաղ մարդիկ,

—Լաւ, ըսաւ Տանկլար, գործերը այնպիսի դարձուածք մը առին զոր կը գուշակէք առժամանակեայ նաւապետ եղայ, և եթէ սա յիմար Քատրուսը ձայն չհանէ՝ նաւապետ կ'ըլլամ ստուգիւ։ Միայն թէ արդարութիւնը Տանթէսը չազատէ։ Ահ, բայց ինչ կ'ըսեմ, կրկնեց ժպտելով մը, արդարութիւնը արդարութիւն է, և ես անոր կը վստահիմ լիովին։

Տանկլար մակոյկի մը մէջ նստեցաւ ու հրաման ըրաւ նաւավարին որ զինքը Փարաւոն նաւը տանի, ուր նաւատէրը, ինչպէս ըսինք, ժամադիր եղած էր։

Զ. ԳԼՈՒԽ

ԸՆԴՀ. ԴԱՏԱԽԱԶԻՆ ՕԳՆԱԿԱՆԸ

Մէտուզէներու աղբիւրին դիմաց, Կրան-Քուր ըսուած փողոցը, ազնուապետական ճարտարապետութեամբ շինուած հին տուներէն մէկուն մէջ, նոյն օրը և նոյն ժամուն ուրիշ նշանտուքի ճաշ մը տեղի կ'ունենար։

Միայն թէ այդ հանդէսին հրաւիրեալները առաջիններուն պէս սովորական մարդիկ, նաւաստիներ և զինուորներ չէին, այլ Մարսիլիայի ընկերութեան պատկանող ջոջեր էին։ Յափշտակիչին ատեն իրենց պաշտօնէն հրաժարեցուցուած հին դատաւորներ, մեր գունդերը ձգելով Քոնտէին բանակը անցնող ծերունի պաշտօնեաներ էին, և այնպիսի երիտասարդներ, որոնց ապրուստը ընտանիքնին կը հոգար՝ առանց վստահ ըլլալու անոնց կենացը անվտանգ ըլլալուն վրայ, թէև չորս-հինգ անգամ անոնց փոխարէններուն գինը տուած էր, այն մարդուն ատելութեան համար, որ հնգամեայ աքսորումով նահատակ մը և տասնըհինգամեայ իշխանութեան վերանորոգութեամբը գերբնական էակ մը համարուած էր։

Սեղանին չուրջը նստած, ու ժամանակին կիրքերովը բորբոքած՝ իրարու հետ կը խօսակցէին, այն կիրքերովը որոնք հարաւային երկիրներուն մէջ աւելի սոսկալի, աւելի արթուն և աւելի գրգռուած էին, մանաւանդ որ հինգ հարիւր տարիէ ի վեր կրօնական ատելութիւնները կը սաստկացնէին քաղաքական ատելութիւնները։

Կայսրը, աշխարհիս մէկ մասին տէրը ըլլալով, հարիւր քսան միլիոն հպատակներու բերանէն տասը այլ և այլ լեզուներով Կեցցէ՛ Նաբոլէոն խօսքերը լսելէն յետոյ, Էլպա կղզին քաշուած, հինգ կամ վեց հազար հոգիի վրայ միայն կը թագաւորէր, և այն տեղ Ֆրանսայի և անոր գահուն համար կորսուած մարդ մը կը նկատէին զայն և անոր հետ այնպէս կը վարուէին։

Դատաւորները կը հաստատէին անոր քաղաքական սխալանքը, զինուորականները Մոսկուա և Լայբցիկ քաղաքներուն վրայ կը խօսէին, և կիները Ժօզէֆինա կնոջմէն կայսեր բաժնուելուն մասին։ Այդ խնճոյքին արքայական հանդիսականները, որոնք բոլորովին զուարթ ու յաղթող կ'երևային, ո՛չ թէ այդ մեծանուն մարդուն իյնալուն, այլ անոր սկզբունքները ջնջուելուն համար, կը կարծէին որ ալ կեանքերնին ապահով էր. աղէտալի երազէ մը արթնցած ըլլալու տպաւորութիւնը կ'ունենային։

Սէն Լուիի խաչի շքանշանը կախած ծերունի մը ոտքի ելաւ ու առաջարկեց կոչնականներուն որ Լուի ԺԸ. թագաւորին կենացը համար գինի խմեն. Սէն-Մէրանի մարքիզն էր այդ ծերունին։

Այդ առաջարկութեան վրայ, որ կը յիշեցնէր թէ՛ Հարթուէլէն աքսորուածը և թէ Ֆրանսայի խաղաղարար թագաւորը, ձայները սաստկացան, Անգլիացիներու սովորութեանը պէս գաւաթները բարձրացան, կիները իրենց գլխուն ծաղիկներուն փունջերը հանելով՝ սեղանին սփռոցին վրայ կը թափէին. կարծես թէ բանաստեղծական յափշտակութիւն մը ամէնուն սիրտն ու միտքը պաշարած էր։

—Եթէ հոս ըլլային, անշուշտ պիտի խոստովանէին, ըսաւ Սէն-Մէրանի մարքիզուհին (որ անփայլ աչքերով, բարակ շրթունքով և ազնուական կազմուածքով կին մըն էր. թէև յիսուն տարեկան էր բայց վայելուչ և գեղեցիկ կերպարանք մը ունէր տակաւին). այն ամէն յեղափոխականները որոնք մեզ հալածեցին, հիմա թողունք որ երթան ծածուկ դաւնակցութիւն ընեն մեր հին բերդերուն մէջ, զորս արհաւիրքի շրջանին, պատառ մը հացով գնեցին. այն յեղափոխականները պիտի խոստովանէին, կ'ըսեմ, որ ճշմարիտ անձնուիրութիւնը մեր կողմէն էր, որովհետեւ մենք անձերնիս կը նուիրէինք կործանած միապետութեան, մինչ անոնք ընդհակառակը նորածագ արեգակ մը կ'ողջունէին. անոնք հարըստութիւն և երջանկութիւն ձեռք կը բերէին, մինչ մերինը կը կորսնցնէինք. պիտի խոստովանէին որ մեր թագաւորը ճշմարտապէս Լուի-Սիրելին էր, մինչ անոնց յափշտակողը անիծեալ Նաբոլէոնէն զատ ուրիշ մէկը չեղաւ, այնպէս չէ Վիլֆոր։

—Ի՞նչ կը խօսէիք, տիկին մարքիզուհի... ըսաւ երիտասարդը. ներեցէ՛ք, որովհետեւ ձեր խօսակցութիւնը մտիկ չէի ըներ։

—Է՜հ, ձգեցէք այդ սիրահարները, մարքիզուհի, ըսաւ գինի խմելու առաջարկութիւն ընող ծերունին. անոնք պիտի ամուսնանան, և բնականաբար քաղաքականութենէ դուրս իրարու հետ ուրիշ խօսքեր կ'ընեն։

—Ներեցէք, մայր իմ, ըսաւ խարտեաշ մազերով, վառվռուն աչքերով ծաղկատի գեղեցիկ աղջիկ մը։ Ահա՛ Պ. Վիլֆորը ձեզ կը թողում, որուն հետ վայրկեան մը առանձին խօսքի բռնուած էինք։ Պ. Վիլֆոր, մայրս կ'ուզէ քեզի հետ խօսիլ։

—Պատրաստ եմ, տիկին մօրդ պատասխանելու, եթէ բարեհաճի կրկնել իր հարցումը, որուն առաջին անգամ լաւ ականջ չդրի։

—Կը ներեմ ձեզի, Ռընէ, ըսաւ մարքիզուհին այնպիսի գորովալից ժպիտով մը, զոր կոչնականները զարմանքով տեսան անոր նիհար դէմքին վրայ. բայց կիներուն սիրտը այնպէս մը կազմուած է որ ի՛նչքան նախապաշարումներով ու սովորութեանց պահանջումներով կարծրացած ըլլայ, միշտ զուարթ խորշ մը կը գտնուի հոն, զոր Աստուած մայրական սիրոյն համար յատկացուցած է։ Կը ներեմ ձեզի...։ Հիմա կ'ըսէի, Վիլֆոր, թէ Պոնաբարդեանները ո՛չ մեր համոզումը, ոչ մեր եռանդը և ոչ մեր անձնուիրութիւնը ունին։

—Ո՛հ, տիկին, գոնէ բան մը ունին որ այս ամէնուն տեղը կը բռնէ, այն է կրօնամոլութիւնը։ Նաբոլէոն արեւմուտքի Առաքեալն է. ռամիկ բայց գերագոյն փառքի ցանկացող մարդոց համար ոչ միայն օրէնսդիր և առաջնորդ է ան, այլ և հաւասարութեան պատկեր մը կը համարուի։

—Հաւասարութեա՞ն պատկեր, գոչեց մարքիզուհին, ո՞վ, Նաբոլէո՞ն հաւասարութեան պատկեր. ուրեմն Պ. Ռոպէսբիէրին համար ի՞նչ պիտի ըսէք։ Կարծեմ թէ Քորսիքացիին տեղ կը դնէք զայն. ատ ալ տեսակ մը յափշտակութիւն է, կարծեմ։

—Ո՛չ, տիկին, ըսաւ Վիլֆոր. ամէն ոք իր պատուանդանին վրայ կը թողում. Ռոպէսբիէր՝ Լուի ԺԵ. հրապարակին մէջ՝ իր սիւնին վրայ. միայն թէ ատոնցմէ մէկը խոնարհեցուցիչ հաւասարութիւնը հնարեց և միւսը բարձրացուցիչ հաւասարութիւնը. մէկը սպանդանոցի աստիճանը իջեցուց թագաւորները, և միւսը թագաւորական գահուն հաւասար բարձրացուց ժողովուրդը։ Ասկէ չի հետեւիր թէ, կրկնեց Վիլֆոր ծիծաղելով, թէ երկուքն ալ վատահամբաւ յեղափոխականներ չէին, և թէ Թէրմիտորի իններորդ օրը և 1814 ապրիլի չորրորդ օրը Ֆրանսայի համար երկու երջանիկ օրեր չեղան, ու արժանի չեն բարեկարգութեան ու միապետական տէրութեան բարեկամներուն կողմէ հաւասարապէս տօնուելու։ Բայց կը

հասկցուի թէ Նաբոլէոն իր չար խորհրդատու կուսակիցները պահեց, թէև իշխանութենէն ինկած էր, և վերականգնելու յոյս չկար, կարծեմ։ Ի՞նչ կը զարմանաք, մարքիզուհի, Քրոմուէլն անգամ, որ Նաբոլէոնին կէսը հազիւ կրնար համարուիլ, իր չար ընկերն ունէր։

—Գիտէ՞ք, Վիլֆոր, որ ըսածնիդ յեղափոխական խօսքերու շատ կը նմանի։ Բայց կը ներեմ ձեզի, անկարելի է որ մէկը ժիրոնտեանի մը որդի ըլլայ, ու խուովութեանց հակամէտ չըլլայ։

Վիլֆորի երեսը սաստիկ կարմրեցաւ։

—Հայրս ժիրոնտեան էր, տիկին, իրաւ է. բայց իմ հայրս Թագաւորին մահուանը համար քուէ չտուաւ. հայրս նոյն արհաւիրքի օրերուն տարագրեցաւ, երբ դուք ալ տարագրուեցաք, և քիչ մնաց որ ինք ալ այն կառափնատը երթար, ուր ձեր հօրը գլուխը ինկած էր։

—Այո՛, ըսաւ մարքիզուհին, որուն դէմքին վրայ վրդովում առաջ չբերաւ այդ արիւնհեղութեան յիշատակը. միայն թէ կառափնատին վրայ երկուքին ալ ելլելուն պատճառը իրարու բոլորովին հակառակ սկզբունք ունենալնին էր. ատոր ապացոյցը սա է որ բոլոր ընտանիքս աքսորուած իշխաններուն հաւատարիմ մնաց, իսկ ձեր հայրը իսկոյն նոր կառավարութեան միացաւ, և քաղաքացի Նուարթիէն ժիրոնտեան ըլլալէն յետոյ, Նուարթիէ կոմս ըլլալով՝ Ծերակոյտի անդամ եղաւ։

—Մա՛յր իմ, մա՛յր իմ, ըսաւ Ռընէ, գիտէ՞ք որ այս գէշ յիշատակներուն վրայ պիտի չխօսուէր։

—Տիկին, պատասխանեց Վիլֆոր, օրիորդ Սէն-Մէրանի ըսածին պէս խոնարհաբար ձեզմէ կը խնդրեմ որ անցեալը մոռնանք։ Ի՞նչ օգուտ մեղադրել այն բաները, որոնց առջև Աստուծոյ կամքն անգամ ակար է։ Աստուած կրնայ փոխել ապագան, բայց անցեալը չի կրնար բարեխառնել անգամ։ Մեր ձեռքէն եկածը սա է որ եթէ չենք կրնար ուրանալ զայն, գոնէ քօղ մը ձգենք վրան։ Ի՞նչ կը կարծէք, ես հօրս ոչ միայն կարծիքէն հրաժարեցայ, այլ և անունը թողուցի։ Հայրս Բոնաբարդեան է և Նուարթիէ կ'անուանուի, իսկ ես արքայական

եմ և անունս Վիլֆոր է։ Ձգեցէք որ հին կոճղին մէջ մնացած կտոր մը խուովայոյզ հիւթը ինքնին ցամքի, և նոր բողբոջին նայեցէք միայն, տիկին, որ նոյն կոճղէն կը հեռանայ առանց կարենալու, և գրեթէ կրնամ ըսել՝ ակամայ բոլորովին անկէ պիտի զատուի։

—Կեցցե՛ս, Վիլֆոր, ըսաւ մարքիզը, կեցցե՛ս, շատ լաւ պատասխանեցիք։ Ես ալ մարքիզուհիին միշտ կ'ըսեմ որ անցեալը մոռնայ, բայց երբեք մտիկ չըներ. կը յուսամ՝ որ դուք աւելի պիտի յաջողիք համոզել զայն։

—Այո, անցածը մոռնանք. ատկէ աւելի բան չեմ ուզեր, ես ալ համակարծիք եմ, բայց գոնէ Վիլֆոր այսուհետեւ անողոք ըլլայ։ Վիլֆոր, լաւ գիտցէք որ մենք քեզի համար երաշխաւոր եղած ենք Թագաւորին, և թէ Նորին Վեհափառութիւնը մեր խնդրանքովը բարեհաճեցաւ անցածը մոռնալ, ինչպէս որ ես քու խնդրանքովդ կը մոռնամ, ըսաւ մարքիզուհին, ձեռքը Վիլֆորին երկնցնելով։ Բայց եթէ ապստամբութեան դաշնակից մը ձեռքդ իյնալու ըլլայ, մի՛տքդ բեր որ ամենուն աչքը քու վրադ է, մանաւանդ որ գիտեն թէ դուն այնպիսի գերդաստանի կը պատկանիս, որ գուցէ ապստամբութեան դաշնակիցներուն հետ յարաբերութիւն ունենայ։

—Ո՛հ, տիկին, ըսաւ Վիլֆոր, իմ պաշտօնս և մանաւանդ արդի ժամանակը կը ստիպեն զիս որ խիստ և անաչառ ըլլամ. միտքս դրած եմ որ այնպէս ըլլամ. արդէն քանի մը քաղաքական ամբաստանութիւններ ու գործեր ունեցայ և այս մասին իմ խստութիւնս ի գործ դրի, բայց դժբախտաբար ասոնց վերջը չեկաւ։

—Կը կարծէ՞ք, ըսաւ մարքիզուհին։

—Կը վախնամ այդ մասին. Նաբոլէոն՝ Էլպա կղզին գտնուելով, Ֆրանսայի շատ մօտիկ է, իր ներկայութիւնը՝ որ գրեթէ մեր ծովեզերքէն կը տեսնուի, իր կողմնակիցներուն յոյսը կ'ամրապնդէ։ Մարսիլիա լեցուն է կէս թոշակաւոր պաշտօնատարներով, որոնք չնչին պատճառներ կը փնտռեն արքայականներուն հետ կռուի բռնուելու համար. այդ պատճա-

ռու բարձրաստիճան քաղաքացիներուն միջեւ մենամարտներ կը ծագին և ժողովրդեան մէջ մարդասպանութիւններ կը գործուին։

—Աղէկ միտքս ինկաւ, ըսաւ Սալվիէօյի կոմսը, որ Պ. Սէն-Մէրանի հին բարեկամն ու Արթուայի կոմսին սենեկապետն էր, գիտէք որ Դաշնակից Տէրութիւնները պիտի փոխեն անոր տեղը։

—Այո՛, Բարիզէն մեկնած ատենիս և անկէ ի վեր ասոր խօսքը կ'ըլլայ, ըսաւ Պ. Սէն-Մէրան։ Ո՞ւր պիտի ղրկեն զայն։

—Սէն Էլէն։

—Սէն Էլէն, Ս. Էլէն ի՞նչ բան է, հարցուց մարքիզուհին։

—Անկէ երկու հազար մղոն հեռու, հասարակածին միւս կողմը կղզի մըն է, պատասխանեց կոմսը։

—Երանի՛ թէ։ Որովհետեւ, ինչպէս ըսաւ Վիլֆոր, մեծ խենդութիւն մ'է այդպիսի մարդ մը թողուլ Քորսիքայի մէջ, ուր ծնած է ինքը, և Նափոլիի մէջ, ուր քեռայրը կը թագաւորէ դեռ, և այն Իտալիոյ դիմացը, զոր թագաւորութիւն մը ընել կ'ուզէր իր զաւկին համար։

—Դժբախտաբար, ըսաւ Վիլֆոր, 1814ի դաշնադրութիւնները կան, և եթէ Նափոլէոնին դպչին՝ դաշնադրութեանց դէմ մեղանչած պիտի ըլլանք։

—Էհ, թող դէմ ըլլայ, ըսաւ Պ. Սալվիէօ, ինքը անոնց կարեւորութիւն տուա՞ւ, երբ Անկիէնի դժբախտ դուքսը հրացանի բռնել տուաւ։

—Այո՛, ըսաւ մարքիզուհին, պատշաճ բան մը կ'ըլլայ, եթէ Դաշնակից Տէրութիւնները Նափոլէոնը Եւրոպայէն հեռացնեն, եւ Վիլֆոր Մարսիլիան կը մաքրէ անոր կուսակիցներէն։ Թագաւորը կամ պիտի թագաւորէ կամ ոչ. եթէ պիտի թագաւորէ, պէտք է որ կառավարութիւնը զօրաւոր ըլլայ, և իր գործակալները՝ անողոք չարիքին առաջքը առնելու միջոցը աս է։

—Դժբախտաբար, տիկին, ըսաւ Վիլֆոր ժպտելով, ընդհանուր դատախազի օգնական մը միշտ չարիքը պատահելէն յետոյ կը հասնի։

—Ուրեմն պէտք է որ դարման տանի անոր։

—Կրնամ ըսել, տիկին, որ մենք չարիքին դարման չենք տանիր, բայց անոր վրէժը կը լուծենք. աս է մեր ըրածը։

—Ո՛հ, Պ. Վիլֆոր, ըսաւ ծաղկատի եւ գեղեցիկ օրիորդ մը, որ Սալվիէօյի կոմսին աղջիկը ու Սէն-Մէրանի օրիորդին բարեկամուհին էր, ուրեմն աշխատէ լաւ դատավարութիւն մը տեսնել, քանի որ մենք Մարսիլիա ենք։ Եղեռնադատ ատեանը չեմ գտնուած երբեք. կ'ըսեն թէ շատ հետաքրքրական է։

—Ստուգիւ, շատ հետաքրքրական է, օրիորդ, ըսաւ Վիլֆոր. որովհետեւ եղեռնադատ ատեանը թատերաբեմի մը վրայ երգուած չինծու ողբերգութեան տեղ՝ ճշմարիտ գործողութիւն մըն է, ներկայացուած կեղծ տրտմութեանց տեղ՝ իրաւցնէ տրտմութիւններ են։ Դատարանը տեսնուած մարդը՝ ոչ թէ թատրոնի դերասանին պէս վարագոյրը իջնելէն յետոյ, իր տունը կը դառնայ, իր ընտանիքին հետ կ'ընթրէ, և հետեւեալ օրը կրկին բեմական խաղերը սկսելու յոյսով, հանգիստ կը պառկի, այլ բանտ կը մտնէ և հոն իր դահիճը կը գտնէ։ Ինչպէս կը տեսնէք, յուզում եւ գրգռութիւն ուզող ջղային անձերու համար ասկէ լաւ տեսարան չըլլար։ Բայց անհոգ եղիք, օրիորդ, եթէ առիթը ներկայանայ, ձեզի կ'իմացընեմ։

—Այնպիսի բաներ կ'ըսէ որ սարսափ կազդէ մեզի... մինչ ինք կը ծիծաղի, ըսաւ Ռընէ բոլորովին գունատած։

—Ի՞նչ ընենք... մենամարտ մըն է աս... արդէն հինգ-վեց անգամ քաղաքական ամբաստանեալներուն դէմ մահուան պատիժ խնդրեցի...։ Այդ պատճառաւ ո՞վ գիտէ քանի՜ դաշոյններ այս պահուս շուքին մէջ կը սրուին, կամ արդէն ուղղուած են իմ դէմ։

—Ո՛հ, տէր Աստուած, ըսաւ Ռընէ աստիճանաբար աւելի տխրելով, ստո՞յգ է ըսածդ, Պ. Վիլֆոր։

—Անկէ աւելի ստոյգ խօսք չի կրնար ըլլալ, պատասխանեց երիտասարդ դատաւորը ժպիտով մը։ Եւ այդ գեղեցիկ դատերով, որոնց կը ցանկայ օրիորդը, իր հետաքրքրութիւնը գոհացնելու համար, եւ որոնց ես ալ կը փափաքիմ իմ փառասիրութիւնս յագեցնելու համար, կացութիւնը հետզհետէ կը ծանրանայ։ Կը կարծէք որ Նափոլէոնի բոլոր զինուորները, որոնք սովրած են կուրաբար թշնամիին վրայ երթալու, հրա-

ցանին կրակ տալու կամ սուրհով քալելու ատեն բանի մը վրայ կը խորհի՞ն բնաւ։ Իրենց երբեք չտեսած մարդը, Ռուս մը, Աւստրիացի մը կամ Հունգարացի մը մեռցնելէն աւելի՝ իրենց անձնական թշնամին կարծած մարդը սպաննելու կը խորհի՞ն արդեօք։ Սակայն ատ ալ պէտք է. առանց այդ բանին՝ մեր արհեստը չի կրնար երբեք արդարացում գտնել։ Ես ինքս, երբ ամբաստանեալին աչքերուն մէջ կատաղութեան լուսաւոր փայլակին շողալը կը տեսնեմ՝ քաջալերութիւն մը կը զգամ, կը փառաւորուիմ. այն ատեն՝ դատ չէ ըրածս, այլ պատերազմ. կը մաքառիմ անոր հետ. ան իմ խօսքս կը հերքէ, ես աւելի կը սաստկացնեմ, եւ այսպէս վէճը կը վերջանայ՝ ամէն պատերազմներու պէս, կամ յաղթելով և կամ յաղթուելով։ Ահա ատ է դատավարութիւնը. վտանգն է որ պերճախօս կ'ընէ մարդը։ Եթէ ամբաստանեալ մը իմ պատասխանէս յետոյ երեսիս ժպտի, ինծի այնպէս կը թուի որ աղէկ չխօսեցայ և ըսածս անհիմն, տկար և անբաւական է։ Երեւակայեցէք ուրեմն թէ ի՛նչ հպարտութիւն կը զգայ ամբաստանեալին յանցաւորութեանը համոզուած ընդհանուր դատախազ մը երբ կը տեսնէ որ իր յանցաւորը կը սկսի թուլնալ, եւ ապացոյցներուն ճշդութեան եւ դատաւորին պերճախօսութեանը շանթերուն առջեւ կը խոնարհի, և այդ խոնարհած գլուխը ետքը պիտի իյնայ....։

Ռընէ կամաց մը հառաչեց։

—Ահա՛ խօսիլն ալ ասանկ կ'ըլլայ, ըսաւ հրաւիրեալներէն մէկը։

—Ահա՛ մեր ժամանակին յարմար մարդ մը, ըսաւ ուրիշ մը։

—Վերջին գործիդ մէջ ալ գովելի հանդիսացար, սիրելիդ իմ Վիլֆօր, ըսաւ երրորդ մը. մի՞թէ այն մարդը որ իր հայրը սպաննած էր, իսկ դուն խօսքով մեռուցիր զայն՝ դահիճը ձեռքը վրան չդրած դեռ։

—Ո՛հ, հայրասպանները, բնաւ հոգս չէ. ըսաւ Ռընէ, այնպիսի մարդոց համար ըստ բաւականի մեծ տանջանք չկայ, բայց քաղաքական յանցանքներ ունեցող խեղճ ամբաստանեալներուն համար....

—Բայց ասոնք աւելի գէշ են, Ռընէ, գոչեց մարքիզուհին, որովհետեւ թագաւորը ազգին հայրն է, և թագաւորը կործանել կամ մեռցնել ուզելը՝ երեսուն երկու միլիոն մարդոց հայրը մեռցնել կը նշանակէ։

—Ո՛հ, ինչ կ'ուզէ ըլլայ, ըսաւ Ռընէ, Պ. Վիլֆօր, խօսք կուտա՞ս ինծի որ ներողամիտ պիտի ըլլաս այն մարդոց, որոնց մասին բարեխօսութիւն պիտի ընեմ։

—Անհո՛գ եղիր, ըսաւ Վիլֆօր, խիստ զմայլելի ժպիտով մը հարցաքննութիւնները միասին կ'ընենք։

—Սիրելի աղջիկս, ըսաւ մարքիզուհին, գեղեցիկ թռչնիկներուդ, Սպանիական շուներուդ և զարդարանքիդ խառնուէ՛, ու թող որ նշանածդ իր պաշտօնը կատարէ։ Այսօր զէնքը դադրած է, ու դատաւորներուն պատմուճանը յարգ ունի։ Այդ մասին լատիներէն խորիմաստ խօսք մը կայ։

—Զէնքը տեղի կուտայ (դատաւորի) պատմուճանին, ըսաւ Վիլֆօր խոնարհելով։

—Ես չհամարձակեցայ լատիներէն խօսիլ, պատասխանեց մարքիզուհին։

—Կարծեմ, Վիլֆօր, աւելի լաւ պիտի ըլլար, եթէ բժիշկ ըլլայիր, ըսաւ Ռընէ. հոգի առնող հրեշտակը որչափ ալ հրեշտակ ըլլայ, ամէն ատեն սարսափ ազդած է ինծի։

—Բարի՛ Ռընէ, ըսաւ կամաց մը Վիլֆօր, կաթոգին և սիրահեղ աչքերը դարձնելով մանկամարդ աղջկան վրայ։

—Աղջիկս, ըսաւ մարքիզը, Պ. Վիլֆօր այս գաւառին բարոյական և քաղաքական բժիշկը ըլլալու է, հաւատա՛ ինծի. անոր վարած պաշտօնը շատ լաւ է։

—Ատիկա միջոց մը պիտի ըլլայ իր հօրը վարած պաշտօնը մոռցնել տալու, ըսաւ մարքիզուհին, որ Վիլֆօրին հայրը յիշելու առիթը չէր փախցներ։

—Տիկին, ըսաւ Վիլֆօր տխուր ժպիտով մը, արդէն պատիւ ունեցայ ձեզ ըսելու որ հայրս իր անցեալ ժամանակի սխալը ուրացած է, կամ գոնէ այնպէս կը յուսամ թէ կրօնքի և բարեկարգութեան ջերմեռանդ բարեկամ մը եղած է ան, և

գուցէ ինէ աւելի արքայական. որովհետեւ ան զղջումով արքայական եղաւ, իսկ ես միայն կրքով եղած եմ:

Եւ այս ինքնագով խօսքէն յետոյ՝ Վիլֆոր իր ճառամարտութեան առաջ բերած տպաւորութիւնը դատելու համար՝ կոչնականներուն երեսը նայեցաւ, որպէս թէ ատեանին մէջ ասոր նման խօսք մը ըսելէն յետոյ, դառնար ունկնդիր հանդիսականներուն նայէր:

—Կը հաւատա՞ս, սիրելի Վիլֆոր, ըսաւ Սալվիէօյի կոմսը. ճիշդ ես ալ այդպէս պատասխանեցի անցեալ օր Թիւյըլըրիի մէջ Թագաւորի պալատան նախարարին, երբ ան կը հարցնէր թէ ինչպէս կ'ըլլայ որ Ժիրոնտեանի մը որդին և Քոնտէի բանակին պաշտօնատարի մը աղջկան միջև տարօրինակ ամուսնութիւն մը կնքուի. Նախարարը շատ լաւ հասկցաւ ըսածս: Լուի ԺԸ. իսկ այս կերպ ամուսնացած է: Թագաւորը, որ առանց մեր գիտութեանը, մեր խօսակցութիւնը մտիկ կ'ընէր, մեր խօսքը ընդմիջեց, ըսելով. «Վիլֆոր, (աղէ՛կ ուշ դիր որ Թագաւորը Նուարթիէ անունը չտուաւ, այլ ընդհակառակը Վիլֆոր անունին վրայ աղէկ զարկաւ) Վիլֆոր, ըսաւ Թագաւորը, աղէկ գործ պիտի տեսնէ, արդէն կատարեալ երիտասարդ մըն է և իմ կուսակիցս: Ուրախութեամբ լսեցի որ Սէն-Մէրանի մարքիզն ու մարքիզուհին իրենց փեսայ կ'առնեն զայն, և ես անոնց խորհուրդ պիտի տայի որ այս խնամութիւնը ընեն, եթէ իրենք հրաման չխնդրէին զայն կատարելու:»

—Թագաւո՞րը այդ խօսքը ըսաւ, կո՛մս, պոռաց Վիլֆոր անսահման ուրախութեամբ տոգորուած:

—Իր բերնէն ելած խօսքն է որ կը զրուցեմ, և եթէ մարքիզը ուզէ ազատօրէն ու անկեղծութեամբ խօսիլ, պիտի խոստովանի թէ իմ ըսածս կատարելապէս կը համաձայնի այն խօսքին, զոր Թագաւորը իրեն ըսաւ, երբ վեց ամիս առաջ իր աղջկան քեզի հետ ամուսնանալուն առաջարկին վրայ խօսեցաւ անոր:

—Իրաւ է, ըսաւ մարքիզը:

—Ո՛հ, ուրեմն ինչպէս բոլոր ունեցածովս երախտապարտ

ըլլալու եմ այդ ազնիւ Թագաւորին. անոր ծառայելու համար կրցածս պիտի ընեմ:

—Անշո՛ւշտ, ըսաւ մարքիզուհին, ահա այն ատեն ինձ սիրելի պիտի ըլլաս. երանի՜ թէ այս վայրկեանիս ապստամբութեան դաշնակից մը գար. իրաւ որ լաւ ընդունելութիւն պիտի գտնէր:

—Իսկ ես, մայր իմ, ըսաւ Ռընէ, Աստուծմէ կը խնդրեմ որ քու խօսքիդ մտիկ չընէ, և Պ. Վիլֆորին փոքրիկ գողեր, տկար մանուկներ և վախկոտ խարդախներ ղրկէ. այն ատեն հանդարտ պիտի քնանամ:

—Ասիկա կը նմանի, ըսաւ Վիլֆոր ծիծաղելով, բժիշկի մը համար մաղթել որ միայն գլխացաւ, վարդախտ և պիծակներու խայթուածներ ունեցող հիւանդներ ունենայ, որոնցմէ մարմնոյ մորթը միայն կը վնասուի: Եթէ ընդհակառակը զիս ընդհանուր դատախազ կ'ուզես տեսնել, այն սոսկալի հիւանդութիւնները խնդրէ՛ ինծի համար, որոնց բժշկութիւնը բժշկին պատիւ կը բերէ:

Նոյն պահուն, կարծես թէ բախտը կը սպասէր որ Վիլֆոր իր փափաքը արտայայտէ որպէս զի կատարուի ան. սենեկապան մը ներս մտաւ ու ականջին քանի մը խօսք ըսաւ: Վիլֆոր ներողութիւն խնդրելով՝ սեղանէն ելաւ ու քանի մը վայրկեան ետքը դարձաւ զուարթ դէմքով ու ժպտաշուրթն:

Ռընէ սիրալիր աչքերով անոր նայեցաւ, որովհետեւ Վիլֆոր իր կապոյտ աչքերովը, աղօտ դէմքովը և երեսը շրջապատող կիսամօրուսովը վայելուչ և գեղեցիկ երիտասարդ մը կ'երեւար: Մանկամարդ աղջկան միտքը բոլորովին անոր շրթունքներէն կախուած մնացած էր կարծես, անհամբեր սպասելով որ այդպիսի պահու մը աներեւոյթ ըլլալուն պատճառը իմանայ:

—Ուրեմն, ըսաւ Վիլֆոր, քիչ մը առաջ կը փափաքէիր, օրիորդ, որ ամուսինդ բժիշկ ըլլար, գոնէ այդ բանով կը նմանիմ Ասկղեպիոսի աշակերտներուն, որոնք տրամադրելի ատեն չունին. ու կուգան անհանգիստ կ'ընեն զիս քովդ եղած ատենս ալ և նշանտուքի ճաշի ատենն իսկ:

—Ի՞նչ պատճառաւ անհանգիստ կ'ընեն քեզ, պարոն, հարցուց գեղանի մանկամարդուհին, քիչ մը տրտմութիւն ցուցընելով:

—Աւա՜ղ, հիւանդի մը համար, որ ինծի ըսածնուն նայելով, վերջին աստիճանը հասած է. այս անգամ ծանր պարագայ մըն է, և հիւանդութիւնը կառափնատին վրայ պիտի առողջանայ կարծեմ:

—Ո՜հ, տէր Աստուած, գոչեց Ռընէ գոյնը նետելով:

—Ստո՞յգ է ըսածդ, հարցուցին բոլոր հանդիսականները միաբերան:

—Կ'երեւայ որ փոքրիկ Պոնապարդեան դաշնակցութիւն մը երեւան ելած է պարզապէս:

—Կարելի՞ բան է, ըսաւ մարքիզուհին:

—Ահա՛ մատնութեան նամակը:

Եւ Վիլֆոր հետեւեալը կարդաց.

Արքայական գահի եւ կրօնքի բարեկամ մը ընդհանուր դատախազին օգնականին կ'իմացնէ թէ Փարաւոն նաւուն երկրորդ նաւապետ Էտմոն Տանթէս, որ այս առտու Իզմիրէն հասաւ, Նէապօլիս եւ Փորթօ-Ֆերրայօ հանդիպելէ յետոյ, Միւրայէն Յափշտակիչին նամակ մը տարաւ եւ Յափշտակիչէն Բարիզի Պոնապարդեան ժողովրդեան ուղղուած նամակ մը բերած է իր հետ:

Տանթէսի ոճիրին ապացոյցը ձեռք կրնայ բերուիլ, զայն բանտարկելով, որովհետեւ յիշեալ նամակը կամ իր վրայ, կամ հօրը տունը եւ կամ Փարաւոն նաւուն մէջ իր սենեակը պիտի գտնէք:

—Բայց, ըսաւ Ռընէ, այդ նամակը, որ անստորագիր է, քեզի ղրկուած չէ, այլ ընդհանուր դատախազին:

—Այո՛, բայց ընդհանուր դատախազը հոս չէ, իր բացակայութեանը՝ նամակը գրագրին ձեռքը հասաւ, որ հրաման ունէր նամակները բանալու՝ ուստի այս նամակը բացեր ու զիս փնտռել տուեր է, բայց չգտնելով՝ հրաման ըրեր է որ մատնուածը ձերբակալեն:

—Ուրեմն յանցաւորը ձերբակալուա՞ծ է ըսաւ, մարքիզուհին:

—Այսինքն ամբաստանուածը, ըսաւ Ռընէ:

—Այո՛, տիկին, ըսաւ Վիլֆոր, և ինչպէս հիմա պատիւ ունեցայ օրիորդ Ռընէի ըսելու, եթէ յիշուած նամակը գտնուի՝ հիւանդը շատ ծանր է:

—Ո՞ւր է այդ խեղճը, հարցուց Ռընէ:

—Դատական պաշտօնարանը ինծի կը սպասէ:

—Գնա՛ ուրեմն, սիրելիս, ըսաւ մարքիզը, պարտաւորութիւններդ զանց մի ըներ մեր մօտ մնալով, երբ պաշտօնդ քեզ ուրիշ տեղ կը կոչէ, գնա՛ ուրեմն հոն ուր քեզի կը սպասեն:

—Ո՜հ, պարոն Վիլֆոր, ըսաւ Ռընէ, երկու ձեռքերը իրարու կցելով. ներողամի՛տ եղիր, որովհետեւ նշանտուքի օրն է:

Վիլֆոր սեղանին չուրջը դառնալով՝ մանկամարդ աղջկան աթոռին մօտեցաւ ու անոր յենարանին կռթնելով ըսաւ.

—Քեզ չտրտմեցնելու համար բոլոր կրցածս կ'ընեմ, սիրեցեալդ իմ Ռընէ. բայց եթէ ապացոյցները ստոյգ են, եթէ ամբաստանութիւնը ճիշդ է, հարկ պիտի ըլլայ Պոնապարդեան գէշ խոտը կտրել:

Ռընէ սարսռաց երբ այդ կտրել բառը լսեց. որովհետեւ կտրուելիք խոտը գլուխ մը ունէր:

—Այդ փոքրիկ աղջկան մտիկ մի՛ ըներ, կը վարժուի, ըսաւ մարքիզուհին ու իր նիհար ձեռքը Վիլֆորին երկարեց զոր ան համբուրեց Ռընէին նայելով, որպէս թէ աչքով անոր ըսէր.

—Քու ձեռքդ է որ կը համբուրեմ, կամ լաւ եւս այս պահուս կը բաղձայի համբուրել:

—Տխո՛ւր պաշտպանութիւն. ըսաւ Ռընէ մեղմաձայն:

—Արդարեւ, օրիորդ, ըսաւ մարքիզուհին, յուսահատեցուցիչ աղջիկ մըն ես. կը հարցընեմ քեզի, տէրութեան ճակատագիրը ի՞նչ յարաբերութիւն կրնայ ունենալ քու հաճոյքիդ և սրտիդ զգացումներուն հետ:

—Ո՜հ, մայր իմ, ըսաւ Ռընէ կամաց մը:

—Տիկին մարքիզուհի, ներեցէք այս տկար արքայականին, ըսաւ Վիլֆոր, ես խօսք կուտամ որ ընդհանուր դատախազի օգնականի պաշտօնս խղճմտութեամբ պիտի կատարեմ, այսինքն խիստ անաչառ պիտի ըլլամ:

Բայց դատաւորը այս խօսքը մարքիզուհիին ըսած ատեն, նշանածին կը նայէր գաղտագողի, և այդ նայուածքով անոր հասկցնել կ'ուզէր.

—Անհո՛գ եղիր, Ռընէ, քու սիրոյդ համար գթասիրտ պիտի ըլլամ:

Ռընէ իր ամենաքաղցր ժպիտովը պատասխանեց անոր նայուածքին և Վիլֆոր դուրս ելաւ ուրախ սրտով:

Ժ. ԳԼՈՒԽ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Վիլֆոր, ճաշասրահէն դուրս ելլելուն պէս, իր զուարթ դիմակը մէկդի ձգեց, ու իր նմանեաց կեանքի վճիռը արձակելու բարձրագոյն պաշտօնը վարող մարդու մը ծանր կերպարանքը առաւ: Թէև դէմքը փոխելու յաջողակ էր, և այդ յաջողակութիւնը շատ անգամ հայելիին մէջ նայելով ձեռք բերած էր, ինչպէս լաւ դերասան մը պէտք է որ ընէ, բայց այս անգամ շատ դժուարաւ յօնքը կնճռոտեց և դէմքը տխուր ցոյց տուաւ: Արդարև իր հօրը բռնած քաղաքական ճամբուն յիշատակը մէկդի ձգելով, որ կարող էր իր ապագայ վիճակին ընթացքը փոխել, եթէ ինքը բոլորովին անկէ չհեռանար, Ժէրար տը Վիլֆոր այդ միջոցին այնչափ երջանիկ էր՝ որչափ մարդ մը կրնայ ըլլալ: Արդէն ինքը հարուստ էր, ու քսանըեօթն տարեկան հասակին մէջ դատական բարձր պաշտօն մը կը վարէր. ծաղկատի ու գեղեցիկ աղջկան մը հետ ամուսնանալու վրայ էր, զոր ոչ թէ տարփանքով, այլ տրամաբանօրէն կը սիրէր, ինչպէս կրնայ սիրել ընդհանուր դատախազի օգնական մը. Օր. Սէն-Մէրան իր գեղեցկութենէն զատ՝ որ հռչակաւոր էր, ժամանակին ամէնէն մեծ գերդաստաններէն մէկուն աղջիկն էր. իր հօրը ու մօրը ազդեցութենէն զատ, որոնք ուրիշ զաւակ չու-

նենալով, կրնային բոլորովին իրենց փեսային զոհել զայն, ամուսնոյն յիսուն հազար սկուտի օժիտ կը բերէր, որ ապագայ ակնկալութեանց նայելով՝ (այս անիրաւ բառը ամուսնութեան միջնորդներուն կողմէ հնարուած է) կրնար օր մը կէս միլիոնի ժառանգութեամբ աւելնալ: Ուստի այս ամէն տարրերը Վիլֆորի համար հոգեզուարճ երջանկութեան ամբողջութիւն մը կը ձևացընէին այն աստիճան որ իր ներքին կեանքը հոգիին աչքերովը դիտած ատեն արևու վրայ բիծեր կը տեսնէր կարծես:

Դրան քով ոստիկանութեան գործակալը գտաւ, որ իրեն կը սպասէր: Տխուր մարդը տեսածին պէս՝ կարծեց թէ անմիջապէս երկնքի բարձրութենէն այն նիւթական երկրին վրայ ինկաւ, ուր կը քալենք, իր կերպարանքը շտկեց, ինչպէս վերը ըսինք, ու արդարութեան պաշտօնակալին մօտենալով, ըսաւ.

—Ահա եկայ, պարոն. նամակը կարդացի, լաւ ըրեր էք այդ մարդը ձերբակալելով. հիմա անոր և ապստամբական դաշնակցութեան մասին ստացած մանրամասն տեղեկութիւններդ իմացո՛ւր ինձ:

—Դաւադրութեան մասին դեռ բան մը չենք գիտեր, պարոն, ըսաւ գործակալը, բայց անոր վրայէն առնուած բոլոր թուղթերը մէկ ծրարի մէջ փակուած, ձեր գրասեղանին վրայ դրուած են: Իսկ կալանաւորը, ինչպէս մատնութեան նամակին մէջ տեսաք, Էտմոն Տանթէս է, որ Աղեքսանդրիոյ և Իզմիրի հետ բամպակի առևտուր ընող, և Մարսիլիա հաստատուած Մորէլի և որդւոյն վաճառատանը վերաբերող Փարաոն եռակայմ նաւուն երկրորդ նաւապետն է:

—Ծովային վաճառականութեան ծառայելէն առաջ՝ ծովային զինուորութիւն ըրա՞ծ է:

—Ո՛հ, չէ, պարոն. նորահաս երիտասարդ մըն է տակաւին:

—Քանի՞ տարեկան է:

—Տասնըինը կամ առ առաւելն քսան տարեկան:

Այդ միջոցին, Վիլֆոր մեծ փողոցէն անցնելով, Հիւպատոսներու փողոցին անկիւնը հասած էր. մարդ մը որ ճամբուն վրայ իրեն սպասելու պէս երևոյթ ունէր, մօտեցաւ. Պ. Մորէլն էր ան:

—Ա՛հ, Պ. Վիլֆոր, գոչեց բարեխիղճ մարդը, ընդհանուր դատախազի օգնականը տեսնելով, շատ երջանիկ եմ քեզ տեսնելուս: Ճշմարիտ կ՚ըսեմ որ խիստ տարօրինակ և անլուր սխալով մը իմ նաւուս երկրորդ նաւապետ Էտմոն Տանթէսը ձերբակալեցին:

—Գիտեմ, պարոն, չարունակեց Վիլֆոր, հարցաքննելու կ՚երթամ:

—Ո՛հ, պարոն, չարունակեց Պ. Մորէլ, երախտապարտին համար ունեցած բարեկամութենէն մղուած, ամբաստանուած անձը դուք չէք ճանչնար, բայց ես լաւ կը ճանչնամ. շատ քաղցրաբարոյ եւ առաքինի երիտասարդ մըն է, եւ կը համարձակիմ ըսել թէ ծովային վաճառականութեան մէջ իր պաշտօնին ձեռնհաս մէկն է: Ո՛հ, Պ. Վիլֆոր, մեծ անկեղծութեամբ և բոլոր սրտովս ձեր արդարասիրութեան կը յանձնեմ զայն:

Վիլֆոր, ինչպէս առկէ առաջ տեսանք, քաղաքին ազնուական դերդաստաններէն էր, իսկ Մորէլ՝ հասարակ ժողովուրդէն. առաջինը՝ եռանդոտ արքայական էր, երկրորդը գաղտնի Պոնաբարդեան ըլլալուն կասկածը կը ներշնչէր: Վիլֆոր արհամարհանքով Մորէլի նայեցաւ, ու ցուրտ չեչտով պատասխանեց.

—Գիտէ՞ք, պարոն, որ մարդ կրնայ քաղցրաբարոյ ըլլալ անհատական կեանքի մէջ, արդարասէր՝ առեւտրական յարաբերութեանց մէջ, եւ խոհեմ՝ իր պաշտօնին մէջ, բայց միեւնոյն ատեն շատ մեծ յանցաւոր, քաղաքականօրէն խօսելով: Դուք գիտէք, այդպէս ըլլալը, այնպէս չէ՞, պարոն:

Դատաւորը ծանրացաւ վերջին բառերուն վրայ, իբր թէ նոյն ինքն նաւատէրին պատշաճեցնել ուզէր. միեւնոյն ատեն իր հետազօտ նայուածքը կարծես այդ մարդուն սրտին խորը կը թափանցէր, որ կը համարձակէր ուրիշի համար բարեխօսութիւն ընել, մինչ ինքն իսկ ներողամտութեան կարօտ էր:

Մորէլ կարմրեցաւ, որովհետեւ իր քաղաքական գաղափարներուն մասին իր խիղճը այնչափ մաքուր ըլլալուն վստահ չէր, առկէ զատ մեծ մարաջախտին հետ Տանթէսի ունեցած տեսակցութեան և Նաբոլէոնի անոր ըրած քանի մը խօսքերուն գաղտ-

նիքը Տանթէսէն լսած ըլլալով իր միտքը կը խռովէին: Սակայն ամենախորին կարեկցութեան ձայնով մը ըսաւ.

—Կ՚աղաչեմ Պ. Վիլֆոր, արդարադատ եղէք՛, ինչ որ պարտքերնիդ է և բարեմիտ՝ ինչպէս միշտ եղած էք, ու շուտով մեզի յանձնեցէք հեգ Տանթէսը:

Այդ յանձնեցէք մեզ խօսքը Պ. Վիլֆորի կողմէ մեկնուեցաւ:

—Հէ՛, հէ՛, ըսաւ ինքնիրեն կամաց մը, յանձնեցէ՞ք մեզի ...: Արդեօք այս Տանթէսը տէրութեան դէմ գաղտնի դաշնակցութեան մը մասնակի՞ց է, որ իր պաշտպանը այսպէս առանց խորհելու յոգնակի ձեւով կը խօսի: Կարծեմ գործակալը ըսաւ, թէ Տանթէս բազմաթիւ ընկերներու հետ գտնուած միջոցին բռնուեցաւ. անշուշտ բան մը ունին:

Յետոյ բարձրաձայն պատասխան տուաւ.

—Պարոն, դուք ապահով եղիք, և իմ արդարութեանս ի զուր դիմած պիտի չըլլաք, եթէ կալանաւորը անմեղ է. բայց եթէ ընդհակառակը յանցաւոր է, այնպիսի դժնդակ ժամանակի մէջ կապրինք, պարոն, որ անպատիժ թողուլը վնասակար օրինակ մը կրնայ ըլլալ. ուրեմն պիտի ստիպուիմ իմ պարտքս կատարելու:

Այդ խօսքը ընելէն յետոյ, իր տանը դուռը հասած ըլլալով, որ դատական պաշտօնատան կից էր, սեգ քալուածքով մը ներս մտաւ, պարզ քաղաքավարութեամբ ողջունելով խեղճ նաւատէրը, որ արձանի պէս նոյն տեղը մնաց:

Նախասենեակը լեցուն էր զինակիր պահապաններով և ոստիկանութեան գործակալներով: Անոնց մէջտեղը պահապաններուն հսկողութեան տակ, ատելութեան ատելավառ նայուածքով շրջապատուած, հանդարտ և անշարժ բանտարկեալը ոտքի վրայ կը գտնուէր:

Վիլֆոր նախասենեակէն անցաւ, ծուռ աչքով մը Տանթէսին նայեցաւ, ու գործակալին մէկուն ձեռքէն թղթածրար մը ընդունելով՝ ըսաւ.

—Բերէ՛ք կալանաւորը:

Թէեւ այս նայուածքը շատ հարեւանցի էր, բայց Վիլֆոր

կրցաւ իր հարցաքննելիք մարդուն վրայ անմիջական գաղափար մը կազմել։ Անոր մեծ և բաց ճակատէն հասկցաւ անոր խելքը. հաստատ աչքին ու պռստած յօնքին մէջ տեսաւ անոր քաջութիւնը, և հաստ ու կիսաբաց շրթունքէն, որոնք փղոսկրի պէս ճերմակ երկու շարք ակռաները երևան կը բերէին, անոր համարձակախօսութիւնը հասկցաւ։

Ուստի առաջին տպաւորութիւնը բարեյաջող էր Տանթէսի համար, բայց Վիլֆոր, իբրև խորին քաղաքականութեան խօսք մը, յաճախ լսած էր թէ սրտի առաջին շարժման հաւատալու չէ, թէև լաւ ըլլայ ան, ինքը այդ խրատը իր տպաւորութեան համար ալ գործածեց, առանց քննելու այդ երկու բառերուն միջև գտնուած տարբերութիւնը։

Ուստի իր բարի բնազդումները խափանեց, որոնք սիրտը պիտի գրաւէին, և ուժը մտքին տուաւ, հայելիին մէջ նայելով՝ իր հանդիսական օրերու կերպարանքը տուաւ ու խոժոռ և սպառնական դէմքով գրասեղանին, առջև անցաւ։

Վայրկեան մը ետքը Տանթէս ներս մտաւ։

Երիտասարդը միշտ գունատ էր, բայց տակաւ հանդարտ ու զուարթադէմ կ'երևար։ Սովորական քաղաքավարութեամբ բարևեց դատաւորը, ու յետոյ չորս կողմը նայեցաւ աթոռ մը փնտռելու համար, իբր թէ Մորէլ վաճառականին սրահը գտնուէր։

Այն ատեն Վիլֆորի տխուր նայուածքը տեսաւ, այն նայուածքը որ յատուկ է պալատականներուն, երբ անոնք չեն ուզեր որ իրենց գաղտնիքը իմացուի, և աչքերնին չմաքրուած ապակիի նման անթափանց կ'ընեն։ Տանթէս այդ նայուածքէն հասկցաւ որ դատաւորի առջև էր. տխրատեսի՛լ պատկեր։

—Ո՞վ ես դուն և ի՞նչ է անունդ, հարցուց Վիլֆոր՝ ներս մտած ատեն ոստիկանութեան գործակալէն ընդունած թուղթերը քննելով, որոնք մէկ ժամուան մէջ հետզհետէ շատցան, լրտեսներու բարքի ապականութիւնը այնքան վտանգաւոր է խեղճ ամբաստանեալներուն համար։

—Անունս Էտմոն Տանթէս է, պարոն, պատասխանեց երիտասարդը, հանդարտ և յստակ ձայնով մը, Փարաւոն նաւուն երկրորդ նաւապետն եմ, որ Մորէլի և որդւոյն կը պատկանի։

—Քանի՞ տարեկան ես, շարունակեց Վիլֆոր։

—Տասնըինը տարեկան, պատասխանեց Տանթէս։

—Քեզ ձերբակալած ատեննին ի՞նչ կ'ընէիր։

—Իմ նշանտուքի ճաշը կ'ընէինք, պարոն, ըսաւ Տանթէս քիչ մը վրդոված ձայնով. ո՛րքան տարբերութիւն կայ այն ուրախութեան ժամուն և հիմակուան ցաւալի տեսարանին միջև. Պ. Վիլֆորին տխուր դէմքը ո՛րքան տարբեր էր Մէրսէտէսի զուարթ և գեղեցիկ երեսէն։

—Նշանտուքիդ ճաշը՞ տեղի կ'ունենար, հարցուց դատաւորը, ակամայ սիրտը փղձկած։

—Այո՛, պարոն, աղջկան մը հետ ամուսնանալու վրայ եմ, աղջիկ մը, զոր երեք տարիէ ի վեր կը սիրեմ։

Վիլֆոր թէև ըստ սովորութեան դիւրազգած չէր, բայց սիրտը շարժեցաւ իր և դիմացինին միջև վիճակի նմանութիւն տեսնելով։ Տանթէսի խռովեալ ձայնը Վիլֆորի հոգիին խորը մտնելով՝ համակրական երակի մը բաղխեցաւ։ Ինքն ալ անոր պէս ամուսնանալու վրայ էր, ինքն երջանիկ էր, ու իր երջանկութեանը միջոցին անհանգիստ ըրած էին զինքը, որպէսզի գայ և այնպիսի մարդու մը երջանկութիւնը վրդովելու գործակից ըլլայ, որ իրեն պէս արդէն երջանկութեան հասնելու վրայ էր։

Պ. Վիլֆոր խորհեցաւ որ այդ խորհրդաւոր նմանութիւնը մեծ տպաւորութիւն առաջ պիտի բերէր Սէն-Մէրանի սրահը դարձած ատեն. Տանթէս նոր հարցումներու սպասած միջոցին Վիլֆոր առաջուց իր մտքին մէջ կարգաւորեց այն հակադրական բառերը, որոնց օգնութեամբը ատենաբանները ծափահարութեանց արժանացող փառասիրական ոճեր կը յօրինեն, և որոնք երբեմն հաւատացնել կուտան թէ ճշմարիտ պերճախօսներ են իրենք։

Իր ներքին կարճառօտ ճառը կարգի դնելէ յետոյ, Վիլֆոր ժպտեցաւ անոր յաջողութեանը վրայ, և Տանթէսի դառնալով ըսաւ.

—Շարունակէ՛, պարոն։

—Ի՞նչ կ'ուզես որ շարունակեմ։

—Դատաւորին տեղեկութիւն տալու։

—Թող դատաւորը ըսէ՛ թէ ի՛նչ կէտի վրայ կ'ուզէ տեղեկութիւն առնել, և ես բոլոր գիտցածս կ'ըսեմ, միայն թէ, աւելցուց ժպտելով, կանխաւ յայտարարեմ որ գիտցածս մեծ բան մը չէ։

— Ցափշտակչին տանն ծառայութիւն ըրի՞ր։

—Ծովային զինուորութիւն պիտի ընէի, երբ իշխանութենէ ինկաւ ան։

—Կ'ըսեն թէ քու քաղաքական կարծիքդ չափէ դուրս են, ըսաւ Վիլֆոր՝ որ ամենևին այսպիսի խօսք մը լսած չէր, բայց չզղջաց այդպէս հարցում ընելէն, ինչպէս սովորաբար կ'ընեն ամբաստանութեան մէջ։

—Ե՞ս քաղաքական կարծիք ունենամ, պարոն. ո՜հ, գրեթէ ամօթ է ըսելը, բայց ես կարծիք ըսուած բանը երբեք չեմ ունեցած։ Ինչպէս պատիւ ունեցայ ձեզի ըսելու, հազիւ տասնըինը տարեկան եմ, բան մը չեմ գիտեր, և ոչ ալ մեծ պաշտօն մը կատարելու համար ծնած եմ։ Եթէ այս աննշան վիճակիս մէջ՝ իմ բաղձացած պաշտօնս ինծի տրուի, Պ. Մորէլի երախտապարտ պիտի ըլլամ։ Ուստի իմ բոլոր, չեմ՝ ըսեր քաղաքական, այլ ընտանի կարծիքս սա երեք զգացումներուն մէջ կը կայանան. հայրս կը սիրեմ, Պ. Մորէլը կը յարգեմ և Մէրսէտէսը կը պաշտեմ։ Ահա՛, պարոն, ինչ որ դատաւորիս կրնամ ըսել. և կը տեսնէք որ ըսածներս դատաւորի ուշադրութիւնը գրաւելու արժանի չեն այնչափ։

Տանթէսի խօսած միջոցին, Վիլֆոր անոր քաղցր ու միաժամանակ անկեղծ և համարձակ դէմքը կը դիտէր, և միտքը կուգար Ռընէին խօսքը, որ առանց ամբաստանեալը ճանչնալու՝ խնդրած էր որ ներողամիտ ըլլայ։ Պ. Վիլֆոր մէկուն յանցանքը և յանցաւորները ճանչնալու մասին այնչափ փորձառու եղած էր, որ Տանթէսի ամէն մէկ խօսքին մէջ անոր անմեղութիւնը յայտնի կը տեսնէր։ Իրօք, այդ երիտասարդը, գրեթէ կրնանք ըսել, այդ տղան, պարզ, անկեղծ ու պերճախօս էր, այն տեսակ սրտի պերճախօսութեամբ որ փնտռուած ատեն չի գտնուիր, ամէնուն

հետ սիրով էր, որովհետև երջանիկ էր, և երջանկութիւնը բարի կ'ընէ չարերն անգամ. իր սրտէն բղխած մարդասէր քաղցրութիւնը մինչև իր դատաւորին կը հաղորդէր։ Թէև Վիլֆոր անոր հետ ամարդութեամբ և խստութեամբ կը վարուէր, բայց Էտմոն իր նայուածքին, ձայնին և շարժումներուն մէջ սիրոյ և բարութեան նշաններ միայն կը ցուցընէր զինքը հարցաքննողին։

—Արդարև, մրմնջեց Վիլֆոր, սիրուն տղայ մըն է, և կը յուսամ որ մեծ դժուարութիւն պիտի չունենամ Ռընէին առաջին յանձնարարութիւնը կատարելով՝ անկէ սիրով ընդունուելու։ Այդ բանը ընելով, բազմութեան առջև իրարու ձեռք կը սեղմենք, և ծածուկ տեղ մը սիրոյ համբոյր մը կ'առնեմ։

Այս քաղցր ակնկալութիւնը պայծառացուց Վիլֆորի դէմքը, այնպէս որ երբ իր մտածումէն յետոյ նայուածքը կրկին Տանթէսի վրայ դարձուց, տեսաւ որ Տանթէս ալ իր դատաւորին դէմքին բոլոր շարժումները ուշով դիտած էր և կը ժպտէր իր ուրախ մտածումին պէս։

—Պարոն, ըսաւ Վիլֆոր, կը կարծե՞ս որ թշնամի ունենաս։

—Ե՞ս թշնամի ունենամ, ըսաւ Տանթէս, ես դեռ աննշան մէկը ըլլալովս՝ չեմ կարծեր որ իմ կացութիւնս ինծի թշնամի վաստըկցուցած ըլլայ. գուցէ իմ բնաւորութիւնս փոքր ինչ բուռն ըլլայ, բայց միշտ ջանացած եմ իմ հրամանիս տակ եղողներուն հետ քաղցրութեամբ վարուիլ։ Իմ հրամանիս տակ 10 կամ 12 նաւաստի ունիմ. հարցափորձ ըրէք զանոնք, պարոն, ու անոնք պիտի ըսեն ձեզի թէ կը սիրեն ու կը պատուեն զիս, ոչ թէ իբրև հայր, որովհետև տակաւին երիտասարդ եմ, այլ իբր մեծ եղբայր։

—Եթէ թշնամի չունիս, գուցէ նախանձորդներ ունենաս։ Տասնըինը տարեկան հասակիդ մէջ նաւապետ պիտի ըլլաս, ինչ որ բարձր պաշտօն մըն է քու վիճակիդ մէջ։ Գեղեցիկ կին մը պիտի առնես, որ կը սիրէ քեզ, և այս ալ աշխարհային բոլոր վիճակներուն մէջ հազուագիւտ երջանկութիւն մըն է. գուցէ բախտին այս երկու յաջողութիւնները նախանձորդներ վաստըկցուցին քեզի։

—Իրաւունք ունիք. դուք ինծ լաւ ճանչնալու էք մարդիկը, ու կարելի է. բայց եթէ նախանձորդները իմ բարեկամներուս մէջէն են, ստուգիւ կ'ըսեմ որ աւելի աղէկ է զանոնք չճանչնալս, որպէս զի չպարտաւորուիմ ատել։

—Կը սխալիս, պարոն։ Պէտք է որ, որչափ կարելի է, չորս կողմ յայտնապէս տեսնես միշտ, և դուն այնչափ արժանաւոր երիտասարդ մը կ'երեւիս, որ քու մասիդ դատական սովորական կանոններէն պիտի շեղիմ, ճշմարտութիւնը երեւան հանելու համար պիտի օգնեմ, հաղորդելով քեզի այն ամբաստանութիւնը՝ որով իմ առջեւս բերուած ես։ Ահա ամբաստանող նամակը. այս գիրը կը ճանչնա՞ս։

Վիլֆոր ծոցէն հանելով նամակը Տանթէսին ներկայացուց. Տանթէս նայեցաւ և կարդաց։ Կարծես ճակտին վրայ ամպ մը իջաւ։

—Ո՛չ, պարոն, չեմ ճանչնար այս գիրը. կեղծուած է, բայց և այնպէս բաւական համարձակ գրուած է։ Ինչ և է, ճարտար ձեռքի գիր է։ Շատ երջանիկ եմ որ, կրկնեց երախտագիտութեամբ Վիլֆորին նայելով, ձեզի պէս մարդու մը հանդիպեցայ. իրօք՝ նախանձորդս ճշմարիտ թշնամի է եղեր։

Երիտասարդին աչքերուն մէջ փայլող շողերուն, Վիլֆոր անոր՝ առաջին քաղցրութեան տակ պահուած բոլոր բուռն կիրքը կրցաւ նշմարել։

—Հիմա տեսնե՛նք, ըսաւ դատաւորը, համարձակ պատասխա՛ն տուր ինծի, պարոն, ոչ իբր ամբաստանեալ մը, այլ սխալ կացութեան մը մէջ գտնուող մարդու մը պէս՝ որ իր պաշտպանին կը պատասխանէ. այս անստորագիր մատնութեան մէջ ի՞նչ ճշմարիտ բան կայ։

Վիլֆոր տհաճութեամբ գրասեղանին վրայ նետեց Տանթէսի ետ տուած նամակը։

—Ամէն բան և ո՛չինչ, պարոն, իմ նաւաստիութեանս պատւոյս, Մերսէտէսի նկատմամբ ունեցած սիրոյս և հօրս կենացը վրայ կ'երդնում, որ աս է ճշմարտութիւնը։

—Խօսէ՛, պարոն, ըսաւ Վիլֆոր բարձրաձայն։

Յետոյ ցած ձայնով մը ինքնիրեն կ'ըսէր.

—Եթէ Ռընէ զիս տեսնելու ըլլար, յուսամ որ ինծ գոհ ըլլար, ու այսուհետեւ գլուխ կտրող պիտի չկոչէր զիս։

—Երբ Նէապոլիսէն մեկնեցանք, Լըքլէր նաւապետը ուղեղային տենդով հիւանդացաւ. որովհետեւ նաւուն մէջ բժիշկ չունէինք, ինքը չուզեց որ մօտակայ ծովեզերք մը կենանք, որովհետեւ կը շտապէր ժամ առաջ Էլպա կղզին հասնելու, հիւանդութիւնը այնչափ շուտ սաստկացաւ որ երրորդ օրուան իրիկունը՝ զգալով որ պիտի մեռնի, զիս քովը կանչեց ու ըսաւ.

«—Սիրելիդ իմ Տանթէս, երդո՛ւմ ըրէ պատւոյդ վրայ որ քեզի ըսածս պիտի կատարես, խիստ մեծ գործեր կան ընելիք։

«—Կ'երդնում, նաւապետ, պատասխանեցի։

«—Երկրորդ նաւապետ ըլլալուդ համար՝ մահուանէս յետոյ նաւուն կառավարութիւնը քեզ կը վերաբերի, ըսաւ, ուստի՝ քեզի կը յանձնեմ նաւուն կառավարութիւնը, զոր դէպի Էլպա կղզին ուղղէ. Բորթօ-Ֆէրրայօ ցամաք ելիր, մեծ մարաջախտը հարցուր, ու այս նամակը անոր յանձնէ, գուցէ ինքը քեզի նամակ մը տայ, և յանձնարարութիւն մը ընէ։ Այդ յանձնարարութիւնը, զոր ես պիտի ընէի, Տանթէս, դուն իմ տե՛ղս կատարէ, և բոլոր պատիւը քուկդ կ'ըլլայ։

«—Հրամանքիդ կը կատարեմ, նա՛ւապետ, բայց գուցէ կարծածնուդ չափ դիւրութեամբ կարելի չըլլայ երթալ մեծ մարաջախտին մօտ։

«—Ահա մատանի մը, զոր եթէ անոր ղրկելու ըլլաս, ամէն դժուարութիւններ կը հարթուին։»

Այս խօսքին վրայ՝ նաւապետը մատանի մը տուաւ ինծի։

Ճիշտ ատենն էր. երկու ժամ ետքը ինքզինքը կորսնցուց. հետեւեալ օրը մեռած գտանք զինքը։

—Ի՞նչ ըրիք այն ատեն։

—Ինչ որ պարտէի ընել, պարոն, ինչ որ ուրիշ մը իմ տեղս ընելու էր։ Ամէն պարագայի մէջ մեռնողի մը խնդրանքը նուիրական է, բայց նաւաստիներուն մէջ գլխաւորի մը

խնդրանքը այնպիսի հրամաններ են, զորս պարտինք կատարել։ Ուստի առագաստները բանալ տալով՝ դէպի Էլպա կղզին ուղղեցի նաւը, ուր հետեւեալ օրը հասանք։ Նաւուն մէջ ամէն բան կարգադրելէս յետոյ մինակ ցամաք ելայ։ Ինչպէս գուշակեր էի, զիս մեծ մարաջախտին ներկայացնելու համար դժուարութիւններ յարուցին, բայց երբ մատանին անոր ղրկեցի, բոլոր դռները բացուեցան առջևս։ Մեծ մարաջախտը զիս ընդունեց, խեղճ Լըքլէր նաւապետին մահուան վերջին պարագաներուն վրայ հարցուփորձ ըրաւ, ու նաւապետին գուշակածին պէս ինծ նամակ մը յանձնեց ու պատուիրեց որ անձամբ Բարիզ տանիմ զայն։ Այդ հրամանը կատարելու խօսք տուի իրեն, որովհետեւ ատով իմ նաւապետիս վերջին կամքը կատարած կ'ըլլայի։ Նաւը դարձայ, դէպի Մարսիլիա ուղղեցի զայն, ուր երէկ հասայ. շուտ մը մաքսատան և մաքրանոցի գործերը լմնցուցի ու յետոյ փութացի իմ նշանածս տեսնելու, զոր առաջուընէ աւելի գեղեցիկ և աւելի խանդակաթ սիրով գտայ։ Պ. Մորէլի շնորհիւ ամէն եկեղեցական դժուարութիւնները հարթեցինք. վերջապէս, պարոն, ինչպէս ըսի, նշանտուքի ճաշին ներկայ էի, մէկ ժամէն հարսանիքս պիտի կատարէի և վաղը Բարիզ երթալու միտք ունէի, երբ այս ամբաստանութեանս վրայ, զոր դուք ալ հիմա ինծի պէս կ'արհամարհէք, զիս բռնեցին հոս բերին։

—Այո՛, այո՛, ըսաւ Վիլֆոր կամաց մը, այս ամէնը ճշմարիտ կ'երեւայ ինծի, և եթէ յանցաւոր իսկ ես՝ անխոհեմութեանդ արդիւնքն է, և այդ անխոհեմութիւնը օրինաւոր կրնայ համարուիլ նաւապետիդ հրամաններուն համար։ Մեզի տուր այն նամակը, որ Էլպա կղզիէն քեզ յանձնուեցաւ, և խոստացի՛ր որ փնտռուած ատենդ հոս ներկայանաս, և գնա՛ բարեկամներուդ քով։

—Ուրեմն ազատ եմ, պարոն, գոչեց Տանթէս մեծ ուրախութեամբ։

—Այո՛, միայն թէ այն նամակը ինծի յանձնէ։

—Առջիդ պիտի ըլլայ, պարոն, քանի որ առին զայն միւս

թուղթերուս հետ, որոնց մէկ քանին սա ծրարին մէջ կը տեսնեմ։
—Կեցի՛ր, ըսաւ դատաւորը Տանթէսին, որ երթալու հա-
մար ձեռնոցները ու գլխարկը կ'առնէր, կեցի՛ր, նամակը որո՞ւ
ուղղուած է։
—Առ Պարոն Նուարթիէ, Քօֆ-Հէրօն փողոցը, Բարիզ, պա-
տասխանեց Տանթէս։
—Վիլֆորի վրայ եթէ կայծակ մը իյնար, այդ հացէին
չափ յանկարծակի և անակնկալ հարուած մը չէր տար անոր,
ինքզինքը նորէն բազկաթոռին վրայ ձգեց, որուն մէջ կէս մը
ոտքի ելած էր Տանթէսի վրայէն առնուած թուղթերուն ծրա-
րը առնելու համար, և շտապով ու թուղթերը դարձնելով՝ աղէ-
տալի նամակը առաւ մէջէն, որուն վրայ անպատմելի սարսա-
փով լեցուած աչքերը յառած էր։
—Պ. Նուարթիէ, Քօք-Հէրօն փողոցը, թիւ 13, կարդաց
կամաց մը Վիլֆոր հետզհետէ գունատելով։
—Այո՛, պարոն, ըսաւ Տանթէս շուարած. կը ճանչնա՞ք զայն։
—Ո՛չ, պատասխանեց Վիլֆոր աշխուժով, թագաւորին
հաւատարիմ ծառայ մը դաւաճաններու հետ ծանօթութիւն
չունենար։
—Ուրեմն դաւադրութեան խօ՞սք կայ, հարցուց Տանթէս,
որ զինքը ազատ կարծելէն յետոյ, սկսաւ առաջինէն աւելի մեծ
երկիւղ մը զգալ։ Ինչ և է, պարոն, ձեզի ըսի արդէն, բերած
նամակիս պարունակութենէն բնաւ տեղեկութիւն չունիմ։
—Այո՛, կրկնեց Վիլֆոր ցած ձայնով, բայց նամակը ղըր-
կուած մարդուն անունը գիտե՞ս։
—Անշուշտ, նամակը յանձնելու համար, պարոն, պէտք է
որ անունը գիտնամ։
—Մէկուն չցուցուցի՞ր այս նամակը, ըսաւ Վիլֆոր կար-
դալով, որ քանի կը կարդար զայն, գոյնը կը նետէր տակաւ։
—Ոչ մէկուն, պարոն, պատուոյս վրայ կ'երդնում։
—Բնաւ մէկը չգիտե՞ր որ դուն Էլպա կղզիէն նամակ մը
կը բերէիր Պ. Նուարթիէի հասցէով։
—Ինծի յանձնողէն զատ մէկը չի գիտեր, պարոն։

—Ատ ալ չատ է, մրմնջեց Վիլֆոր։

Նամակը կարդալէն յետոյ, Վիլֆոր գլուխը ձեռքերուն վրայ կռթընցուց, և վայրկեան մը այդպէս մնաց երկիւղով պաշարուած։

—Ո՛հ, տէ՛ր Աստուած, ի՞նչ կայ արդեօք, հարցուց Տանթէս երկիւղով։

Վիլֆոր պատասխան չտուաւ, բայց քանի մը վայրկեան ետքը գլուխը վեր առաւ գոյնը նետած և դէմքը այլայլած, ու երկրորդ անգամ նամակը կարդաց։

—Այս նամակին պարունակութիւնը չե՞ս գիտեր, ըսիր, կրկնեց Վիլֆոր։

—Պատւոյս վրայ կ'երդնում և դարձեալ կ'ըսեմ, պարոն, որ բան մը չեմ գիտեր. բայց դուք ի՞նչ ունիք, վրանիդ մարելիք պիտի գայ. կ'ուզէ՞ք որ զանգակը հնչեցնեմ, կ'ուզէ՞ք որ մարդ կանչեմ։

—Ո՛չ, պարոն, ըսաւ Վիլֆոր, աշխուժով ոտքի ելլելով, տեղէդ մի՛ շարժիր, ձայն մի՛ հաներ, այս տեղ ես կը հրամայեմ և ո՛չ դուն։

—Պարոն, ըսաւ Տանթէս, սիրտը վիրաւորուած, ձեզի օգնելու համար ըսի ես. ներեցէ՛ք, խնդրեմ, համարձակութեանս, իմ դիտաւորութեանս նայելով։

—Բանի մը պէտք չունիմ, վաղանցիկ անհանգստութիւն մըն էր, և ոչ ուրիշ բան, դուն քեզի խառնուէ և ոչ ինծի. պատասխա՛ն տուր։

Տանթէս այդ հրամանին համաձայն սպասեց որ իրեն հարցում ըլլայ, բայց պարապ տեղը կը սպասէր։ Վիլֆոր վերստին իր աթոռին վրայ ինկաւ, սառած ձեռքը ճակտին տարաւ, ուրկէ քրտինքը վտակի պէս կը հոսէր, և սկսաւ նամակը երրորդ անգամ կարդալ։

—Ո՛հ, եթէ նամակին պարունակութիւնը գիտնալու ըլլար, և իմանար թէ Նուարթիէ հայրն է Վիլֆորին, ո՛հ, կորստեան պիտի մատնուիմ, յաւիտեան կորստեան պիտի մատնուիմ։

Մերթ ընդ մերթ Էտմոնին կը նայէր, որպէս թէ իր նայ-

ուածքովը կարենար խորտակել այն անտեսանելի պատուարը, որ սրտին մէջ կը փակէ բերանին պահած գաղտնիքը։

—Ա՛լ տարակոյս չկայ, ըսաւ Վիլֆոր յանկարծ։

—Բայց ի սէր Աստուծոյ, պարոն, կրկնեց խեղճ երիտասարդը, եթէ իմ վրայ կը տարակուսիք և կասկած մը ունիք՝ հարցուփորձ ըրէք և ես պատրաստ եմ ձեզի պատասխան տալու։

Վիլֆոր չատ ջանաց ինքզինքը զսպելու, և այնպիսի ձայնով մը, զոր կ'ուզէր աներկիւղ ցուցնել, ըսաւ.

—Պարոն, քեզ հարցուփորձ ընելով խիստ ծանր յանցանք երեւան ելաւ. անոր համար իմ ձեռքս չէ, ինչպէս սկզբան յոյս յայտնեցի որ իսկոյն ազատ կը թողում քեզ. այդպիսի բան մը ընելէս առաջ, պէտք է որ գլխաւոր դատաւորին խորհուրդ հարցնեմ. այսու հանդերձ՝ տեսա՞ր ի՛նչ կերպով վարուեցայ քեզի հետ։

—Ո՛հ, այո՛, պարոն, ըսաւ Տանթէս, շնորհակալ եմ, ինծի հետ աւելի բարեկամի պէս վարուեցաք քան թէ դատաւորի պէս։

—Ուստի, պարոն, դեռ քիչ մը ատեն իբր բանտարկեալ պէտք է պահեմ քեզ, բայց այնչափ քիչ ատեն որչափ կարելի է. քեզի դէմ եղած գլխաւոր ամբաստանութիւնը այս նամակն է, և ահա ինչպէս կը տեսնես...։

Վիլֆոր կրակարանին մօտեցաւ, կրակին մէջ նետեց նամակը, ու կեցաւ հոն մինչև որ թուղթը մոխիր դարձաւ։

—Եւ ահա՛, ինչպէս կը տեսնես, կրկնեց, բնաջինջ կ'ընեմ զայն։

—Ո՛հ, պոռաց Տանթէս, պարոն, դուք արդարասիրութենէ աւելի մարդասիրութիւն կ'ընէք։

—Բայց մտի՛կ ըրէ, կրկնեց Վիլֆոր. այսպիսի գործէ մը յետոյ, իմ վրաս կրնաս վստահ ըլլալ, այնպէս չէ՞։

—Ո՛հ, պարոն, հրամայեցէք, ձեր հրամանները կատարելու պատրաստ եմ։

—Ո՛չ, ըսաւ Վիլֆոր երիտասարդին մօտենալով, ո՛չ, քեզ հրամաններ չպիտի տամ այլ խրատներ, կը հասկնա՞ս։

—Ըսէ՛ք, և ես հրամաններու պէս կը կատարեմ զանոնք։

—Մինչև իրիկուն քեզ պիտի պահեմ հոս Դատական Պաշտօնատան մէջ. գուցէ ինձ զատ ուրիշ մը գայ քեզ հարցաքննելու. ինծի ինչ որ ըսիր՝ անոր ալ ըսէ՛, բայց երբեք այս նամակին վրայ բան մի՛ ըսեր։

—Կը խոստանամ, պարոն, ըսածնուդ պէս ընելու։

Այս խօսակցութեան միջոցին կարծես Վիլֆօրն էր որ կ՚աղաչէր, և կալանաւորը կ՚ապահովէր դատաւորը։

—Կը հասկնա՞ս, ըսաւ մոխիրին նայելով, որ տակաւին թուղթին ձևովը կը կենար, և բոցերուն վրայ կը թռչտէր. հիմա այս նամակը ոչնչացաւ, դուն և ես միայն գիտենք թէ այսպիսի նամակ մը կար. երբեք չպիտի կրնան առաջ բերել զայն. ուրեմն ուրացի՛ր երբ անոր մասին քեզի խօսին, ուրացի՛ր համարձակ, և կ՚ազատիս։

—Պիտի ուրանամ, պարոն, անհո՛գ եղէք, ըսաւ Տանթէս։

—Լաւ, լաւ, ըսաւ Վիլֆօր ձեռքը փոքրիկ զանգակին չուանին վրայ տանելով. յետոյ հնչեցնելու ատեն կենալով՝ միայն ա՞յս նամակը ունէիր, ըսաւ։

—Այո՛։

—Երդո՛ւմ ըրէ։

Տանթէս ձեռքը երկարեց։

—Կ՚երդնում, ըսաւ։

Վիլֆօր զանգակը հնչեցուց։

Ոստիկանութեան գործակալը ներս մտաւ։

Վիլֆօր գործակալին մօտեցաւ ու ականջն ի վար քանի մը խօսք ըսաւ, որուն գլխով նշան մը ընելով պատասխանեց գործակալը։

—Պարոնին ետևէն գնա՛, ըսաւ Վիլֆօր Տանթէսին։

Տանթէս խոնարհութիւն ըրաւ, երախտագիտութեան վերջին նայուածքով մը Վիլֆօրին նայեցաւ ու դուրս ելաւ։

Հազիւ թէ դուռը գոցուած, Վիլֆօր ուժը կորսնցուց, և նուաղածի պէս բազկաթոռի մը վրայ ինկաւ։

Վայրկեան մը յետոյ կամաց մը ինքնիրեն ըսաւ.

—Ո՛հ, Աստուած իմ, մարդուս կեանքն ու բաղդը ինչ բանի մէջ կը կայանան...։ Եթէ ընդհանուր դատախազը Մարսիլիա գտնուէր, եթէ իմ տեղս գլխաւոր դատաւորը կանչուած ըլլար, ես կորսուած էի, և այն թուղթը, այն անիծեալ թուղթը անդունդները պիտի գահավիժէր զիս։ Ա՛հ, հա՛յր իմ, հա՛յր իմ, ուրեմն միշտ արգե՞լք պիտի ըլլաս իմ երջանկութեանս՝ այս աշխարհիս մէջ, և յաւիտեան քու անցեալիդ հետ պիտի կռուի՞մ արդեօք։

Յետոյ յանկարծ անակնունելի լոյս մը ծագեցաւ մտքին մէջ ու դէմքը լուսաւորեց. տակաւին գոց մնացած բերանին վրայ ժպիտ մը երևցաւ, իր դժնէ աչքերը հաստատ նայուածք մը ստացան և կարծես թէ խորհուրդի մը վրայ յառած էին։

—Ի՛նչ կը մտածեմ, այն նամակը որ զիս կորստեան պիտի մատնէր, գուցէ բաղդաւոր ընէ զիս. քաջալերուէ՛, Վիլֆօր և գործի սկսէ՛։

Ու համոզուելով որ կալանաւորը նախասենեակին մէջէն հեռացած էր, Պ. Վիլֆօր դուրս ելաւ, և դէպի իր նշանածին տունը ուղղուեցաւ իսկոյն։

Ը. ԳԼՈՒԽ

ԻՖ ԴՂԵԱԿԸ

Նախասենեակին մէջէն անցնելու ատեն ոստիկանութեան գործակալը նշան մը ըրաւ երկու զինակիր պաշտօնեաներու, որոնց մէկը Տանթէսի աջ կողմը և միւսը ձախ կողմը անցան. դուռ մը բացին, որ ընդհանուր դատախազի բնակարանէն Դատական Պաշտօնատունը կը տանէր, մեծ նրբագաւիթէ մը անցան, ուրկէ անցնողները կը սարսափին, թէև սարսափելու առիթ մը չունենան։

Ինչպէս Վիլֆորի բնակարանէն Դատական Պաշտօնատունը կ'երթուէր, նոյնպէս Պաշտօնատունէն բանտը կ'անցնուէր, որ Պաշտօնատան քով շինուած մռայլ շէնք մըն էր և դիմացը կանգնած Աքուլի զանգակատունը կը դիտէր իր բաց երախներով։

Բակին մէջ քանի մը դարձուածոյ անցքերէ յետոյ Տանթէսի առջև դուռ մը բացուեցաւ երկաթեղէն միջնադուռով։ Ոստիկանութեան գործակալը երկաթէ դռնահարով մը երեք անգամ դուռը զարկաւ, Տանթէս կարծեց որ այս հարուածները սրտին կը տրուէին. դուռը բացուեցաւ, երկու զինակիրները կամաց մը ներս հրեցին կալանաւորը, որ ետին կեցած էր. խեղճը զարհուրելի սեմին վրայ կոխեց ու ներս մտաւ, և դուռը մեծ շառաչումով ետևէն գոցուեցաւ։ Այն տեղ զգաց որ ուրիշ օդ մը կը շնչէր, վնասակար և ծանր օդ մը. որովհետև բանտն էր։

Բաւական մաքուր, բայց վանդակապատ սենեակ մը տարին զինքը, սակայն այդ բնակարանին երևոյթը շատ երկիւղ չպատճառեց իրեն. Վիլֆորի խօսքը՝ որ Տանթէսին այնչափ քաղցր երևցած էր, յուսոյ քաղցր խոստման մը պէս կը հնչէր ականջին։

Ժամը արդէն չորս էր, երբ Տանթէս իր սենեակը տարուեցաւ. ինչպէս ըսինք՝ մարտ մէկն էր, և բանտարկեալը շուտ մը մթութեան մէջ գտաւ ինքզինքը։

Այն ատեն՝ լսելիքի զգայութիւնը տեսանելիքի զգայութեանը վրայ աւելցաւ, քանի որ ալ բան չէր տեսներ. փոքր ձայն մը առնելուն պէս՝ կը կարծէր որ զինքը ազատելու կուգային, և աշխուժով կ'ելնէր ու դէպի դուռը կը վազէր. բայց երբ լսած ձայնը ուրիշ կողմ մը ուղղուելով՝ անյայտ կ'ըլլար, խեղճ Տանթէս ալ, սիրտը կոտրած, կը դառնար աթոռակին վրայ կը նստէր նորէն։

Վերջապէս իրիկուան ժամը տասնին ատենները, երբ Տանթէս յոյսը կորսնցնելու վրայ էր՝ ականջին նոր ձայն մը հասաւ. այս անգամ իրեն այնպէս թուեցաւ որ դէպի իր սենեակը մարդ մը կուգար։ Իրօք, բակին մէջ ոտքի ձայներ լսուեցան և դրան առջև մարդիկ կեցան, բանալի մը բականքին մէջ

մտաւ, նիգերուն ակռաները դարձան, միապաղաղ կաղնի փակարանը բացուեցաւ, և յանկարծ մթին սենեակին մէջ երկու ջահերու շլացուցիչ լոյսը թափանցեց։

Այս երկու ջահերուն լոյսովը՝ Տանթէս չորս զինուորներու սուրերուն և հրացաններուն փայլը տեսաւ։

Տանթէս, որ երկու քայլ դէպի դուռը առաջ գացած էր, իր տեղը անշարժ կեցաւ, տեսնելով որ բռնութիւնը կ'աւելնար։

—Զի՞ս կը փնտռէք, ըսաւ Տանթէս։

—Այո՛, պատասխանեց զինուորներէն մէկը։

—Պ. Վիլֆորի՞ կողմէ։

—Կարծեմ։

—Լաւ, ըսաւ Տանթէս, պատրաստ եմ ձեզի հետևելու։

Պ. Վիլֆորի կողմէն կանչուելուն համոզուած, խեղճ երիտասարդին վախը փարատեցաւ. ուստի հանդարտօրէն և համարձակ քայլերով առաջ անցաւ և զինուորներուն մէջտեղը մտաւ ինքնիրեն։

Փողոցի դրան առջևը կառք մը կը սպասէր. կառապանը նստարանին վրայ կը գտնուէր ու քովը պահնորդ մը նստած էր։

—Այս կառքը ինծի՞ համար հոս կը սպասէ, հարցուց Տանթէս։

—Այո՛, քեզի համար է, պատասխանեց զինուորներէն մէկը. նե՛րս մտիր։

Տանթէս ուզեց քանի մը խօսք ընել, բայց կառքին դռնակը բացուեցաւ ու զգաց որ զինքը ներս կը մղեն, բայց խեղճը ոչ դէմ դնելու կարող էր և ոչ ալ միտք ունէր. նոյն վայրկեանին՝ կառքին մէջ երկու զինուորներուն մէջտեղը նստեցուցին զինքը, միւս երկու զինուորները առջևի նստարանին վրայ ելան, ու ծանր կառքը սկսաւ յառաջանալ չարագուշակ աղմուկով մը։

Կալանաւորը աչքը պատուհաններուն վրայ դարձուց, որոնք վանդակներով պատած էին. հասկցաւ որ մէկ բանտէն ելած և ուրիշ բանտ մը մտած է. միայն թէ այս նոր բանտը կը քալէր ու զինքը անծանօթ տեղ մը կը տանէր։ Նեղ վանդակներուն մէջէն, ուրկէց հազիւ ձեռքը կ'անցնէր, Տանթէս

հասկցաւ որ Բէզըրի փողոցէն կ'անցնէին, և Սէն-Լօրան ու Թարամի փողոցներէն դէպի նաւամատոյցը կ'իջնէին։

Քիչ մը ետքը կառքին վանդակներուն ու իր մօտը գտնուող արձանի մը վանդակներուն մէջէն Օտարահամարին ճըրագներուն լոյսը Տանթէսի աչքին զարկաւ։

Կառքը կեցաւ, պահնորդը իջաւ, և պահակազօրքերու բնակարանին մօտեցաւ. մէկանց տասներկու զինուորներ դուրս ելան ու կառքին դրան երկու կողմը կարգաւ շարուեցան. Տանթէս նաւամատոյցի լապտերներուն ցոլացումներուն շնորհիւ անոնց շողշողուն հրացանները տեսնելով՝ ինքնիրեն կ'ըսէր.

—Արդեօք ինծի համա՞ր է որ այսչափ զինուորական պատրաստութիւններ կը տեսնեն։

Պահնորդը բանալիով գոցուած դռնակը բանալով և առանց խօսք մը բերնէն հանելու, Տանթէսի հարցմանը կարծես թէ պատասխան տուաւ, երբ խեղճը տեսաւ որ կառքէն նաւահանգիստը երթալու համար երկու կարգ զինուորներուն միջեւ ճամբայ մը բացած էին։

Առջի նստարանին վրայ գտնուող երկու զինուորները առաջ վար իջան, ետքը բանտարկեալը իջեցուցին, ու անոր ետեւէն երկու կողմը եղող զինուորներն ալ դուրս ելան։ Ամէնքը մէկտեղ դէպ ի նաւակ մը գացին, զոր մաքսատան նաւավար մը նաւամատոյցին կապած էր շղթայով։ Քաղաքապահ զինուորները, ապշած ու հետաքրքիր, Տանթէսի կը նայէին, զոր անմիջապէս նաւուն յառաջակողմը նստեցուցին, ու չորս զինուորները երկու կողմը շարուեցան, և պահնորդը նաւուն ետեւը նստաւ։ Սաստիկ մղում մը նաւակը ցամաքէն հեռացուց, չորս թիավարներ ուժով թիավարեցին դէպի Բիլոն։ Նաւակէն ձայն մը բարձրացաւ ու նաւահանգիստը գոցող շղթան իջաւ. Տանթէս տեսաւ որ նաւահանգիստէն դուրս կը գտնուէին։

Երբ ծովուն բացը ելան, կալանաւորին առաջին շարժումը ուրախութեան շարժում մը եղաւ։ Օդը գրեթէ ազատութիւն մըն է. ուստի Տանթէս բոլոր սրտովը կը շնչէր այն զովարար

սիւզը, որ իր թեւերուն վրայ գիշերուան և ծովուն անիմանալի հոտերը կը բերէ։ Սակայն, շատ չանցած, հառաչանքի ձայն մը հանեց Տանթէս, որովհետեւ Րէզէրվին առջեւէն կ'անցնէր, ուր այնչափ երջանիկ էր այդ առտու, ձերբակալուելէն մէկ ժամ առաջ. երկու պատուհաններու լուսացայտ բացուածքէն պարահանդէսի մը ուրախալից ձայները մինչեւ իրեն կը հասնէին։

Տանթէս ձեռքը իրարու կցեց, արտասուալից աչքերը վեր առաւ և աղօթեց։

Նաւակը իր ճամբան կը շարունակէր, Թէթ-տը-Մօրի առջեւէն անցած ու Ֆարօ հրուանդանին դիմացը հասած էր. թընդանօթարանին անկիւնը դառնալու վրայ էին. Տանթէս դեռ չէր գիտեր թէ ի՛նչ կ'ընեն։

—Բայց ո՞ւր կը տանիք զիս, հարցուց զինուորներէն մէկուն։

—Հիմա կը տեսնես։

—Բայց ըսէ՛ք, կ'աղաչեմ...։

—Քեզի հետ խօսիլը արգիլուած է մեզի։

Տանթէս քիչ շատ զինուորական պաշտօնը գիտէր, հասկցաւ որ անօգուտ է բան հարցնել խօսելու հրաման չունեցող ստորին պաշտօնեաներու. ուստի ակամայ լռեց։

Այն ատեն մտատանջութեան մատնուած, զանազան մտածումներ կ'ունենար. ըստ որում այդ նաւակով չէին կրնար հեռու տեղ երթալ, և իրենց գացած տեղը խարսխած նաւ մը չկար, խորհեցաւ որ զինքը ծովեզերքին մէկ հեռու ծայրը կը տանին, հոն ձգելու համար, ըսելով թէ ալ ազատ է. զինքը չէին կապած, ու ձեռնակապ դնելու փորձ ըրած չէին. այդ բանը աղէկ նշան մը կ'երեւէր իրեն. ասկէ զատ՝ Վիլֆոր որ այնչափ ազնուութիւն ցուցուցած էր, միթէ ըսած չէ՞ր որ վախնալու բան մը չունի, պայմանաւ որ Նուարթիէի աղէտալի անունը բերանէն չհանէ։ Վիլֆոր իր առջեւ բոլորովին ոչընչացուցած չէ՞ր վնասակար նամակը, որ իր դէմ եղած միակ ապացոյցն էր։

Ուստի անձայն և մտախոհ սպասեց. մթութիւնը ու հեռաւոր տեղերը տեսնելու վարժուած նաւապետի աչքերովը գիշերուան խաւարը թափանցելու կ'աշխատէր:

Ռաթօննօ կղզին աջ կողմը ձգած էին, ուր մեծ լապտեր մը կը վառէր, և գրեթէ ծովեզերքին մօտէն անցնելով՝ Քաթալաններու ծոցին բերանը հասած էին: Հոն կալանաւորը սուր աչքերը յառեց. հոն կը բնակէր Մէրսէտէս, և Տանթէս ամէն վայրկեան կը կարծէր որ տխուր եզերքին վրայ կնոջ մը տարտամ և կեղակարծ ձևը պիտի տեսնէր:

Ի՞նչպէս նախազգացում մը Մէրսէտէսին չէր իմացըներ թէ իր սիրահարը երեք հարիւր քայլ անդիէն կ'անցնէր:

Քաթալանի մէջ մէկ ճրագ կը փայլէր միայն. լոյսին ուղղութիւնը քննելով՝ Տանթէս հասկցաւ որ նշանածին սենեակն էր: Բոլոր գաղթականներուն մէջ միայն Մէրսէտէս գիշերը արթուն մնացած էր: Երիտասարդը եթէ բարձր ձայն մը հանելու ըլլար՝ նշանածին ականջին կրնար հասնիլ:

Բայց ամչցաւ բերանը բանալու: Իր վրայ հսկող մարդիկը ի՞նչ պիտի ըսէին, եթէ յիմարի պէս պոռալը լսէին:

Ուստի լռեց ու աչքը այն լոյսին վրայ յառած մնաց: Այդ միջոցին՝ նաւակը իր ճամբան կը շարունակէր. բայց կալանաւորը երբեք նաւակին վրայ չէր խորհեր. խելքը Մէրսէտէսի հետ էր միայն:

Հողի բարձրութիւն մը լոյսին առջև գալով աներևոյթ եղաւ ան: Տանթէս դարձաւ և տեսաւ որ նաւակը ծովուն բացերը հասած է:

Իր խորհուրդներովը զբաղած և Մէրսէտէսի բնակարանին կողմը աչքը յառած միջոցին թիերուն տեղ առագաստներ բացուած էին, և նաւակը հովուն շնորհիւ կը յառաջանար:

Թէև Տանթէս դժկամակութիւն կը զգար նոր հարցումներ ընելու զինուորին, բայց ակամայ մօտեցաւ անոր ու ձեռքը բռնելով ըսաւ.

—Ընկեր, խղճմտանքիդ և զինուորական պաշտօնիդ սիրոյն գիս մեղքցիր, և պատասխան տուր: Ես Տանթէս նաւապետն եմ, բարի և հաւատարիմ Ֆրանսացի մը՝ թէև չեմ գիտեր ի՛նչ մատնութեամբ ամբաստանուած. ըսէ՛ ո՞ւր կը տանիք զիս. իմ նաւապետութեանս վրայ կ'երդնում որ պարտքս պիտի ճանչնամ և ճակատագրիս պիտի հնազանդիմ:

Զինուորը ականջը քերելով՝ իր ընկերոջը նայեցաւ. շարժում մը ըրաւ ան, որպէս թէ ըսել ուզէր. «Կարծեմ ա՛լ վախնալու բան չկայ, եթէ պատասխանելու ըլլաս:» Զինուորը այն ատեն դէպի Տանթէս դարձաւ ու ըսաւ.

—Մարսիլիացի և նաւապետ ըլլալով հանդերձ, կը հարցընես թէ ո՞ւր կ'երթանք:

—Այո՛, իրաւ կ'ըսեմ որ չեմ գիտեր ո՛ւր երթալնիս:

—Բայց կասկած մը չե՞ս ունենար բնաւ:

—Բնաւ:

—Անկարելի է:

—Աշխարհիս մէջ ունեցած ամէնէն նուիրական բանիս վրայ երդում կ'ընեմ որ բան մը չեմ հասկնար: Ուստի կ'աղաչեմ՝ պատասխան տո՛ւր ինձ:

—Բայց մեզի տրուած լռելու հրամանը...:

—Այդ հրամանը չի կրնար արգիլել որ ինծի իմացնես այն բանը զոր ես տասը վայրկեանէն, կամ կէս ժամէն, կամ գուցէ մէկ ժամէն պիտի իմանամ: Մինչև հոն անստուգութեան դարերէ ազատած պիտի ըլլաս զիս: Բարեկամաբար կը հարցնեմ քեզի, նայէ՛ անգամ մը, միտքս ո՛չ ապստամբիլ է և ո՛չ ալ փախչիլ, մանաւանդ որ չեմ կրնար ընել. ըսէ՛ ուրեմն ո՞ւր կ'երթանք:

—Քանի որ աչքերուդ վրայ կապ չունիս, և Մարսիլիայի նաւահանգիստէն շատ անգամ դուրս ելած ես, գուշակելու ես թէ ո՛ւր կ'երթաս:

—Չեմ կրնար գուշակել:

—Ուրեմն չորս կողմդ նայէ՛:

Տանթէս ոտքի վրայ ելաւ, բնականաբար աչքը նաւակին գլուխը դարձուց, և իրմէ հարիւր գրկաչափ անդին սև ու խորտուբորտ ժայռ մը դիմացը ելաւ, որուն գագաթը Իֆ դղեակը՝ ժայռէն բուսած գայլախազի մը պէս՝ տնկուած էր: Այդ

տարօրինակ շինուածքը, այդ բանտը,. որուն չուրջը սաստիկ սարսափ մը կը տիրէ, այդ ամրոցը, որուն վրայ երեք հարիւր տարիէ ի վեր ցաւալի պատմութիւններ կ'ըլլան Մարսիլիայի մէջ, յանկարծ Տանթէսի դէմը ելլելով, որ բնաւ մտքէն չէր անցըներ զայն, նոյն ազդեցութիւնը ըրաւ անոր վրայ, ինչ որ կը զգայ մահապարտ մը իր կառափնատը տեսած ատեն։

—Ո՛հ, տէր Աստուած, Իֆ դղեակն է. ի՞նչ պիտի ընենք հոն։

Զինուորը ժպտեցաւ։

—Բայց կը յուսամ որ զիս բանտարկելու չէք տանիր հոն, շարունակեց Տանթէս. Իֆ դղեակը Տէրութեան բանտ մըն է. և միայն քաղաքական ծանր յանցանք ունեցողներուն յատկացուած է. ես յանցանք մը գործած չեմ։ Արդեօք հարցաքննիչ դատաւորներ, կամ ուէէ ատենակալնե՞ր կը գտնուին Իֆ դղեակին մէջ։

—Կարծեմ թէ, ըսաւ զինուորը, կառավարիչ մը, բանտապահներէ, գունդ մը պահապան զօրքէ և ամուր պատերէ զատ բան չկայ։ Ո՛հ, բարեկամ, այդչափ զարմանք մի՛ ցուցներ, կարծես թէ ծաղր ընելով զիս փորձել կ'ուզես։

Տանթէս զինուորին ձեռքը ուժով մը սեղմեց ու ըսաւ.

—Ուրեմն զիս Իֆ դղեակը կը տանիք, հոն բանտարկելո՞ւ համար։

—Հաւանական է, ըսաւ զինուորը, բայց ի՞նչ հարկ կայ, ընկեր, այդչափ ձեռքս սաստիկ սեղմելու։

—Ուրիշ հարցաքննութիւն կամ ուրիշ դատաստան չպիտի՞ ընեն։

—Դատաստանը կատարուած է, հարցաքննութիւնն ալ լմնցած։

—Ա՞յսպէս ուրեմն, Պ. Վիլֆօրի խոստման հակառակ...։

—Չեմ գիտեր թէ Պ. Վիլֆօր քեզ ինչ խոստում ըրած է, բայց սա գիտեմ որ մենք Իֆ դղեակը կ'երթանք...։ Ի՞նչ կ'ընէք հոդ, ընկերներ, օ՛ն հասէ՛ք ինծի։

Տանթէս, փայլակի պէս արագ շարժուածքով մը, որ զինուորին վարժ աչքէն վրիպած չէր, ինքզինքը ծովը նետելու

աշխատած էր. բայց չորս հատ հուժկու դաստակներ բռնեցին զայն, երբ ոտքերը նաւակին տախտակամածէն զատուելու վրայ էին։

Խեղճը նաւակին մէջտեղը ինկաւ, կատաղութենէն ոռնալով։

—Լա՛ւ, պոռաց զինուորը ծունկը անոր կուրծքին վրայ դնելով, լա՛ւ, ուրեմն ա՞յսպէս կը բռնես նաւապետութեանդ երդումը։ Եկո՛ւ քաղցրալեզու մարդոց հաւատա՛ այսուհետեւ։ Հիմա, սիրելի բարեկամ, եթէ փոքր շարժում մը ընես՝ գնդակ մը պիտի ընդունիս գլխուդ։ Ունեցած հրամաններուս առաջինը չկատարեցի, բայց գիտցած ըլլաս որ երկրորդը անպատճառ կը կատարեմ։

Ու Տանթէսի ուղղեց ատրճանակը, որուն երկաթին ծայրը քունքին վրայ զգաց խեղճը։

Վայրկեան մը Տանթէս միտքը դրաւ որ այդ արգիլուած շարժումը ընէ և իսկոյն վերջացնէ այն անակնկալ թշուառութիւնը, որ յանկարծ իր վրայ իջած ու անգղի ճանկերուն մէջ բռնած էր զինքը. բայց որովհետեւ այդ թշուառութիւնը յանկարծական եղած էր, Տանթէս խորհեցաւ որ չէր կրնար երկար ատեն դիմանալ. ատկէ զատ՝ Վիլֆօրին խոստումը միտքը եկաւ. վերջապէս՝ նաւակի մը մէջ զինուորի մը ձեռքով մեռնիլը անարգ և գէշ երեւցաւ իրեն։

Ուստի վերստին նաւակին յատակը ինկաւ՝ կատաղութեան ճիչ մը հանելով և յուսահատութեամբ իր ձեռքը խածնելով։

Գրեթէ նոյն միջոցին սաստիկ բաղխումով մը նաւակը ցնցուեցաւ. նաւավարներէն մէկը նաւակին գլուխը հանդիպած ժայռին վրայ նետուեցաւ, ճախարակի մը բոլորտիքէն պարան մը քակուեցաւ, և Տանթէս իմացաւ որ հասած էին ու նաւակը կապելու կ'աշխատէին։

Իրօք զինուորները, որոնք Տանթէսի թեւերէն ու օձիքէն բռնած էին, ստիպեցին որ ոտքի ելլէ, բռնադատեցին ցամաք իջնելու և քաշքշելով դէպի միջնաբերդին դուռը տանող սանդուխը տարին. և պահնորդը, հրացանը ուսը, ետեւէն կ'երթար։

Տանթէս պարապ տեղը ընդդիմութիւն չըրաւ. իր ծանր քալուածքը աւելի թուլութենէն էր քան թէ հակառակու-

թենէն, որովհետեւ գինովի պէս ապշած, կ'երերար։ Ուրիշ զինուորներ տեսաւ որ ցից բլուրին վրայ կը շարուէին. զգաց որ սանդուխէ մը ելլելու համար՝ կը ստիպուէր ոտքը վեր առնելու. տեսաւ որ դռնէ մը անցուցին զինքը ու ետեւէն գոցեցին. բայց այդ ամէնը մեքենապէս կը կատարուէր, և Տանթէս՝ մշուշի մէջ գտնուողի մը պէս՝ որոշ բան մը չէր կրնար դիտել։ Ծովն անգամ չէր տեսներ, որ անհուն կսկիծ կը պատճառէ բանտարկեալներուն, որովհետեւ անոր վրայէն անցնելու անկարող ըլլալնուն համար, սոսկումով մը կը նային անոր տարածութեան։

Վայրկեանի մը չափ ամէնքը կեցան. և նոյն պահուն Տանթէս ջանաց միտքը ամփոփել։ Չորս կողմը նայելով՝ չորս բարձր պատերով գոցուած քառակուսի բակի մը մէջ գտաւ ինքզինքը. պահնորդներուն ծանր ու կանոնաւոր քայլերը կը լսուէին, և ամէն անգամ որ դղեակին ներքին կողմը փայլող երկու-երեք ճրագներուն լոյսէն պատերուն վրայ առաջ եկած երկու-երեք ցոլացումներու առջեւէն կ'անցնէին, անոնց հրացաններու փողերուն շողալը կը տեսնուէր։

Գրեթէ տասը վայրկեանի չափ հոն սպասեցին։ Ապահով ըլլալով որ Տանթէս ալ չէր կրնար փախչիլ, զինուորները ձգած էին զայն։ Կ'երեւար որ հրամանի կը սպասէին. վերջապէս հրամանը հասաւ։

—Ո՞ւր է բանտարկեալը, հարցուց մէկը։

—Հոս է, պատասխանեցին զինուորները։

—Ետեւէ՛ս թող գայ, որպէս զի իր տեղը տանիմ։

—Գնա՛, ըսին զինուորները, Տանթէսը մղելով։

Կալանաւորը իր առաջնորդին ետեւէն գնաց. գրեթէ ստորերկեայ սրահ մը տարաւ, որուն մերկ և խոնաւ պատերուն վրայ շոգիի կաթիլները արտասուքի կը նմանէին. հին աթոռակի մը վրայ ճրագի պէս փոքրիկ աման մը կար, որուն պատրոյգը ժահահոտ ճարպի մը մէջ կը լողար և այդ սոսկալի բնակարանը կը լուսաւորէր ու միեւնոյն ատեն մուխով կը լեցնէր. աղօտ լոյսովը Տանթէս իր առաջնորդը կրցաւ տեսնել,

որ աղտոտ հագուստով և գռեհիկ դէմքով տեսակ մը ստորին բանտապահ էր։

—Ահա՛ քու սենեակդ այս գիշերուան համար, ըսաւ. ատենը ուշ է, և Պարոն կառավարիչը պառկած։ Վաղը՝ երբ արթննայ և քեզի վերաբերեալ հրամանները իմանայ, թերեւս բնակարանդ փոխէ։ Առ այժմ ահա՛ քիչ մը հաց, սա կուժին մէջ ջուր կայ, ու պառկելու համար չոր խոտ կը գտնես. բանտարկեալ մը ասոնցմէ աւելի բան չի կրնար պահանջել. գիշեր բարի։

Տանթէս պատասխան տալու համար բերանը բանալու չէր խորհած, բանտապահին հացը դրած տեղը չէր դիտած, կուժը եղած տեղը դեռ չէր հասկցած և իրեն անկողին ըլլալիք չոր խոտը ո՛ր անկիւնը գտնուիլը չէր տեսած, երբ բանտապահը փոքրիկ ճրագը առաւ ու դուրս ելաւ, և դուռը քաշելով՝ Տանթէսը զրկեց այն աղօտ լոյսէն, որ կարծես թէ փայլակի մը լոյսին պէս բանտին խոնաւ պատերը ցոյց տուաւ անոր։

Այն ատեն մթութեան եւ լռութեան մէջ մնաց միայնակ, լռիկ եւ մնջիկ ու խիստ տխուր, ինչպէս էին այն գմբէթները, որոնց սառուցիկ ցրտութիւնը իր հրատապ ճակատին վրայ իջնելը կը զգար։

Երբ առտուան առաջին ճառագայթները քիչ մը լուսաւորեցին այդ որջը, բանտապահը հրաման բերաւ որ բանտարկեալը եղած տեղը պիտի մնայ։ Տանթէս իր տեղէն անգամ չէր շարժած. կարծես երկաթէ ձեռք մը առջի իրիկունը կեցած տեղը գամած էր զայն. արտեւանունքը արտասուքին շոգիէն ուռեցած ըլլալով՝ աչքերը խորցած կ'երեւէին։ Անշարժ կեցած, գետինը կը նայէր ան։

Ամբողջ գիշերը անցուցած էր այդպէս ոտքի վրայ կանգուն, առանց աչքերը գոցելու։

Բանտապահը անոր մօտեցաւ, չորս կողմը դարձաւ. կարծես Տանթէս չէր տեսներ զայն։

Կամաց մը անոր ուսին զարկաւ, Տանթէս սարսռաց և գլուխը շարժեց։

—Այս գիշեր չքնացա՞ր միթէ, հարցուց բանտապահը։

—Չեմ գիտեր, պատասխանեց Տանթէս։

Բանտապահը ապշութեամբ նայելով անոր երեսը, հարցուց.

—Անօթի չե՞ս։

—Չեմ գիտեր, պատասխանեց Տանթէս։

—Բան մը կ՚ուզե՞ս։

—Կ՚ուզէի կառավարիչը տեսնել։

Բանտապահը ուսերը դէպ ի վեր շարժեց ու դուրս ելաւ։

Տանթէս անոր ետեւէն կը նայէր. ձեռքը դէպի կիսաբաց դուռը երկնցուց, բայց դուռը նորէն գոցուեցաւ։

Այն ատեն կարծես իր կոկորդը հեծկլտուքով կը խեղդուէր։ Արցունքները, որոնցմով արտեւանունքը ուռեցած էին, երկու վտակներու պէս հոսեցան, ծունդի գալով՝ երկար աղօթք մը ըրաւ, իր բոլոր կեանքին անցքերը մտաբերելով և ինքնիրեն հարցընելով թէ ի՛նչ յանցանք գործած էր որ երիտասարդ հասակին մէջ չարաչար պատիժի մը կ՚ենթարկուէր։

Բոլոր օրը այդպէս անցաւ։ Հազիւ քանի մը պատառ հաց կերաւ և մէկ քանի կաթիլ ջուր խմեց։ Երբեմն նստած և իր խորհուրդներուն մէջ թաղուած կը մնար, երբեմն իր բանտին շուրջը կը դառնար, ինչպէս կ՚ընէ երկաթէ վանդակի մը մէջ փակուած գազան մը։

Գլխաւորաբար մէկ գաղափար զինքը կը տանջէր. ծովէն անցնելու ատեն, զինքը տարած տեղերնին չգիտնալով՝ հանդարտ ու անհոգ կեցած էր, մինչ կրնար տասը անգամ ծովը նետուիլ, ու անգամ մը որ ջուրին մէջ ըլլար, լողալու յաջողակ, և Մարսիլիայի ամէնէն վարպետ սուզակներէն մէկը ըլլալով, կրնար ջուրին մէջ աներեւոյթ ըլլալ, իր պահնորդներուն ձեռքէն ազատիլ, ծովեզերքը ելել, փախչիլ, անբնակ խորշի մը մէջ պահուիլ, ճէնովական կամ քաթալանեան նաւու մը սպասել, Իտալիա կամ Սպանիա երթալ և անկէ Մերսէտէսի գրել որ գայ զինքը գտնէ։ Իր ապրուստը հոգալու համար ամէն երկրի մէջ գործ կրնար գտնել. ամէն տեղ լաւ նաւավարները հազուագիւտ են. Թոսքանացիի պէս իտալերէն

կը խօսէր, Սպանիացիներուն լեզուն ալ հին Քասթիլլիայէն տղու մը պէս աղէկ գիտէր. կրնար ազատ ու երջանիկ ապրիլ Մերսէտէսի և իր հօրը հետ, քանի որ իր հայրն ալ անշուշտ իր քով պիտի գար. բայց հիմա Իֆ դղեակի անանց բանտին մէջ փակուած բանտարկեալ մըն էր, և չէր գիտեր թէ ինչ եղած էին հայրը և Մերսէտէս. և այդ ամէնը գլուխը եկած էր Վիլֆորի խօսքին հաւատալուն համար։ Այդ բաները մտածելով՝ խելքը գլխէն կ՚երթար. ուստի զայրացած, բանտապահին բերած թարմ խոտին վրայ գլորեցաւ։

Հետեւեալ առտու, նոյն ժամուն, բանտապահը նորէն գալով, հարցուց.

—Ըսէ՛, նայինք, այսօր երէկուընէ աւելի խելքդ գլուխդ ժողվեցի՞ր։

—Տանթէս պատասխան չտուաւ։

—Ո՛ն, ըսաւ բանտապահը, արիացի՛ր...։ Իմ ձեռքէս գալիք բանի մը պէտք ունի՞ս, ըսէ՛։

—Կառավարչին հետ խօսիլ կ՚ուզեմ,

—Է՛հ, ըսաւ բանտապահը անհամբերութեամբ, արդէն քեզի ըսի թէ անկարելի է այդ բանը։

—Ինչո՞ւ անկարելի պիտի ըլլայ։

—Որովհետեւ բանտին կանոններուն մէջ այդպիսի տրամադրութիւն մը չկայ որ բանտարկեալ մը այդ բանը խնդրէ։

—Ուրեմն ի՞նչ բանի հրաման կայ հոս, հարցուց Տանթէս։

—Աւելի լաւ կերակուրներ խնդրելու՝ դրամը տալով, պտտելու և երբեմն ընթերցանութեան գիրք ուզելու։

—Գիրքի պէտք չունիմ, պտտելու ալ բնաւ ախորժ չկայ և կերակուրս ինծի համար աղէկ է. ուստի կառավարիչը տեսնել կ՚ուզեմ միայն...։

—Եթէ միեւնոյն խօսքը միշտ կրկնելով զիս ձանձրացնելու ըլլաս, ըսաւ բանտապահը, ասկէ ետքը քեզի ուտելիք չպիտի բերեմ։

—Ի՞նչ ընեմ, ըսաւ Տանթէս, եթէ ուտելիք չես բերեր, անօթութենէ կը մեռնիմ, ան ալ հոգս չէ։

—Այո՛, պէտք է խենթերը խենթերու քով դնել։

Չորս զինուորները Տանթէսը բռնեցին, որ տեսակ մը թմրութեան մատնուած, առանց ընդդիմութեան անոնց հետեւեցաւ։

Սանդուխէն տասնըհինգ աստիճան վար իջուցին, ու մթին բանտի մը դուռը բացին, ուր մտաւ խեղճը, կամաց մը ըսելով.

—Իրաւունք ունի, խենթերը խենթերու քով դնելու է։

Դուռը կրկին գոցուեցաւ, Տանթէս, ձեռքը տարածած, առաջ գնաց մինչեւ որ պատին դպաւ. այն ատեն անկիւն մը նստաւ եւ անշարժ մնաց. աչքերը տակաւ մթութեան վարժուելով, սկսաւ առարկաները զանազանել։

Բանտապահը իրաւունք ունէր. քիչ մնացած էր որ Տանթէս խենթենար։

Թ. ԳԼՈՒԽ

ՆՇԱՆՏՈՒՔԻ ԻՐԻԿՈՒՆԸ

Վիլֆոր, ինչպէս ըսինք, դէպի Կրան-Քուր հրապարակը գացած էր՝ Սէն-Մէրանի տիկնոջ տունը մտնելով՝ տեսաւ որ կոչնականները սեղանատունէն սրահ գացած սուրճ կը խմէին։ Ռընէ անհամբերութեամբ կը սպասէր, եւ անոր անհամբերութեանը մասնակից էին բոլոր կոչնականները։ Ուստի ընդհանուր ուրախութեամբ ընդունեցին Վիլֆորը։

—Բարի՛ եկաք, տէրութեան պաշտպան, գլուխ կտրող, արքայական կուսակից, Բրուտոս. ինչ կայ տեսնենք, գոչեց մէկը։

— Արհաւիրքի նոր իշխանութենէ մը կը վախնա՞նք, հարցուց միւսը։

— Քորսիքայի գազանը իր որջէն դո՞ւրս ելած է արդեօք, հարցուց ուրիշ մը։

— Տիկին մարքիզուհի, ըսաւ Վիլֆոր իր ապառնի կեսուրին մօտենալով, կ'աղաչեմ ներեցէք այսպէս յանկարծական կերպով ձենէ բաժնուելուս համար . . . ։ Պ. մարքիզ, կրնա՞մ պատիւ ունենալ առանձին երկու խօսք ընելու ձեզի հետ։

—Ա՛հ, ուրեմն ստուգիւ ծա՞նր է գործը, հարցուց մարքիզուհին Վիլֆորի երեսին գունատութիւնը նշմարելով։

—Այո՛, այնքան ծանր է որ ձեզմէ քանի մը օրուան համար հրաժեշտ առնելու ստիպուած եմ։ Ասկէ կրնաք իմանալ որ գործը իրաւցնէ ծանր է, շարունակեց Վիլֆոր, դէմքը Ռընէին դարձնելով։

—Պիտի մեկնի՞ս, պարոն, գոչեց Ռընէ, այս անակնկալ լուրին պատճառաւ սրտին զգացած վրդովումը չկրնալով ծածկել։

—Ափսո՛ս, այո՛, օրիորդ, պատասխանեց Վիլֆոր, պէտք է որ մեկնիմ։

—Ո՞ւր պիտի երթաք, հարցուց մարքիզուհին։

—Դատական գաղտնիք մըն է, տիկին։ Այսուհանդերձ, եթէ մէկը Բարիզի համար յանձնարարութիւն ունի, բարեկամներէս մէկը այս իրիկուն հոն պիտի երթայ, ու հաճութեամբ յանձնառու պիտի ըլլայ զայն կատարելու։

Ամէն ոք իրարու երես նայեցան զարմանքով։

—Ինծի հետ խօսիլ ուզեցիք այնպէս չէ՞, ըսաւ մարքիզը։

—Այո՛, դահլիճնիդ երթանք, եթէ կը հաճիք։

Մարքիզը Վիլֆորի թեւը մտաւ ու անոր հետ դուրս ելաւ։

—Ուրեմն, հարցուց մարքիզը իր դահլիճը մտնելով, ինչ պատահեցաւ, ըսէք։

—Այնպիսի բաներ, որոնց հետեւութիւնները խիստ ծանր պիտի ըլլան, եւ զիս կը հարկադրեն շուտով Բարիզ երթալու։ Հիմա, մարքիզ, ներեցէ՛ք հարցումիս անխոհեմ տմարդութեանը. Տէրութեան պարտամուրհակներէն ունի՞ք։

—Բոլոր ունեցածս, որ գրեթէ վեց կամ եօթը հարիւր հազար ֆրանքի չափ է, Տէրութեան պարտամուրհակներ են։

—Ուրեմն, ծախեցէ՛ք, մարքիզ, ծախեցէ՛ք, ապա թէ ո՛չ բոլոր ունեցածնիդ վրայ պիտի տաք։

—Բայց ինչպէ՞ս կրնամ ծախել հոս։

—Բարիզ փոխանակագիրներու գործակալ մը ունիք, այնպէս չէ՞։

—Այո՛։

—Անոր ուղղուած նամակ մը տուէ՛ք ինծի, որպէս զի առանց վայրկեան մը, երկվայրկեան մը անցնելու, զանոնք ծախէ. գուցէ ժամանակին իսկ չհասնիմ։

—Ի՞նչ կ'ըսէք, յարեց մարքիզը. ուրեմն ատեն չկորսնցնենք։

Այս խօսքին վրայ՝ գրասեղանին առջեւ նստաւ ու իր գործակալին նամակ մը գրեց, որուն մէջ կը հրամայէր անոր՝ իր ունեցած պարտամուրհակները որ և է գնով ծախել։

—Այս նամակէս զատ, ըսաւ Վիլֆօր, զգուշութեամբ իր գրպանին մէջ պահելով զայն, ուրիշ նամակ մըն ալ պէտք է ինծի։

—Որո՞ւ ուղղուած։

—Թագաւորին։

—Թագաւորի՞ն։

—Այո՛։

—Բայց ես չեմ համարձակիր Նորին Վեհափառութեան նամակ գրել։

—Ես ալ ոչ թէ ձենէ նամակ կ'ուզեմ, այլ կը խնդրեմ որ Պ. Սալվիէօէն ուզէք։ Պէտք է որ ան նամակ մը տայ ինծի, որով կարենամ Նորին Վեհափառութեան ներկայանալ, առանց ենթակայ ըլլալու ունկնդրութեան սովորական կանոններուն, որոնք իմ անգին ժամանակս կորսնցնել կուտան։

—Բայց դատական նախարարը կայ, որ Թիւլըրիի մտնելու մեծ արտօնութիւն ունի, և անոր միջնորդութեամբը՝ գիշեր ցերեկ մինչեւ Թագաւորին քով կրնաք երթալ։

—Այո՛, անտարակոյս. բայց չեմ ուզեր որ ուրիշ մը մասնակից ըլլայ իմ տարած լուրիս փառքին, կը հասկնա՞ք։ Դատական նախարարը առաջին լուրը տալով Թագաւորին, բնականաբար երկրորդ պատիւը պիտի կենայ ինծի. հետեւաբար

գործին բոլոր արդիւնքը ան պիտի վայելէ։ Մէկ խօսքով, մարքիզ, իմ բախտս պիտի յաջողի, եթէ ամէնէն առաջ Թիւլըրիի հասնիմ, որովհետեւ այնպիսի ծառայութիւն մը ըրած պիտի ըլլամ, որ Թագաւորը երբեք պիտի չկրնայ մոռնալ զայն։

—Եթէ այդպէս է, սիրելիս, գացէք ծրարնիդ պատրաստեցէ՛ք, ես Սալվիէօն կը կանչեմ, և այն նամակը գրել կուտամ, որով պալատը մտնելնիդ կը դիւրանայ։

—Լաւ, ուրեմն ժամանակ մի՛ կորսնցնէք, որովհետեւ քառորդէ մը պէտք է ճամբայ ելլեմ։

—Կառքը դրան առջեւը սպասցուցէք։

—Անտարակոյս իմ կողմէս մարքիզուհիէն և Օր. Սէն-Մէրանէն ներողութիւն կը խնդրէք, այսպիսի օր մը խորին տրտմութեան մէջ ձգելուս համար զիրենք։

—Երկուքն ալ դահլիճս պիտի գան, ուր կրնաք ողջոյնիդ տալ անոնց։

—Շատ շնորհակալ եմ ձեզի. նամակիս հո՛գ տարէք։

Մարքիզը զանգակը հնչեցուց. անմիջապէս սպասաւոր մը ներս մտաւ։

—Սալվիէօ կոմսին ըսէ՛ որ իրեն կը սպասեմ, ըսաւ մարքիզը։

—Գացէ՛ք հիմա, շարունակեց մարքիզը. Վիլֆօրին ուղղելով խօսքը։

—Լա՛ւ, երթալ ու գալս մէկ պիտի ըլլայ։

Այս խօսքին վրայ Վիլֆօր մեծ աճապարանքով դուրս ելաւ. բայց դուռը հասած ատեն՝ մտածեց որ եթէ ընդհանուր դատախազի օգնականին շտապով քալելը տեսնեն, բովանդակ քաղաքին հանդարտութիւնը կրնայ վրդովիլ. ուստի սովորական քալուածքով մը յառաջացաւ, որ բոլորովին դատաւորական քալուածք մըն էր։

Իր դրան առջեւ շուքին մէջ ճերմակ երեւոյթ մը տեսաւ, որ ոտքի վրայ կանգնած, իրեն կը սպասէր։

Քաթալանցի գեղեցիկ աղջիկն էր ան, որ Էտմոնի մասին լուր մը չառնելով, իրիկունը մութ ատեն Ֆարօէն եկած էր, իր սիրահարին ձերբակալուելու պատճառը իմանալու համար։

Վիլֆորի մօտենալը տեսնելով, աղջիկը կռթընած պատէն զատուեցաւ ու գնաց անոր ճամբան կտրեց: Տանթէս իր նշանածին վրայ դատաւորին խօսած ըլլալով, Մերսէտէս իր անունը դեռ չտուած՝ Վիլֆոր ճանչցաւ զայն: Այդ ծաղկատի աղջկան գեղեցկութեանն ու ազնուութեանը վրայ հիացած մնաց, և երբ Մերսէտէս հարցուց թէ ի՛նչ եղաւ իր սիրահարը, Վիլֆոր կարծեց թէ ինքն էր ամբաստանեալը, և աղջիկը՝ իր դատաւորը:

—Այդ անձը խիստ յանցաւոր մըն է, ըսաւ Վիլֆոր խըստութեամբ, և ես բան մը չեմ կրնար ընել անոր համար:

Մերսէտէս հեկեկանք մը հանեց, և տեսնելով որ Վիլֆոր կը ջանար հեռանալ՝ կրկին կտրեց անոր ճամբան:

—Բայց գոնէ ըսէք ինծի թէ ո՛ւր է հիմա ան, հարցուց Մերսէտէս, որպէս զի մեռած կամ կենդանի ըլլալը կարենամ իմանալ:

—Չեմ գիտեր. այդ գործը իմ ձեռքէս ելած է ա՛լ, պատասխանեց Վիլֆոր:

Անոր անշարժ նայուածքէն և աղերսագին կեցուածքէն նեղանալով՝ Մերսէտէսը մէկդի հրեց, ներս մտաւ և դուռը անմիջապէս գոցեց, կարծես իրեն դէմ եղած այդ տրտմութիւնը դուրս ձգել ուզելով:

Բայց տրտմութիւնը դիւրաւ չի փարատիր, այլ Վիրգիլիոսի բանաստեղծութեանց մէջ յիշուած մահաբեր նետին պէս՝ վիրաւոր մարդուն հետ կ'երթայ: Վիլֆոր ներս մտաւ, դուռը գոցեց, բայց իր սրահը հասած ատեն, իր ծունկերուն ոյժն ալ պակսիլ սկսաւ. հառաչեց ու հեկեկանքով աթոռի մը վրայ ինկաւ մնաց:

Այն ատեն տկարացած սրտին մէջ մահառիթ վէրքի մը առաջին թոյնը սկսաւ գործել: Իր երևակայութեան մէջ կը տեսնէր դեղնած, բարկացայտ նայուածքով և զունաթափ նշանածին ձեռքը տուած այն մարդը, որ իր փառասիրութեան զոհած էր, այն անմեղ անձը, որ իր յանցաւոր հօրը պատիժը կը կրէր: Այդ թշուառը իր ետևէն խղճի խայթը կը բերէր, բայց ոչ այն խայթը զոր նախնեաց առասպելական դժոխային

կատաղիներուն պէս՝ հիւանդը կը սարսափեցնէ, այլ այն ներքին, կսկծեցուցիչ և անձայն ազդումը, որ ատեն ատեն սըրտին կը զարնէ ու անցեալ չարագործութեան մը յիշատակովը մահացու կերպով կը վիրաւորէ զայն. սաստիկ ցաւերով բացուած վէրքը քանի՛ երթայ կը խորունկնայ ու մինչև մահուան դուռը կը տանի:

Ասոր վրայ՝ Վիլֆորի միտքը գաղափար մը եկաւ, գործած մեղքէն ետ դառնալու համար: Ասկէ առաջ շատ անգամ մահուան վճիռը տուած էր յանցաւորներուն, բայց դատաւորի մը՝ մահապարտին վրայ ունեցած սովորական ցուրտ կարեկցութենէն աւելի ներքին յուզում մը չէր զգացած, և այն դատապարտեալներուն յիշատակը, որոնց վճիռը ի գործ դնել տուած էր իր չանթարձակ ճարտասանութեան շնորհիւ թէ՛ դատաւորները և թէ՛ դատարանը համոզելով, իր ճակատին վրայ զղջման նշան մը իսկ թողած չէր. պատճառը սա էր որ այդ դատապարտեալները իրօք յանցաւոր էին, կամ գոնէ ինքը այնպէս կը կարծէր: Բայց բոլորովին տարբեր էր այս անգամ:

Մշտնջենաւոր բանտարկութեան պատժին դատապարտուածը անմեղ մըն էր, այնպիսի անմեղ մը, որ երջանիկ պիտի ըլլար. ինքը այդ կերպով ոչ միայն անոր ազատութիւնը, այլ երջանկութիւնը կը փճացնէր: Այս անգամ ինքը ո՛չ թէ դատաւոր, այլ դահիճ եղած էր:

Այս բանին վրայ խորհելով՝ Վիլֆոր կը զգար որ վերը նկարագրուած և մինչև այն ատեն անծանօթ եղած ներքին տրոփումը իր սրտին խորը կը հնչէր ու անորոշ երկիւղներով կը լեցնէր միտքը: Ահա այսպէս վիրաւոր մարդը բնազդումով բուռն վիշտեր զգալով, առանց դողալու, բնաւ մատը չի մօտեցնէր իր բացած եւ արիւնոտ վէրքին, մինչև որ այն վէրքը չգոցուի:

Բայց Վիլֆորի ընդունած վէրքը այն վէրքերէն էր որոնք չեն գոցուիր, կամ եթէ գոցուին՝ վերստին կը բացուին, առաջինէն աւելի արիւնահոս և ցաւառիթ:

Եթէ այդ միջոցին, Ռընէին քաղցր ձայնը Վիլֆորի ականջին հնչէր ու Տանթէսի ազատութիւնը խնդրէր, եթէ գեղեցիկ Մերսէտէս յանկարծ սենեակը մտնէր ու ըսելու ըլլար. «Յանուն Աստուծոյ որ մեզ կը տեսնէ ու կը դատէ, ինծի յանձնէ՛ նշանածս», անշուշտ անոր խոժոռ դէմքը, որ ի հարկէ փոքր ինչ պիտի մեղմանար, իր ցուրտ ձեռքովը Տանթէսի ազատութիւն տալու հրամանագիրը պիտի ստորագրէր, առանց գլխուն գալիք վտանգը հոգ ընելու: Բայց լռութեան մէջ այսպիսի ձայն մը չլսուեցաւ բնաւ, և դուռը բացուելով, Վիլֆորի ծառան միայն ներս մտաւ ու իմացուց թէ կառքը պատրաստ է և ձիերը լծուած:

Վիլֆոր ոտքի ելաւ, կամ աւելի ճիշդ, ներքին յուզումներու հետ կռուելով յաղթող մարդու մը պէս վեր ցատկեց, դէպի իր գրասեղանը վազեց, գզրոցներէն մէկուն մէջ գտնուած բոլոր ոսկիները գրպանը լեցուց, ու վայրկեան մը սենեակին մէջ շուարած, ձեռքը ճակատը ու բերանէն անկապ խօսքեր հանելով պտըտեցաւ. վերջապէս զգալով որ ծառան վերարկուն ուսերուն վրայ դրած էր, դուրս ցատկեց, կառքին մէջ նստեցաւ, ու կտրուկ ձայնով մը հրամայեց որ Կրան-Քուր փողոցը Սէն-Մերանի դրան առջեւ տանի զինքը:

Այսպէս՝ խեղճ Տանթէս դատապարտուած մնաց:

Ինչպէս որ Պ. Սէն-Մերան խոստացած էր՝ մարքիզուհին ու Ռընէ դահլիճին մէջ իրեն կը սպասէին. Վիլֆոր՝ նշանածը տեսնելուն՝ սարսռաց, կարծելով թէ Տանթէսը ազատ ձգելու շնորհը պիտի խնդրէր: Բայց աւա՜ղ, կը ցաւինք ըսելու, ծաղկատի օրիորդին միտքը միայն մէկ բանով զբաղած էր. Վիլֆորի մեկնումովը:

Ռընէ կը սիրէր Վիլֆորը, որ իր ամուսինը ըլլալու վայրկեանին կը մեկնէր: Վիլֆոր չէր կրնար ըսել թէ ե՛րբ պիտի դառնայ, և Ռընէ փոխանակ Տանթէսը մեղքնալու՝ անիծեց զայն, որուն յանցանքին համար իր սիրահարէն կը բաժնուէր

Իսկ Մերսէտէս ի՞նչ ըսելու էր:

Խեղճ Մերսէտէս Լօժ փողոցին անկիւնը նորէն Ֆերնանին

պատահեցաւ, որ ետեւէն գացած էր: Հէգ աղջիկը Քաթալան դառնալով, կիսամեռ ու յուսահատ, իր անկողնին մէջ նետուեցաւ: Անկողնին քով Ֆերնան ծունկի եկած, անոր սառած ձեռքը կը սեղմէր, իսկ Մերսէտէս չէր խորհէր ետ քաշելու. Ֆերնան աղջկան ձեռքը անդադար կը համբուրէր և Մերսէտէս չէր զգար բնաւ:

Այդպէս անցուց գիշերը, ճրագին իւղը հատնելով մարեցաւ. բայց ինչպէս լոյսը տեսած չէր, այնպէս ալ մթութիւնը չէր զգար բնաւ: Արշալոյսը վերստին ծագեցաւ, առանց Մերսէտէսի կողմէ նշմարուելու:

Տրտմութեան մէջ խորասուզուած, Մերսէտէսի աչքերը Էտմոնէն ուրիշ բան չէին տեսներ:

—Ա՛հ, դուն հո՞ս ես, ըսաւ վերջապէս Մերսէտէս, Ֆերնանին կողմը դառնալով:

—Երէկուընէ ի վեր քովէդ չհեռացայ, պատասխանեց Ֆերնան, ցաւագին հառաչանքով մը:

Պ. Մորէլ անփոյթ չէր մնացած. իմացած էր որ Տանթէս հարցաքննութենէն յետոյ բանտարկուած էր. այն ատեն իր բոլոր բարեկամներուն դիմած, ու Մարսիլիայի մէջ ազդեցիկ անձերու ներկայացած էր. բայց արդէն զրոյց մը տարածուած էր թէ Էտմոն իբրեւ Պոնաբարդի կողմնակից բանտարկուեր է, և որովհետեւ այն ատեն ամէն ինքնավստահ մարդիկն իսկ խոլական ցնորք մը կը համարէին վերստին թագաւորական գահը ելլելու համար Նաբոլէոնին ըրած բոլոր ջանքերը, ուստի Մորէլ ամէն կողմէ պաղութիւն, երկիւղ և մերժում գտնելով, յուսահատած, իր տունը դարձած էր, խոստովանելով որ գործը իրաւցընէ շատ գէշ է, և մէկը չի կրնար բան մը ընել:

Իսկ Քատրուս իր կողմէն շատ մտահոգ և վրդովուած էր. փոխանակ Պ. Մորէլի պէս դուրս ելլելու, փոխանակ Տանթէսի համար ջանք մը ընելու, թէեւ ձեռքէն բան մը չէր գար, երկու շիշ գինի առնելով, սենեակը փակուած էր, և կը ջանար իր մտահոգութիւնը արբեցութեան մէջ խեղդել:

Բայց, իր այդ մտատանջ վիճակին մէջ, երկու շիշ գինի

բաւական չէին անոր դատողութիւնը լռեցնելու։ Նորէն գինի առնելու ուժ չունէր գինովութենէն, բայց այնքան ալ գինովցած չէր որ իր վերյիշումները մոռնար. երկու պարապ շիշերուն դէմ նստած և հին սեղանին վրայ արմուկը դրած՝ ճրագին երկայն պատրոյգին ցոլացումովը բոլոր երեւակայական պատկերները կը տեսնէր, զորս Հօֆման սև և մտացածին փոշիի մը պէս իր ձեռագիրներուն մէջ ցանած է։

Տանկլար միայն ոչ խռոված էր և ոչ ալ մտահոգ. Տանկլար ընդհակառակը ուրախ էր, թշնամիէ մը վրէժը առած ու Փարաւոնի նաւուն մէջ իր ունեցած պաշտօնը ապահովցուցած ըլլալուն համար, զոր կորսնցնելէ կը վախնար. Տանկլար այն չահախնդիր մարդոցմէ էր, որոնք ականջնուն ետին գրիչով մը կը ծնին և սրտի տեղ կաղամար ունին. անոր համար աշխարհիս մէջ ամէն բան հանում ու բազմապատկութիւն էր. թուանշան մը անոր աչքին աւելի արժողութիւն ունէր, քան թէ մարդ մը, երբ այդ թուանշանը կրնար աւելցնել գումար մը, մինչ այդ մարդը կրնար պակսեցնել։

Ուստի Տանկլար իր սովորական ժամուն պառկած, հանդիստ կը քնանար։

Պ. Սալվիէօյէն Պլաքա կոմսին գրուած նամակը առնելէն, Ռընէին երկու այտերը, Տիկին Սէն-Մէրանի ձեռքը համբուրելէն ու մարքիզին ձեռքը թօթուելէն յետոյ, Վիլֆոր սուրհանդակով ճամբայ ելաւ դէպի Էքսի կողմը։

Տանթէսի հայրը թախիծէն ու հոգերէն կը մեռնէր։

Իսկ Էտմոնին ի՞նչ ըլլալը գիտենք արդէն։

Ժ. ԳԼՈՒԽ

ԹԻՒԻՅԸՐՐԻ ՊԱԼԱՏԻՆ ՓՈՔՐԻԿ ԴԱՀԼԻՃԸ

Թողլով որ Վիլֆոր վարձած երեք ուղեցոյցներուն առաջնորդութեամբ կառքը վազցնել տայ Բարիզի ճամբուն վրայ և քարերէն ու հողէն կրակ հանէ, մենք Թիւյըրրի պալատին երկու երեք սրահներէն անցնինք կամարաձեւ պատուհաններով փոքրիկ դահլիճը մտնենք. որ առենօք Նաբոլէոնի և Լուի ԺԸ.ի և հիմա Լուի Ֆիլիբի սիրելի դահլիճն ըլլալուն համար, այնչափ հռչակաւոր է։

Այն դահլիճին մէջ Լուի ԺԸ. ընկուզենիէ շինուած սեղանի մը առջեւ նստած, զոր Հարթուէլէն հետը բերած ըլլալով՝ մեծամեծ անձերու յատուկ եղած մոլութեամբ մը կը սիրէր, յիսուն յիսուներկու տարեկան, մոխրագոյն մազերով, ազնուական և լուրջ դէմքով մարդու մը թեթեւօրէն ականջ կը դնէր. այն ատեն բաւական յարգի ու սխալ տպուած Ովրատիոսի մէկ հատորին լուսանցքներուն վրայ նօթեր կ'առնէր, հատոր մը որ Նորին Վեհափառութեան փիլիսոփայական ողջամիտ դիտողութիւններուն շատ բան կը թելադրէր։ Կրիֆիոսի տպագրութիւնն էր այդ հատորը։

—Ի՞նչ կ'ըսէիր, պարոն... ըսաւ թագաւորը։

—Թէ շատ անհանգիստ եմ, վեհափա՛ռ տէր։

—Երազիդ մէջ եօթը պարարտ և եօթը նիհար կո՞վ տեսար արդեօք։

—Ո՛չ, վեհափառ տէր, որովհետեւ այդպիսի երազ մը եօթը տարի առատութիւն և եօթը տարի սով կը նշանակէ, մինչ Ձեր Վեհափառութեան պէս կանխահոգ թագաւորի մը օրովը սովի երկիւղ չկայ։

—Ուրեմն ուրիշ ի՞նչ աղէտ կրնայ ըլլալ, սիրելիդ իմ Պլաքաս։

—Կարծեմ, վեհափառ տէր, և իրաւունք ունիմ կարծե-

լու որ Ֆրանսայի հարաւային կողմը փոթորիկ մը կը պատրաստուի։

—Ի՞նչ կ'ըսես, սիրելիդ իմ կոմս, պատասխանեց Լուի ԺԸ.։ կարծեմ լաւ չես տեղեկացեր. ես ընդհակառակը ստոյգ գիտեմ որ այն կողմը օդը շատ գեղեցիկ է։

Թէև խելացի մարդ, Լուի ԺԸ. անմեղ կատակը կը սիրէր։

—Տէր արքայ, ըսաւ Պ. Պլաքա, գոնէ ձեր հաւատարիմ ծառային սիրտը ապահովցնելու համար արդեօք չէ՞ք կրնար Լանկտօք, Բրօվանս և Տօֆինէ հաւատարիմ մարդիկ ղրկել՝ որպէսզի այն երեք գաւառներուն բնակիչներուն վրայ տեղեկութիւն բերեն ձեզի։

Թագաւորը Ովրատիոսի գրքին մէջ ծանօթագրութիւններ ընելով միշտ, բարձրաձայն կարդաց.

—Բօնիխնու սուրsխս:

—Տէ՛ր, ըսաւ պալատականը, Վէնուզի բանաստեղծին այն կիսատող տաղաչափը հասկնալ ձեւացնելու համար ծիծաղելով՝ Ձեր Վեհափառութիւնը կրնայ բոլորովին իրաւամբ վստահիլ Ֆրանսայի բնակիչներու անդորր վիճակին վրայ, բայց կարծեմ ես ալ բոլորովին չեմ սխալիր, վախնալով որ յուսահատական փորձ մը չկատարուի։

—Որո՞ւ կողմէն։

—Պոնափարթի, կամ գոնէ անոր կուսակիցներուն կողմէն։

—Սիրելի Պլաքա, ըսաւ թագաւորը, ձեր պատճառած սարսափներով արգելք կ'ըլլաք գրաւոր աշխատութիւններուս։

—Ձեր Վեհափառութիւնն ալ արգելք կը հանդիսանայ հանգարտ քուն մը քաշելու։

—Սպասեցէք, սիրելիս, սպասեցէք, աս կարդացած տեղս յարմար ծանօթագրութիւն մը պիտի ընեմ։ Սպասեցէք ու յետոյ խօսքերնիդ կը շարունակէք։

Պահ մը լռութիւն տիրեց։ Լուի ԺԸ. Ովրատիոսի գրքին լուսանցքին վրայ խիստ մանր գրերով նոր ծանօթագրութիւն մը գրեց, և ուրիշի մը գաղափարը մեկնելու տեղն, սեփական գաղափար ունենալ կարծող մարդու մը պէս գոհ և ուրախ դէմքով մը գլուխը վեր առաւ ու ըսաւ.

—Շարունակեցէք, սիրելի դուքս, շարունակեցէք. հիմա մտիկ կ'ընեմ ձեզի։

—Վեհափառ տէր, ըսաւ Պլաքա, պարտաւոր եմ ձեզի ըսելու թէ գլխ մտատանջ ընողը անհիմն ու մտացածին լուրեր չեն, այլ խոհեմ և իմ կատարեալ վստահութեանս արժանի մարդ մը, որուն՝ Ֆրանսայի հարաւային վիճակին վրայ հսկելու պաշտօնը տուած եմ (դուքսը վարանոտ մ'արտասանեց այդ խօսքը), սուրհանդակով հասաւ, ինծի իմացնելու համար թէ մեծ վտանգ մը կը սպառնայ թագաւորին։ Ուստի անմիջապէս վազեցի եկայ, տէր իմ։

Լուի ԺԸ. տանուոր մըն ալ կարդաց, գրքին վրայ ծանօթագրելով.

—Մաշա տուսխ ավի soiloil:

—Ձեր Վեհափառութիւնը ինծի կը հրամայէ՞ ուրեմն որ այդ մասին աւելի չպնդեմ։

—Ո՛չ, սիրելի դուքս. բայց ձեռքերնիդ երկնցուցէք։

—Ո՞րը։

—Ո՛ր ձեռքերնիդ որ կ'ուզէք. հոն ձախակողմը։

—Հո՞ս, վեհափառ տէր։

—Ձեզի ձախակողմը կ'ըսեմ, իսկ դուք աջակողմը կը փնտռէք. հոդ՝ հիմա գտաք ոստիկանութեան նախարարին երէկուան թուականով տուած տեղեկագիրը... բայց ահա՛ ինքն ալ անձամբ կուգայ... Պ. Տանտրէն, ըսիք, այնպէս չէ՞, յարեց թագաւորը, խօսքը սպասաւորին ուղղելով, որ ծանուցած էր նախարարին գալուստը։

—Այո՛, Վեհափառ Տէր, Պարոն Տանտրէն է, պատասխանեց ծառան։

—Այո՛, իրաւունք ունիք, Պարոն է ան, յարեց Լուի ԺԸ. աննշմարելի ժպիտով մը. ներս մտէք և դուքսին պատմեցէք թէ ինչ նոր բան գիտէք Պ. տը Նաբօլէոնի վրայ։ Որչափ ալ ծանր ըլլայ կացութիւնը, բան մ՛ պահէք մենէ։ Տեսնենք Էլպա կղզին հրաբո՞ւխ մըն է արդեօք. հոնկէ պատերազմի մը բոցավառո՞ւմը պիտի տեսնենք։ Պեղլա, horisu պեղլա:

Պ. Տանտրէ շնորհալից ճօճում մը ընելով թիկնաթոռին
վրայ, ըսաւ.

—Ձեր Վեհափառութիւնը հաճեցա՞ւ երէկուան ղրկած տե-
ղեկագիրս քննելու։

—Այո՛, այո՛. բայց դուքսին յայտնեցէք անոր պարու-
նակութիւնը, որովհետեւ ինք չկրնար գտնել զայն. մանրա-
մասնաբար պատմեցէք թէ Նաբոլէոն իր կղզիին մէջ ի՞նչ կ'ընէ։

—Դուքս, ըսաւ Տանտրէ, Նորին Վեհափառութեան բոլոր
ծառաները պէտք է ուրախանան Էլպա կղզիէն հասած նոր
լուրերուն վրայ։ Պոնաբարդ....

Ոստիկանութեան նախարարը Թագաւորին նայեցաւ, որ
ծանօթագրութիւն մը ընելու զբաղած ըլլալով, գլուխը ան-
գամ վեր չառաւ։

—Պոնաբարդ, շարունակեց Տանտրէ, սրտնեղութենէն կը
մեռնի. բոլոր օրերը Բորթօ-Լօնկօնէի հանքագործներուն աշ-
խատութիւնը դիտելով կ'անցընէ։

—Ու վիշտը փարատելու համար կը քերուըտի, ըսաւ Թա-
գաւորը։

—Ի՞նչ ըսել կ'ուզէ Ձեր Վեհափառութիւնը, հարցուց
դուքսը։

—Այո՛, սիրելի դուքս, մոռցա՞ք որ այդ մեծ մարդը,
այդ դիւցազնը, այդ կիսաստուածը այնպիսի մորթային հիւան-
դութեամբ մը վարակուած է որ զինքը կը մաշեցնէ։

—Ամէն բան կատարեալ է, դուքս, շարունակեց ոստի-
կանութեան նախարարը՝ գրեթէ վստահ ենք որ քիչ ատենէն
յափշտակիչը պիտի խելագարի։

—Ի՞նչ կ'ըսես, պիտի խելագարի՞։

—Այո՛, կապուելիք խենթ պիտի ըլլայ. գլուխը արդէն
տկարացած է, մերթ յորդ արցունք կը թափէ, մերթ կոկոր-
դալից կը ծիծաղի, և երբեմն քանի մը ժամ շարունակ ծո-
վեզրը կը կենայ, ու ջուրին մէջ գայլախազեր կը նետէ. երբ
նետած քարը ջուրին երեսը հինգ կամ վեց ոստում ընէ, շատ
գոհ կ'ըլլայ, որպէս թէ ուրիշ Մարէնկօ մը կամ նոր Օսթէրլից

մը վաստկած ըլլար։ Դուք իսկ պիտի խոստովանիք թէ խելա-
գարութեան նշաններ են ասոնք։

—Կամ թէ իմաստութեան, պարոն, ըսաւ Լուի ԺԸ. ծի-
ծաղելով. չէ՞ք գիտեր որ նախնեաց երեւելի զօրավարները
ծովը քարեր նետելով կը զբօսնուին. տե՛ս Պլուտարքոսի մէջ՝
Սկիպիոն Ափրիկեցիին կեանքին պատմութիւնը։

Պլաքա սկսաւ մտածել այդ երկու անհոգներուն միջեւ։
Վիլֆոր թէեւ չէր ուզած ամէն բան պատմել, որպէս զի չըլլայ
թէ ուրիշ մէկը իր գաղտնիքին արդիւնքը յափշտակէ, սակայն
դուքսին մեծ անհանգստութիւն պատճառելու չափ բան խօ-
սած էր։

—Կը տեսնէք, Տանտրէ, ըսաւ Լուի ԺԸ., Պլաքա չհա-
մոզուեցաւ տակաւին. յափշտակիչին դարձը պատմեցէք անոր։

Ոստիկանութեան նախարարը խոնարհութիւն մը ըրաւ։

—Յափշտակիչին դա՞րձը, մրմնջեց դուքսը, Թագաւորին և
Տանտրէին երեսը նայելով, որոնք Վիրգիլիոսի երկու հովիւ-
ներուն պէս իրարու կ'օգնէին։ Յափշտակիչը դարձա՞ծ է։

—Բոլորովին, սիրելի դուքս։

—Բայց ի՞նչ բանի։

—Բարի սկզբունքներու. այդ բանը կոմսին պատմէ՛,
Տանտրէ։

—Պէտք է գիտնաք, պարոն դուքս, ըսաւ նախարարը,
ծանրութեամբ մը, թէ Նաբոլէոն մօտերս զօրահանդէս մը տուած
է. այդ առթիւ իր ծերունի զօրավարներէն երկու կամ երեք
հոգի Ֆրանսա վերադառնալու փափաք յայտնած էին. յափըշ-
տակիչը թոյլատրած է, խրատելով որ իրենց բարի Թագաւորին
ծառայեն։ Իր բուն խօսքերն են ասոնք, դուքս՝ ստոյգ գիտեմ։

—Ըսէ՛ նայինք, Պլաքա, ի՞նչ կը խորհիք ասոր վրայ,
ըսաւ Թագաւորը իր առջեւ բացուած մեծահատոր հին մա-
տենագրին մէջ ըրած բանաքաղութիւնը դադրեցնելով պահ մը։

—Տէր արքայ, ես կ'ըսեմ թէ կամ ոստիկանութեան նա-
խարարը և կամ ես կը սխալինք. բայց որովհետեւ անկարելի
է որ ոստիկանութեան նախարարը սխալած ըլլայ, քանի որ

Ձեր Վեհափառութեան կեանքին և պատիւին պահպանութեան պաշտօնն ունի ան, հաւանական է որ ես սխալած ըլլամ։ Սակայն եթէ Ձեր Վեհափառութեան տեղը ըլլայի, անգամ մը կը հարցաքննէի այն անձը, որուն վրայ ձեզի խօսեցայ. կ'աղաչեմ որ Ձեր Վեհափառութիւնը այս պատիւը ընէ անոր։

—Մեծ հաճութեամբ, դուքս. ձեր պաշտպանութեամբ ամէն ոք կ'ընդունիմ. բայց կ'ուզեմ որ զայն ընդունած միջոցիս զէնք ունենամ ձեռքս։ Պարոն նախարար, ուրիշ նոր լուր մը ունի՞ք, որովհետեւ փետրուար 20ի լուր է ատ, և այսօր մարտի 3ն է։

—Ո՛չ, տէր արքայ, բայց ես ժամէ ժամ ուրիշ տեղեկագրի կը սպասէի։ Առտուն դուրս ելայ, գուցէ իմ բացակայութեանս ատեն եկած ըլլայ։

—Ոստիկանատեղիս գացէք. եթէ լուր մը կայ՝ բերէք, և եթէ չկայ... ի՞նչ պիտի ընէք, շարունակեց Լուի ԺԸ. ծիծաղելով, մէկ հատ մը չինեցէք. չէ՞ որ սովորաբար այսպէս կ'ընէք։

—Ո՛հ, տէր արքայ, ըսաւ նախարարը, փա՜ռք Աստուծոյ, այս մասին յերիւրելու պէտք չկայ. ամէն օր մեր գրասենեակները մանրամասն ամբաստանութեան թուղթերով կը լեցուին, զորոնք խեղճ մը թշուառ աղքատներ կը բերեն, յուսալով որ վարձատրութիւն մը կ'ըլլայ իրենց չըրած ծառայութեանց համար, թէեւ կ'ուզեն ընել։ Բախտին վրայ դնելով յոյսերնին, կը սպասեն որ օր մը անակնկալ դէպք մը պատահի և իրենց կանխատեսութիւնները կատարուին։

—Լաւ, գացէք հիմա, պարոն, ըսաւ Լուի ԺԸ, և մի՛ մոռնաք որ ձեզի կը սպասեմ։

—Երթալս ու գալս մէկ պիտի ըլլայ, տէր արքայ, տասը վայրկեանէն կը դառնամ։

—Ու ես, տէր, ըսաւ Պ. Պլաքա, երթամ իմ պատգամաբերս նորս կանչեմ։

—Սպասեցէք, ըսաւ Լուի ԺԸ., առուգիւ պէտք է որ ձեր զինանշանները փոխեմ, ու ճիրաններուն մէջ փախչող որս մը բռնած սաւառնաթեւ արծուի նշան մը տամ ձեզի։ Այդ արծիւին նշանաբանն է. Tenax։

—Տէր արքայ, մտիկ կ'ընեմ, ըսաւ Պլաքա, բռունցքները կրծելով անհամբերութենէն։

—Պիտի ուզէի ձեր կարծիքը հարցնել Ովրատիոսի սա հատուածին վրայ, Molli fugiens anhelitu. գայլի առջեւէն փախչող եղջերուի մը մասին կը խօսի, այդ խօսքը ինչպէս կ'երեւի ձեզի, դուք որ քաջ որսորդ և գայլերու որսորդապետ էք։ Այդ կրկնակ հանգամանքով ինչպէս կը գտնէք molli anhelitu։

—Հիանալի, Վեհափառ տէր, բայց իմ պատգամաբերս ձեր ըսած եղջերուին պէս է, որովհետեւ 220 մղոն տեղէն հազիւ երեք օրուան մէջ սուրհանդակով եկաւ։

—Ինչ պէտք կայ այդչափ յոգնութեան և այդչափ տաղտուկի, սիրելի կոմս, երբ հեռագրական գիծեր ունինք, որոնք երեք կամ չորս ժամուան մէջ կ'իմացնեն լուրը, առանց մարդուն շունչը կտրելու։

—Ա՛հ, տէր, շատ գէշ կը վարձատրէք այդ խեղճ երիտասարդը, որ այնչափ հեռուէն և այնչափ շտապարանօք եկած է Ձեր Վեհափառութեան կարեւոր լուր մը տալու համար. գոնէ Պ. Սալվիէօյի համար ըլլայ, որ ինծի յանձնարարած է այդ երիտասարդը. կ'աղաչեմ սիրով ընդունեցէք զայն։

—Պ. Սալվիէօ՞ն, իմ եղբօրս սենեկապե՞տը։

—Այո՛, նոյն ինքն։

—Իրօք, Մարսիլիա է ան։

—Ան ալ Մարսիլիայէն կը գրէ ինծի։

—Այդ դաւադրութեան խորհուրդին վրայ ալ կը խօսի՞։

—Ո՛չ, բայց Պ. Վիլֆորը ինծի յանձնարարած և խնդրած է որ Ձեր Վեհափառութեան ներկայացնեմ զայն։

—Պ. Վիլֆօ՞ր, հարցուց թագաւորը, պատգամաբերին անունը Պ. Վիլֆօ՞ր է։

—Այո՛, տէր արքայ։

—Մարսիլիայէն եկողը ա՞ն է։

—Նոյն ինքն։

—Ինչո՞ւ համար անոր անունը իսկոյն չըսիք ինծի, կրկնեց

Թագաւորը, որուն դէմքին վրայ անհանգստութեան նշան մը տեսնուեցաւ։

—Տէր, այդ անունը Ձեր Վեհափառութեան անծանօթ կը կարծէի։

—Ո՛չ, ո՛չ, սիրելի Պլաքա, ծանրաբարոյ, բարձրախորհուրդ և մանաւանդ փառասէր մարդ մըն է ան. անոր հօրը անունէն ճանչնալու ես զինքը։

—Անոր հա՞յրը։

—Այո՛, Նուարթիէն։

—Ժիրօնտէ՞ն Նուարթիէն, ա՞յն Նուարթիէն, որ Ծերակոյտի անդամ իսկ եղած էր։

—Այո՛, ճիշդ նոյն ինքն։

—Ձեր Վեհափառութիւնը այդպիսի մարդու մը զաւկին պաշտօ՞ն յանձնած է։

—Պլաքա, սիրելիս, չի հասկցար. ես ձեզի ըսի թէ Վիլֆոր փառասէր է. ուստի Վիլֆոր փառքի հասնելու համար ամէն բան կը զոհէ, մինչեւ իսկ իր հայրը։

—Ուրեմն, տէր, կրնամ ձեր առջեւ հանել զայն։

—Այս վայրկեանիս թող գայ. ո՞ւր է։

—Կարծեմ վարը, կառքին մէջ ինծի կը սպասէ։

—Գացէք հոս կանչեցէք։

—Իսկոյն։

Դուքսը առոյգ երիտասարդի մը պէս դուրս ելաւ. իր անկեղծ միապետականութիւնը 20 տարեկան դարձուցած էր զինքը։

Լուի ԺԸ. մինակ մնալով, Ովրատիոսի կիսաբաց գրքին վրայ դարձուց աչքերը ու սկսաւ կարդալ. Ժուսթօմ է թենասեմ բրօբօզիթի վիրօմ։

Պ. տը Պլաքա ի՛նչ արագութեամբ որ վար իջած էր՝ նոյն արագութեամբ վեր ելաւ, բայց նախասենեակին մէջ պարտաւորուեցաւ Թագաւորին հրամանը խնդրելու. Վիլֆորի փոշելից հագուստէն և զգեստներուն ձեւէն, որ բնաւ պալատան սովորութեանը չէր համապատասխաներ, արարողապետին՝ Պ. Պրէզէի դիւրազգածութիւնը վիրաւորուած էր. այդ պաշտօնեան

կը զարմանար թէ ի՛նչպէս երիտասարդը կը պահանջէր այդպիսի հագուստով Թագաւորին առջեւ ներկայանալ. բայց դուքսը մէկ խօսքով բոլոր դժուարութիւնները հարթեց, Նորին Վեհափառութեան հրամանն է ըսելով. թէեւ արարողապետը շարունակեց պալատական կանոնները առաջ բերել, բայց չկրցաւ Վիլֆորի ներս մտնելուն արգելք ըլլալ։

Թագաւորը նոյն տեղը նստած էր, ուր կը գտնուէր դուքսին դուրս ելած ատեն։ Դուռը բանալով՝ Վիլֆոր ճիշդ Թագաւորին դիմացը գտնուեցաւ. ուստի երիտասարդ դատաւորը հարկ դատեց դրան առջեւ կենալ։

—Նե՛րս եկու, Պ. Վիլֆոր, ըսաւ Թագաւորը, նե՛րս եկու։

Վիլֆոր խոնարհութիւն ընելով քանի մը քայլ յառաջացաւ, սպասելով որ Թագաւորը հարցաքննէ զինքը։

—Պ. Վիլֆոր, շարունակեց Լուի ԺԸ. մեր Պլաքա դուքսը կ'ըսէ թէ կարեւոր բան մը ունիս մեզի ըսելու։

—Տէր արքայ, դուքսը իրաւունք ունի այսպէս ըսելու և կը յուսամ որ Ձեր Վեհափառութիւնը ընդհուպ պիտի հասկնայ տալիք լուրիս կարեւորութիւնը։

—Ամէն բանէ առաջ, պարոն, ըսէ ինծի թէ քու կարծիքովդ աղէտը այնչափ մե՞ծ է՝ որչափ կ'ուզեն հաւատցնել ինծի։

—Տէր արքայ, կարծեմ թէ անմիջական է. բայց արընթաց ճամբորդութեանս շնորհիւ անդարմանելի չէ, կը յուսամ։

—Պարոն, մանրամասնօրէն խօսեցէք, եթէ կ'ուզէք, ըսաւ Թագաւորը, որ սկսաւ նոյն յուզումը զգալ, որով Պ. տը Պլաքային դէմքը այլայլած էր և Վիլֆորի ձայնը կը խռովէր. խօսեցէք, մանաւանդ սկիզբէն պատմեցէք. ամէն բանի մէջ կարգը կը սիրեմ։

—Տէր արքայ, ըսաւ Վիլֆոր, ես Ձեր Վեհափառութեան հաւատարմաբար պիտի պատմեմ գործը. բայց կ'աղաչեմ ներէք ինծի, եթէ վրդովումէս մութ մնան խօսքերս։

Վիլֆոր այս հրապուրիչ յառաջաբանէն յետոյ, աչքը Թագաւորին վրայ դարձնելով, իր օգոստափառ ունկնդրին բարեյօժարութիւնը հասկցաւ ու շարունակեց։

—Տէր արքայ, կարելի եղածին չափ արագութեամբ Բարիզ հասայ Ձեր Վեհափառութեանը իմացնելու համար որ իմ իրաւասութեանս սահմանին մէջ երևան հանած եմ ոչ թէ սովորական ու անհետևանք եղող այն դաւադրութիւններէն մէկը, որոնք ամէն օր բանակին և ստորադաս մարդոց մէջ կը տեսնուին, այլ ճշմարիտ դաւադրութիւն մը երևան հանեցի, մրրիկ մը՝ որ ուղղակի Ձեր Վեհափառութեան գահուն վրանդ կը սպառնայ։ Տէր արքայ, յափշտակիչը կը խորհի երեք նաւ սպառազինելու, որ գուցէ անխորհուրդ ըլլայ, բայց գուցէ ահռելի ծրագիր։ Այս ժամուս Էլպա կղզիէն մեկնած պիտի ըլլայ, բայց արդեօք ո՞ւր երթալու համար, չեմ գիտեր, սակայն ապահովաբար կամ Նէապոլիս կամ Թոսքանայի ծովեզերքը և կամ Ֆրանսա ցամաք ելլելու փորձ ընելու համար։ Ձեր Վեհափառութիւնը տեղեակ ըլլալու է որ Էլպա կղզիին իշխանը Իտալիոյ և Ֆրանսայի հետ յարաբերութիւններ ունէր։

—Այո՛, պարոն, գիտեմ, ըսաւ թագաւորը չափազանց վրդովելով. այս օրերս ալ իմացանք որ Պօնաբարդեան գումարումներ եղեր են Սէն-Ժագ փողոցին մէջ. բայց շարունակէ՛, կ'աղաչեմ. այդ մանրամասն տեղեկութիւնները ինչպէս ստացար։

—Տէր արքայ, Մարսիլիացի մը հարցաքննելով. անոր վրայ երկար ատենէ ի վեր կը հսկէի, ու իմ մեկնած օրս ձերբակալել տուի զայն։ Այս մարդը խռովարար նաւաստի մըն է, որուն Պօնաբարդի կուսակից ըլլալուն կը կասկածէի. գաղտնապէս Էլպա կղզին գացեր է։ Հոն մեծ մարաջախտը տեսեր է, որ իրեն բերանացի հրահանգ մը տուեր է Բարիզ գտնուող Պօնաբարդեանի մը, որուն անունը անկարելի եղաւ անոր բերնէն առնելու, այդ յանձնարարութեան նպատակն էր Նաբոլէոնին դարձին առթիւ հանրային կարծիքը պատրաստել (գիտցէք, տէր արքայ, որ հարցաքննութեան միջոցին եղած խօսքերն են) և այդ դարձը, գուցէ շատ չանցած, տեղի պիտի ունենայ։

—Բայց ո՞ւր է այդ մարդը, հարցուց Լուի ԺԸ.։

—Բանտը, տէր արքայ։

—Գործը այդչափ ծանրակշի՞ռ երևցաւ քեզ։

—Այո՛, տէր արքայ, այնչափ ծանրակշիռ որ այդ դէպքը ընտանեկան տօնախմբութեան մը մէջ եղած միջոցիս՝ նշանտուքի օրը պատահած ըլլալով, ամէն բան ձգեցի, նշանած, բարեկամ, ամէն բան յետաձգեցի, որպէս զի գամ Ձեր Վեհափառութեան ոտքերուն առջև ներկայացնեմ թէ՛ իմ վախերս և թէ իմ անձնուիրութեանս հաւաստիքը։

—Ստոյգ է, ըսաւ Լուի ԺԸ., Օրիորդ Սէն-Մէրանի և քու միջևդ ամուսնութեանդ խօսք կար։

—Այո՛, Ձեր Վեհափառութեան խիստ հաւատարիմ ծառաներէն մէկուն աղջկան հետ։

—Այո՛, այո՛, բայց վերստին դառնանք այդ գաղտնի դաւադրութեան, Պ. Վիլֆոր։

—Վեհափառ տէր, կը վախնամ որ դաւադրութենէ աւելի մեծ բան մը, Ձեր տէրութեան դէմ ապստամբութիւն մը չըլլայ։

—Այս միջոցիս, ապստամբական շարժումը դիւրին է, ըսաւ Լուի ԺԸ. ժպտելով, բայց աւելի դժուար է զայն գլուխ հանելը. որովհետև երէկուընէ մեր նախահայրերուն գահը նորէն նստած ըլլալով՝ անցեալին, ներկային և ապագային վրայ աչքերնիս բացած ենք. տասը ամսէ ի վեր նախարարներս Միջերկրական ծովեզերքին պահպանութեանը վրայ լաւ կը հսկեն։ Եթէ Պօնաբարդ Նէապոլիս իջնէ՝ Բիոմպինօ չհասած՝ բոլոր նիզակակից տէրութիւնները ոտքի կ'ելլեն. եթէ Թոսքանա ելլէ, թշնամի երկիր պիտի մտնէ։ Իսկ եթէ Ֆրանսա ոտք կոխէ, ժողովուրդը իրմէ խորշած ըլլալով՝ շատ քիչ մարդիկ պիտի ունենայ, և մենք շուտով կրնանք առաջքը առնել. ապահով եղիք ուրեմն, պարոն. բայց մեր թագաւորական երախտագիտութեանը վստահ կրնաք ըլլալ։

—Ո՛հ, ահա՛ ոստիկանութեան նախարարը, գոչեց Պլաքա դուքսը։

—Այդ միջոցին, իրօք, ոստիկանութեան նախարարը դրան սեմերուն վրայ երևցաւ՝ գոյնը նետած, դողդոջուն և երկչոտ նայուածքով, որպէս թէ շլացած ըլլային աչքերը։

Վիլֆոր քայլ մը առաւ մեկնելու համար. բայց Պ. տը Պլաքա անոր ձեռքը սեղմելով կեցուց զայն։

ԺԱ. ԳԼՈՒԽ

ՔՈՐՍԻՔԱՅԻ ԳԱԶԱՆԸ

Լուի ԺԸ., նախարարին այլայլած դէմքը տեսնելով իր առջեւ գտնուող սեղանը ուժգնօրէն մէկդի հրեց, ու բարձրաձայն հարցուց.

—Օ՛ն, ի՞նչ ունիք, գոչեց թագաւորը, բոլորովին վրդոված կ'երեւիք, այդ վրդովումը, այդ այլայլութիւնը Պ. Պլաքաի ըսածին և Պ. Վիլֆորի հաւաստումին հետ առնչութիւն ունի՞ արդեօք:

Պ. տը Պլաքա ալ մէկ կողմէն աշխուժով Տանտրէի կը մօտենար. բայց պալատականին երկիւղը թոյլ չէր տար որ ոտերութեան պաշտօնեային հպարտութիւնը յաղթած երեւայ: Ստուգիւ, այդպիսի պարագայի մը մէջ, աւելի չահաւէտ կ'ըլլէր ոստիկանութեան նախարարէն նուաստանալով քան թէ այդպիսի խնդրի մը մէջ նուաստացնելով զայն:

—Վեհափառ տէր... կակազեց սեպուհը:

—Օ՛ն, ի՞նչ կայ նայինք, ըսաւ Լուի ԺԸ.:

Ոստիկանութեան նախարարը յուսահատօրէն գնաց թագաւորին ոտքը ինկաւ: Իսկ ան յօնքը պռստելով քայլ մը ետ քաշուեցաւ ու ըսաւ.

—Պիտի խօսի՞ք:

—Ո՛հ, տէր արքայ, ի՜նչ սոսկալի ձախորդութիւն, ինէ աւելի դժբախտ մարդ մը կա՞յ արդեօք. ո՞վ պիտի կրնայ մխիթարել զիս:

—Պարոն, ըսաւ Լուի ԺԸ., կը հրամայեմ որ խօսիք:

—Վեհափառ տէր, յափշտակիչը փետրուար 26ին Էլպա կղզիէն մեկնած ու մարտ մէկին ցամաք ելած է:

—Ո՞ւր, Իտա՞լիա, հարցուց թագաւորը փութով:

—Ֆրանսա, տէր արքայ, Ժիւանի ծոցը, Անթիպեանց մօտ՝ փոքրիկ նաւահանգստի մը մէջ:

—Յափշտակիչը մարտի 1ին Ֆրանսայի Ժիւան Ծոցը, Անթիպեանց մօտ փոքրիկ նաւահանգստի մը մէջ ցամա՞ք ելած է, որ Բարիզէն երկու հարիւր լիուէն մղոն հեռի է, և դուք այդ լուրը այսօր միայն մարտ 3ի՞ն կ'իմանաք... է՛հ, պարոն, ըսածնիդ անկարելի բան է, կամ թէ սխալ տեղեկութիւն առած պիտի ըլլան ձեզի:

—Աւա՜ղ, վեհափառ տէր, չատ ճշմարիտ է ըսածս:

Լուի ԺԸ. բարկութեան և երկիւղի չարժում մը ըրաւ, և խեղճն ոտքի ելաւ, որպէս թէ այդ յանկարծական հարուածը միեւնոյն ատեն սրտին ու դէմքին տրուած ըլլար:

—Ֆրանսա՞ կ'ըսես, յափշտակիչը Ֆրանսա՞ կը մտնէ: Ուրեմն այդ մարդուն վրայ չէի՞ն հսկեր. բայց ո՞վ գիտէ, գուցէ անոր համախոհ էին:

—Ո՛հ, տէր, ըսաւ Պլաքա դուքսը, Պ. Տանտրէին պէս մարդ մը անկարելի է որ այդպիսի մատնութիւն ընէ. Վեհափառ տէր, ամէնքս ալ կոյր էինք, և ոստիկանութեան նախարարը ուրիշ բան չըրաւ, բայց եթէ ընդհանուր կուրութեան մասնակից եղաւ:

—Բայց... ըսաւ Վիլֆոր: Յետոյ յանկարծ խօսքը կտրելով, ա՛հ, ներեցէ՛ք, ներեցէ՛ք, վեհափառ տէր, ըսաւ խոնարհութիւն ընելով. բուռն եռանդիս արդիւնքն է, կ'աղաչեմ որ Ձեր Վեհափառութիւնը բարեհաճի ներել ինծի:

—Խօսեցէք, պարոն, համարձակօրէն խօսեցէք, ըսաւ Լուի ԺԸ., դուք միայն աղէտը մեզ իմացուցիք ամէնէն առաջ. հիմա ալ օգնեցէք մեզի՝ ճարը գտնելու համար:

—Վեհափառ տէր, ըսաւ Վիլֆոր, յափշտակիչը Ֆրանսայի հարաւային գաւառներուն մէջ ատելի եղած է. կարծեմ թէ եթէ այդ կողմը թափառի, դիւրին պիտի ըլլայ Բրովանսի ու Լանկտօքի բնակիչները անոր դէմ ոտքի հանել:

—Այո՛, անտարակոյս, ըսաւ նախարարը, բայց Կափի և Սիսթրոնի կողմէն կը յառաջանայ:

—Կը յառաջանա՛յ, կը յառաջանա՛յ, ըսաւ Լուի ԺԸ., Բարիզի վրա՞յ կը քալէ ուրեմն:

Ոստիկանութեան նախարարը լռեց, ինչ որ համարժէք էր կատարեալ խոստովանութեան:

—Կը կարծէ՞ք, պարոն, հարցուց թագաւորը Վիլֆորին, որ Տօֆինէի բնիկներն ալ Բրովանսցիներուն պէս անոր դէմ հանել կարելի՞ է։

—Վեհափառ տէր, կը ցաւիմ որ Ձեր Վեհափառութեան անողոք ճշմարտութիւնը պիտի ըսեմ. Տօֆինէի բնակիչներուն ոգին Բրովանսցիներուն և Լանկտօքցիներուն ոգիին չափ հաւատարիմ չէ։ Լեռնականները Պօնաբարդեան են, տէր արքայ։

—Լաւ, մրմնջեց Լուի ԺԸ., աղէկ տեղեկութիւն ունի եղեր։ Ո՞րչափ մարդ ունի իր հետ։

—Չեմ գիտեր, տէր արքայ, ըսաւ ոստիկանութեան նախարարը։

—Ի՞նչ, չէ՞ք գիտեր։ Մոռցա՞ք այդ մասին տեղեկութիւն առնելու. իրաւ որ մեծ կարեւորութիւն չունի, յարեց ջախջախիչ ժպիտով մը։

—Վեհափառ տէր, չէի կրնար այդ բանին վրայ տեղեկութիւն առնել. եկած թուղթը միայն յափշտակչին նաւէն ցամաք ելլելը ու հետեւած ճամբան իմաց կուտար։

—Բայց ինչպէս այդ լուրը իմացաք, հարցուց թագաւորը։

Նախարարը գլուխը կախեց ու դէմքը կարմրեցաւ կրակի պէս։

—Հեռագրով եկաւ, վեհափառ տէր, ըսաւ կակազելով։

Լուի ԺԸ. քայլ մը յառաջացաւ ու իր բազուկները կուրծքին վրայ դրաւ խաչաձեւ, ինչպէս Նաբոլէոն կ'ընէր։

—Այսպէս, ըսաւ բարկութենէն դողդոջուն, եօթը նիզակակից բանակներ կը տապալեն այն մարդը, քսանըհինգ տարի աքսորէն յետոյ երկինքի հրաշքով նախահարցս գահը կը նստիմ և այդ քսանըհինգ տարուան մէջ՝ ինծի խոստացուած Ֆրանսայի մարդիկն ու գործերը կ'ուսումնասիրեմ, կը խորաքննեմ ու կը վերլուծեմ, և ահա բաղձանքներս իրագործելուս պէս, ձեռքիս մէջ եղած զօրութիւնը ձեռքէս կ'ելլէ ու զիս կը կործանէ։

—Վեհափառ տէր, այդպէս է եղեր ճակատագիրը, մրմնջեց նախարարը գիտնալով որ բախտին այս հարուածը, որքան ալ թեթեւ ըլլայ, կրնայ թագաւորը ջախջախել։

—Ուրեմն մեր թշնամիներու կողմէ մեր վրայ ըսուածը ստոյգ է։ Եթէ երբեք ես ալ անոր պէս մատնուէի՝ պիտի մխիթարուէի։ Ահ, պարոն իրաւունք ունիք, ճակատագիր է կորստեան մատնուիլ ողորմելիօրէն, անկարողութեանը և անգործութեանը պատճառաւ չուրջի մարդոցս, որոնք իմ շնորհիւս բարձր աստիճաններու տիրացած են, և որոնք պարտէին աւելի աչալուրջ հսկողութիւն մը կատարել իմ վրաս քան թէ իրենց անձին վրայ։ Իմ հարստութիւնս անոնցն է. ինէ առաջ բան մը չէին և ինէ ետքն ալ բան մը չպիտի ըլլան։

Այդ սոսկալի անէծքին տակ ընկճուած, Պ. տը Պլաքա քրտնաթաթաւ ճակատը կը սրբէր. իսկ Վիլֆոր ներքէն կը ժպտէր, վասնզի կը զգար որ իր կարեւորութիւնը պիտի աւելնար։

—Գահէ՛ս ինկամ, և հեռագրով իմանամ այդ բանը, յարեց թագաւորը, որ իր աչքին առջեւ կը բերէր այն գահավէժը որուն մէջ իր թագաւորութիւնը ինկալու վրայ էր։ Ո՛հ, պիտի նախընտրէի Լուի ԺԶ. եղբօրս պէս կախաղանի վրայ ելլել, քան թէ այսպէս Թիւյլըրի պալատին սանդուխէն վար իջնել՝ ծաղրանքի առարկայ դարձած։ Ծաղրանքը, պարոն, չէք գիտեր ի՛նչ ըսել է Ֆրանսայի մէջ, սակայն պէտք էիք գիտնալ։

—Վեհափա՛ռ տէր, մրմնջեց նախարարը, վեհափառ տէր, գթացէք ինծի...

—Մօտեցէ՛ք, Պ. Վիլֆոր, շարունակեց թագաւորը դէպի երիտասարդը դառնալով, որ ոտքի վրայ անշարժ ու ետ քաշուած կը կենար և թագաւորութեան մը երերուն ճակատագրին վրայ եղած խօսակցութեան ընթացքը կը դիտէր, մօտեցէ՛ք ու հասկցո՛ւցէք պարոնին թէ կարելի էր ամէն բան առաջուց իմանալ։

—Տէր, նիւթապէս անկարելի էր այդ մարդուն ծրագիրները գուշակել, զոր ամէն մարդէ գաղտնի կը պահէր։

—Նիւթապէս անկարելի՛, այո՛, ահա՛ խոշոր բառ մը, պարոն, դժբախտաբար ինչպէս խոշոր բառեր կան մեծ մարդոց պէս։ Ֆրանսայի ծովեզերքէն միայն վաթսուն մղոն

հեռուն եղածը գիտնալը նիւթապէս անկարելի՞ է արդեօք նախարարի մը, որ դիւաններ ու գործակալներ ունի և լրտեսներ պահելու համար մէկուկէս միլիոն ֆրանքի գաղտնի վարկ կը ստանայ։ Եւ ահա՛ սա պարոնը, որ այդ միջոցներէն մէկն իսկ չունէր իր ձեռքը, և սոսկ դատաւոր մըն է, ձեզմէ ու բոլոր ձեր ոստիկաններէն աւելի տեղեկութիւն ունէր, և իմ թագս կրնար ազատել, եթէ ձեզի պէս հեռագրական թելերը գործածելու իրաւունք ունենար։

Ոստիկանութեան նախարարը խիստ դժգոհ նայուածք մը ձգեց Վիլֆորի վրայ, որ յաղթական պարկեշտութեամբ մը գլուխը խոնարհեցուց։

—Ձեզի համար չեմ ըսեր, սիրելի Պլաքաս, շարունակեց Լուի ԺԸ. որովհետև եթէ չկրցաք բան մը իմանալ, գէթ ձեր կասկածին մէջ յարատևելու լաւ գաղափարն ունեցաք. գուցէ ձեր տեղը ուրիշ մը Պ. Վիլֆորի յայտնութիւնը անհիմն կամ վարձկան եսասիրութենէ առաջ եկած բան մը համարէր։

Այս խօսքը կ՚ակնարկէր ոստիկանութեան նախարարին ժամ մը առաջ այնքան վստահութեամբ ըսածներուն։

Վիլֆոր ըմբռնեց թագաւորին խօսքին դարձուածքը։ Եթէ իր տեղը ուրիշ մը ըլլար՝ թերևս յափշտակուէր տրուած գովեստէն, բայց վախցաւ որ չըլլայ թէ ոստիկանութեան նախարարը իրեն դէմ ոխերիմ թշնամի մը դարձնէ, թէև գիտէր որ նախարարին իշխանութեան անկումը անդարձ էր։ Իրօք, նախարարը որ իր բոլոր զօրութեամբը չէր կրցած Նաբոլէոնի գաղտնիքը գուշակել, ինչպէս պիտի կրնար իր հոգեվարքի միջոցին, Վիլֆորի գաղտնիքը հասկնալ. և այդ բանին համար բաւական էր որ Տանթէսը անգամ մը հարցաքննէր։ Ուստի Վիլֆոր բարեխօսելով՝ նախարարին օգնութեան հասաւ, փոխանակ ընկճելու զայն։

—Վեհափառ տէր, ըսաւ Վիլֆոր, դէպքին արագութիւնը կ՚ապացուցանէ որ Աստուած միայն կրնար արգիլել զայն մրրիկ մը հանելով։ Ինչ որ Ձեր Վեհափառութիւնը կը վերագրէ իմ խորին յառաջատեսութեանս, պարզապէս պատա-

հական է. և ես իբրև անձնուէր ծառայ՝ այդ առիթէն օգուտ քաղեցի։ Ուստի, տէր արքայ, արժանիքէս աւելի մի գնահատէք զիս, վրաս ի սկզբան ունեցած գաղափարնին չվերադառնալու համար։

Ոստիկանութեան նախարարը պերճախօս նայուածքով մը իր շնորհակալութիւնը յայտնեց երիտասարդին, և Վիլֆոր հասկցաւ որ իր ծրագրին մէջ յաջողած էր, այսինքն առանց թագաւորին երախտագիտութենէն բան մը կորսնցնելու, բարեկամ մը շահիլ, որուն կրնար ապաւինիլ՝ առիթ մը պատահածատեն։

—Շատ աղէկ, ըսաւ թագաւորը. հիմա, պարոններ, շարունակեց Պլաքասին ու ոստիկանութեան նախարարին դառնալով. ձեզի պէտք չունիմ, դուք կրնաք տեղերնիդ երթալ. ինչ որ կը մնայ ընել՝ պատերազմական նախարարութեան կը վերաբերի։

—Բարեբախտաբար, վեհափառ տէր, ըսաւ Պլաքա, բանակին վրայ կրնաք վստահ ըլլալ։ Հասած տեղեկութիւններէն Ձեր Վեհափառութիւնը գիտէ թէ ինքը ո՞րքան հաւատարիմ է։

—Տեղեկութեանց մասին մի՛ խօսիր ինծի, դուքս. այսուհետև գիտեմ թէ ի՛նչ համարում ունենալու է անոնց վրայ. բայց աղէկ միտքս եկաւ, պարոն. ինչ նոր լուր ունիս Սէն-Ժագ փողոցին գործին վրայ։

—Սէն-Ժագ փողոցին վրայ, գոչեց Վիլֆոր, չկրնալով ինքզինքը զսպել։

Բայց յանկարծ կենալով,

—Ներեցէ՛ք, տէր արքայ. ըսաւ, Ձեր Վեհափառութեանը համար ունեցած հաւատարմութիւնս ինծի միշտ մոռցնել կու տայ ո՛չ թէ ձեզի համար ունեցած յարգանքս, քանի որ այդ յարգանքը խոր տպաւորուած է սրտիս մէջ, այլ և պատշաճութեան կանոնները։

—Ըսէ՛ք ու ըրէ՛ք ինչ որ կ՚ուզէք, պարոն, յարեց Լուի ԺԸ. այսօր հարցաքննելու իրաւունքը ստացաք։

—Տէր արքայ, պատասխանեց ոստիկանութեան նախարարը, այսօր այդ դէպքի մասին նոր տեղեկութիւններ տալու

եկած էի Ձեր Վեհափառութեան, երբ Ձեր ուշադրութիւնը Ժիւան ծոցին աղէտալի դէպքին վրայ դարձաւ. հիմա այդ տեղեկութիւնները ոևէ շահեկանութիւն չունին ձեզի համար:

—Ընդհակառակը, պարոն, ընդհակառակը, ըսաւ Լուի ԺԸ. ինծի կ'երեւի թէ այդ գործը մեր հիմակուան գործին հետ ուղղակի յարաբերութիւն ունի, և Քընէլ զօրավարին մահը գուցէ ներքին մեծ դաւադրութեան մը թելը գտնել տայ մեզի:

Վիլֆոր այդ զօրավարին անունը լսելով՝ սարսռեցաւ:

—Ստուգիւ, վեհափառ տէր, կրկնեց ոստիկանութեան նախարարը. ամէն բան ենթադրել կու տայ որ այդ զօրավարին մահը ոչ թէ անձնասպանութեան, ինչպէս որ ի սկզբան կարծուեցաւ, այլ սպանութեան մը արդիւնք է: Կ'երեւայ թէ Քընէլ զօրավարը Պոնաբարդեան քլիւպէ մը դուրս ելլելու ատեն աներեւոյթ եղած է: Անծանօթ մը նոյն առտու զինքը փնտռած և Սէն-Ժագ փողոցը տեսակցելու համար ժամադիր եղած է. դժբախտաբար, զօրավարին սենեկապանը, որ անծանօթ մարդուն եկած միջոցին իր տիրոջ գլուխը կը յարդարէր, Սէն-Ժագ փողոցին անունը աղէկ լսած է, սակայն չէնքին թիւը միտքը չէր պահած:

Մինչ ոստիկանութեան նախարարը այդ տեղեկութիւնները կու տար, Վիլֆոր՝ որ անոր շրթունքէն կախուած էր, յաջորդաբար կը կարմրէր ու կը գունատէր:

Թագաւորը երեսը անոր դարձնելով հարցուց.

—Պ. Վիլֆոր, դուք ալ ինծի պէս չէ՞ք կարծեր որ Քընէլ զօրավարը, որ յափշտակչին կուսակից կը կարծուէր, իրօք բոլորովին հաւատարիմ մնացած էր և Պոնաբարդեան դաւաճանութեան մը զոհ եղած է:

—Հաւանական է, տէր, պատասխանեց Վիլֆոր, բայց այդ մասին ուրիշ տեղեկութիւն չունիմ:

—Ժամադիր եղող մարդուն հետքը գտնուեցաւ:

—Հե՞տքը գտնուեցաւ, կրկնեց Վիլֆոր:

—Այո՛, ծառան անոր դէմքն և հագուստը նկարագրեց մեզի. յիսուն կամ յիսուներկու տարեկան թխամորթ մարդ

մըն է եղեր, թանձր յօնքերով. սև աչքերով և սև կիսամօրուքով. կոճկուած կապոյտ բրտէնկոթ մը հագած էր և լամբակին վրայ Պատուոյ Լէգէոնի սպայութեան աստիճանը կար: Երէկ մէկը հետապնդեր են որ ճիշդ այդ կերպարանքը ունէր, բայց Ժիւսիան փողոցի և Քօք-Հէրօն փողոցի անկիւնը աներեւոյթ եղեր է ան:

Վիլֆոր բազկաթոռի մը յենարանին կռթնած էր, ոտքին ոյժը պակսելուն, ոստիկանութեան նախարարը խօսած ատեն. բայց երբ տեսաւ որ անծանօթ մարդը օձիքը ազատեր է հետապնդող գործակալին ձեռքէն, շունչ առաւ:

—Այդ մարդը պիտի փնտռէք, պարոն, ըսաւ թագաւորը ոստիկանութեան նախարարին. եթէ Քընէլ զօրավարը, որ այս միջոցիս մեզի այնչափ օգտակար կրնար ըլլալ, սպաննուած է, կ'ուզեմ որ մարդասպանները անգթօրէն պատժուին, ըլլան Պոնաբարդեան կամ ոչ:

Վիլֆոր սրտին յուզումը զսպելով՝ բոլորովին հանդարտ ցոյց տալու ինքզինքը, որպէս զի թագաւորին այդ հրամանէն զգացած վախը երեւան չելլէ:

—Զարմանալի բան, շարունակեց թագաւորը բարկութեամբ մը. ոստիկանութիւնը կը կարծէ թէ ամէն բան ըսած կ'ըլլայ երբ ըսէ թէ մարդասպանութիւն մը գործուած է, և ամէն բան ըրած կը կարծէ երբ յայտարարէ թէ յանցաւորներուն հետքը գտնուած է:

—Տէր արքայ, կը յուսամ որ Ձեր Վեհափառութիւնը գոնէ այս մասին գոհ պիտի մնայ:

—Շա՛տ լաւ, տեսնենք: Երկար ատեն հոս կենալնուդ պէտք չի մնար. կրնաք երթալ, պարոն: Իսկ դուք, պարոն Վիլֆոր, անշուշտ երկար ճամբորդութենէդ յոգնած ըլլալու էք. գացէ՛ք հանգչեցէք: Անտարակոյս, ձեր հօր տունը իջած էք:

Վիլֆորի աչքերը շլացում մը ունեցան:

—Ո՛չ, Վեհափառ տէր, ըսաւ, Թուրնօն փողոցը, Մատրիտ պանդոկը իջած եմ:

—Անշուշտ տեսաք զայն:

—Ամէնէն առաջ Պ. տը Պլաքայի տունը գացի։

—Գոնէ պիտի տեսնէ՛ք զինքը։

—Ձեզ կարծեր, տէր արքայ։

—Ա՛հ, իրաւունք ունիք, ըսաւ Լուի ԺԸ. ժպտելով, հասկցնելու համար թէ այդ կրկին հարցումները մասնաւոր դիտումով չէր ըրած, Պ. Նուարթիէի հետ լաւ յարաբերութիւն չունենալնիդ մոռցեր էի, և ասիկա նոր զոհողութիւն մըն է, զոր արքայական դատին համար կ'ընես, և որուն փոխարէնը պէտք է որ ընդունիս։

—Տէր արքայ, Ձեր Վեհափառութեան կողմէ նուաստիս ցուցուած բարութիւնը այնպիսի վարձատրութիւն մըն է, որ իմ բոլոր փառասիրական ակնկալութիւններս կը գերազանցէ, և ատկէ աւելի խնդրելու բան մը չունիմ։

—Հոգ չէ, պարոն, անհո՛գ եղէք որ չպիտի մոռնանք ձեզ։ Առ այժմ (Թագաւորը Պատուոյ Լէգէոնի խաչը, որ սովորաբար իր կապոյտ զգեստին վրայ կը կրէր Սէն-Լուիի խաչին քով, կուրծքէն հանեց ու Վիլֆորին տուաւ) առէ՛ք այս խաչը։

—Տէր արքայ, ըսաւ Վիլֆոր, Ձեր Վեհափառութիւնը կը սխալի, այս խաչը սպայութեան խաչն է։

—Գիտեմ, պարոն, ըսաւ Լուի ԺԸ., բայց ուրիշ մը բերել տալու ժամանակ չունիմ։ Պլաքա, այս շքանշանին հաստատութեան վկայականը Պ. Վիլֆորի տրուելուն հոգ տարէք։

Վիլֆորի աչքը հպարտ ուրախութեան արտասուքով թրջուեցան։ Խաչը առնելով համբուրեց։

—Եւ հիմա Ձեր Վեհափառութիւնը ի՞նչ հրամաններով կը պատուէ զիս։

—Գացէք հանգստացէք։ Խորհեցէք որ Բարիզի մէջ ինծի ծառայելու յատուկ պաշտօն մը չունիք. Մարսիլիայի մէջ ինծի շատ օգտակար կրնաք ըլլալ։

—Վեհափառ Տէր, պատասխանեց Վիլֆոր խոնարհութիւն ընելով, մինչեւ մէկ ժամ Բարիզէն հեռացած պիտի ըլլամ։

—Գացէ՛ք, պարոն, ըսաւ Թագաւորը, և եթէ ձեզ մոռնալու ըլլամ (Թագաւորներու յիշողութիւնը կարճ է) մի՛ վախնաք միտքս ձգելու...։ Պարոն, հրաման ըրէք որ պատերազմական նախարարը կանչեն։ Պլաքա, դուք հո՛ս կեցէք։

—Ա՛հ, պարոն, ըսաւ ոստիկանութեան նախարարը Վիլֆորի հետ Թիւիլըրիէն դուրս ելած ատեն, գործերնիդ յաջող սկսաւ ու բախտերնիդ չինեցիք։

—Երկար պիտի տեւէ՞ արդեօք, ըսաւ կամաց մը Վիլֆոր գործը լմնցած նախարարը ողջունելով և աչքը չորս կողմը պտըտցընելով որպէս զի կառք մը գտնէ տունը դառնալու համար։

Քարափէն կառք մը կ'անցնէր. Վիլֆոր նշան ըրաւ, կառքը մօտեցաւ, ու երթալիք տեղը կառապանին իմացընելով, կառքին մէջ նստեցաւ, իր փառասիրական երազներուն անձնատուր։

Տասը վայրկեանէն Վիլֆոր պանդոկ հասաւ, ապսպրեց որ ձիերը երկու ժամէն պատրաստ ըլլան ու հրաման ըրաւ որ ճաշը բերեն։

Սեղան նստելու վրայ էր, երբ զանգակին ամուր կերպով հնչուիլը լսուեցաւ։ Սենեկապանը գնաց դուռը բանալու, և Վիլֆոր ձայն մը լսեց, որ իր անունը կուտար։

—Ո՞վ կրնայ ըլլալ այն անձը, որ իմ հոս ըլլալս իմացեր է, հարցուց երիտասարդը մոռլի։

Այդ միջոցին սենեկապանը ներս մտաւ և Վիլֆորը հարցուց

—Ի՞նչ կայ, ո՞վ զանգակը հնչեցուց, ո՞վ է զիս ուզողը։

—Օտարական մըն է, որ չուզեց իր անունը ըսել։

—Ինչպէս, օտարական մըն է, որ իր անունը չուզեր ըսել։ Այդ օտարականը ի՞նչ պիտի ընէ զիս։

—Ձեր հետ խօսիլ կ'ուզէ։

—Ինծի հետ։

—Այո՛։

—Անունս տուա՞ւ։

—Այո՛։

—Ի՞նչ երեւոյթ ունի այդ օտարականը։

—Յիսուն տարեկան կ'երևայ։

—Հասակը փո՞քր է թէ մեծ։

—Գրեթէ ձեր հասակը։

—Թո՞ւխ թէ խարտեաշ։

—Թուխ, շատ թուխ, սև մազերով, սև աչքերով, սև յօնքերով։

—Զգե՞ստը, հա՛րցուց Վիլֆոր աշխուժով, ի՞նչպէս հագուած է։

—Մեծ կապոյտ վերարկու մը կը կրէ, վերէն վար կոճկուած, ու Պատուոյ Լէգէոնի նշանը կախած։

—Ան է, ըսաւ կամաց մը Վիլֆոր երեսին գոյնը նետելով։

—Ի՞նչ կայ, ըսաւ մեր նկարագրած մարդը, յանկարծ դրան սեմին վրայ երևալով. ի՞նչ ձևակերպութիւններ են ասոնք։ Մարսիլիայի սովորութիւնը ա՞յդպէս է որ որդիները իրենց հայրը նախասենեակի մէջ սպասցնել տան։

—Հա՛յր իմ, գոչեց Վիլֆոր. ուրեմն կարծիքս սխալ չէ եղեր... կը տարակուսէի որ դուն ըլլաս։

—Եթէ այդպէս էր, կրկնեց նորեկը՝ գաւազանը անկիւն մը և գլխարկը աթոռի մը վրայ դնելով, ներէ՛ որ քեզի ըսեմ, սիրելի Ժէրարս, թէ զիս այսպէս սպասցնել տալդ ազնիւ գործ մը չէ։

—Մինակ ձգէ մեզ, Ժէրմէն, ըսաւ Վիլֆոր սպասաւորին։

Ծառան դուրս ելաւ զարմանքի նշաններ ցուցնելով։

ԺԹ. ԳԼՈՒԽ

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Պ. Նուարթիէ, որ նոյն ինքն էր ներս մտնողը, ծառային վրայէն չվերցուց աչքերը, մինչև որ դուռը գոցեց ան. յետոյ անշուշտ վախնալով որ ծառան իրենց խօսակցութիւնը նախասենեակէն մտիկ ընէ, գնաց դուռը բացաւ. ի գործ դրած զգուշութիւնը աւելորդ չէր, որովհետև Ժէրմէնի աճապարանքով ետ քաշուիլը ցոյց կուտար որ մեր նախահայրերուն կորստեան պատճառ եղող մեղքէն (հետաքրքրութենէ) ազատ չէր ան ալ։ Ուստի Պ. Նուարթիէ գնաց իր ձեռքովը գոցեց նախասենեակին դուռը, ետ դառնալով՝ ննջասենեակին դուռն ալ վրայ ըրաւ և ձեռքը Վիլֆորի երկարելով, որ հօրը բոլոր շարժումները զարմանքով դիտած, զարմանք մը որ շուտով չփարատեցաւ։

—Ի՞նչ ունիս, սիրելիդ իմ Ժէրար, ըսաւ երիտասարդին, այնպիսի ժպիտով մը, զոր ինչ մտքով ըլլալը դժուար էր որոշել. կը նայիմ որ այնչափ ուրախ չես երևար զիս տեսած ըլլալուդ համար։

—Ընդհակառակը, հայր իմ, ըսաւ Վիլֆոր, շատ ուրախ եմ. բայց կը խոստովանիմ որ քու այցելութիւնդ այնքան անյուսալի էր որ զարմանք պատճառեց ինծի։

—Բայց, սիրելիս, յարեց Պ. Նուարթիէ նստելով, կարծեմ ես ալ նոյն բանը կրնամ ըսել քեզի։ Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ ինծի իմաց կուտաս փետրուարի 28ին Մարսիլիոյ մէջ նշանուիլդ և այսօր Մարտ 3ին Բարիզ կը գտնուիս։

—Բարիզ գալուս վրայ մի տրտնջար, հայր, ըսաւ Ժէրար, Պ. Նուարթիէի մօտենալով. քեզի համար եկայ. թերևս այս ճամբորդութիւնը փրկէ քեզ։

—Ա՛հ, իրա՞ւ կ'ըսես, ըսաւ Պ. Նուարթիէ անտարբերու-

թեամբ, նստած թիկնաթոռին մէջ ընկողմանելով. իրա՞ւ կ'ըսես. ուրեմն. պատմէ՛ նայիմ, պարոն դատաւոր. հետաքրքրական ըլլալու է:

—Հայր, Սէն-Ժագ փողոցին մէջ գումարուած Պոնաբարդեան քլիւպին վրայ բան մը լսա՞ծ ես:

—53°դ թիւը, այո՛. նոյն քլիւպին նախագահն եմ:

—Հայր իմ, պաղարիւնութիւնդ կը սարսափեցնէ զիս:

—Սիրելիս, լեռնականներուն կողմէ հալածուելէս, վարսակի սայլով մը Բարիզէն դուրս հանուելէս, Պորտոյի ամայի դաշտերուն մէջ Ռոպէսփիէրի ճարպիկ ոստիկաններէն պաշարուելէս յետոյ, ի՞նչ կ'ուզես որ ընեմ: Այդչափ նեղութիւն քաշողը ի հարկէ շատ բաներու կը վարժուի: Շարունակէ ուրեմն. Սէն-Ժագ փողոցի Պոնաբարդեան քլիւպին մէջ ի՞նչ անցած դարձած է:

—Քընէլ զօրավարը հոն տարած են. զօրավարը իրիկուան ժամը 9ին իր տունէն դուրս ելլելով, հետեւեալ առտու Սէն գետին մէջ գտնուած է անոր մարմինը:

—Այդ գեղեցիկ պատմութիւնը ո՞վ ըրաւ քեզի:

—Նոյն ինքն թագաւորը:

—Քու պատմութեանդ փոխարէն, շարունակեց Նուարթիէ, նոր լուր մը տամ քեզի:

—Հա՛յր, ըսելիքդ գիտեմ արդէն:

—Ա՛հ, կայսեր ցամաք ելլելը գիտե՞ս միթէ:

—Լռէ՛, հայր, կ'աղաչեմ, նախ քեզի և յետոյ ինծի համար: Այո՛, իմացայ այդ լուրը և քենէ ալ առաջ. երեք օրուընէ ի վեր Մարսիլիայէն Բարիզ ճամբու վրայ քարայատակներէն կրակ հանեցի, զայրանալով որ չէի կրնար երկու հարիւր մղոն տեղը մէկէն կտրել, մինչ ատոր մտածումով կը տոչորուէր գլուխս:

—Երե՞ք օր, ի՞նչ կ'ըսես, խենթեցա՞ր, երեք օր առաջ Նաբոլէոն ցամաք ելած չէր դեռ:

—Ինչ փոյթ, ծրագրէն տեղեկութիւն ունէի:

—Բայց ինչպէս:

—Էլպա կղզիէն քեզի ղրկուած նամակէ մը իմացայ:

—Ինծի՞ ղրկուած:

—Այո՛, և գրաբերին թղթապանակին մէջ գտայ: Եթէ այդ նամակը ուրիշի ձեռք իյնալու ըլլար, այս ժամուս, հայր, գուցէ հրացանի բռնուած ըլլայիր:

Վիլֆորի հայրը սկսաւ ծիծաղիլ ու ըսաւ.

—Ի՞նչ կ'ըսես, կ'երեւայ թէ վերահաստատութիւնը կայսրութենէն սորված է գործերը շուտով կատարելու կերպը... հրացանի՞ բռնուիլ, սիրելիս, ո՛հ, ինչ ալ շուտ կը վճռես: Ո՞ւր է այդ նամակը: Քեզ լաւ ճանչնալուս համար իբր երկչոտ, չեմ կարծեր որ մէջտեղ ձգած ըլլաս զայն:

—Այրեցի զայն, վախնալով որ բեկոր մը չմնայ. այդ նամակը քու դատապարտութիւնդ էր:

—Եւ ապագայ յաջողութեանդ փճացումը, պատասխանեց Նուարթիէ պաղարիւնութեամբ: Այո, կը հասկնամ, բայց վախնալու բան չունիմ, քանի որ կը պաշտպանես զիս:

—Ո՛չ միայն կը պաշտպանեմ, այլ և կ'ազատեմ քեզ:

—Ո՛հ, աւելի տռամաթիք է ասիկա. բացատրէ՛ նայինք, ի՞նչ ըսել կ'ուզես:

—Պարոն, Սէն-Ժագ փողոցի քլիւպէն կը դառնամ:

—Կ'երեւայ թէ ոստիկանութեան մարդոց ուշադրութիւնը այդ քլիւպին վրայ դարձած է: Ուրեմն ինչո՞ւ աւելի լաւ չփնտռեցին. գուցէ կարենային գտնել զայն:

—Չեն գտած, բայց հետքը հասկցած են:

—Գիտեմ, գիտեմ, սովորական խօսք մըն է այդ: Երբ ոստիկանութիւնդ չկարենայ յանցաւոր մը գտնել, հետքը գըտանք կ'ըսէ. կառավարութիւնը հանդարտութեամբ կը սպասէ մինչեւ այն օրը որ ոստիկանութիւնը պզտիկ ինկած, յայտարարէ թէ գտած հետքը կորսնցուցած է:

—Այո՛, բայց դիակ մը գտած են, զօրավարը սպաննուած է, և ամէն քաղաքի մէջ մարդասպանութիւն կ'ըսեն ատոր:

—Մարդասպանութի՞ւն մի, բայց բնաւ ապացոյց չկայ որ

զօրավարը սպաննուած ըլլայ։ Ամէն օր Սէն գետին մէջ մարդոց դիակներ կը գտնուին, որոնք կամ յուսահատութեան կամ լողալ չգիտնալնուն հետեւանքով խեղդուած են։

—Հայր իմ, շատ լաւ գիտես որ զօրավարը յուսահատութենէն խեղդուած չէ, և յունուար ամսուն Սէն գետին մէջ չեն լողար։ Ո՛չ, ո՛չ, ինքզինքդ մի՛ խաբեր, այդ մահը սպանութեան արդիւնք է։

—Ո՞վ է այդպէս որակողը։

—Նոյն ինքն Թագաւորը։

—Թագաւո՞րը. ես կը կարծէի որ բաւական փիլիսոփայ է ան ու կը հասկնայ որ քաղաքականութեան մէջ մարդասպանութիւն չկայ։ Դուն ալ, սիրելիս, ինծի պէս գիտես որ քաղաքականութեան մէջ ո՛չ թէ մարդիկ այլ գաղափարներ կան. ո՛չ թէ զգացումներ այլ շահեր։ Քաղաքականութեան մէջ մարդ չեն մեռցներ, այլ արգելք մը, կը հասկնա՞ս։ Կ'ուզե՞ս գործին ինչպէս ըլլալը իմանալ. հիմա կ'ըսեմ քեզի, կը կարծէինք թէ Քընէլ զօրապետին վրայ կարելի էր վստահ ըլլալ. Էլպա կղզիէն մեզի յանձնարարուած էին զայն։ Մենէ մէկը անոր տունը գնաց, ու հրաւիրեց որ Սէն-Ժագ փողոցը ժողովի գայ, ուր քանի մը բարեկամներ պիտի գտնէր։ Զօրավարը հոն գնաց. Նաբոլէոնին Էլպա կղզիէն մեկնելու և ցամաքը ելլելու ծրագիրներուն վրայ մանրամասնօրէն տեղեկութիւններ տուինք անոր։ Յետոյ, երբ ամէն բան մտիկ ըրաւ, ամէն բան լսեց և բան մը չմնաց որ չիմացնենք, ան յայտարարեց թէ ինքը թագաւորին կուսակից էր։ Այն ատեն իրարու երես նայեցանք. երդում ընել տուինք անոր, բայց այնքան դժկամակութեամբ երդում ըրաւ որ այնպիսի երդում մը Աստուած փորձել էր։ Ի՞նչ կ'ուզես, հակառակ այդ ամէնուն, թողուցինք զօրավարը որ ազատ, բոլորովին ազատ դուրս ելլէ։ Իր տունը չէ վերադարձեր, ի՞նչ ընենք, սիրելիս, մեր ժողովէն դուրս ելաւ. անշուշտ ճամբան կորսնցուցած ըլլալու է և ոչ ուրիշ բան։ Մարդասպանութի՞ւն ըսիր, Վիլֆօր, դուն որ ընդհ. դատախազի օգնականն ես, այդպիսի գէշ ապացոյցներու վրայ ամբաստանութիւն մը ընե-

լով զարմանք կը պատճառես ինծի։ Երբ արքայականի պաշտօնդ ի գործ դնելով, կուսակիցներէս մէկուն գլուխը կտրել կուտաս, միթէ հարցուցա՞ծ եմ քեզի. «Տղա՛ս, մարդասպանութիւն մը գործեցի՞ր։» Ո՛չ, բայց ըսած եմ. «Շատ լաւ, պարոն, յաղթական պայքար մը մղեցիր, վաղը կը լուծենք վրէժը։»

—Բայց, հայր իմ, զգուշացիր, այդ վրէժը սոսկալի կ'ըլլայ երբ մենք լուծելու ըլլանք։

—Չեմ հասկնար միտքդ։

—Յափշտակչին դարձի՞ն վրայ կը վստահիս։

—Կը խոստովանիմ։

—Կը սխալիս, հայր իմ. Ֆրանսայի մէջ տասը մղոն տեղ չյառաջացած, պիտի հալածուի, պաշարուի և բռնուի վայրի անասունի մը պէս։

—Սիրելիս, կայսրը հիմա Կրընօպլի ճամբուն վրայ է. ամսոյն 10ին կամ 12ին Լիոն պիտի հասնի, եւ 20ին կամ 26ին Բարիզ։

—Ժողովուրդը ոտք պիտի ելլէ . . .։

—Այո՛, անոր ընդ առաջ երթալու համար։

—Քանի մը հոգի կան իր հետ, եւ բանակներ պիտի ղրկուին իր դէմ։

—Որոնք իբրեւ հետեւորդ պիտի ընկերակցին, մայրաքաղաք առաջնորդելու համար։ Ստուգիւ, սիրելիս Ժէրար, դեռ տղայ ես. կը կարծէք թէ աղէկ տեղեկութիւն առած էք, երբ կայսեր ցամաք ելլելէն երեք կամ չորս օր ետքը՝ հեռագիր մը ձեզ կ'իմացնէ. «Յափշտակիչը քանի մը հոգիով Քան ցամաքը ելած է. կը հալածեն զայն։» Բայց ո՞ւր է, ի՞նչ կ'ընէ, չէք գիտեր. միայն գիտէք որ կը հալածեն. մինչեւ Բարիզ այդպէս պիտի հետապնդեն, առանց հրացէն մը պարպելու։

—Կրընօպլը և Լիոն երկու հաւատարիմ քաղաքներ են և իբրև անառիկ դէմ պիտի դնեն։

—Կրընօպլի բնակիչները քաղաքին դռները սիրով պիտի բանան, և Լիոնի բոլոր ժողովուրդը պիտի դիմաւորէ զայն։ Հաւատա՛ ինծի, ձենէ աւելի աղէկ տեղեկութիւն ունինք, և

մեր ոստիկանութիւնը ձերինէն աւելի լաւ կը հսկէ: Կ'ուզե՞ս որ ապացոյց մը տամ. ճամբորդութիւնդ պահել կ'ուզէիր, մինչ պատնէշին առջեւէն անցնելէդ կէս ժամ յետոյ հասնիլդ իմացայ: Կառապանէդ զատ՝ ոչ մէկուն յայտնած չէիր բնակութեանդ տեղը, բայց ես իմացայ. և ասոր ապացոյցը սա է որ ճիշդ սեղան նստելու ատենդ եկայ. զանգակը հնչեցո՛ւր ուրեմն, և սեղանի ուրիշ սպաս մը բերել տո՛ւր որ միասին ճաշենք:

—Ստուգիւ, պատասխանեց Վիլֆոր՝ ապշութեամբ իր հօրը նայելով, ստուգիւ շատ լաւ տեղեկութիւն առած կը թուիս:

—Ի՞նչ կը զարմանաս, պատճառը յայտնի է. դուք՝ որ իշխանութիւնը ձեռքերնիդ ըլլալուն միայն դրամական միջոցներ ունիք, իսկ մենք՝ որ իշխանութեան կը սպասենք, միայն անձնուիրութեան միջոցներ ունինք:

—Անձնուիրութեա՞ն ըսիր, հարցուց Վիլֆոր ծիծաղելով:

—Այո՛, անձնուիրութեան. այսպէս կը կոչուի յուսալից փառասիրութիւնը, պարկեշտ բացատրութեամբ մը:

Այդ խօսքին վրայ՝ Նուարթիէ ձեռքը դէպի զանգակին չուանը երկնցուց, ծառան կանչելու համար, երբ տեսաւ որ որդին չէր կանչեր:

Վիլֆոր անոր թեւը բռնելով ըսաւ.

—Սպասէ՛, հայր իմ, հարցում մըն ալ ընեմ...:

—Ըրէ՛...:

—Արքայական ոստիկանութիւնը որքան ալ անպիտան ըլլայ, սոսկալի բան մը իմացած է:

—Ի՞նչ:

—Այն մարդուն կերպարանքը, որ Գընէլ զօրավարին աներեւութացած առտուն անոր տունը գացած էր:

—Ա՜հ, այդ բանը գիտէ՞ ճարտար ոստիկանութիւնը: Ի՞նչպէս կը նկարագրէ անոր կերպարանքը:

—Թխադէմ, մազերը, կիսամօրուքը եւ աչքերը սեւ, կապոյտ րըտէնկոթ հագած ու վերէն վար կոճկուած, և Պատուոյ Լէգէոնի սպայութեան վարդաձեւ նշանը լամբակին վրայ,

գլուխը լայնեզր փեղոյր դրած, և ձեռքը եղէգէ գաւազան մը բռնած:

—Ա՜հ, ուրեմն ոստիկանութիւնը այդ բանը գիտէ՞, ըսաւ Նուարթիէ, ուրեմն ինչո՞ւ մինչեւ հիմա ձեռք չէ ձգած այդ մարդը:

—Որովհետեւ երէկ կամ առջի օրը Գօք-Հէրօն փողոցին անկիւնը կորսնցուցած է զայն:

—Քիչ մը առաջ ըսի որ ձեր ոստիկանութիւնը անմիտ է:

—Չեմ ուրանար, բայց վայրկեանէ վայրկեան կրնայ գտնել այդ մարդը:

—Այո՛, ըսաւ Նուարթիէ անփութօրէն չուրջը նայելով, այո՛, կրնայ գտնել, եթէ այն մարդը իմացած չըլլայ. բայց բանը սա է որ արդէն իմացած է ան. ուստի հիմա իր դէմքն ու հագուստը պիտի փոխէ:

Այդ խօսքին վրայ ոտքի ելաւ Նուարթիէ, վերարկուն ու փողկապը հանեց, դէպի սեղան մը գնաց. որուն վրայ իր զաւկին վերաբերեալ գլխու յարդարման բոլոր պէտք եղածները պատրաստուած էին. ածելի մը առաւ, երեսը օճառ քսեց, և ամուր ձեռքով կասկածելի կիսամօրուքը սափրեց, որոնք թանկագին փաստեր կը ձեւացնէին ոստիկանութեան ձեռքը:

Վիլֆոր երկիւղով և զարմանքով կը դիտէր հօրը ըրածները:

Նուարթիէ մօրուքը ածիլելէն յետոյ, մազերուն սանտրուածքին ձեւը փոխեց. սեւ փողկապին տեղ, գունաւոր փողկապ մը դրաւ, կապոյտ և կոճկաւոր րըտէնկոթին տեղ Վիլֆորի շագանակագոյն և յառաջակողմը բաց րըտէնկոթը հագաւ. հայելիին մէջ նայելով՝ երիտասարդին նեղեզր փեղոյրը գլխին վրայ չափեց, և գոհ մնաց իրեն վայլելէն, եղէգէ գաւազանը կրակարանին անկիւնը ձգելով, իր ջղուտ ձեռքին մէջ շաչեցուց պամպուէ նուրբ գաւազան մը. վայելչագեղ Վիլֆոր այդ գաւազանին շնորհիւ՝ իր քալուածքին կ'ընծայէր վայելուչ ձեւ մը, ինչ որ իր գլխաւոր յատկութիւններէն մէկը կը ձեւացնէր:

—Է՜հ հիմա կը կարծե՞ս որ ոստիկանութիւնը ճանչնայ զիս,

ըսաւ Նուարթիէ. իր ապշահար զաւկին նայելով և կերպարանքը անոր աչքին դիմաց փոխելէն յետոյ։

—Ո՛չ, հա՛յր իմ, ըսաւ Վիլֆոր կակազելով, կամ գոնէ այնպէս կը յուսամ։

—Հիմա, սիրելիդ իմ Ժէրար, քու խոհեմութեանդ կը յանձնեմ որ անհետացնես հոս ձգած բոլոր բաներս։

—Ո՛հ, անհոգ եղիր, հայր իմ, ըսաւ Վիլֆոր։

—Այո՛, այո՛, հիմա կը հաւատամ որ իրաւունք ունիս, և ստուգիւ կեանքս ազատած ես. բայց անհո՛գ եղիր, այդ ծառայութեան փոխարէնը քիչ ատենէն կը հատուցանեմ քեզի։

Վիլֆոր գլուխը ցնցեց։

—Չե՞ս հաւատար։

—Յուսամ թէ կը սխալիս։

—Թագաւորը նորէն պիտի տեսնե՞ս։

—Թերևս։

—Կ'ուզե՞ս մարգարէի հռչակ շահիլ։

—Հայր, չարագուշակ մարգարէները յարգ չունին պալատան մէջ։

—Այո՛, բայց օր մը իրաւունք կուտան անոնց. ենթադրենք որ թագաւորութիւնը վերահաստատուի. այն ատեն մեծ մարդ կը դառնաս։

—Ի՞նչ պիտի ըսեմ թագաւորին։

—Ըսելիքդ սա է. «Տէ՛ր, Ֆրանսայի վիճակին, քաղաքներու մէջ տիրող հանրային կարծիքին, բանակին ոգիին վրայ կը խաբեն ձեզ. ան որ Բարիզի մէջ Քորսիքայի գազանը կը կոչէք, ան որ տակաւին Նըվէրի մէջ յափշտակիչ կը յորջորջուի, արդէն իսկ Լիոնի մէջ Պոնաբարդ և Կրընօպլի մէջ կայսր կ'անուանուի։ Դուք պաշարուած, հալածուած ու փախստական կը կարծէք զայն. բայց ան իր հետ բերած դրօշակներուն վրայ գտնուող արծիւին պէս արագաթռիչ կը քալէ. իր զինուորները, զորս անօթութենէ մեռած, աշխատութենէ յոգնած ու փախչելու պատրաստ կը կարծէիք, գլորուող ձիւնակոյտի շուրջը դիզուող հիւլէներուն պէս կ'աւելնան։ Վեհափառ տէ՛ր,

փախէ՛ք, ձգեցէք Ֆրանսան իր ճշմարիտ տիրոջը, որ չահած է զայն. փախէ՛ք, տէր, ո՛չ թէ վտանգ մը ըլլալուն համար, քանի որ հակառակորդնիդ ձեզի ազատութիւն շնորհելու չափ վեհանձնութիւն ունի, այլ սա պատճառաւ որ Սէն-Լուիի թագաւորին թոռանը համար նուաստացում մըն է իր կեանքին ազատութեանը մասին երախտապարտ ըլլալ Արքօլի, Մարէնկոյի և Օսթէրլիցի յաղթականին։» Այդպէս ըսէ՛, սիրելիդ իմ Ժէրար, կամ աւելի լաւը կ'ուզե՞ս. բան մի՛ ըսեր, ճամբորդութիւնդ մէկուն մի՛ իմացըներ. մի՛ պարծենար թէ Բարիզ ինչ բանի համար եկար և ի՞նչ ըրիր։ Նորէն ճամբայ ելի՛ր. եթէ գալու համար ճամբուն քարերէն կրակ հանեցիր, հոս դառնալու համար տարածութիւնը լափէ՛։ Գիշեր ատեն Մարսիլիա հասի՛ր, ետևի դռնէն տունդ մտի՛ր, և հոն հանդարտ, խոնարհ և պահուըտած կեցի՛ր, մանաւանդ մէկու մը վնաս մի՛ հասցներ. իրաւ կ'ըսեմ որ ուժեղ և թշնամիները ճանչցող մարդոց պէս կը վարուինք այն ատեն։ Գնա՛, որդեակս, գնա՛, սիրելի Ժէրարս, և եթէ հայրական պատուէրներուս հնազանդիս, կամ ասպէս ըսեմ, եթէ բարեկամի մը խրատները մտիկ ընես, այն ատեն պաշտօնիդ մէջ կը պահենք քեզ։ Ասիկա, յարեց Նուարթիէ ժպտելով, միջոց մը պիտի ըլլայ որ երկրորդ անգամ իմ կեանքս ազատես, եթէ քաղաքական լծակը օր մը քեզ բարձրացնէ, ու զիս խոնարհեցնէ։ Մնաս բարով, սիրելիդ իմ Ժէրար. երկրորդ անգամ Բարիզ գալուդ՝ իմ տունս իջիր։

Նուարթիէ դուրս ելաւ, բնաւ չկորսնցնելով սրտի այն հանդարտութիւնը զոր պահած էր դժնդակ խօսակցութեան միջոցին։

Վիլֆոր, տժգունած ու շփոթած, իսկոյն պատուհանը վազեց, վարագոյրը կէս մը բացաւ, և տեսաւ որ հայրը հանդարտ և անփոյթ կերպով կ'անցնէր երկու կամ երեք չարաչուք մարդոց մէջէն, որոնք փողոցներուն անկիւնները դարանակալ գուցէ հոն կը սպասէին, սև կիսամօրուքով, կապոյտ ըռտէնկօթով և լայնեզր փեղոյրով մարդը ձերբակալելու համար։

Վիլֆոր ոտքի վրայ և շնչհատ, հոդ կեցաւ մինչև որ

հայրը Պըսիի քառուղիին անկիւնը աներեւոյթ եղաւ։ Յետոյ հօրը ձգած բաներուն վրայ վազեց իսկոյն. նախ փողկապը և և կապոյտ րըտէնկօթը պայուսակին խորը պահեց, փեղոյրը պլորելով՝ պահարանի մը տակ խոթեց, եղէգէ գաւազանը երեք կտոր ըրաւ ու կրակին մէջ նետեց, ճամբորդութեան գլխարկը գլուխը դրաւ, իր սենեկապանը կանչեց, խոժոռ նայուածքով մը արգիլեց անոր խել մը հարցումները, պանդոկապետին հաշիւը տալով՝ կառքին մէջ նետուեցաւ, որ իրեն կը սպասէր, Լիոն հասնելուն, իմացաւ որ Պոնաբարդ նոր հասած է Կրընօպլ, և ճամբուն վրայ տիրող յուզումը տեսնելով, Մարսիլիա հասաւ, երկչոտ անձկութեամբ տագորուած, որուն կը մատնուի մարդ երբ փառասիրութիւն ունենայ և մեծ պատիւներու արժանանայ։

ԺԳ. ԳԼՈՒԽ

ՀԱՐԻՒՐ ՕՐԵՐ(*)

Պ. Նուարթիէ նախագուշակ մըն էր, իր ըսածին պէս շուտով կատարուեցան գործերը։ Ամէն մարդ գիտէ Նաբոլէոնին Էլպա կղզիէն դարձը այնպիսի արտակարգ և հրաշալի կերպով մը, որուն օրինակը չկայ անցեալին մէջ, և հաւանաբար ապագայ դարերու մէջ ալ նմանը չտեսնուի։

Լուի ԺԸ. տկարօրէն ջանաց ինքզինքը պաշտպանել այդ դժնդակ հարուածէն. այս դէպքին առթիւ մարդոց վրայ ունեցած փոքր վստահութիւնն ալ ի դերեւ կ'ելլէր։ Թագաւորութիւնը, կամ լաւ ևս է ըսել, ինքնակալութիւնը, զոր

(*) Նաբոլէոնի Էլպա կղզիէն դառնալէն յետոյ Ֆրանսայի մէջ վարած իշխանութիւնը որ հարիւր օր տեւած է, 1815 մարտ 20էն մինչեւ յունիս 28: Ծ. Թ.

Լուի ԺԸ. վերականգնած էր, իր անհաստատ հիման վրայ սարսեցաւ, և կայսեր միակ շարժումը կործանեց այդ շինութիւնը, որ խառնուրդ մըն էր հին նախապաշարումներու և նոր գաղափարներու։

Ուստի Վիլֆորին շահածը Թագաւորին երախտագիտութիւնն էր միայն, որ այդ միջոցին ոչ միայն անօգուտ այլ և վտանգաւոր էր. խոհեմութեամբ՝ Պատուոյ-Լէգէոնի խաչը մարդու չցուցուց, թէեւ Պ. Պլաքա, Թագաւորին հրամանին համեմատ՝ այդ շքանշանին հրովարտակը փութով ղրկած էր։

Նաբոլէոն անշուշտ պաշտօնանկ պիտի ընէր Վիլֆորը, եթէ Նուարթիէ չպաշտպանէր զայն, որովհետեւ Նուարթիէ իր ըրած ծառայութեանց և դիմագրաւած մեծ վտանգներուն համար Հարիւրօրեայ իշխանութեան պալատին մէջ ամենազօր դարձած էր։ Ուստի, իր խոստումին համաձայն, 1793 թուականի Ժիրոնտէնը և 1806ին ծերակուտականը պաշտպանեց իր որդին, որուն պաշտպանութիւնը վայելած էր օր մը առաջ։

Այդ կարճատեւ կայսրութեան ժամանակ, որուն կրկին կործանումը շատ դիւրին էր գուշակել, Վիլֆոր իր բոլոր կարողութեամբը ջանաց խեղդել այն գաղտնիքը, զոր Տանթէս ամէնուն կրնար յայտնել։

Միայն ընդհանուր դատախազը պաշտօնանկ եղաւ, սա կասկածով թէ Պօնաբարդի համակիր չէ։

Սակայն հազիւ թէ կայսրութեան զօրութիւնը հաստատուեցաւ, այսինքն հազիւ թէ կայսրը Թիւիլըրիի պալատը մտաւ, ուսկից Լուի ԺԸ. դեռ նոր փախած էր, և սկսաւ անթիւ ու խառորնակ հրամաններ հանել նոյն իսկ աշխատութեան դահլիճին մէջէն, որուն ընկուզենիէ սեղանին վրայ Լուի ԺԸ.ի քթախոտին տուփը դեռ կեցած էր բաց ու կէս լեցուն, Մարսիլիոյ մէջ քաղաքային պատերազմի հրդեհը սկսած էր բռնկիլ, որուն առաջքը միշտ դժուարութեամբ առնուած է Ֆրանսայի հարաւային կողմը։ Քիչ մնաց որ վրէժխնդիր մարդիկ աղմուկ հանէին. իրենց տուներուն մէջ պաշարեցին արքայականները, և դուրս ելլելու համարձակողները հրապարակային նախատինքներու կ'ենթարկուէին։

Բնականաբար, Պ. Մորէլ իսկ, որուն ժողովրդական կուսակցութեան պատկանիլը յայտնած ենք, ո՛չ թէ ամենակարող եղաւ (որովհետեւ այդ նաւատէրը յամր ու ժրաջան աշխատութեամբ սակաւ հարստացած մարդոց պէս խոհեմ ու քիչ մը վախկոտ էր) այլ եռանդոտ Պոնաբարդեաններէն աւելի չափաւոր ու պարկեշտ էր, բայց կարող էր ձայնը բարձրացնելու՝ իր բողոքը լսել տալու համար. այդ բողոքը, ինչպէս դիւրին է հասկնալ, Դանթէսի համար էր:

Վիլֆոր իր պաշտօնին վրայ մնաց, թէեւ իր պետը իշխանութենէ ինկած էր. ամուսնութիւնը որոշուած ըլլալով, բարեյաջող ժամանակի յետաձգուեցաւ: Եթէ կայսրը իր իշխանութեանը մէջ հաստատ մնար, այն ատեն պէտք էր ուրիշին հետ ամուսնանար Ժէրար. հայրը յանձնառու կ'ըլլար գտնելու: Իսկ եթէ Լուի ԺԸ. նորէն Ֆրանսայի թագաւորութիւնը ձեռք բերէր, Պ. Սէն-Մէրանին ու Վիլֆորի ազդեցութիւնը պիտի աւելնար, աւելի քան երբեք պատշաճ դարձնելով այդ ամուսնութիւնը:

Ուստի Վիլֆոր այն միջոցին Մարսիլիայի առաջին դատաւորն էր, երբ առտու մը իր դուռը բացուեցաւ, և Պ. Մորէլի գալուստը ծանուցին:

Վիլֆորի տեղ ուրիշ մը ըլլար, թերեւս նաւատէրը փութար դիմաւորել և այդպէս տկարութիւնը մատնէր. սակայն Վիլֆոր բանիմաց մարդ մըն էր. թէեւ փորձառութիւն չունէր, բայց գոնէ բնազդումով ամէն բան կը հասկնար: Ուստի Մորէլը նախասենեակին մէջ սպասցնել տուաւ, ինչպէս որ Վերահաստատութեան ժամանակ ընել տուած էր, թէեւ քովը մարդ չգտնուէր: Պատճառը սա էր որ այդպիսի պաշտօնատար մը սովորութիւն ունէր նախասենեակին մէջ սպասցնել տալու. գրեթէ քառորդ մը երկու երեք տարբեր ուղղութիւն ունեցող լրագիրներ աչքէ անցընելէ յետոյ, հրամայեց որ նաւատէրը ներս մտցնեն:

Պ. Մորէլ կը յուսար Վիլֆոր ընկճուած գտնել. բայց վեց շաբաթ առաջ եղածին պէս գտաւ, այսինքն հանդարտ,

անկուն ցուրտ քաղաքավարութեամբ տոգորուած, որ բարձրաստիճան մարդը ռամիկէն զատող ամէնէն անանցանելի պատնէշն է:

Վիլֆորի սենեակը մտած ատեն Պ. Մորէլ համոզուած էր որ դատաւորը զինքը տեսնելուն պէս՝ պիտի դողար. ընդհակառակը ինք դողահար ու յուզուած, դատաւորին առջեւ ելաւ, որ իրեն կը սպասէր՝ արմուկը գրասեղանին վրայ և կզակը ձեռքին մէջ կռթնցուցած:

Դրան սեմին վրայ կանգ առաւ նաւատէրը: Վիլֆոր այնպէս կը նայէր անոր իբր թէ չէր ճանչնար: Վերջապէս քիչ մը քննելէն ու լուռ կենալէն յետոյ, երբ ազնիւ նաւատէրը ձեռքին մէջ կը դարձնէր գլխարկը, Վիլֆոր ըսաւ.

—Կարծեմ, Պ. Մորէլն էք:

—Այո՛, պարոն, ես եմ, պատասխանեց նաւատէրը:

—Մօտեցէ՛ք ուրեմն, շարունակեց դատաւորը և ըսէ՛ք ինծի թէ ինչ բանի կը պարտիմ ձեր պատուական այցելութիւնը:

—Չէ՞ք կռահեր, պարոն, հարցուց Մորէլ:

—Ո՛չ, բայց ատիկա չարգիլեր որ հաճոյակատար չըլլամ, եթէ ինէ կախում ունի գործը:

—Բոլորովին ձենէ, ըսաւ Մորէլ:

—Բացատրեցէք:

—Պարոն, շարունակեց նաւատէրը աստիճանաբար ինքնավստահ դառնալով, իր դատին արդարութեան և իր դիրքին վրայ ապահով, կը յիշէք որ վեհափառ Կայսեր Ֆրանսա մտնելուն լուրը առնուելէն քանի մը օր առաջ, ձեր ներողամտութիւնը խնդրելու եկած էի խեղճ երիտասարդի մը համար, որ նաւաստի և իմ նաւուս երկրորդ նաւապետն էր. ինչպէս կը յիշէք՝ այդ երիտասարդը Էլպա կղզին հետ յարաբերութիւններ ունենալուն համար ամբաստանուած էր, որոնք այն ատեն յանցանք կը սեպուէին, մինչ հիմա փառքի տիտղոսներ են: Դուք որ այն ատեն Լուի ԺԸ.ին կը ծառայէիք, այդ երիտասարդին չխնայեցիք, պարոն, ինչպէս որ ձեր պարտքն էր: Այսօր Նաբոլէոնին կը ծառայէք և պարտաւոր էք այդ երի-

տասարդը պաշտպանել, որ նոյնպէս ձեր պարտքն է։ Ուստի եկայ հարցնելու թէ ի՛նչ եղած է ան։

Վիլֆոր բռուն ճիգ մը ըրաւ ինքզինքը զսպելու, ու հարցուց.

—Ի՞նչ է այդ մարդուն անունը. բարեհաճեցէ՛ք անոր անունը ըսելու։

—Էտմոն Տանթէս։

Անշուշտ Վիլֆոր պիտի նախընտրէր մենամարտի մը մէջ իր հակառակորդին հրացանին բռնուիլ քսանըհինգ քայլ հեռուէն քան թէ երեսն ի վեր արտասանուած այդ անունը լսել. սակայն յօնքերը չպռստեց բնաւ, ու ինքնիրեն ըսաւ.

«Այս կերպով չեն կրնար զիս մեղադրել, որ այդ երիտասարդը անձնական շահու տեսակէտով բանտարկած ըլլամ։»

—Տանթէ՛ս, յարեց Վիլֆոր, Էտմոն Տանթէ՞ս ըսիք։

—Այո՛, պարոն։

Վիլֆոր մօտակայ խորշի մը վրայ դրուած մեծ տոմարը բացաւ, ցանկը աչքէ անցուց, յետոյ քանի մը թղթածրարներ նայեցաւ, և դէպ ի նաւատէրը դառնալով, առանց այլայլելու բնական կերպարանքով մը հարցուց.

—Ապահո՞վ էք որ չէք սխալիր, պարոն։

Եթէ Մորէլ աւելի նրբամիտ կամ բանիմաց ըլլար, անշուշտ իրեն տարօրինակ պիտի թուէր որ ընդհանուր դատախազը կը բարեհաճէր պատասխանել իր ձեռնհասութենէն դուրս եղող նիւթերու մասին. մտալի հարցնելու էր թէ ինչո՞ւ Վիլֆոր կալանաւորներու համարակալներուն, բանտի կառավարիչներուն, կամ նահանգապետին չէր ղրկէր զինքը։

Բայց Մորէլ ի զուր կը ջանար երկիւղ գտնել Վիլֆորի սրտին մէջ. անոր հեզութեան և բարեսրտութեանը կը վերագրէր պատասխան տալ։ Վիլֆոր նպատակին հասած էր։

—Ո՛չ, պարոն, ըսաւ Մորէլ, չեմ սխալիր. մանաւանդ որ տասը տարիէ ի վեր այդ խեղճ տղան կը ճանչնամ, և չորս տարիէ ի վեր իմ քովս կը ծառայէ։ Կը յիշէ՞ք, վեց շաբաթ առաջ եկած էի ձեզի աղաչելու որ ներողամիտ գտնուիք,

ինչպէս այսօր ալ եկայ ձեզ աղաչելու որ արդար ըլլաք խեղճ երիտասարդին նկատմամբ. այն ատեն ինծի հետ լաւ չվարուեցաք, և դժգոհ մարդու մը պատասխանը տուիք. պատճառը սա էր որ արքայականները այն ատեն Պոնաբարդեաններուն դէմ խստութիւն ի գործ կը դնէին։

—Պարոն, պատասխանեց Վիլֆոր, իր սովորական պատրաստամտութեամբ և պաղարիւնութեամբ, ես արքայական էի այն ատեն, որովհետև Պուրպօնները ոչ միայն գահին օրինաւոր ժառանգները, այլ և ազգին ընտրեալները կը կարծէի, բայց Նաբոլէոնի այս հրաշալի դարձը ինծի հասկցուց որ սխալեր եմ. Նաբոլէոնի հանճարը յաղթական հանդիսացաւ. օրինաւոր թագաւորը ազգին սիրելի եղած թագաւորն է։

—Ես ալ այդ կարծիքէն եմ, գոչեց Մորէլ, իր խորին պարզամտութեամբը։ Այդ խօսքերը կը հրճուեցնեն զիս, յոյս ներշնչելով որ Էտմոնի համար բարեգուշակ պիտի ըլլայ։

—Սպասեցէ՛ք ուրեմն, յարեց Վիլֆոր ուրիշ տոմարի մը թուղթերը դարձնելով, ահա գտայ. նաւաստի մըն է, այնպէս չէ՞, որ Գաթալանցի աղջկան մը հետ ամուսնանալու վրայ էր։ Ո՛հ, այո՛, այո՛, հիմա կը յիշեմ. անոր գործը շատ ծանր էր, պարոն։

—Ի՞նչպէս։

—Գիտէք որ իմ կողմէս հարցաքննուելէ յետոյ դատական պաշտօնատան բանտը տարուեցաւ։

—Այո՛, բայց ե՞տքը։

—Ետքը իմ տեղեկագիրս Բարիզ ղրկեցի անոր վրայ գտնուած թուղթերով։ Իմ պարտքս էր այդպէս ընել. ուրիշ ի՞նչ կրնայի ընել... բանտարկութենէն ութ օր ետքը կալանաւորը ուրիշ տեղ ղրկուեցաւ։

—Բայց ի՞նչ ըրին խեղճ տղան, գոչեց Մորէլ։

—Ո՛հ, անհո՛գ եղիք. կամ Ֆընըսթրէլ, կամ Բինէրոլ և կամ Սէն Մարկրիթ կղզիները տարուած պիտի ըլլայ. ինչ որ հայրենիքէն հեռացուած կը նշանակէ պաշտօնական լեզուով. բայց պիտի տեսնէք որ օրին մէկը ձեր նաւուն հրամանատարութիւնը վերստանձնած է ան։

—Ե՛րբ կ'ուզէ թող գայ, այդ տեղը իրեն համար պիտի պահեմ։ Բայց ի՛նչ պատճառաւ մինչեւ հիմա չդարձաւ։ Կը կարծեմ թէ Պոնաբարդեան դատաւորներուն առաջին ջանքը պէտք էր ըլլալ արքայական դատաւորներուն հրամանով բանտարկուածները ազատ արձակել։

—Ցանդուգն ամբաստանութիւն մի ընէք, սիրելի Պ. Մորէլ, պատասխանեց Վիլֆոր, պէտք է ամէն բանի մէջ օրինաւոր կերպով ընթանալ։ Բանտարկութեան հրամանը բարձրագոյն տեղէ եկաւ, ուստի պէտք է որ ազատութեան հրամանն ալ բարձրագոյն տեղէ գայ։ Արդ՝ Նաբոլէոնի Փրանսա մտնելը տասնըհինգ օր չեղաւ դեռ. արձակման հրամանագիրները հազիւ ղրկուած կրնան ըլլալ։

—Բայց, հարցուց Մորէլ, կարելի չէ՞ դատական ձեւակերպութիւնները փութացնել։ Հիմա որ մենք յաղթող ենք, ես ազդեցիկ բարեկամներ ունիմ, որոնց միջոցաւ կրնամ արգելաբարձումի վճիռը ձեռք բերել։

—Բանտարկութեան վճիռ չկայ։

—Բանտի արձանագրութեան դիմելո՞ւ է։

—Քաղաքական յանցաւորներու համար բանտային արձանագրութիւն չկայ. շատ անգամ կառավարութիւնները պէտք կ'ունենան մարդ մը աներեւութացնելու, առանց հետքը յայտնի ըլլալու։ Բանտային արձանագրութիւնները պատճառ կ'ըլլան փնտռտուքներու։

—Պուրպոններուն օրով գուցէ այդպէս էր, բայց հիմա...։

—Ամէն ատեն այսպէս է, սիրելի Պ. Մորէլ, կառավարութիւնները իրարու կը յաջորդեն և իրարու կը նմանին. կառափնատը, որ Լուի ԺԴ.ի օրով հնարուած էր, Պասթիյլի մօտ պիտի կանգնի նորէն։ Կայսրը բանտերուն կանոնաւորութեանը համար միշտ մեծ թագաւորէն աւելի խստութիւն ցոյց տուած է և անհամար է բանտարկեալներուն թիւը, որոնց հետքը անգամ չտեսնուիր արձանագրութեանց մէջ։

Այսչափ բարեյօժարութիւն ամէն կասկած կրնար փարատել, ու Մորէլ վստահ էր դատաւորին վրայ։

—Բայց վերջապէս, Պ. Վիլֆոր, ի՛նչ խորհուրդ կուտաք ինծի որպէսզի Տանթէսի ժամ առաջ դառնալուն ճարը գտնեմ։

—Միակ խորհուրդ կուտամ, պարոն, այն է դատական նախարարութեան աղերսագիր մը տալ։

—Ո՛հ, պարոն, աղերսագիրներուն ի՛նչ ըլլալը գիտենք. նախարարը օրը երկու հարիւրի չափ աղերսագիր կ'ընդունի, ու չորս հատը չի կարդար անոնց մէջէն։

—Այո՛, յարեց Վիլֆոր. բայց իմ առընթերագրութեամբս և իմ միջոցաւս ղրկուած աղերսագիրը կը կարդայ։

—Դուք յանձնառու կ'ըլլա՞ք իմ աղերսագիրս անոր ձեռքը հասցնելու։

—Մեծ հաճութեամբ։ Տանթէս կրնար այն ատեն յանցաւոր ըլլալ, բայց հիմա անմեղ է, և իմ պարտքս է ազատ արձակել տալ, ինչպէս բանտարկելն ալ իմ պարտքս եղած էր։

Այսպէս Վիլֆոր նուազ հաւանական քննութեան մը վտանգին առաջքը կ'առնէր, և այդպիսի քննութիւն մը կրնար իր կորստեանը պատճառ ըլլալ։

—Բայց ինչպէս կը գրուի նախարարի մը։

—Հոս նստեցէք, Պ. Մորէլ, ըսաւ Վիլֆոր իր տեղը նաւատէրին թողլով. ես ըսեմ դուք գրեցէ՛ք, ժամանակ չկորսնցնենք, արդէն շատ ժամանակ կորսնցուցինք։

—Այո՛, պարոն, յիշենք թէ խեղճ տղան կը սպասէ, կը տառապի կամ յուսահատական դրութեան մէջ է գուցէ։

Վիլֆոր սարսռած, խորհելով որ բանտարկեալը լռութեան և խաւարին մէջ զինքը կ'անիծէր. բայց իր ճամբուն մէջ այնչափ առաջ գացած էր, որ անկարելի էր ետ դառնալ. Տանթէս իր փառասիրութեանը անիւներուն մէջ ջախջախուելու էր։

—Պատրաստ եմ, պարոն, ըսաւ նաւատէրը Վիլֆորի թիկնաթոռին վրայ նստելով, ձեռքը գրիչ մը։

Վիլֆոր աղերսագիր մը գրել տուաւ սքանչելի կերպով. Տանթէսի հայրենասիրութիւնը և Պոնաբարդեան դատին ի նպաստ ըրած ծառայութիւնները չափազանցեց. այդ աղերսագրին մէջ,

Տանթէս Նափոլէոնի դարձին աշխատող ամէնէն եռանդուն գործակալներէն մէկը եղած էր։ Յայտնի էր թէ նախարարը կարդալէ յետոյ այդ տեսակ աղերսագիր մը, անմիջապէս արդարութիւնը ի գործ պիտի դնէր, եթէ երբեք չէր եղած։

Աղերսագիրը լմննալէն յետոյ՝ Վիլֆոր բարձրաձայն կարդաց զայն։

—Շատ լաւ, ըսաւ Վիլֆոր, հիմա վստահ եղէք իմ վրաս։

—Աղերսագիրը շուտով պիտի ղրկէ՞ք, պարոն։

—Այսօր իսկ։

—Դուք ալ առընթերագրութի՞ւն մը պիտի ընէք։

—Իմ լաւագոյն առընթերագրութիւնս սա պիտի ըլլայ որ այս աղերսագրին մէջ գրուածներուն ստոյգ ըլլալը հաստատեմ։

Վիլֆոր նստաւ, և աղերսագրին մէկ անկիւնը գրեց վաւերացումը։

—Հիմա, պարոն, ի՞նչ ընելու է, հարցուց Մորէլ։

—Պէտք է սպասել, ամէն բան կ'երաշխաւորեմ։

Այդ ապահովութիւնը յոյս ներշնչեց Մորէլի. Վիլֆորէն մեծ գոհութեամբ զատուելով, գնաց Տանթէսի հօրը իմացուց որ քիչ ատենէն որդին պիտի տեսնէր։

Իսկ Վիլֆոր, փոխանակ Բարիզ ղրկելու այդ աղերսագիրը, իր քով պահեց թանկագին բանի մը պէս. ան ներկային մէջ Տանթէսը կրնար ազատել, բայց ապագային մէջ խիստ վտանգաւոր պիտի ըլլար, եթէ թագաւորութիւնը նորէն հաստատուէր, ինչպէս Եւրոպայի կացութիւնը և դէպքերուն դարձուածքը ենթադրել կուտային։

Ուստի Տանթէս բանտարկեալ մնաց։ Իր զնտանին խորութեանց մէջ, Լուի ԺԸ.ին գահընկէցութեան սոսկալի լուրը և կայսրութեան ա՛լ աւելի ահագնադղորդ կործանումը չէր լսած։

Բայց ինքը Վիլֆոր ամէն բանի հետևած էր աչալրջօրէն և ամէն ինչ ուշադրութեամբ մտիկ ըրած էր։ Կայսրութեան կարճատեւ շրջանին, զոր Հարիւր օրեր անուանեցին, երկիցս Մորէլ դիմում ըրած էր, միշտ Տանթէսի ազատութիւնը պահանջելով, և երկու անգամուն ալ Վիլֆոր խոստումներով և

ակնկալութիւններով հանդարտեցուցած էր անոր սիրտը։ Վերջապէս Ուաթէրլօյի պատերազմէն յետոյ, Մորէլ Վիլֆորի տունը չերեւցաւ այլ ևս։ Նաւատէրը մարդկօրէն բոլոր հնարաւոր եղած միջոցները ի գործ դրած էր երիտասարդ բարեկամին համար. երկրորդ վերահաստատութեան ատեն նոր փորձեր ընելը անօգուտ կերպով ինքզինքը վտանգի մէջ ձգել կը նշանակէր։

Լուի ԺԸ. նորէն գահ բարձրացաւ. Վիլֆոր, որուն խղճի խայթ պատճառող յիշատակներ Մարսիլիայի մէջ շատ կային, Թուլուզի ընդհանուր դատախազութեան պաշտօնը թափուր մնացած ըլլալուն՝ խնդրեց և ձեռք բերաւ։ Նոր պաշտօնավայրին մէջ հաստատուելէն տասնըհինգ օր ետքը Օր. Սէն-Մէրանի հետ պսակուեցաւ, որուն հայրը առաջուընէ աւելի լաւ յարաբերութիւն ունէր արքունիքին հետ։

Ահա՛ ինչպէս Տանթէս այդ Հարիւրօրեայ կայսրութեան ատեն և Ուաթէրլօյի պատերազմէն յետոյ ծակը մնաց, մարդոցմէ մոռցուած, թէև Աստուած չէր մոռցած զինքը։

Տանկլար, Նափոլէոնի Ֆրանսա վերադառնալը տեսնելով, հասկցաւ թէ Տանթէս ինչ հարուածի ենթարկուած էր։ Ըրած մատնութիւնը նպատակին հասած էր ճշդիւ. բոլոր այն մարդոց պէս, որոնք ոճրի մասին որոշ ընդունակութիւն մը և կեանքի մէջ միջին իմացականութիւն մը ունին, Նախախնամութեան վճիռ յորջորջեց այդ կարգ զուգադիպութիւնը։

Բայց երբ Նափոլէոն Բարիզ դարձաւ, և նորէն իր խրոխտ և զօրաւոր ձայնը հնչեցուց, Տանկլար վախցաւ. ամէն վայրկեան կը սպասէր Տանթէսի երեւումին. իրեն այնպէս կը թուէր որ ամէն բան իմանալով կուգար ան, սպառնալից ու վրէժխնդիր։ Ուստի իր նաւային պաշտօնը ձգելու փափաք յայտնեց Պ. Մորէլին, որ Սպանիացի վաճառականի մը քով գրագրութեան դրաւ իր յանձնարարութեամբ, մարտ ամսոյն վերջերը, այսինքն Նափոլէոնին Թիւիլըրի մտնելէն տասը կամ տասներկու օր ետքը։ Ուստի Մատրիտ գնաց, և անկէ ետքը անոր վրայ բան մը չլսուեցաւ։

Իսկ Ֆէռնան բան մը չէր իմացած։ Տանթէս բացակայ էր,

և իր ուզածն ալ այդ էր։ Թէ ի՛նչ եղած էր ան, ոչ փնտռեց և ոչ ալ հարցուց։ Միայն անոր բացակայութեան ատեն ճարտարօրէն խաբեց Մէրսէտէսը՝ իր նշանածի բացակայութեան շարժառիթներու մասին. գաղթումի և առևանգումի վրայ կը խորհէր։ Մերթ կեանքի տխուր ժամերուն մէջ, Ֆարօ հրուանդանին վրայ կը նստէր, ուսկից թէ՛ Մարսիլիա և թէ Քաթալան գիւղը կը տեսնէր. գիշակեր թռչունի մը պէս տրտում և անշարժ՝ կը դիտէր հեռուն, սպասելով որ երկու ճամբաներէն մէկէն դառնար գեղանի երիտասարդը, համարձակ քալուածքով և բարձրագլուխ։ Տանթէս սոսկալի վրէժ մը լուծելու պիտի գար։ Այն ատեն Ֆէրնան միտքը դրած էր Տանթէսի գլուխը հրացանով մը ջախջախել, ու յետոյ ինքզինքը մեռցնել։ Բայց Ֆէրնան կը խաբուէր. ինքը միշտ կը յուսար, և յուսացող մարդը անձնասպան չըլլար։

Այդ միջոցին. այնքան ցաւագին հետևանքներու մատնուած, կայսրը զօրքերու վերջին կարգն ալ կանչեց, և անոր դղրդիչ ձայնովը տէրութեան մէջ մնացած բոլոր զէնք կրելու կարող մարդիկ Ֆրանսայէն դուրս արշաւեցին։

Ֆէրնան ալ անոնց պէս գնաց իր խրճիթէն և Մէրսէտէսէն զատուելով. սակայն մռայլ և սոսկալի մտածում մը կը տանջէր միտքը, թէ մի գուցէ ինք երթալէն յետոյ՝ իր նախանձորդը դառնար և սիրած աղջկան հետ ամուսնանար։

Եթէ երբեք Ֆէրնան ինքզինքը մեռցնել ուզէր, Մէրսէտէսէն բաժնուած ատեն ընելու էր։

Գանք Մէրսէտէսին։ Անոր դժբախտութեանը համար Ֆէրնանին ցուցուցած կարեկցութիւնը, անոր ամէնէն փոքր բաղձանքները գուշակելու և կատարելու համար ունեցած հոգածութիւնները մեծ ազդեցութիւն ըրին անոր սրտին վրայ, ինչպէս ամէն անձնուիրութիւն։ Մէրսէտէս միշտ Ֆէրնանը բարեկամաբար սիրած էր. իր բարեկամութեան զգացումին վրայ աւելցաւ երախտագիտութիւնը։

—Եղբայրս միակ բարեկամս, ըսաւ Մէրսէտէս, զինուորական մախաղը Ֆէրնանին ուսերուն վրայ կապելով, նայէ՛ որ

քեզ չմեռցնեն, մինակ մի՛ թողուր զիս այս աշխարհիս մէջ, ուր ես կուլամ, և առանձին պիտի մնամ եթէ չվերադառնաս։

Ֆէրնան՝ մեկնած ատեն այս խօսքը լսելով, քիչ մը յոյս առաւ։ Եթէ Տանթէս չդառնար՝ Մէրսէտէս օրին մէկը իր կինը պիտի դառնար։

Մէրսէտէս մինակ մնաց այս մերկ երկրին վրայ, որ երբեք այդքան ամայի երևցած չէր, և միակ մխիթարութիւնն էր անհուն ծովուն հորիզոնը քննել։ Այն խելագար աղջկան պէս, որուն ցաւագին պատմութիւնը կ'ըսեն, արտասուաթոր աչքերով, անդադար Քաթալաններու գիւղին շուրջը կը թափառէր, երբեմն Հարաւային Ֆրանսայի տաք արևուն ներքև ոտքի վրայ անշարժ և արձանի պէս համր կենալով և դէպի Մարսիլիա նայելով, երբեմն ծովու եզերքը նստելով, ջուրերուն շշնջիւնը մտիկ կ'ընէր, որ իր տրտմութեան պէս յաւիտենական էր. ինքնիրեն կը հարցնէր թէ աւելի լաւ չէ՞ր ըներ ծովը նետուիլ՝ խեղդուելու և վիշտերուն վերջ տալու համար քան թէ անյոյս սպասելով թշուառութեամբ տանջուիլ։

Մէրսէտէս այդ որոշումը չգործադրեց, ո՛չ թէ քաջասրտութիւն չունենալուն, այլ հաւատքը օգնութեան հասաւ և անձնասպանութենէ ազատեց զինքը։

Քատրուս ալ Ֆէրնանի պէս զէնքի տակ կանչուեցաւ. միայն թէ, Քաթալանցիէն ութը տարեկան աւելի մեծ և կարգուած ըլլալուն՝ երկրորդ գունդին մէջ մտաւ և ծովեզերք ղրկուեցաւ։

Ծերունի Տանթէսը, որ միայն յոյսով կ'ապրէր, երբ կայսրը ինկաւ, այդ յոյսն ալ կորսնցուց։

Իր զաւկէն բաժնուելէն ճիշդ հինգ ամիս ետքը, գրեթէ անոր ձերբակալուած ժամուն Մէրսէտէսի բազուկներուն մէջ իր վերջին շունչը աւանդեց։

Պ. Մորէլ անոր յուղարկաւորութեան բոլոր ծախքը հոգաց, և ծերունիին հիւանդութեան ատեն ըրած փոքր պարտքերը վճարեց։

Մորէլի ըրածը բարերարութենէ աւելի բան մը, քաջու-

թիւն էր. Ֆրանսայի հարաւային կողմը կրակի մէջ էր, և Տանթէսի պէս վտանգաւոր Պոնաբարդեանի մը հօրը մահուան անկողնոյն մէջ իսկ օգնութիւն հասցնելը ծանր յանցանք մըն էր։

ԺԴ. ԳԼՈՒԽ

ԿԱՏԱՂԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ
ՈՒ
ԽԵԼԱԳԱՐ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ

Լուի ԺԸ.ի Ֆրանսա դառնալէն գրեթէ տարի մը ետքը, բանտերու ընդհանուր քննիչը այցելութեան եկաւ։

Տանթէս իր ստորերկրեայ բանտին մէջէն կը լսէր քննութեան բոլոր պատրաստութիւնները. վերը շատ աղմուկներ կ'ըլլային, բայց վարը անհնար էր լսել. սարդին ոստայն հիւսելը և ջուրի կաթիլին ժամը անգամ մը բանտի առաստաղէն գետինը իյնալը գիշերային լռութեան մէջ մտիկ ընելու վարժուած բանտարկեալին ականջը միայն կրնար լսել։

Խեղճը գուշակեց որ կենդանիներու աշխարհին մէջ անսովոր բան մը տեղի կ'ունենար. այնչափ երկար ատենէ ի վեր գերեզմանի մը մէջ կը բնակէր, որ իբր մեռեալ կրնար կարծել ինքզինքը։

Ստուգիւ քննիչը սենեակները, խուցերը և ստորերկրեայ բանտերը սկսաւ քննել մէկիկ մէկիկ։ Շատ մը կալանաւորներ հարցափորձ եղան, որոնք իրենց քաղցրութեամբը կամ յիմարութեամբը կարեկցութեան արժանի կը համարուէին. քննիչը անոնց հարցուց թէ ի՞նչպէս կը կերակրուէին և թէ խնդիրք մը ունէի՞ն ընելու։

Ամէնքը միաբերան ըսին թէ կերակուրնին զարշելի է, և միայն ազատութիւն կը խնդրեն։

Քննիչը հարցուց թէ ատկէ զատ ըսելիք մը չունէի՞ն։

Անոնք գլուխնին շարժեցին, ու չպատասխանեցին. բանտարկեալները ազատութենէ զատ ի՞նչ բարիք կրնային խնդրել։

Քննիչը ժպտելով դարձաւ ու կառավարչին ըսաւ.

—Չեմ գիտեր ինչո՞ւ համար այս անօգուտ այցելութիւնները ընել կուտան մեզի։ Ով որ բանտ մը տեսնէ՝ հարիւր հատ տեսածի չափ կ'ըլլայ. ով որ բանտարկեալի մը խօսիլը լսէ՝ հազար բանտարկեալներու խօսիլը լսած կ'ըլլայ. միշտ նոյնն է. «Կերակուրնիս գէշ է, անմեղ ենք։» Ասոնցմէ զատ ուրիշներ ալ կա՞ն։

—Այո՛, վտանգաւոր կամ խելագար բանտարկեալներ կան, որոնք զնտանները կը պահուին։

—Տեսնենք, ըսաւ քննիչը, բոլորովին տաղտկացած, գործերնիս մինչև վերջը կատարենք. ստորերկրեայ բանտերն ալ իջնենք։

—Սպասեցէ՛ք, ըսաւ կառավարիչը, թող երթան գոնէ երկու պահնորդ բերեն. բանտարկեալները շատ անգամ իրենց կեանքէն ձանձրացած ըլլալով, մահուան դատապարտուելու համար՝ յուսահատական արարքներ կր գործեն։ Մի՛ գուցէ այսպիսի յուսահատութեան մը զոհ ըլլաք։

—Ուրեմն պէտք եղած զգուշական միջոցները ի գործ դրէք, ըսաւ քննիչը։

Ուստի երկու զինուոր բերել տալու համար մարդ ղրկեցին, և սկսան սանդուխէն վար իջնել. օդը այնչափ խոնաւ, այնչափ ապականած և այնչափ բորբոսած էր որ թէ՛ աչքերու, թէ՛ քթի և թէ շնչառութեան վրայ գէշ ազդեցութիւն մը կ'ընէր։

—Ո՛հ, ըսաւ քննիչը, սանդուխին մէջտեղը կենալով, ո՞վ կրնայ աստանկ տեղ մը բնակիլ։

—Խիստ վտանգաւոր դաւադիրներէն մէկը, որ մեզի մասնաւորաբար յանձնարարուած է իբրև ամէն բան ընելու կարող անձ մը։

—Մինա՞կ է։

—Անշուշտ։

—Որչա՞փ ատենէ ի վեր հոս կը գտնուի։

—Գրեթէ տարիէ մը ի վեր։

—Իր գալէն ի վեր զնտա՞նը դրուեցաւ։

—Ո՛չ, պարոն. իրեն կերակուր տանող զինապանը մեռցնել ուզելէն յետոյ։

—Զինապանը մեռցնե՞լ ուզեց։

—Այո՛, պարոն, ահա ջահը բռնողն է։ Այնպէս չէ՞ Անդուան, հարցուց կառավարիչը։

—Ստուգիւ, զիս սպաննել ուզեց, պատասխանեց բանտապահը։

—Ի՞նչ կ'ըսես։ Ուրեմն այդ մարդը խելագար է։

—Խելագարէն աւելի գէշ, ըսաւ բանտապահը. սատանայ մըն է։

—Կ'ուզէ՞ք որ գանգատ ընենք անոր դէմ, հարցուց քննիչը։

—Անօգուտ բան է, պարոն. այս բանտին մէջ բաւական պատժուած է. ասկէ զատ՝ արդէն խելքը կորսնցնելու վրայ է. մեր զննութեանց և փորձառութեանց համաձայն, տարի մը չանցած բոլորովին խելագար պիտի ըլլայ։

—Արդարեւ, աւելի լաւ կ'ըլլայ, ըսաւ քննիչը, եթէ բոլորովին խենթենայ այնքան չպիտի տառապի։

Այդ խօսքէն կը տեսնուէր որ քննիչը շատ գթասիրտ մարդ մըն էր, և իր կատարած մարդասիրական պաշտօնին արժանի։

—Իրաւունք ունիք, պարոն, ըսաւ կառավարիչը, և ձեր խորհրդածութիւնը կ'ապացուցանէ որ այս գործերուն վրայ խորունկ ուսումնասիրութիւններ կատարած էք։ Ասոր նման ուրիշ ստորերկրեայ բանտի մը մէջ որ ասկէ քանի քայլ չափ հեռու է և ուրիշ սանդուխով մը կ'իջնուի, ծերունի աբբայ մը կայ. նախկին կուսակցապետ Իտալիոյ մէջ, 1811էն ի վեր հոս է. 1813ին վերջերը խելագարելով՝ այն ատենէն ի վեր ֆիզիքապէս անճանաչելի դարձած է։ Առաջ կուլար՝ հիմա կը ծիծաղի, առաջ նիհարցած էր՝ հիմա գիրցած է։ Կ'ուզէ՞ք առաջ

զայն տեսնել. անոր յիմարութիւնը զուարճալի է, և բնաւ չի տրտմեցներ ձեզ։

—Երկուքն ալ յաջորդաբար կը տեսնեմ, պատասխանեց քննիչը, պէտք է խղճի մտօք նկատի առնել անոնց վիճակը։

Առաջին քննութիւնն էր որ քննիչը կը կատարէր, և կ'ուզէր որ դատական իշխանութիւնը լաւ գաղափար մը կազմէ իր մասին։

—Նախ հոս մտնենք, ըսաւ քննիչը։

—Յօժարակամ, պատասխանեց կառավարիչը և անմիջապէս նշան մը ըրաւ որ դուռը բանայ բանտապահը։

Միաձոյլ նիգերուն և դրան ժանգոտ ծխնիներուն ճռնչիւնը լսելուն պէս՝ Տանթէս գլուխը վեր առաւ, որ մթին բանտին մէկ անկիւնը կծկտած՝ վանդակապատ նեղ լուսամուտի մը մէջէն ներս թափանցող լոյսին բարակ ճառագայթը կը վայելէր անճառ երջանկութեամբ։

Երկու մարդոց բռնած ջահերուն լոյսովը Տանթէս անծանօթ մարդ մը տեսաւ, որ երկու պահապան զինուորներու ընկերակցութեամբ ներս կը մտնէր և կառավարիչը փեղոյրը ձեռքը բռնած հետը կը խօսէր։ Այդ մարդուն ի՛նչ բանի համար գալը իմանալով՝ կարծեց թէ բարձրագոյն իշխանութենէ օգնութիւն խնդրելու առիթը գտած էր, ուստի ձեռքը միացուցած՝ խոյացաւ։

Զինուորները իսկոյն իրենց հրացաններուն սուինները անոր ուղղեցին խաչաձեւ, կարծելով թէ բանտարկեալը գէշ դիտաւորութեամբ կը վազէր քննիչին վրայ։

Քննիչն իսկ վախնալով քայլ մը ետ քաշուեցաւ։

Տանթէս տեսաւ որ վտանգաւոր մարդ մը կը նկատէին զինքը։

Ուստի մարդկային սրտին պարունակած բոլոր քաղցրութիւնը և հեզութիւնը իր նայուածքին մէջ ամփոփեց և այցելուին սիրտը շարժելու համար՝ երկիւղած ճարտասանութեամբ միտքը բացատրեց, այնպէս որ հանդիսականները զարմացան։

Քննիչը Տանթէսի խօսքը ծայրէ ծայր մտիկ ըրաւ. յետոյ դէպ ի կառավարիչը դառնալով, մեղմաձայն ըսաւ.

—Բարեպաշտ դառնալու վրայ է, արդէն աւելի հեզութիւն կը ցուցնէ։ Տեսէ՛ք վախը ինչպէս ազդեցութիւն ըրաւ, ու սուիններէն ետ քաշուեցաւ. խոլագարը բանէ մը ետ չը քաշուիր բնաւ. այդ մասին շատ հետաքրքրական քննութիւններ ըրած եմ Շարանթօնի յիմարանոցը այցելած միջոցիս։ Յետոյ դէպի բանտարկեալը դառնալով՝ ըսաւ.

—Կարճ խօսքով, ի՞նչ խնդիրք ունիս։

—Կը հարցնեմ թէ ի՞նչ ոճիր գործած եմ, կը խնդրեմ որ զիս քննելու համար դատաւորներ նշանակուին, կը խնդրեմ որ դատս տեսնուի, կը խնդրեմ վերջապէս որ զիս հրացանով մեռցնեն՝ եթէ յանցաւոր եմ, իսկ եթէ անմեղ եմ, ազատ արձակեն զիս։

—Ձեր կերակուրներէն գո՞հ էք, հարցուց քննիչը։

—Այո՛, այնպէս կը կարծեմ, բայց լաւ չեմ գիտեր։ Մեծ կարեւորութիւն չունի ատ. ինչ որ կարեւոր է ինծի համար, որ խեղճ բանտարկեալ մըն եմ, ինչպէս նաեւ տէրութեան արդարադատ պաշտօնեաներուն, նոյն իսկ թագաւորին համար, որ մեր վրայ կը տիրէ, անմեղ մը անարգ մահուան մը զոհ չերթայ, և բանտին մէջ չմեռնի՝ իր դահիճները անիծելով։

—Այսօր շատ հեզ կ'երեւիք, ըսաւ կառավարիչը, միշտ այդպէս չէիք։ Ուրիշ լեզու կը գործածէիք, սիրելի բարեկամ, այն օրը որ ձեր պահապանը սպաննելու ելաք։

—Ստոյգ է, պարոն, ըսաւ Տանթէս, ներողութիւն կը խնդրեմ անկէ որ ինծի հետ միշտ քաղցրութեամբ վարուեցաւ։ Բայց ի՞նչ ընեմ, խենթ էի, կատղած էի այն ատեն։

—Հիմա չէ՞ք։

—Ո՛չ, ինչու որ բանտարկութիւնը ընկճեց, ուժաթափ ըրաւ և փճացուց զիս...։ Որովհետեւ այսչափ ատենէ ի վեր հոս եմ...։

—Որչա՞փ ատենէ ի վեր բանտարկուած էք, հարցուց քննիչը։

—1815ի փետրուար 28ին կէսօրէն երկու ժամ ետքը։

Քննիչը հաշիւ ըրաւ։

—Այսօր 1816ի յուլիս 30ն ենք. ուրեմն ի՞նչ կ'ըսէք. տասնըեօթը ամիս է որ բանտարկուած էք դեռ։

—Դեռ միայն տասնըեօ՛թը ամիս... յարեց Տանթէս։ Ա՜հ, պարոն, չէք գիտեր ի՞նչ ըսել է տասնըեօթը ամիս բանտի մէջ կենալը. տասնըեօթը տարիներու, տասնըեօթը դարերու չափ է, մանաւանդ ինծի պէս մարդու մը համար, որ երջանկութեան հասնելու վրայ էի, ինծի պէս մարդու մը համար, որ սիրեցեալ աղջկան մը հետ ամուսնանալու վրայ էի, ինծի պէս մարդու մը համար, որ պատուաւոր կեանքի ճամբուն առջեւ բացուիլը կը տեսնէի, մինչ հիմա ամէն բանէ զրկուած եմ, ինծի պէս մարդու մը համար, որ ամենագեղեցիկ պայծառ օրուընէ յետոյ թանձր գիշերուան մէջ ինկայ, բախտիս կործանիլը տեսայ. չեմ գիտեր թէ սիրած կինս դեռ կը սիրէ՞ զիս, և թէ ծեր հայրս մեռա՞ծ է թէ կենդանի։ Տասնըեօթը ամիս բանտարկութիւնը այնպիսի մարդու մը համար որ ծովու բաց օդին, նաւաստիի անկախ կեանքին անջրպետին, անհունութեան և անսահմանութեան վարժուած է. պարոն, տասնըեօթը ամիս բանտարկութիւնը՝ մարդկային լեզուին ամէնէն անարգ անուններով որակուած ոճիրներն իսկ գործող մարդուն անգամ չի տրուիր։ Ուրեմն գո՛ւթ ունեցէք իմ վրաս, պարոն, եւ ոչ թէ մարդասիրութիւն այլ խստութի՛ւն ցուցուցէք. ոչ թէ շնորհ, այլ դատաստա՛ն ընել տուէք. դատաւորներ, պարոն, միայն դատաւորներ կը խնդրեմ երբ ամբաստանեալ մը դատաւորներ կ'ուզէ, այդ բանը չի զլացուիր անոր։

—Շատ լաւ, ըսաւ քննիչը, կը նայինք։

Ետքը դէպ ի կառավարիչը դառնալով՝

—Իրաւ որ այս խեղճ մարդը կը մեղքնամ, ըսաւ։ Երբ վեր ելլենք, ասոր բանտարկութեան արձանագրութիւնը ցուցուցէք ինծի։

—Անշուշտ, ըսաւ կառավարիչը, բայց կարծեմ թէ անոր դէմ սոսկալի ծանօթութիւններ պիտի գտնէք։

—Պարոն, շարունակեց Տանթէս, գիտեմ որ ձեր վճռով չէք կրնար հոսկէ հանել զիս, բայց կրնաք իմ խնդիրքս հաղորդել դատական իշխանութեան, կրնաք քննութիւն մը ընել տալ, կրնաք վերջապէս զիս դատարան հանել. իմ խնդրածս

դատաստան մըն է, որպէս զի գիտնամ թէ ինչ ոճիր գործած և ինչ պատիժի դատապարտուած եմ. անստուգութիւնը ամէնէն սոսկալի չարչարանքն է։

—Լուսաբանեցէ՛ք, ըսաւ քննիչը։

—Պարոն, ըսաւ Տանթէս, ձեր ձայնին շեշտէն կը հասկընամ որ սիրտերնիդ շարժած է, յո՛յս ներշնչեցէք ինծի։

—Չեմ կրնար այդ բանը ընել, պատասխանեց քննիչը, միայն կրնամ խօսք տալ ձեր դատական թուղթերը քննելու։

—Ո՛հ, ուրեմն ազատեցայ, ազատ եմ։

—Ո՞վ բանտարկել տուաւ քեզ, հարցուց քննիչը։

—Պ. Վիլֆորը, պատասխանեց Տանթէս։ Գտէ՛ք զայն ու տեսակցեցէք։

—Պ. Վիլֆոր մէկ տարիէ ի վեր Մարսիլիա չէ, այլ Թուլուզ կը գտնուի։

—Ա՛հ, ուրեմն չեմ զարմանար, մրմնջեց Տանթէս, իմ միակ պաշտպանս հեռացեր է։

—Պ. տը Վիլֆոր քեզի դէմ ատելութեան պատճառ մը ունէ՞ր, հարցուց քննիչը։

—Բնաւ, պարոն. ընդհակառակը բարեկամութիւն ցոյց տուած է ինծի։

—Ուրեմն կրնա՞մ վստահիլ անոր ձգած նօթերուն կամ ձեր մասին տալիք տեղեկութեան։

—Բոլորովին, պարոն։

—Շատ լաւ, համբերեցէ՛ք։

Տանթէս ծունկի եկաւ, ձեռքը դէպի երկինք բարձրացուց և ցած ձայնով աղօթք մը մրմնջեց, որուն մէջ Աստուծոյ կը յանձնէր այն մարդը, որ իր բանտը այցելած էր, ինչպէս Փրկիչը դժոխք կ'երթայ՝ հոգիները ազատելու համար։

Դուռը նորէն գոցուեցաւ. բայց քննիչին հետ եկած յոյսը Տանթէսի ստորերկրեայ բանտին մէջ մնաց։

—Կալանաւորներու արձանագրութի՞ւնը կ'ուզէք տեսնել թէ աբբային զնտանը այցելել, հարցուց կառավարիչը։

—Սա ստորերկրեայ բանտերուն այցելութիւնը շուտով

լմնցնենք, պատասխանեց քննիչը։ Եթէ վեր ելլեմ ու լոյսը տեսնեմ, դուցէ կրկին վար իջնելու և տխուր պաշտօնս շարունակելու քաջութիւն չունենամ։

—Ա՛հ, միւս բանտարկեալին չի նմանիր ասիկա. իր խենթութիւնը իր դրացիին բանականութեան չափ վշտագին չէ։

—Ի՞նչ է ասոր խենթութիւնը։

—Ո՛հ, արտակարգ խենթութիւն մը՝ անսահման գանձի մը տէր կը կարծէ ինքզինքը. բանտարկութեան առաջին տարին՝ կառավարութեան մէկ միլիոն կը խոստանար, եթէ կառավարութիւնը բարեհաճէր ազատ ձգել զինքը. երկրորդ տարին՝ երկու միլիոն. երրորդ տարին՝ երեք միլիոն և այսպէս միշտ կ'աւելցնէ։ Հիմա բանտարկութեան հինգերորդ տարիին մէջն է. անշուշտ ձեզի հետ գաղտուկ խօսելու հրաման խնդրելով՝ հինգ միլիոն պիտի նուիրէ։

—Ա՛հ, հետաքրքրաշարժ է, ըսաւ քննիչը. այդ միլիոնատէրին անունը ի՞նչ է։

—Աբբայ Ֆարիա։

—27րդ թիւն է, ըսաւ քննիչը, դրան վրայ այդ թուանշանը կարդալով։

—Հոս է. բացէք Անդուան։

—Դռնապանը բացաւ, և քննիչին հետաքրքիր նայուածքը դէպ ի խենդ աբբային զնտանին մէջ ուղղուեցաւ։

Ընդհանրապէս այդպէս կ'անուանէին այդ բանտարկեալը։

Սենեակին մէջտեղը, պատէն բրցուած գաճի կտորով մը հողին վրայ գծուած շրջանակի մը մէջ մարդ մը պառկած էր, որուն զգեստները այնպէս պատռուած էին, որ կարծես թէ մերկ էր։ Այս շրջանակին մէջ երկրաչափական խիստ յստակ գիծեր կը քաշէր. կ'երեւէր թէ այդ միջոցին իր խնդիրը լուծելով զբաղած էր, ինչպէս ատենօք Արքիմետէս զբաղած էր Մարկէլլոսի զինուորէն սպաննուած ատեն։ Ուստի տեղէն իսկ չշարժեցաւ՝ բանտին դրան բացուելուն ձայնը առնելով. այն ատեն միայն սթափելու պէս ըրաւ երբ ջահերուն լոյսը անսովոր պայծառութեամբ մը խոնաւ գետինը լուսաւորեց, որուն

վրայ կ'աշխատէր ինք։ Այն ատեն ետին դարձաւ և զարմանքով տեսաւ շատ մը մարդիկ, որոնք իր զնտանը եկած էին։

Իսկոյն աշխուժով ոտքի ելաւ, ողորմելի անկողնին ոտքի կողմը ձգուած ծածկոցը առաւ ու փաթթուեցաւ, որպէսզի օտարներու աչքին աւելի պատշաճ կերպարանքով երեւի։

—Ի՞նչ կը խնդրէք, հարցուց քննիչը, առանց փոխելու իր բանաձեւը։

—Ե՞ս, բան մը չեմ խնդրեր, պարոն, ըսաւ աբբան շուարուն կերպարանքով մը։

—Չէ՞ք հասկնար, յարեց քննիչը, ես կառավարութեան գործակալն եմ և պաշտօն ունիմ բանտերը իջնելու և բանտարկեալներուն բողոքը լսելու։

—Ո՛հ, ուրեմն, այդ ուրիշ խօսք, գոչեց աբբան աշխուժով, և կը յուսամ որ իրարու հետ պիտի համաձայնինք։

—Տեսէ՛ք, ըսաւ կամաց մը կառավարիչը, ձեզի ըսածիս պէս չը՞սկսիր։

—Պարո՛ն, շարունակեց բանտարկեալը, ես աբբայ Ֆարիան եմ, Հռոմ ծնած, քսան տարի Ռօսբիլիօզի կարտինալին քարտուղարը եղած եմ. 1811 տարւոյն սկիզբները բանտարկուեցայ, չեմ գիտեր ի՛նչ պատճառաւ. այն ատենէն ի վեր իմ ազատութիւնս կը պահանջեմ Իտալիոյ և Ֆրանսայի իշխանութիւններէն։

—Ինչո՞ւ համար Ֆրանսայի իշխանութենէն, հարցուց կառավարիչը։

—Անոր համար որ ես Բիօմպինօ ձերբակալուեցայ, և կարծեմ այդ քաղաքն ալ Միլանի և Ֆիօրէնցայի պէս ֆրանսական ո և է նահանգի մը գլխաւոր քաղաքը դարձած է։

Քննիչը և կառավարիչը իրարու երեսնայելով ծիծաղեցան։

—Սիրելիս, ըսաւ քննիչը, Իտալիոյ մասին ձեր լուրերը թարմ չեն։

—Այդ լուրերը 1811ինն են, երբ ես այս ստորերկրեայ բանտը բերուեցայ. և որովհետեւ վեհափառ կայսրը Աստուծոյ իրեն պարգեւած նորածին զաւակին համար Հռոմի թագաւո-

րութիւնը հաստատած էր, կարծեմ իր աշխարհակալութիւնը շարունակելով՝ Մաքիավէլի և Սեզար Պորճիայի երազն իրագործել կ'ուզէ, որ էր բոլոր Իտալիան մէկ թագաւորութիւն մը ընել։

—Պարոն, ըսաւ քննիչը, բարեբախտաբար Նախախնամութիւնը քիչ մը փոխեց այդ հսկայական ծրագիրը, որուն բաւական ջերմ կուսակից կ'երեւիք։

—Իտալիան զօրաւոր, անկախ, երջանիկ տէրութիւն մը դարձնելու միակ միջոցը ատ է, ըսաւ աբբան։

—Կարելի է, պատասխանեց քննիչը, բայց հոս եկած չեմ ձեզի հետ ճառախօսութիւն մը ընելու անդրալեռնական քաղաքականութեան վրայ, այլ ձեզի հարցնելու թէ բողոք մը ունի՞ք ձեր բնակութեան և կերակուրներու մասին։

—Կերակուրը միւս բոլոր բանտերուն մէջ եղածին պէս է, այսինքն՝ խիստ գէշ. իսկ բնակութիւնը, ինչպէս կը տեսնէք, խոնաւ, վատառողջ, բայց ստորերկրեայ բանտ ըլլալու համար բաւական վայելուչ է։ Հիմա թողունք ատիկա. կառավարութեան խիստ կարեւոր և ամենաշահեկան յայտնութիւններ պիտի ընեմ։

—Ահա սկսաւ, ըսաւ կամաց մը կառավարիչը քննիչին։

--Այդ պատճառաւ՝ ձեզ տեսնելուս համար այնքան երջանիկ եմ, շարունակեց աբբան, թէեւ խիստ կարեւոր հաշիւ մը ըրած միջոցիս չփոթեցիք զիս. որ եթէ յաջողելու ըլլայ, գուցէ Նեւտոնի մոլորակային դրութիւնը փոխէ։ Ձեզի հետ առանձին տեսակցութիւն մը կը թոյլատրէ՞ք։

—Տեսա՞ք, ձեզի ի՞նչ ըսի, յարեց կառավարիչը քննիչին։

—Դուք լաւ կը ճանչնաք ձեր մարդիկը, պատասխանեց քննիչը ծիծաղելով։ Յետոյ դէպ ի Ֆարիան դառնալով՝

—Պարոն, խնդրածնիդ անկարելի է։

—Սակայն, պարոն, եթէ կառավարութեան մեծ գումար մը, օրինակի համար հինգ միլիոն շահեցնելու ըլլամ...։

—Ո՛հ, ըսաւ քննիչը դէպ ի կառավարիչը դառնալով. այդ թիւը գուշակեցիք ստուգիւ։

—Հոգ չէ, կրկնեց աբբան, տեսնելով որ քննիչը հեռանալու շարժում մը կ'ընէր, պէտք չկայ առանձին մնալու. պարոն կառավարիչը կրնայ մեր խօսակցութեանը ներկայ գտնուիլ:

—Սիրելի պարոնս, ըսաւ կառավարիչը, դժբախտաբար ըսելիքնիդ արդէն գիտենք և բերնուց սորված ենք: Ձեր գանձերուն համար, այնպէս չէ՞:

Ֆարիա այդ հեգնող մարդուն նայեցաւ այնպիսի աչքերով, ուր անշահախնդիր դիտող մը անկասկած պիտի տեսնէր բանականութեան և ճշմարտութեան ցոլքը:

—Անտարակոյս, ըսաւ. ի՞նչ բանի վրայ պիտի խօսիմ, եթէ ոչ ատոր վրայ:

—Պ. քննիչ, շարունակեց կառավարիչը, այս պատմութիւնը կրնամ պատմել ձեզի, քանի որ չորս-հինգ տարի կայ որ ականջներս լեցուած են անով:

—Ատ կ'ապացուցանէ, Պ. կառավարիչ, ըսաւ աբբան, որ դուք Սուրբ-Գրքի մարդոց կը նմանիք, թէ Աչք ունին չեն տեսներ, ականջ ունին եւ չեն լսեր:

—Սիրելի պարոն, ըսաւ քննիչը, փա՛ռք Աստուծոյ, կառավարութիւնը հարուստ է, և քու դրամիդ պէտք չունի. ուստի պահէ՛ զայն, բանտէդ ելլելու տենդ ձեզի պէտք կ'ըլլայ:

Աբբան աչքերը բացաւ և քննիչին ձեռքը բռնելով ըսաւ.

—Բայց եթէ բանտէն չհանեն զիս, եթէ արդարութեան հակառակ՝ այս ստորերկրեայ բանտին մէջ պահեն զիս, եթէ հոս մեռնիմ առանց դրամս մէկու մը կտակելու, այս գանձը չը՞ պիտի կորսուի: Աւելի աղէկ չէ՞ որ կառավարութիւնը օգտուի, ինչպէս նաև ե՛ս: Մինչեւ վեց միլիոն կուտամ, պարոն. այդ վեց միլիոնը կուտամ ու մնացածովը գոհ կ'ըլլամ, եթէ երբեք ազատ ձգեն զիս:

—Իրաւ որ, ըսաւ քննիչը մեղմաձայն, եթէ այս մարդուն խելագար ըլլալը չգիտնայ մէկը, և այսպէս համոզկեր ձայնով խօսիլը լսէ՝ խենթ չպիտի կարծէ:

—Ես խելագար չեմ, պարոն. և ճշմարտութիւնն է որ կը

խօսիմ, յարեց Ֆարիա, որ բանտարկեալներուն յատուկ եղած սուր լսողութեամբը, քննիչին բոլոր խօսքերը լսած էր: Այդ գանձը ստուգիւ կայ, և կ'առաջարկեմ ձեզի հետ պայմանագրութիւն մը կնքելու, որով ցուցուցած տեղս կը տանիք զիս. հոն ձեր աչքերուն առջեւ գետինը փորել կուտանք, և եթէ սուտ խօսիմ, և բան մը չգտնէք, եթէ ըսածնուդ պէս խելագար ելլեմ, դարձեալ այս բանտը կրնաք բերել ձգել, ուր յաւիտեան կը մնամ և կը մեռնիմ, առանց ձենէ կամ ուրիշէ բան մը խնդրելու:

Կառավարիչը սկսաւ խնդալ ու հարցուց.

—Գանձին տեղը շատ հեռո՞ւ է:

—Ասկէ գրեթէ հարիւր մղոն հեռու է, ըսաւ Ֆարիա:

—Գէշ գաղափար չէ ատ, ըսաւ կառավարիչը. եթէ բոլոր բանտարկեալները ուզէին զբօսնուլ՝ իրենց պահապանները հարիւր մղոն հեռու տեղ պտըտցնելով, և եթէ պահապանները այդպիսի ճամբորդութիւն մը ընելու հաւանէին, բանտարկեալներուն համար պատուական միջոց մը պիտի ըլլար ատ, յարմար առթիւ կծիկը դնելու. ատանկ ուղեւորութեան մը մէջ ալ անշուշտ առիթը չի պակսիր:

—Ծանօթ միջոց մըն է, ըսաւ քննիչը, և պարոնը անոր հեղինակը ըլլալու իսկ արժանիքը չունի:

Յետոյ Ֆարիային դառնալով՝ ըսաւ.

—Ձեզի հարցուցի թէ կերակուրներէն գո՞հ էք:

—Պարոն, պատասխանեց Ֆարիա, երդում ըրէք Քրիստոսի վրայ, որ պիտի ազատէք զիս, եթէ ըսածս ճշմարիտ ըլլայ, և ես գանձս պահուած տեղը կը ցուցնեմ ձեզի:

—Կերակուրներէն գո՞հ էք, կրկնեց քննիչը:

—Պարոն, բան մը չպիտի կորսնցնէք, և ես փախչելու առիթ մը գտնելու համար չեմ ըսեր. հոս բանտին մէջ կը կենամ, դուք գացէք զայն գտնելու:

—Հարցմանս պատասխան չէ՞ք տար, հարցուց դարձեալ քննիչը:

—Եւ ոչ ալ դուք իմ հարցմանս, ըսաւ աբբան. անիծեա՛լ

Ըլլա՛ք ուրեմն դուք ալ միւս անմիտներուն պէս, որոնք չուզեցին ինծի հաւատալ: Ոսկիս չէ՛ք ուզեր, թող ինծի մնայ. զիս չէք ազատեր, Աստուած կ'ազատէ զիս: Գացէ՛ք ուրեմն, բան մը ըսելիք չունիմ:

Ասոր վրայ՝ աբբան իր ծածկոցը վրայէն նետելով, գաճի կտորը գետնէն առաւ և գնաց իր շրջանակին մէջ տեղը նստաւ, ուր իր գիծերը ու հաշիւները շարունակեց:

—Ի՞նչ կ'ընէ հոն, հարցուց քննիչը հեռանալով:

—Իր գանձերուն հաշիւը կ'ընէ, կրկնեց կառավարիչը:

Ֆարիա ատելավառ նայուածքով մը պատասխանեց այդ երգիծանքին:

Ամէնքը դուրս ելան. բանտապահը անոնց ետեւէն դուռը գոցեց:

—Իրօք գանձեր ունենալու է, ըսաւ քննիչը սանդուխէն վեր ելլելով:

—Թերեւս երազին մէջ տեսած ըլլայ, պատասխանեց կառավարիչը, և հետեւեալ առտու խենթ արթնցած ըլլայ:

—Իրաւ է, ըսաւ քննիչը փոփոխամիտ պարզմտութեամբ մը, եթէ իրաւցնէ հարուստ ըլլար, բանտարկուած չպիտի ըլլար:

Աբբայ Ֆարիա այս անգամ ալ օգուտ մը չտեսաւ, ու բանտարկեալ մնաց. և այս այցելութենէն յետոյ զուարճալի խենթի համբաւը աւելցաւ:

Կալիգուլա կամ Ներոն՝ երեւելի գանձախոյզներ ու անկարելի բաներու հետամուտներ ըլլալով, այս խեղճ մարդուն խօսքին ականջ պիտի դնէին, և այնպիսի մեծ գումարով մը գնուած բաց օդը, հեռաւորութիւնը և վերջապէս ազատութիւնը պիտի շնորհէին: Բայց մեր օրերու թագաւորները հաւանականութեան սահմանին մէջ փակուած՝ բաղձալու համարձակութիւն իսկ չունին. իրենց հրամանները լսող ականջէն, գործերնին քննող աչքէն իսկ կը վախնան. իրենց գերագոյն աստիճանի զօրութիւնը չեն զգար այլ եւս. միայն գլուխնին թագ կը կրեն: Երբեմն Դիոսի որդի կը կարծէին ինքզինքնին կամ գոնէ այսպէս կը կոչէին ինքզինքնին և իրենց հայր Աստուծոյ գործերուն

մասամբ մասնակից. ամպերէն վեր եղած գործերուն վրայ բանադատութիւն ընել դիւրին չէ. հիմա թագաւորները դիւրութեամբ կը միանան: Ինչպէս որ բանտերուն տանջանքները նկարագրել միշտ արգիլուած էր բռնապետական կառավարութեան ժամանակ, և արդէն քիչ օրինակ կայ որ հաւատաքննութեան զոհ մը կարենայ իր ջախջախուած ոսկորներովը և արիւնաշաղախ վէրքովը նորէն աշխարհ գալ, այդպէս ալ յիմարութիւնը, որ ստորերկրեայ բանտերուն ցեխին մէջ բարոյական տանջանքին հետեւանքով առաջ եկած վէրք մըն է, գրեթէ միշտ իր սկսած տեղը զգուշութեամբ կը պահուի, կամ եթէ անկէ դուրս ելլէ, տխուր հիւանդանոց մը կ'երթայ ուր իր ծեծուած վիճակին մէջ բժիշկները ո՛չ մարդը կը ճանչնան և ո՛չ խելքը:

Աբբայ Ֆարիան բանտին մէջ խենթենալով, մշտնջենաւոր բանտարկութեան դատապարտուած էր այդ պատճառաւ:

Իսկ քննիչը չմոռցաւ Տանթէսի խօսքը: Կառավարչին սենեակը մտնելով, բանտարկեալներուն արձանագրութեան տետրակը ներկայացուցին իրեն: Տանթէսի մասին սա ծանօթութիւնը գրուած էր.

ԷՏՄՈՆ ՏԱՆԹԷՍ	Կատաղի Պոնաբարդեան, որ Նաբոլէոնի Էլպա կղզիէն դառնալուն շատ աշխատած է:
	Խիստ գաղտնի տեղ մը պահուի, եւ մեծ զգուշութեամբ հսկողութեան ենթարկուի:

Այդ ծանօթութիւնը տետրակին միւս ծանօթութիւններէն տարբեր գրով և տարբեր մելանով գրուած էր, որով Տանթէսի բանտարկութենէն յետոյ աւելցած ըլլալը կը հասկցուէր:

Ամբաստանութիւնը խիստ որոշ ըլլալով, անկարելի էր անոր դէմ բան մը ընել: Ուստի քննիչը անոր տակ սապէս գրեց.

«Անկարելի է բան մը ընել:»

Այդ այցելութիւնը սուգիւ կենդանութիւն տուած էր

Տանթէսի. իր բանտարկութենէն ի վեր մոռցած էր օրերը համրելու. բայց քննիչը նոր թուական մը սորվեցուցած էր իրեն, և Տանթէս լաւ մը միտքը պահեց զայն։ Ետևի պատին վրայ առաստաղէն ինկած գաճի կտորով մը գրեց. 30 յուլիս 1816, և այդ օրէն սկսեալ, ամէն օր պատին վրայ մէկ գիծ կը քաշէր, որպէս զի ժամանակը չմոռնայ։

Օրեր, շաբաթներ և ամիսներ անցան հետզհետէ, ու Տանթէս միշտ կը սպասէր. իր ազատութեանը համար տասնըհինգ օր չափ դրած էր։ Քննիչին ցոյց տուած բարեսրտութիւնը նկատի առնելով, տասնըհինգ օրը բաւական ըլլալու էր. բայց երբ այդ տասնը հինգ օրը անցաւ, «խելքի դէմ է, կ՛ըսէր ինքնիրեն, որ քննիչը Բարիզ դառնալէն առաջ իր գործը տեսնէ։» Մինչև իր քննական ուղևորութիւնը չաւարտէր, Բարիզ չէր կրնար դառնալ, և այդ ուղևորութիւնը մէկ կամ երկու ամիս կրնար տևել։ Ուստի տասնըհինգ օրուան տեղ՝ երեք ամիս սահման դրաւ։ Երեք ամիսը անցնելէն յետոյ, միտքը ուրիշ պատճառ մը եկաւ, և որոշեց մինչև վեց ամիս սպասել. բայց այս վեց ամիսն անցաւ և օրերը իրարու վրայ հաշուելով տասնուկէս ամիս սպասած էր։ Այս տասը ամսուան միջոցին իր բանտին մէջ փոփոխութիւն մը եղած չէր բնաւ. մխիթարական լուր մը չընդունելուն՝ բանտապահը հարց ու փորձ կ՛ընէր, բայց ան, ըստ սովորութեան, համր էր։ Տանթէս սկսաւ իր մտքին վրայ տարակուսիլ, թէ գուցէ իր յիշողութեան մէջ եղածը ուղեղին սխալանքն է, և թէ բանտին մէջ իջած այդ մխիթարիչ հրեշտակը՝ երազի մէջ երևցած ըլլայ։

Տարի մը ետքը՝ կառավարիչը փոխուեցաւ, Համ աշտարակին տեսչութիւնը յանձներ էին իրեն. Իֆ դղեակին պահապաններէն շատը հետը տանելով, Տանթէսի բանտապահն ալ միասին առած էր։ Նոր կառավարիչ մը գալով, խիստ դժուարութիւն ունեցաւ իր բանտարկեալներուն անունները սորվելու. ուստի հրամայեց որ անոնց թիւերը բերեն իրեն։ Այդ պարսպապատ սոսկալի անկելանոցը յիսուն սենեակներէ կը բաղկանար, որոնց մէջ բնակողները իրենց սենեակին թուովը կը կոչուէին. խեղճ երիտասարդը այնուհետև իր Էտմոն մականունը կամ Տանթէս անունը թողուց, և 34 թիւը անուանուեցաւ։

ԺԵ. ԳԼՈՒԽ

34 ԹԻՒԸ ԵՒ 27 ԹԻՒԸ

Տանթէս՝ բանտի մէջ մոռցուած բանտարկեալներուն կրած թշուառութեան բոլոր աստիճաններէն անցաւ։

Սկսաւ նախ գոռոզութիւն ցուցընել, որ յուսոյ հետևանքը և անմեղութեան գիտակցութիւնն է. յետոյ սկսաւ իր անմեղութեան վրայ տարակուսիլ, որ կը հաստատէր անոր մտքի խանգարմանը վրայ կառավարչին յայտնած գաղափարները. վերջապէս իր հպարտութեան բարձունքէն ինկաւ, և աղաչեց. բայց իր աղաչանքը տակաւին Աստուծոյ ուղղուած չէր, այլ մարդոց. Աստուած յուսոյ վերջին աղբիւրն է։ Խեղճը պէտք էր Աստուծմէ սկսիլ, մարդ իր յոյսը անոր վրայ կը դնէ, երբ միւս բոլոր յոյսերը ի դերև ելլեն։

Ուստի Տանթէս խնդրեց որ բարեհաճին այդ զնդանէն հանելով զինքը, ուրիշ տեղ մը դնեն, թէև աւելի մութ և աւելի խորունկ ըլլար։ Փոփոխութիւն մը, թէև անօգուտ իսկ ըլլար, միշտ փոփոխութիւն էր և քանի մը օր կրնար վիշտը մոռցնել իրեն։ Խնդրեց որ պտոյտ ընելու, օդ առնելու, գրքի և գործիքի հրաման տան։ Ոչ մէկ բան չշնորհուեցաւ իրեն. բայց ի՛նչ փոյթ. ինքը միշտ կ՛ուզէր։ Իր նոր բանտապահին հետ խօսելու սովորեր էր, թէև ան ալ առաջինին պէս չէր խօսեր. բայց մարդու մը հետ խօսիլը, համր իսկ ըլլար ան, դարձեալ զուարճութիւն մըն էր։ Տանթէս կը խօսէր, բայց միայն իր ձայնը կը լսէր. մինակ եղած ատենը խօսելու փորձեր ըրաւ, սակայն այդ բանը վախ կը պատճառէր իրեն։

Բանտարկուելէն առաջ Տանթէս շատ անգամ սոսկացած էր, մտքին առջև բերելով սրիկաներէ, աւազակներէ և մարդասպաններէ բաղկացած բանտարկեալներու այդ խումբերը, որոնք աննչան ուրախութեամբ գարշելի չուայտութիւններ և սոս-

կալի բարեկամութիւններ ի գործ կը դնեն. բայց ինքը հիմա փափաք կը զգար որ այդ աղտեղի խուցերէն մէկուն մէջ նետեն զինքը, որպէս զի անզգայ բանտապահին դէմքէն տարբեր դէմքեր տեսնէ, որ բնաւ չէր ուզեր իր հետ խօսիլ։ Կը ցաւէր որ ինչո՛ւ զինքը թիապարտութեան դատապարտած չէին, թէև նախատանքի զգեստը, ոտքի շղթան և ուսին վրայ երկաթին ձգած նշանը միտքը կը բերէր։ Գոնէ թիապարտները իրենց նմաններուն ընկերութեան մէջ էին, օդ կը շնչէին, երկինքը կը տեսնէին. անոնք աւելի երջանիկ էին։

Օր մը Էտմոն բանտապահին աղաչեց որ իրեն ընկեր մը տրուի, նոյն իսկ խենթ աբբան, որուն վրայ խօսելնին լսած էր։

Բանտապահ մը ո՛րչափ ալ խիստ ըլլայ, իր արտաքին երեւոյթին տակը միշտ մարդասիրութեան նշոյլ մը ունի։ Թէև իր դէմքին վրայ բան մը չէր ցուցըներ, բայց իր սրտով շատ անգամ այդ խեղճ երիտասարդին վրայ կը ցաւէր խիստ բանտարկութեան մը տակ ճնշուելուն համար, ուստի 34 թիւ բանտարկեալին խնդիրքը կառավարչին հաղորդեց, որ խոհեմ ըլլալուն, ինչպէս քաղաքական պաշտօնեայ մը պէտք է ըլլայ, խորհեցաւ որ Տանթէս կ'ուզէր բանտարկեալները գրգռել, դաւանի դաշնակցութիւն մը նիւթել, փախուստի փորձին մէջ իր ընկերէն օգնութիւն գտնել՝ ուստի անոր խնդիրքը չընդունեց։

Տանթէս մարդկային օգնութիւններէն բոլորովին յուսաբեկ, վերջապէս Աստուծոյ դարձաւ, ինչպէս ըսինք որ այդպէս պիտի ըլլար։

Բախտին հարուածներէն ընկճուած թշուառներուն մաքէն անցած բոլոր բարեպաշտական գաղափարները հանդարտեցուցին իր սիրտը։ Մօրը սորվեցուցած աղօթքները միտքը ինկան, որոնց զօրութիւնը երբեմն չէր հասկնար. քանի որ աղօթքը երջանիկ մարդու մը համար մաքի միօրինակ և դատարկ շարայարութիւն մը կ'երեւի մինչեւ այն օրը, երբ վիշտերը կը յայտնեն այդ վսեմ խօսակցութեան զօրութիւնը, որուն օգնութեամբը Աստուծոյ հետ կը խօսի թշուառը։

Ուստի Տանթէս սկսաւ աղօթել ոչ թէ ջերմեռանդութեամբ, այլ բարկութեամբ։ Բարձրաձայն աղօթք ըրած ատեն առաջուան պէս առանձնութեան մէջ իր ձայնէն չէր վախնար. մաքի յափշտակութեանց մէջ կ'իյնար. արտասանած ամէն մէկ բառին մէջ Աստուծոյ մեծութիւնը կը տեսնէր. նուաստացած կեանքին բոլոր գործերը զօրաւոր Աստուծոյ կամքին կը յանձնէր, անոնցմով կը խրատուէր, առաջադրութիւններ կ'ընէր, և ամէն աղօթքի վերջը, խնդիրքը մէջ կը բերէր, զոր մարդիկ շատ անգամ աւելի միջոցներ ունին մարդոց ուղղելու քան Աստուծոյ, և ի վերջոյ կը յարէր. «Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։»

Տանթէս թէև ջերմապէս կ'աղօթէր, բայց բանտարկեալ մնաց։

Այն ատեն իր միտքը թախծութեամբ լցուեցաւ և մթամած ամպ մը պատեց աչքերը։ Տանթէս պարզամիտ և անուս մարդ մըն էր. իրեն համար անցեալը այն թանձր քօղով ծածկուած էր, զոր գիտութիւնը միայն կը բանայ։ Իր ստորերկրեայ բանտին առանձնութեանը և գաղափարներու անապատին մէջ չէր կրնար անցեալ ժամանակները վերանորոգել, անցած գացած ժողովուրդները վերստին կենդանացնել, հին ժամանակի քաղաքները վերաշինել, զորս երեւակայութիւնը կը մեծցնէ, և որոնք Մարթէնի Բաբելոնեան նկարներուն պէս հսկայաձեւ և երկնային հուրով լուսաւորուած կ'երեւան. իր անցեալը խիստ կարճատեւ կ'երեւէր, ներկան ցաւալի, և ապագան տարակուսելի. իր տասնըինը տարի ազատ կեանք մը վարելը մշտնջենաւոր գիշերուան մը համա՞ր էր արդեօք։ Իր վիշտերը մոռնալու միջոց մը չունէր բնաւ. իր աշխոյժ ոգին ժամանակին թեւերուն վրայէն պէտք էր անհետանալ, սակայն ան ամփոփուած էր վանդակի մը մէջ փակուած արծիւի մը պէս բանտարկուած մնալ։ Այն ատեն միտքը գաղափարի մը կառչեցաւ, այսինքն իր երջանկութեան, որ առանց յայտնի պատճառի և անլուր դժբախտութեամբ մը կործանած էր. մեծ յամառութեամբ այս գաղափարէն չբաժնուեցաւ, մաքին մէջ ամէն կողմ

դարձնելով, և Տանթէս բանաստեղծին Դժոխք բանաստեղծութեան մէջ յիշուած անգութ Ուկոլինոյին պէս, որ Րուճիէրօ արքեպիսկոպոսին գանկը կերած էր, ինք ալ ակռաներով կ'ուտէր միտքը, եթէ կարելի է այսպէս ըսել: Տանթէս, որ անկայուն հաւատք մը ունէր, ան ալ կորսնցուց յուսահատներուն պէս, որոնք յաջողութենէ յետոյ կը կորսնցնեն զայն. միայն թէ Տանթէս օգուտ մը չէր տեսած անկէ:

Անհաւատութեան յաջորդեց բարկութիւնը: Էտմոն այնպիսի հայհոյութիւններ կ'ընէր որ բանտապահը կը սոսկար. մարմինը բանտին պատերուն զարնելով կը ջախջախէր, ամէն բանի, մինչեւ իսկ անձին հետ կը կռուէր, եթէ աւազի հատիկ մը, յարդի շիւղ մը, կամ օդի շունչ մը հակառակ ազդեցութիւն ընէր իր վրայ: Այն ատեն Վիլֆորի ցուցուցած ամբաստանութեան նամակը միտքը կուգար. իւրաքանչիւր տողը Պաղտասարի Մանէ, Թեկէլ, Փարէսի պէս պատին վրայ շողշողուն կերպով կը գծագրուէր: Անշուշտ, մարդոց ոխը, կ'ըսէր ինքնիրեն, այդ անդունդին մէջ ընկղմած էր զինքը, և ոչ թէ Աստուծոյ վրէժխնդրութիւնը. ուստի կը խնդրէր որ Աստուած ամէնէն սոսկալի տանջանքներով պատժէ իր թշուառութեան պատճառ եղողները, բայց այնպէս կը կարծէր որ ամէնէն ծանր պատիժը այնչափ ազդու չէր կրնար ըլլալ, մանաւանդ որ խիստ կարճատեւ պիտի ըլլար, քանի որ տանջանքէն յետոյ մահը կուգայ, և մահուան մէջ եթէ հանգստութիւն իսկ չըլլայ, գոնէ անզգայութիւն կայ, որ անոր կը նմանի:

Իր թշնամիներուն վրայ խորհելով՝ երբ մտովի կ'ըսէր թէ հանգստութիւնը մահուան մէջ կը գտնուի, և թէ իր թշնամին անգթաբար պատժելու համար մահուընէ տարբեր միջոցներ պէտք են, անձնասպանութեան տխուր գաղափարին անձնատուր եղաւ հաստատամտութեամբ: Ափսո՛ս անոր որ թշուառութեան ճամբուն մէջ այս թախծագին գաղափարին առջեւ կանգ կ'առնէ: Կը նմանի այն մեռեալ ծովերուն, որոնց մակերեւոյթը կապտագոյն կ'երեւայ, բայց անոնց տակ լուղորդը կը զգայ թէ ոտքերը տակաւ կը մխրճին կպրախառն տիղմին

մէջ, որ իրեն կը քաշէ և կը խեղդէ զայն: Անգամ մը որ այսպէս բռնուի, եթէ երկնային օգնութիւնը չհասնի, ամէն բան կը լմննայ, և ըրած բոլոր ջանքը ալ աւելի կ'առաջնորդէ դէպի մահ:

Սակայն բարոյական այդ վիճակը անկէ առաջ կրած նեղութեան և գուցէ անկէ յետոյ կրելու պատիժին չափ սոսկալի չէ. տեսակ մը յիմարական մխիթարութիւն է, որ անդունդը առջեւնիս բացուած կը ցուցընէ, սակայն անդունդին տակ ոչնչութիւնը պիտի գտնենք: Այս գաղափարին մէջ Էտմոն քիչ մը մխիթարութիւն գտաւ. իր բոլոր վիշտերը և նեղութիւնները, որոնք ուրուականներ կը ցուցնէին իրեն, աներեւոյթ եղած էին բանտին այն անկիւնէն, ուր մահուան հրեշտակը իր լռիկ ոտքը կը դնէր: Տանթէս հանդարտութեամբ գննեց իր անցեալը, սարսափով իր ապագայ կեանքը, ու միջին կէտը ընտրեց, որ ապաստանարան մը կը թուէր իրեն:

—Երբեմն, կ'ըսէր ինքնիրեն, հեռաւոր ճամբորդութիւններուս մէջ, երբ տակաւին մարդ մըն էի, ազատ և իշխանութեան տէր, մարդ մը որ ուրիշ մարդոց կը հրամայէր և որոնք անմիջապէս կը հնազանդէին իրեն, երկինքին երեսը ամպերով ծածկուիլը, ծովուն յուզուիլը և մռնչելը, երկինքի մէկ ծայրէն փոթորիկ մը ծագիլը, և իբրև հսկայաձեւ արծիւ մը հորիզոնին երկու ծայրերը իր երկու թեւերովը զարնելը տեսայ. այն ատեն կը զգայի որ նաւս տկար ապաստանարան մըն էր, քանի որ հսկայի մը ձեռքը եղած գրչի մը պէս թեթեւ ըլլալով, կը դողար և կը սարսէր ան: Իսկոյն կոհակներու սրտատրոփ ձայնը, և սեպացած սայրասուր ժայռերուն երեւոյթը՝ մահուան մօտենալը կ'իմացնէին. մահը ահագնատեսիլ կ'երեւէր, ուրկէ ազատելու համար բոլոր ոյժս կը թափէի, և մարդկութեան բոլոր կարողութիւնները և նաւաստիութեան ճարտարութիւնը կը միացնէի՝ Աստուծոյ հետ պայքարելու համար...: Երջանիկ էի այն ատեն, քանի որ մահուընէ ազատիլը երջանկութեան հասնիլ էր. այդ մահը յեղակարծ հասած էր և ես որոշած չէի. վերջապէս մամուռի և գայլախազի այդ անկողնին վրայ քնանալը շատ խիստ կ'երեւէր ինծի. Աստուծոյ պատ-

կերին նման արարած մը ըլլալովս՝ անարժան կը համարէի որ իմ մահուընէս յետոյ մեծ որորներու և անգղներու կերակուր ըլլամ։ Բայց այսօր բոլորովին տարբեր է. կեանքի բոլոր երջանկութիւնները կորսնցուցի. այսօր մահը ժպտուն կը թուի ինծի, ինչպէս ստնտու մը իր զաւակին՝ զայն օրօրելու ատեն. բայց այսօր իմ կամքովս կը մեռնիմ. ձանձրացած և ուժաթափ կը քնանամ, ինչպէս յուսահատութեան և կատաղութեան գիշերներուն կը քնանայի, երբ սենեակիս չուրջը երեք հազար անգամ պտոյտ կ'ընէի, այսինքն՝ երեսուն հազար քայլ, որ ըսել է գրեթէ տասը մղոն ուղ։

Երբ այս գաղափարը երիտասարդին մտքին մէջ հաստատուեցաւ, ան աւելի զուարթ և աւելի ժպտուն դարձաւ. իր կարծր անկողնէն և սեւ հացէն չդժգոհեց. աւելի քիչ կերաւ, չքնացաւ, և գրեթէ գոհ էր կեանքին մնացած ժամանակէն, քանի որ հաւաստի էր թէ հոն պիտի թողու զայն, ինչպէս հինցած զգեստ մը վրանուս կը նետենք։

Մեռնելու երկու միջոց կար. մէկը պարզ էր, այսինքն թաշկինակը պատուհանին վանդակներէն մէկուն կապել և կախուիլ. իսկ միւսը՝ ուտել ձեւացնելով անօթութենէ մեռնիլ։ Առաջինը անարգ երեւցաւ Տանթէսի։ Ծովապատակները միտքը բերաւ, որոնք նաւու առագաստներէն կը կախուին, ուստի իրեն համար անարգական տանջանք մըն էր կախուիլը, որուն փորձը չուզեց ընել. ուստի երկրորդին դիմեց, և նոյն օրը սկսաւ գործադրել։

Բայց այդ տարբեր որոշումներու փոփոխման մէջ գրեթէ չորս տարի անցաւ։ Երկրորդ տարուան վերջը՝ Տանթէս օրերը համրելէ դադրած էր. ուստի ժամանակի մասին տգիտութեան մէջ ինկաւ նորէն, ուսկից քննիչը ազատած էր զինքը։

Տանթէս ուզելով մեռնիլ, իր մահուան եղանակը որոշած էր. իր որոշման վրայ հաստատ կեցած էր, բայց վախնալով որ գուցէ զղջայ, մեռնելու համար երդում ըրած էր։ Երբ առտուան և իրիկուան կերակուրս բերեն, կ'ըսէր ինքնիրեն, պատուհանէն դուրս կը նետեմ և կերած կը ձեւացնեմ։

Տանթէս իր որոշման վրայ հաստատ կեցաւ. օրը երկու անգամ՝ սկզբան՝ ուրախութեամբ, յետոյ մտածելով, ի վերջոյ՝ արտմութեամբ կերակուրները դուրս կը նետէր բանտին փոքրիկ լուսամուտէն, ուրկէ միայն երկինքը կը տեսնուէր, բայց հարկադրուեցաւ այս սոսկալի ծրագիրը ի գործ դնելու համար ըրած երդումը յիշել։ Այդ կերակուրները երբեմն իրեն անհաճոյ կը թուէին, բայց երբ անօթութիւնը իր սուր ակռաները կը կրճտէր, անոնք ախորժահամ համադամներ կ'երեւային. երբեմն գրեթէ ժամ մը՝ պնակը ձեռքը բռնած կը կենար աչքերը յառած աւրուած մսի կտորին, կամ հոտած ձուկին, սեւ և բորբոսած հացին վրայ։ Կեանքին վերջին բնազդները սրտին մէջ կը կռուէին, և մերթ իր որոշմանը կը յաղթէին։ Այն ատեն իր ստորերկրեայ բանտը այնչափ տխուր և իր վիճակը այնչափ յուսահատական չէր երեւեր. տակաւին երիտասարդ էր. քսանըհինգ կամ քսանըվեց տարեկան ըլլալու էր, և գրեթէ յիսուն տարի կրնար ապրիլ դեռ, այսինքն իր տարիքին երկու անգամը։ Այդ երկար ժամանակի ընթացքին մէջ քանի՛ քանի դէպքեր կրնային բանտին դռները խորտակել, Իֆ դղեակին պատերը կործանել, և ազատութիւն պարգեւել իրեն։ Այն ատեն ակռաները կերակուրին կը մօտեցնէր, բայց իբրեւ կամաւոր Տանտալոս մը, բերանէն կը հեռացնէր. այն ատեն ըրած երդումը միտքը կուգար, և շատ կը վախնար որ երդումը ժխտելով անձին անարժան գործ մը ըրած ըլլայ գուցէ։ Ուստի խիստ և անաչառ ըլլալով, իր վրայ մնացած քիչ մը կեանքն ալ սպառեց, և օրին մէկը, բանտապահին բերած կերակուրները լուսամուտէն դուրս նետելու համար ոտք ելլելու ուժ չունեցաւ։

Հետեւեալ առտու ա՛լ չէր տեսներ, հազիւ թէ կը լսէր։ Բանտապահը ծանր հիւանդութիւն մը կը կարծէր. Էտմոն կը կարծէր որ մահուան դուռը հասած է։

Բոլոր օրը այսպէս անցաւ. Էտմոն տարտամ թմրութիւն մը կը զգար ու գոհ կ'երեւէր։ Իր ստամոքսին ջղային պրկումները դադրեցան, և իր ծարաւի պապակն անցաւ. երբ աչքերը գոցէր, շողշողուն լոյսեր կը տեսնէր չրջմոլիկ հուրե

նման, որ գիշեր ատեն ճախճախուտ տեղեր կը թափառի. անծանօթ երկրին վերջալոյսն էր ան, որ կը կոչուի Մահ։

Յանկարծ, իրիկուան ժամը իննին ատենները, պառկած տեղին պատին միւս կողմը մեղմ ձայն մը լսեց։ Այնչափ վայրի կենդանիներ կային որ Էտմոն քիչ քիչ վարժուած ոչինչ բաներէ չխռովելու. բայց այս անգամ կա՛մ անօթութենէն իր տպաւորութիւնը աւելի ազդու եղած էր, կամ իրօք՝ ձայնը սովորականէն աւելի բարձր էր և կամ այդ վերջին վայրկեանին ամէն բան մեծ կ'երեւէր. ուստի Էտմոն գլուխը վերցուց, աւելի աղէկ մտիկ ընելու համար։

Այդ ձայնը միօրինակ կերպով քերելու ձայն մըն էր. կարծես ահագին մագիլներով, կամ ուժեղ ակռաներով, և կամ վերջապէս որ և է գործիքով մը քարերու վրայ կը քերէին։

Թէեւ երիտասարդին ուղեղը տկարացած էր, սակայն բանտարկեալներուն մտքէն չելլող սովորական գաղափարը սթափեցուց զինքը, այսինքն ազատութիւնը։ Վերջին վայրկեանին, երբ ալ ամէն ձայն պիտի դադրէր իրեն համար, այդ ձայնը այնպիսի յարմար ատենի մը կը հասնէր. որ կարծեց թէ Աստուած վերջապէս իր վիշտերուն համար գթալով, այդ ձայնը իրեն կը ղրկէր, որպէս զի իմացնէ թէ գերեզմանին սահմանը կենայ, ուր արդէն իր ոտքը կը տատանէր։ Ո՛վ գիտէր, թէ իր բարեկամներէն մէկը, այն սիրելի արարածներէն մէկը, որոնց վրայ այնչափ անգամ խորհելով, միտքը մաշեցուցած էր, այդ միջոցին թերեւս իրեն համար կ'աշխատէր և զիրենք բաժնող հեռաւորութիւնը մօտեցնելու կը ջանար։

Բայց ոչ, անտարակոյս, Էտմոն կը խաբուէր, և իր լսածը այն ցնորքներէն մէկն էր, որոնք մահուան դուռը կը ծփան։

Այսու հանդերձ, Էտմոն այդ ձայնին ականջ կը դնէր միշտ, որ գրեթէ երեք ժամ տեւեց. յետոյ՝ Էտմոն փլուզումի պէս ձայն մը լսեց, և քիչ մը ետքը ձայնը դադրեցաւ։

Քանի մը ժամ յետոյ ձայնը նորէն սկսաւ, այս անգամ աւելի սաստիկ և աւելի մօտէն։ Էտմոն ուրախութիւն կը զգար այս աշխատութեան մասին, որ զինքը կը զբօսեցունէր. յանկարծ բանտապահը ներս մտաւ։

Գրեթէ ութը օրէ ի վեր որ մեռնելու որոշում տուած էր, և չորս օրէ ի վեր որ այդ գաղափարը ի գործ դնել սկսած էր. Էտմոն բանտապահին խօսք մը անգամ չէր ուղղած, և ոչ իսկ պատասխանած էր անոր, երբ ան ի՛նչ հիւանդութիւն ունենալը կը հարցնէր իրեն. և երբ ուշադրութեամբ մը իրեն նայէր ան, երեսը պատին կողմը կը դարձնէր։ Բայց այդ օրը բանտապահը կրնար այդ մեղմ ձայնը լսել, պատճառը փնտռել, վերջ տալ անոր և ո՛վ գիտէ ի՛նչ յոյսէ մը զրկել զինքը, որուն միայն գաղափարը կ'ուրախացնէր Տանթէսի վերջին վայրկեանները։

Բանտապահը իր նախաճաշիկը կը բերէր։ Տանթէս անկողնին մէջ նստաւ, և իր ձայնը բարձրացնելով՝ սկսաւ բոլոր կարեւոր բաներուն վրայ խօսիլ. բերած կերակուրներուն գէշութեանը, բանտին ցրտութեանը վրայ տրտնջալով կը յանդիմանէր զայն, որպէս զի աւելի պոռալու իրաւունք ունենայ, այնպէս որ իր պոռչտուքով տաղտկացուց բանտապահը որ այդ օրը հիւանդ բանտարկեալին համար արգանակ և թարմ հաց բերած էր։

Բարեբախտաբար բանտապահը կարծեց որ Տանթէս հիւանդութենէն խելագարութեան մէջ ինկած էր. կերակուրները անշահ ու կոտրած սեղանին վրայ դրաւ, ուր սովորաբար կը դնէր, ու քաշուեցաւ։

Այն ատեն Էտմոն ազատ մնացած, սկսաւ ուրախութեամբ ականջ դնել։

Ձայնը այնչափ որոշ կու գար որ հիմայ երիտասարդը առանց դժուարութեան կը լսէր։

— Քանի որ այս ձայնը լուսնալէն ետքն ալ կը շարունակուի, անտարակոյս ինծի պէս թշուառ բանտարկեալ մը պիտի ըլլայ, որ իր ազատութեանը կ'աշխատի։ Ո՛հ, եթէ քովը ըլլայի, ինչպէս պիտի օգնէի անոր։

Յետոյ, յանկարծ, այդ թշուառութեան վարժուած և մարդկային ուրախութիւններէն դժուարաւ խաբուող ուղեղին մէջ ծագած յուսոյ արշալոյսին վրայ տխուր ամպ մը պատեց.

որովհետեւ կարծեց թէ կառավարիչը մօտակայ սենեակ մը նորոգել կու տար, և լսած ձայնը գործաւորներու աշխատութեան ձայնն էր։

Այդ բանին տեղեկանալը դիւրին էր․ բայց ի՞նչպէս համարձակէր հարցում ընելու։ Անշուշտ յայտնի բան մըն էր որ բանտապահին սպասելով, և ձայնը մտիկ ընել տալով, անոր ցուցուցած կերպարանքէն պիտի կարենար հասկնալ․ բայց այդպիսի հետաքրքրութիւն մը գոհացնելու համար չէ՞ որ խիստ նպաստաւոր միջոցներ պիտի կորսնցնէր։ Դժբախտաբար Էտմոնի գլուխը դատարկ զանգակ մը դարձած ըլլալով, շարունակ մտածելով շփոթած էր․ ինքը այնչափ տկար էր որ միտքը շոգիի պէս կը ծփար, և չէր կրնար մէկ գաղափարի վրայ հաստատ կենալ։ Էտմոն մէկ միջոց միայն տեսաւ իր գաղափարները պարզելու, և ըրած քննութեանը մասին վճիռ արձակելու համար։ Աչքերը սեղանին վրայ բանտապահին դրած արգանակին դարձուց, որուն գոլորշիները կ'ելլէր տակաւին, ոտքի ելաւ, և տատանելով մինչեւ հոն գնաց, առաւ պնակը, շրթունքներուն մօտեցուց, և անոր մէջ գտնուող արգանակը անպատում գոհունակութեամբ մը կուլ տուաւ մէկ ումպով։

Այն ատեն այդչափը բաւական համարեց, որովհետեւ լըսած էր թէ շատ մը խեղճ նաւաբեկեալներ անօթութենէ ուժաթափ և սովալլուկ եղած ատեննին խիստ աննդարար կերակուր մը լափած ըլլալնուն համար մեռած էին։ Էտմոն, որ հացը բերանին մօտեցուցած էր, սեղանին վրայ դրաւ և գնաց դարձեալ պառկեցաւ։ Էտմոն չէր ուզեր մեռնիլ։

Իսկոյն անձին վրայ կենդանութիւն մը զգաց․ բոլոր տարտամ և գրեթէ անիմանալի գաղափարները ուղեղին մէջ կը զետեղուէին վերստին։ Այն ատեն կարող եղաւ մտածելու և իր մտքին գոյութիւնը հաստատեց։

—Պէտք է փորձ մը ընել, ըսաւ ինքնիրեն, բայց առանց մէկուն վնաս հասցնելու։ Եթէ աշխատողը հասարակ գործաւոր մըն է, կրնամ անոր պատին զարնել․ այն ատեն գործը դադրեցնելով՝ պիտի ուզէ հասկնալ թէ ինչ նպատակով զարկած են,

բայց հրամանի տակ ըլլալուն՝ իր գործը ձեռք պիտի առնու նորէն։ Եթէ ընդհակառակը՝ բանտարկեալ մըն է, հանած ձայնս զինքը պիտի սարսափեցնէ․ պիտի վախնայ որ գուցէ յայտնուի․ իր աշխատութիւնը պիտի դադրեցնէ ու գիշերը պիտի սկսի դարձեալ, կարծելով թէ ամէն մարդ քնացած է։

Անմիջապէս Էտմոն ոտքի ելաւ։ Այս անգամ ոտքերը չէին դանդաղեր և աչքերը մթագնած չէին։ Դէպ ի բանտին մէկ անկիւնը գնաց, խոնաւութենէ բաժնուած քար մը տեղէն հանեց, ու ձայնը աւելի զգալի եղած տեղը հասաւ։

Երեք անգամ զարկաւ։

Առաջին հարուածին վրայ՝ ձայնը դադրած էր կարծես մոգական ազդեցութեամբ։

Էտմոն ականջ դրաւ լսելու բովանդակ կարողութեամբ։ Երկու ժամ անցաւ, ու նորէն ձայն մը չլսուեցաւ․ պատին միւս կողմը Էտմոն բացարձակ լռութիւն մը առաջ բերած էր։

Յոյսով լցուած՝ Էտմոն իր հացէն քանի մը պատառ կերաւ․ քանի մը ումպ ջուր խմեց, և զօրաւոր կազմուածքին շնորհիւ գրեթէ առաջուան պէս առողջացաւ։

Գիշերը վրայ հասաւ, ձայնը չսկսաւ սակայն։

—Անշուշտ բանտարկեալ մըն է, ըսաւ Էտմոն ինքնիրեն, անպատում ուրախութեամբ մը։

Այն ատեն սաստիկ տաքութիւն մը պատեց գլուխը և կեանքը ուժգնօրէն վերադարձաւ։

Բոլոր գիշերը անցաւ և շշնչիւն մը անգամ լսելի չեղաւ։

Էտմոն այն գիշեր չգոցեց աչքերը։

Առտու եղաւ․ բանտապետը իր ուտելիքը բերաւ։ Էտմոն առաջինները արդէն կերած էր․ սանք ալ կերաւ՝ միշտ այն ձայնին ականջ դրած, որ ա՛լ չէր լսուեր․ վախնալով որ բոլորովին դադրի, տասը կամ տասներկու մղոն տեղ քալելու չափ իր բանտին մէջ պտոյտ ընելով, լուսամուտին երկաթէ վանդակները շարժելով ամբողջ ժամեր, երկար ատենէ ի վեր մոռցած մարմնամարզական կրթութիւնները ընելով, իր անդամներուն դիւրաշարժութիւն և ուժ կուտար, և կը պատրաստուէր

վերջապէս իր ապագայ բախտին դէմ պայքարիլ, ինչպէս կ'ընէ ըմբիշ մը, կրկէսը մտնելու ատեն իր բազուկները տարածելով և մարմինը իւղօտելով: Այդ միջոցին ականջ կը դնէր թէ արդեօք ձայնը պիտի լսէ՞ նորէն. Իր համբերութիւնը կը սպառէր այդ բանտարկեալին զգուշութեանը համար, որ չէր գուշակեր թէ ազատման այդ գործին մասնակից պիտի ըլլար իրեն պէս ազատելու աճապարող ուրիշ բանտարկեալ մը:

Այսպէս երեք օրեր անցան, այսինքն վայրկեան առ վայրկեան համրուած եօթանասուներկու մահացու ժամեր:

Վերջապէս իրիկուն մը, բանտապահին օրուան վերջին այցելութենէն յետոյ, երբ Տանթէս իր ականջը պատին դրած մտիկ կ'ընէր, անզգալի ցնցում մը լսել կարծեց այն լռիկ քարերուն մէջ, որոնց վրայ գլուխը դրած էր:

Տանթէս ետ քաշուեցաւ և յուզուած միտքը հանդարտեցնելու համար, սենեակին մէջ քանի մը անգամ դարձաւ, և ականջը նոյն տեղը դրաւ:

Ալ տարակոյս չկար. միւս կողմը բան մը կ'ըլլար. բանտարկեալը հասկնալով որ իր բռնած ուղղութիւնը վտանգաւոր էր, աշխատութեան կերպը փոխեր էր, ու անկասկած, աւելի ապահովութեամբ իր գործը շարունակելու համար՝ գրոցին տեղ լծակ կը գործածէր:

Իր ըրած գիւտէն քաջալերուելով՝ Էտմոն որոշեց այդ անխոնջ աշխատողին օգնութեան հասնիլ: Ուստի անկողինը տեղէն հանեց, որուն ետին կը կարծէր թէ ազատման գործողութիւնը կը կատարուէր, և աչքով առարկայ մը կը փնտռէր պատը քերելու, խոնաւ ծեփը փլցնելու և վերջապէս քար մը տեղէն հանելու:

Բայց բան մը չտեսաւ. ո՛չ դանակ ունէր և ոչ հատու գործի մը. լուսամուտին ձողերը երկաթէ էին, բայց ա՛յնչափ անգամ անոնց ամրութիւնը փորձեր էր որ զանոնք նորէն շարժելու փորձելն իսկ անօգուտ աշխատութիւն մըն էր:

Իր բոլոր կարասիներն էին՝ անկողին մը, աթոռակ մը, սեղան մը, դոյլ մը և կուժ մը:

Անկողնին վրայ երկաթէ բաւական գամեր կային, բայց այդ գամերը պտուտակներով գամուած էին տախտակին: Անոնց բանալին ունենալու էր, այդ պտուտակները քակելու և գամերը հանելու համար:

Սեղանին և աթոռին վրայ բան չկար. դոյլը առաջ ճարմանդ մը ունէր, սակայն վրայէն հաներ էին:

Ուստի մէկ միջոց միայն կը մնար Տանթէսին, որ էր կուժը կոտրել, ու այս կաւէ ամանին սրածայր կտորներէն մէկովը գործի սկսիլ:

Կուժը քարայատակին վրայ նետեց, որ շառաչմամբ գետինը իյնալով, կտոր կտոր եղաւ:

Տանթէս սուր ծայրերէն երկու-երեք կտոր որոշեց, անկողնին մէջ պահեց, և միւսները գետինը ցրուած թողուց: Կուժին կոտրիլը խիստ բնական դիպուած մը ըլլալով՝ չպիտի նեղանային իրեն:

Էտմոն ամբողջ գիշերը աշխատելու ատեն ունէր. բայց մթութեան մէջ գործը առաջ չէր երթար, որովհետեւ շօշափելով պիտի աշխատէր. քիչ մը ետքը զգաց որ իր անձեւ գործին աւելի կարծր կաւի մը հանդիպելով բթացած էր: Ուստի անկողինը իր տեղը քաշեց, և սպասեց որ առտու ըլլայ: Յոյսը համբերութիւն տուած էր իրեն:

Բոլոր գիշերը ականջ դրաւ, և անծանօթ ականափորին ստորերկրեայ աշխատութեան ձայնը մտիկ ըրաւ:

Առտու եղաւ և բանտապահը ներս մտաւ: Տանթէս ըսաւ թէ առջի իրիկունը ջուր խմած ատեն կուժը ձեռքէն սահելով ինկած ու կտոր կտոր եղած էր: Բանտապահը տրտնջալով գնաց նոր կուժ մը բերաւ առանց կոտրուածին կտորները տանելու իր հետ:

Պահ մը ետքը նորէն եկաւ, հրամայեց որ այնուհետեւ աւելի զգուշութիւն ընէ, ու դուրս ելաւ:

Տանթէս անպատում ուրախութեամբ լսեց դրան փականքին ակռաներուն ձայնը. ատկէ առաջ ամէն անգամ գոցուելուն, այդ ձայնը սիրտը կը սեղմէր: Քայլերուն հեռանալու

ձայնին ականջ դրաւ, ու երբ լռութիւնը տիրեց, դէպ ի անկողինը ցատկեց, տեղէն հանեց զայն, և իր ստորերկրեայ բանտին մէջ թափանցող տկար լոյսին շնորհիւ կրցաւ տեսնել նախընթաց գիշերը տեսած անօգուտ գործը, որովհետեւ իր գործիքը քարին ուղղած էր փոխանակ անոր շուրջը դրուած գաճին ուղղելու։

Խոնաւութիւնը դիւրափշրելի դարձուցած էր գաճը։

Տանթէսի սիրտը ուրախութենէն կը բաբախէր, երբ տեսաւ որ այդ գաճը մաս մաս կը փշրուէր. թէեւ այս փշրուածները գրեթէ փոշիի պէս էին, սակայն կէս ժամէն յետոյ Տանթէս գրեթէ բուռ մը հանած էր։ Թուաբան մը հաշուելով պիտի գտնէր որ երկու տարի այսպէս աշխատելով, և ժայռի չհանդիպելով բնաւ, պիտի կարենար երկու ոտք լայնութեամբ և քսան ոտք խորութեամբ անցք մը փորել։

Բանտարկեալը այն ատեն ինքզինքը կը մեղադրէր թէ ինչո՛ւ այդ աշխատութեան չէր յատկացուցած անցեալ երկար ժամերը, որոնք իրեն ձանձրացուցիչ եղած էին. յուսով, աղօթքներով և յուսահատութեամբ կորսնցուցած էր այդ ժամերը։

Գրեթէ վեց տարիէ ի վեր այդ բանտին մէջ փակուած էր. ո՛րչափ ալ դանդաղ աշխատութիւն ըլլար՝ չէ՞ր կրնար լրացուցած ըլլալ։

Երեք օրուան մէջ մեծ զգուշութիւններով կարող եղաւ քարին շուրջը գտնուող գաճը հանել, որով քարը մերկ մնաց։ Պատը որմնաքարերով շինուած էր, որոնց մէջ, աւելի ամրութեան համար, տեղ տեղ կոփածոյ քար դրած էին։ Ահա այդ կոփածոյ քարերէն մէկն էր, որուն բոլորտիքը գտնուող գաճը գրեթէ փլած էր, և հիմա պէտք էր տեղէն շարժել զայն։

Տանթէս եղունգներովը փորձեց, բայց անոնք անբաւական կուգային այդ բանին։

Անոնց միջեւ խօթած կուժին կտորները կը փշրուէին, երբ Տանթէս ուզէր լծակի տեղ գործածել զանոնք։

Ժամ մը անօգուտ փորձեր ընելէն յետոյ՝ Տանթէս ոտքի ելաւ քրտնալից և վշտագին։

Դեռ նոր սկսած այդ գործը դադրեցնելո՞ւ էր ուրեմն, և պէ՞տք էր դանդաղօրէն և անօգուտ կերպով սպասել դրացիին աշխատութեան. գուցէ ան ալ ձանձրանար։

Այն ատեն՝ միտքէն գաղափար մը անցաւ. ոտքի վրայ էր ժպտուն դէմքով. քրտինքէն թրջած ճակատը ինքնին չորցաւ։

Բանտապահը ամէն օր Տանթէսի ապուրը թիթեղէ սանով մը կը բերէր։ Այդ սանին մէջ իր և ուրիշ բանտարկեալի մը ապուրը կը գտնուէր. Տանթէս դիտած էր որ այդ սանը կա՛մ բոլորովին լեցուն կ'ըլլար, կամ կէս պարպուած կերակուրին բաժանումը իրմէ կամ իր ընկերէն սկսելուն համաձայն։

Այդ սանը երկաթէ կոթ մը ունէր. Տանթէս կը փափաքէր այդ երկաթէ կոթը ձեռք ձգել, և իր կեանքին տասը տարին կուտար անոր փոխարէն։

Բանտապահը սանին մէջէն Տանթէսի պնակին մէջ կը լեցնէր ապուրը. Տանթէս փայտէ դգալով զայն ուտելէն յետոյ՝ իր պնակը կը լուար, որ այսպէս կը գործածուէր ամէն օր։

Իրիկուան, Տանթէս իր պնակը գետինը դրաւ, դունէն սեղանին երթալու ճամբուն վրայ. բանտապահը ներս մտնելով պնակին վրայ կոխեց և կտոր կտոր ըրաւ։

Այս անգամ Տանթէսին դէմ ըսելիք չկար. թէև պնակը գետինը դնելուն համար յանցանք ունէր, սակայն բանտապահը ոտքին տակ եղածը չնայելուն համար յանցաւոր էր։

Ուստի բանտապահը տրտնջալով միայն գոհ եղաւ։

Յետոյ շուրջը նայեցաւ թէ ի՞նչ բանի մէջ կրնար պարպել ապուրը։ Տանթէսի սեղանի սպասը այդ պնակն էր միայն։

—Սանը ձգէ, ըսաւ Տանթէս, ու վաղը նախաճաշիկս բերելու ատեն կ'առնես։

Այդ բանը բանտապահին ծուլութեանը յարմար էր, որով պիտի չպարտաւորէր վեր ելլել, նորէն իջնել, և դարձեալ ելլել։

Ուստի սանը թողուց։

Տանթէս ուրախութենէն կը սարսուար։

Այս անգամ փութով ապուրը ու միսը կերաւ, որոնք բանտերուն սովորութեան համաձայն, իրարու կը խառնեն։

ժամ մը սպասելէն յետոյ, հաւատալ ըլլալով որ բանտապանին միտքը պիտի չփոխուի, անկողինը տեղէն հանեց, սանը առաւ, ու կոթին ծայրը՝ շուրջը բացուած քարին ու միւս որմաքարերուն մէջ տեղը խոթեց և սկսաւ լծակի տեղ գործածել։

Թեթեւ շարժումով մը Տանթէս հասկցաւ թէ գործը պիտի յաջողէր։

Իրօք, ժամ մը ետքը, քարը պատէն հանեց, ուր մէկ ու կէս ոտքէն աւելի տրամագիծով փորուածք մը առաջ եկած էր։

Տանթէս զգուշութեամբ հաւաքեց բոլոր գաճը, բանտին անկիւնները տարաւ, գորշ հողը կուժին մէկ կտորովը փորեց, և գաճը հողին տակ թաղեց։

Յետոյ ուզեց որ այդ գիշերը օգուտ քաղած ըլլայ, բախտին յաջողութեամբը, կամ իր խելացիութեամբը, այդպիսի թանկագին գործի մը ձեռք անցուցած ըլլալով, շարունակեց փորել մեծ փութով։

Արշալոյսին քարը իր ծակին մէջ դրաւ նորէն. մահճակալը անոր առջեւ հրեց եւ պառկեցաւ։

Ամէն օրուան նախաճաշիկն էր կտոր մը հաց, զոր բանտապանը բերաւ սեղանին վրայ դրաւ։

—Ուրիշ պնակ մը չպիտի բերե՞ս, հարցուց Տանթէս։

—Ո՛չ, ըսաւ դռնապանը, դուն խորտակիչ մըն ես, կուժդ կոտրեցիր, եւ դուն պատճառ եղար որ քու պնակդ կոտրեցի. եթէ ամէն բանտարկեալ այսչափ վնաս հասցնէր, կառավարութիւնը գլուխ չէր կրնար ելլել։ Սանը կը թողում, ապուրդ մէջը դնելու համար. այս կերպով չես խորտակեր գուցէ։

Տանթէս աչքը երկինք բարձրացուց և իր վերմակին մէջ ձեռքերը միացուց։

Իրեն ձգուած այդ երկաթի կտորը իր սիրտը այնքան ջերմ երախտագիտութեամբ մը լցուց հանդէպ Աստուծոյ որքան իր անցեալ կեանքին մէջ ստացած հարստութիւնները այնպիսի զգացում մը պատճառած չէին իրեն։ Միայն թէ դիտած էր որ իր աշխատելու սկսելէն ի վեր, միւս բանտարկեալը չէր աշխատեր։

Բայց ի՛նչ փոյթ, այդ բանը չէր կրնար պատճառ ըլլալ որ իր աշխատութիւնը դադրեցնէ. եթէ իր դրացին չէր գար, ինքը անոր պիտի երթար։

Բոլոր օրը անդադար աշխատեցաւ. նոր գործիքին օգնութեամբը պատէն տասը բուռէն աւելի որմնաքարի, գաճի և կիրի կտորուանք հանեց։

Երբ այցելութեան ժամը հասաւ, սանին ծամկուած կոթը բաւական շտկեց և սովորական տեղը դրաւ զայն։ Բանտապանը սովորական կերակուրը դրաւ անոր մէջ, այսինքն ապուր և ձուկ, որովհետեւ այն օրը պահք էր. շաբաթը երեք անգամ պահք բռնել կուտան բանտարկեալներուն։ Այդ իսկ ժամանակը հաշուելու միջոց մը կրնար ըլլալ, եթէ Տանթէս երկայն ատենէ ի վեր այդ հաշիւը թողուցած չըլլար։

Ապուրը պարպելէն յետոյ բանտապանը հեռացաւ։

Այս անգամ Տանթէս ուզեց հաստատապէս գիտնալ թէ իր դրացին աշխատելէ դադրա՞ծ էր ստուգիւ։ Ականջ դրաւ։

Ամէն ինչ լռութեան մէջ էր այն երեք օրերուն պէս, երբ միւս բանտարկեալը իր աշխատութիւնները ընդմիջած էր։

Տանթէս հառաչանք մը արձակեց, յայտնի էր որ դրացին իր վրայ վստահութիւն չունէր։

Այսու հանդերձ ընաւ չյուսահատեցաւ և բոլոր գիշերը շարունակ աշխատեցաւ. բայց երկու կամ երեք ժամ աշխատելէ յետոյ՝ արգելք մը ելաւ առջին։

Երկաթը ալ չէր բաներ, և հարթ մակերեւոյթի մը վրայէն կը սահէր։

Տանթէս ձեռքով շօշափեց արգելքը և պահանգի մը հասած ըլլալը հասկցաւ։

Այս պահանգը Տանթէսի սկսած ծակին բոլոր երկայնքը կը պատէր։ Հիմա պէտք էր վերէն կամ վարէն փորել։

Խեղճ երիտասարդը ամենեւին խորհած չէր որ այդպիսի ընդդիմութեան մը պիտի պատահէր։

—Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, գոչեց, քեզի այնչափ աղաչեցի որ կը յուսայի թէ ձայնս լսեցիր։ Ո՛վ Աստուած իմ,

կեանքին ազատութիւնը և մահուանս հանգստութիւնը կորսնցնելէ յետոյ, Աստուած իմ, դուն որ նորէն կեանքի կոչեցիր զիս, ողորմէ ինծի, ու մի՛ թողուր որ յուսահատութեան մէջ մեռնիմ։

—Ո՞վ է ան որ թէ՛ Աստուծոյ և թէ յուսահատութեան վրայ կը խօսի, ըսաւ ձայն մը, որ կարծես թէ գետնին տակէն կ'ելլէր, և անթափանցութենէն հազիւ լսելի ըլլալով գերեզմանէն ելած ձայն մը կը թուէր երիտասարդին։

Էտմոն գլխին վրայ մազերուն քամինիլը զգաց և ծնկան վրայ ետ քաշուեցաւ։

—Ո՛հ, մրմնջեց Տանթէս, մարդու մը ձայն կը լսեմ։

Չորս-հինգ տարի կար որ Էտմոն բանտապահէն ուրիշ մէկու հետ խօսած չէր, և բանտարկեալի մը համար բանտապահը մարդ չէ, այլ իր եղեւինէ դրան վրայ աւելցուած կենդանի դուռ մը, ու իր երկաթէ վանդակներուն վրայ կրկնուած մսեղէն վանդակ մը։

—Աստուծոյ սիրոյն, գոչեց Տանթէս, դուն որ հիմա խօսեցար, դարձեալ խօսէ՛, թէև ձայնդ սարսափեցուցած ըլլայ զիս․ ո՞վ ես դուն։

—Դո՛ւն ո՞վ ես, հարցուց ձայնը։

—Խեղճ բանտարկեալ մը, յարեց Տանթէս, որ պատասխանելու մասին դժուարութիւն չէր ցուցներ։

—Ո՞ւր տեղացի ես։

—Ֆրանսացի։

—Անունդ ի՞նչ է։

—Էտմոն Տանթէս։

—Պաշտօ՞նդ։

—Նաւաստի։

—Ո՞րչափ ատենէ ի վեր հոտ ես։

—1815 փետրուար 28էն ի վեր։

—Յանցանքդ ի՞նչ է։

—Անմեղ եմ։

—Բայց ի՞նչ ամբաստանութիւն կը ծանրանայ վրադ։

—Նաբոլէոնի դարձին համար դաւադրութիւն ընելուս։

—Ի՞նչ կ'ըսես, Նաբոլէոնի դարձի՛ն համար․ ուրեմն կայսրը գահին վրայ չէ՞ հիմա։

—1814ին Ֆօնթէնըպլոյի մէջ իշխանութենէ հրաժարեցաւ, ու իր բնակութեան համար Էլպա կղզին տրուեցաւ իրեն։ Բայց դուն ո՞րչափ ատենէ ի վեր հոս ես որ բոլոր ասոնք չես գիտեր։

—1811էն ի վեր։

Տանթէս սարսռաց․ այդ մարդը իրմէ չորս տարի աւելի բանտն էր։

—Շատ լաւ, ա՛լ մի՛ փորեր, ըսաւ ձայնը խիստ շուտ խօսելով․ միայն ըսէ ինծի թէ փորուածքդ ո՞րչափ բարձրութիւն ունի։

—Գետնին հաւասար է։

—Ո՞ւր պահուած է։

—Անկողնիս ետին է։

—Բանտ մտնելէդ յետոյ անկողնիդ տեղը փոխեցի՞ն։

—Բնաւ։

—Սենեակդ ինչի՞ վրայ կը նայի։

—Նրբանցքի մը։

—Նրբա՞նցքը։

—Մինչև բակը կը վերջանայ։

—Ափսո՛ս, մրմնջեց ձայնը։

—Ո՛հ, Տէր Աստուած, ի՞նչ կայ, գոչեց Տանթէս։

—Կը տեսնեմ որ գծագրութեանցս թերութիւններէն խաբուած եմ, կարկինիս սխալելովը կորսուեցայ, յատակագծիս վրայ ըրած մէկ սխալ գիծս տասնըհինգ ոտք տարբերութիւն ըրաւ, և փորած պատս միջնաբերդին պատը կարծեցի։

—Բայց ծովը պիտի հանէիր այն ատեն։

—Ուզածս ալ ատ էր։

—Եւ եթէ յաջողէի՞ր։

—Ծովը նետուելով պիտի լողայի, Իֆ դղեակը շրջապատող կղզիներէն մէկուն վրայ պիտի ելլէի, կամ Տօմ կամ Թիպուլէն կղզին, և կամ ծովեզերքի մէկ կողմը, այն ատեն պիտի ազատէի։

—Մինչեւ հոն պիտի կարենայի՞ր լողալ։

—Աստուած ոյժ պիտի տար ինծի, և հիմա ամէն բան կորսուած է։

—Ամէ՞ն բան։

—Այո՛. զգուշութեամբ ծակը նորէն գոցէ, ա՛լ մի՛ աշխատիր, բանով մը մի՛ պարապիր, և լուրերուս սպասէ։

—Գոնէ ինծի ըսէ թէ ո՞վ ես դուն։

—Ե՞ս... 27րդ թիւն եմ։

—Իմ վրաս վստահութիւն չունի՞ս, հարցուց Տանթէս։

—Էտմոնի այնպէս թուեցաւ որ դառն ծիծաղ մը կը լսէր, որ գմբէթը ծակելով մինչեւ իրեն հասաւ։

—Ո՛հ, ես բարի քրիստոնեայ մըն եմ, գոչեց Տանթէս, բընազդումով գուշակելով որ այդ մարդը զինքը լքելու կը ջանար. կ'երդնում Քրիստոսի վրայ որ կը նախընտրեմ մեռնիլ քան թէ քու և իմ դահիճներուս ցուցնել ճշմարտութեան ստուերը. բայց Աստուծոյ սիրոյն ըլլայ, զիս մի զրկեր ներկայութենէդ, մի զրկեր քու ձայնէդ, եթէ ո՛չ իրաւ կ'ըսեմ, գլուխս պատին զարնելով պիտի ջախջախեմ, որովհետեւ ծայրայեղ յուսահատութեան մէջ կը գտնուիմ. այն ատեն մահուանս վրայ պիտի ցաւիս։

—Քանի տարեկան ես. ձայնդ երիտասարդի մը ձայնին կը նմանի։

—Քանի, տարեկան ըլլալս չեմ գիտեր, քանի որ հոս գալէս ի վեր ժամանակս չհաշուեցի։ Միայն սա գիտեմ որ տասնըինը տարեկան էի, երբ 1815 փետրուարի 28ին բանտարկուեցայ։

—Ուրեմն հազիւ քսանըվեց տարեկան ես, մրմնջեց ձայնը։ Այդ տարիքիդ մէջ անկարելի է որ մատնիչ մը ըլլաս։

—Ո՛հ, ո՛չ, ո՛չ. կ'երդնում, յարեց Տանթէս։ Արդէն քեզի ըսի և դարձեալ կ'ըսեմ, կը նախընտրեմ ինքզինքս կտոր կտոր ընել քան թէ քեզ մատնել։

—Աղէկ ըրիր որ հետս խօսեցար և ինծի աղաչեցիր. կը խորհէի ուրիշ ճամբայ մը բռնել և քենէ հեռանալ։ Բայց տարիքդ զիս կը վստահեցնէ. քովդ պիտի գամ. սպասէ ինծի։

—Ե՞րբ։

—Պէտք է որ մեր բախտը կշռեմ, նշանը կու տամ քեզի։

—Բայց կ'աղաչեմ՝ ինծ մի՛ փախչիր, մինակ մի՛ թողուր զիս. կամ դու ինծի եկուր, և կամ թոյլ տուր որ քեզի գամ։ Միատեղ փախչինք, և եթէ չկարենանք փախչիլ, իրարու հետ խօսակցինք, դուն քու սիրելիներուդ և ես իմ սիրելիներուս վրայ։ Անշուշտ մէկը կը սիրես։

—Ես մինակ եմ աշխարհի մէջ։

—Ուրեմն զիս պիտի սիրես. եթէ երիտասարդ ես՝ ընկերդ կ'ըլլամ. իսկ եթէ ծեր՝ զաւակդ։ Հայր մը ունիմ որ հիմա եօթանասուն տարեկան պէտք է ըլլայ, եթէ տակաւին կենդանի է. միայն հայրս և Մէրսէտէս անունով ծաղկատի աղջիկ մը կը սիրէի։ Ապահով եմ որ հայրս զիս մոռցած չէ, բայց սիրուհիս, ո՛հ, Աստուած գիտէ թէ տակաւին զիս կը յիշէ։ Հօրս պէս պիտի սիրեմ քեզ։

—Շատ աղէկ, ըսաւ բանտարկեալը, վաղը կը խօսինք։

Այդ քանի մը խօսքերը այնպիսի ձայնով մը ըսաւ, որ Տանթէս համոզուեցաւ. և ուրիշ բան չհարցուց, այլ ոտքի ելաւ, պատէն թափած գաճը առաջուան պէս զգուշութեամբ պահեց, և անկողինը ծակին առջեւը հրեց։

Այն ատեն Տանթէս սկսաւ իր երջանկութեան վրայ խորհիլ. անշուշտ այնուհետեւ մինակ պիտի չմնար, և գուցէ պիտի ազատէր իսկ. բայց եթէ ընդհակառակը բանտարկեալ մնար, ընկեր մը պիտի ունենար. ընկերակցութեամբ բանտարկութիւնը կէս մը բանտարկուած ըսել է։ Փոխադարձաբար իրարու յայտնուած տրտունջները գրեթէ աղօթք կը համարուին, և երկու հոգի մէկտեղ եղած աղօթքը գրեթէ փառաբանութիւն է։

Բոլոր օրը Տանթէս զնդանին մէջ կ'երթեւեկէր, սիրտը ուրախութենէն կը բաբախէր, սակայն ատեն ատեն այդ ուրախութիւնը կը խեղդէր զինքը։ Անկողնին վրայ կը նստէր՝ սիրտը ձեռքով սեղմած։ Նրբանցքին մէջ շշնջիւն մը լսելուն պէս՝ դէպ ի դուռը կը ցատկէր։ Մէկ երկու անգամ վախցաւ, որ գուցէ այդ մարդէն զինքը բաժնեն, զոր չէր ճանչնար բնաւ,

բայց արդէն իբր բարեկամ կը սիրէր։ Ուստի որոշած էր որ երբ բանտապահը իր անկողինը մէկդի քաշելով, բացուած ծակը քննելու համար գլուխը ծռելու ըլլար, անոր գլուխը պիտի ջախջախէր այն սալաքարով, որուն վրայ կուժը կը դնէր։

Աղէկ գիտէր որ զինքը մահուան պիտի դատապարտէին. բայց միթէ տառապանքով եւ յուսահատութեամբ պիտի չը մեռնէ՞ր արդէն. այդ միջոցին հրաշալի շշնչիւնը վերստին կենդանացուց զինքը։

Իրիկուան, բանտապահը եկաւ. Տանթէս անկողնին վրայ նստած էր. իրեն այնպէս կը թուէր որ այդ կիսաբաց ծակը աւելի աղէկ կը ծածկէր. այս անգամ անսովոր նայուածք մը ուղղած ըլլալու էր տաղտկալի այցելուին, որ բանտապահը ըսաւ.

—Ըսէ՛ նայինք, խենթութիւն պիտի ընե՞ս նորէն։

Տանթէս պատասխան չտուաւ, վախնալով որ ձայնին այլայլութիւնը զինքը կը մատնէ։

Բանտապահը գլուխը շարժելով մեկնեցաւ։

Գիշերը վրայ հասնելով, Տանթէս կարծեց թէ լռութեան և մթութեան մէջ իր դրացին նորէն պիտի սկսէր խօսակցիլ. բայց կը սխալէր, գիշերը անցաւ, և շշնչիւն մը իսկ իր եռանդագին յոյսը չպսակեց։ Սակայն, հետեւեալ օրը, առաւօտեան այցելութենէն յետոյ, երբ անկողինը պատին առջեւէն մէկդի կը քաշէր, հաւասար ընդմիջումներով երեք անգամ զարնուիլը լսեց. անմիջապէս ծունկի եկաւ։

—Դո՞ւք էք, ըսաւ Տանթէս. ահա՛ւասիկ հոս եմ։

—Բանտապահդ գնա՞ց, հարցուց ձայնը։

—Այո՛, պատասխանեց Տանթէս, իրիկունէ առաջ չպիտի վերադառնայ. տասներկու ժամ ազատութիւն ունինք։

—Ուրեմն կրնամ աշխատիլ, ըսաւ ձայնը։

—Ո՛հ, այո՛, այո՛, կ'աղաչեմ անյապաղ լմնցուցէք գործերնիդ։

Նոյն միջոցին, գետնին այն մասը, որուն վրայ Տանթէս կիսով չափ ծակին մէջ մտած՝ երկու ձեռքերը կռթնցուցած էր, գրեթէ վար կը սահէր. անմիջապէս դէպ ի ետ նետուեցաւ. այն ատեն իր բացած ծակին տակ խրամատ մը բացուեցաւ, ու հողի և քարի կոյտ մը անոր մէջ ինկաւ։ Քիչ մը ետքը՝ այդ մթին ծակին տակէն, որուն խորութիւնը չէր նշմարուէր, գլուխ մը ելաւ, յետոյ ուսեր, և վերջապէս մարդ մը, որ բացուած ծակէն դիւրաշարժութեամբ դուրս ցատկեց։

ԺԶ. ԳԼՈՒԽ

ՀԱՆՃԱՐԵՂ ԻՏԱԼԱՑԻ ՄԸ

Տանթէս իր նոր բարեկամը գրկին մէջ առաւ, որուն այնչափ ատեն և այնչափ անհամբերութեամբ սպասած էր, և պատուհանին քով տարաւ, որպէս զի մթին բանտին մէջ թափանցող տկար լոյսովը կարենայ աղէկ դիտել զայն։

Կարճահասակ մարդ մըն էր ան, մազերը աւելի կրած վիշտերէն քան թէ տարիքէն ճերմկած, սուր նայուածքով աչքերը մոխրագոյն սուար յօնքերուն տակ ծածկուած էին, մօրուքը դեռ սեւ էր և կուրծքին վրայ կ'իջնէր։ Խորունկ խորշոմներով խոռոչած դէմքին նիհարութիւնը և դիմագծութեան համարձակ երեւոյթը ցոյց կուտար որ աւելի բարոյական քան թէ բնական կարողութեանց տէր մէկն էր։ Ճակատը քրտինքով ծածկուած էր։

Իսկ զգեստները այնքան պատռտած էին որ անկարելի էր որոշել անոր նախկին ձեւը։

Գրեթէ վաթսունըհինգ տարեկան կ'երեւէր, թէեւ կորովի շարժումները ի վեր կը հանէին որ այնչափ տարիքը առած չէր որչափ երկար բանտարկութիւնը կը ցուցնէր։

Երիտասարդին եռանդուն խօսքերը ուրախութեամբ մտիկ ըրաւ. սառած սիրտը այդ խանդոտ սրտին մօտենալով, կարծես վայրկեան մը սկսաւ տաքնալ և ամոքիլ։ Շատ շնոր-

հակալ եղաւ անոր անկեղծ բարեկամութենէն, թէեւ յուսախաբ եղած էր երկրորդ ստորերկրեայ բանտի մը պատահելով, ուր կը կարծէր Ազատութիւնը գտնել։

—Ամէնէն առաջ, ըսաւ, նայինք ի՛նչ միջոց պիտի գտնենք իմ անցքիս հետքը բանտապահներէն պահելու համար։ Մեր ապագայ հանգստութիւնը կախում ունի մեր ըրածին վրայ անոնց բան չիմանալէն։

Այն ատեն դէպ ի խրամատը ծռեցաւ, քարը բռնեց, ու հակառակ անոր ծանրութեանը՝ դիւրութեամբ վերցուց և ծակին մէջ դրաւ։

—Այդ քարը խիստ անզգուշութեամբ տեղէն հաներ էք, ըսաւ գլուխը շարժելով. գործիք չունի՞ք։

—Դուք ունի՞ք միթէ, հարցուց Տանթէս զարմանքով։

—Քանի մը հատ շինեցի։ Խարտոցէն զատ բոլոր պէտք եղածները ունիմ, այսինքն գրոց, աքցան, լծակ։

—Ո՜հ, ըսաւ Տանթէս, շատ հետաքրքիր եմ ձեր համբերութեանը և հնարագիտութեանը պտուղները տեսնելու։

—Տե՛սէք շինած գրոցս։

Աբբան ամուր և սրածայր երկաթ մը ցոյց տուաւ, որ կաղամախի փայտի կտորի մէջ անցուած էր։

—Ի՞նչպէս շինեցիք այդ գրոցը, ըսաւ Տանթէս։

—Անկողնիս գամերէն մէկովը։ Այս գործիով փորեցի մինչեւ հոս երկարած ճամբան, որ գրեթէ յիսուն ոտք է։

—Յիսո՛ւն ոտք, աղաղակեց Տանթէս երկիւղով։

—Կամա՛ց խօսեցէք երիտասարդ, աւելի կամա՛ց խօսէ. շատ անգամ բանտարկեալներուն դռներուն առջեւ ականջ կը դնեն։

—Գիտեմ որ մինակ եմ։

—Հոգ չէ։

—Կ՚ըսէք թէ մինչեւ հոս հասնելու համար յիսուն ո՛տք փորեցիք։

—Այո՛, աս է գրեթէ իմ խցիկս ձեր խցիկէն բաժնող հեռաւորութիւնը. միայն թէ երկրաչափական գործիներ չունենալուս, գիծս սխալ հաշուեր եմ. փոխանակ քառասուն ոտք շեղելու, յիսուն ոտք շեղած եմ. ինչպէս ըսի, կը կարծէի թէ մինչեւ արտաքին պատին պիտի հասնիմ, և այս պատը ծակելով ծովը պիտի նետուէի։ Բայց փոխանակ ձեր խցիկին ետեւի նրբանցքին տակէն անցնելու, անոր երկայնքը փորած եմ. բոլոր աշխատութիւնս ի դերեւ ելաւ, քանի որ այս նրբանցքը պահնորդներով լեցուն բակի մը վրայ կը նայի։

—Այնպէս է, ըսաւ Տանթէս. բայց այս նրբանցքը իմ խցիկիս միայն մէկ երեսին վրայ է, ու խցիկս չորս երես ունի։

—Այո՛, անտարակոյս, բայց այս երեսին պատը ժայռ մըն է, և այն ժայռը ծակելու համար, տասը ականափոր պէտք է՝ իրենց պէտք եղած բոլոր գործիներովը տասը տարի աշխատելու պայմանաւ. միւս երեսին ետին կառավարչին բնակարանին հիմերը ըլլալու են. մառաններուն մէջ պիտի իյնանք որոնք անշուշտ կղպուած են, և հոն պիտի բռնուինք. իսկ միւս երեսը կը նայի, կեցէ՛ք, ո՞ւր կը նայի միւս երեսը։

Այս երեսը պարիսպին որմածակին վրայ կը նայէր, որուն մէջէն լոյսը կուգար. այդ որմածակը, որ հետզհետէ կը նեղնար, և որուն մէջէն փոքր տղայ մը անգամ չէր կրնար անցնիլ, երեք կարգ երկաթէ վանդակներով ամրացած էր. խիստ կասկածոտ բանտապահն անգամ կրնար վստահացնել թէ այն կողմէն փախչելու վախ չկար։

Այդ հարցումէն յետոյ՝ նորեկը սեղանը պատուհանին տակ քաշեց։

—Սեղանին վրա՛յ ելէք, ըսաւ Տանթէսին։

Այս վերջինը հնազանդեցաւ, սեղանին վրայ ելաւ, և ընկերոջ դիտաւորութիւնը հասկնալով, ուսը պատին կռթնցուց, և ձեռքը անոր երկարեց։

Ընկերը, որ խցիկին թիւովը կ՚անուանէր զինքը, և որուն ճիշդ անունը տակաւին չէր գիտեր Տանթէս, այնպիսի դիւրաշարժութեամբ մը, որ իր տարիքին անհամապատասխան էր, և կատուի կամ մողէսի ճարպիկութեամբ մը սեղանին վրայ ելաւ, անկէ Տանթէսին և յետոյ ուսերուն վրայ. և որովհետեւ

բանտին գմբէթը շիտակ կանգնելու արգելք կ՚ըլլար, ծռելով գլուխը՝ վանդակներուն առաջին կարգին մէջ խօթեց, որով վերէն վար կրցաւ նայիլ։

Վայրկեան մը ետքը գլուխը քաշեց իսկոյն։

—Ո՛հ, ըսաւ, միտքէս կ՚անցնէր որ այդպէս պիտի ըլլար։

Տանթէսի մահճոյն վրայէն սեղանին վրայ սահեցաւ, ու սեղանին վրայէն գետին ցատկեց։

—Ի՞նչ բանի վրայ տարակուսած էիք, հարցուց երիտասարդը տխուր դէմքով, անոր ետեւէն ինքն ալ ցատկելով։

Ծերունի բանտարկեալը կը մտածէր։

—Այո՛, ըսաւ, այդպէս է. բանտին չորրորդ ճակատը պահնորդներուն յատուկ ճեմագաւիթի մը վրայ կը նայի, ուր պահապանները կը հսկեն։

—Ստոյգ գիտէ՞ք այդպէս ըլլալը։

—Զինուորին սուինը և հրացանին ծայրը տեսայ. աճապարանքով ներս քաշուեցայ որ չտեսնեն զիս։

—Հիմա ի՞նչ պիտի ընենք, ըսաւ Տանթէս։

—Կը տեսնէք որ բանտէն փախչիլը անկարելի է։

—Ուրե՞մն, յարեց երիտասարդը հարցման ձայնով մը։

—Ուրեմն, ըսաւ ծերունի բանտարկեալը, թող Աստուծոյ կամքը ըլլայ։

Ու ծերունիին դիմացը վրայ տեսնուեցաւ այդ գործէն հրաժարելու նշանը։

Տանթէս շուարած և զարմանքով կը նայէր այդ մարդուն, որ այնչափ երկար ատենէ ի վեր տածած յոյսը ի դերեւ կը հանէր։

—Հիմա՝ ո՛վ ըլլալնիդ պիտի ըսէ՞ք ինծի, հարցուց Տանթէս։

—Ո՛հ, այո՛, եթէ օգուտ մը պիտի ընէ, հիմա որ պիտի չկարենամ ծառայութիւն մը ընել ձեզի։

—Կրնաք մխիթարել և քաջալերել զիս. քանի որ խիստ արիասիրտ կ՚երեւիք ինծի։

Աբբան ժպտեցաւ տխրօրէն։

—Ես աբբայ Ֆարիան եմ, ըսաւ, որ ինչպէս գիտես,

1811էն ի վեր Իֆ դղեակին մէջ բանտարկուած եմ. անկէ առաջ երեք տարի Ֆէնէսթրէլլի բերդը բանտարկուած էի։ 1811ին՝ Բիէմոնթէէն Ֆրանսա փոխադրուեցայ։ Այդ միջոցին իմացայ որ Նաբոլէոն արու զաւակ մը ունեցեր է և այս խանձարրապատ որդին Հռոմի թագաւոր կոչուեր է։ Քիչ մը առաջ ըսածնիդ բնաւ միտքէս չէր անցներ թէ չորս տարի ետքը այն մեծազօր մարդը պիտի կործանի։ Ուրեմն հիմա ո՞վ կը թագաւորէ Ֆրանսայի մէջ, Նաբոլէո՞ն Բ. արդեօք։

—Ո՛չ, Լուի ԺԸ. կը թագաւորէ։

—Լուի ԺԶ.ի Լուի ԺԸ. եղբա՞յրը. ո՛հ, ինչ զարմանալի և գաղտնի են Աստուծոյ վճիռները։ Նախախնամութեան դիտաւորութիւնը ի՞նչ էր արդեօք՝ իր բարձրացուցածը խոնարհեցնելով, և խոնարհեցուցածը բարձրացնելով։

Տանթէս նայուածքը այդ մարդուն վրայէն չէր հեռացըներ, մարդ մը որ աշխարհի վիճակին վրայ խորհելով իր վիճակը կը մոռնար։

—Այո՛, այո՛, շարունակեց ծերունին. Անգլիա ալ այսպէս եղած է. Կարոլոս Ա.էն յետոյ Քրոմուէլ իշխեց, Քրոմուէլէն յետոյ՝ Կարոլո՛ս Բ. և գուցէ Յակոբ Բ.էն յետոյ, ազգական մը, Օրանժի իշխան մը, կամ հանրապետական մը թագաւոր պիտի ըլլայ. և այն ատեն՝ նոր թոյլտուութիւններ կ՚ըլլան ժողովուրդին, սահմանադրութիւն մը կը հաստատուի և ազատութիւն կը հռչակուի։ Բոլոր ասոնք պիտի տեսնէք, երիտասարդ, ըսաւ դէպի Տանթէս դառնալով և մարգարէի մը պէս խորունկ նայուածք մը ուղղելով անոր։ Տակաւին երիտասարդ էք, կրնաք տեսնել։

—Այո՛, եթէ ասկէ դուրս ելլեմ։

—Ա՛հ, ստոյգ է, ըսաւ աբբայ Ֆարիա, բանտարկեալ ենք. ատեն կուգայ որ կը մոռնամ բանտի մէջ ըլլալս. այդ միջոցին աչքերս բանտին պատերէն դուրս թափանցելով ու աշխարհիս վրայ խորհելով, ազատ կը կարծեմ ինքզինքս։

—Բայց ինչ պատճառաւ բանտարկուած էք։

—Ե՞ս, 1811ին Նաբոլէոնի ի գործ դրածը 1807ին երա-

զէլոսս համար․ որովհետեւ Մաքիավէլլի պէս ուզեց Իտալիա միացած, առանձին և զօրաւոր տէրութիւն մը տեսնել, փոխանակ այն իշխանութեանց, որոնք Իտալիան բռնաւոր և տկար թագաւորութեանց բոյն մը ըրած են։ Որովհետեւ Կեսար Պորճիայի սիրտը պսակաւոր ագէտի մը վրայ կարծեց գտնել, որ համոզուիլ ձեւացնելով՝ մատնեց զիս։ Աղեքսանդր Զ.ի և Կղեմէս Է.ի գաղափարն ալ այդպէս էր, սակայն Իտալիա միշտ պիտի լինայ․ անոնք պարապ տեղը աշխատեցան և Նաբոլէոն չկրցաւ գլուխ հանել իր գաղափարը։ Ստուգիւ Իտալիան անիծեալ է։

Ծերունին գլուխը խոնարհեցուց։

Տանթէս չէր հասկնար թէ ի՛նչպէս մարդ մը կրնար իր կեանքը վտանգի մէջ դնել այսպիսի գործերու համար։ Իրաւ է որ Նաբոլէոնը կը ճանչնար՝ զայն տեսած և հետը խօսած ըլլալուն համար, բայց բնաւ չէր գիտեր թէ ո՛վ էին Կղեմէս Է. և Աղեքսանդր Զ.։

—Դուք չէ՞ք, ըսաւ Տանթէս, բանտապանին համակարծիք գտնուելով, ինչպէս Իֆ դղեակին մէջ ամէն ոք, դուք չէ՞ք այն անձը, զոր... հիւանդ կը կարծեն։

—Զոր խենթ կը կարծեն ըսել կ'ուզէք, այնպէս չէ՞։

—Չհամարձակեցայ ըսելու, յարեց Տանթէս ժպտելով։

—Այո՛, այո՛, շարունակեց Ֆարիա ատելութեան ծիծաղով մը, այո՛, խենթ անունն ունեցողը ու այսչափ երկար ատեն զուարճացնողը ես եմ. փոքր տղոց ալ զուարճութիւն պիտի պատճառէի, եթէ երբեք այս անյոյս բնակարանին մէջ փոքր տղաք ևս գտնուէին։

Պահ մը Տանթէս անշարժ և անձայն մնաց։

—Ուրեմն փախչելէ պիտի հրաժարիք, ըսաւ։

—Կը տեսնեմ որ փախչիլը անկարելի է. Աստուծոյ չուզածը փորձել՝ Աստուծոյ դէմ ապստամբիլ է։

—Ինչո՞ւ կը վհատիք. Նախախնամութենէն մէկ անգամ խնդրելէ յետոյ բաղձանքին հասնիլ ուզելը անիրաւ պահանջում մըն է։ Այս կողմը բացուած ճամբուդ պէս չէ՞ք կրնար ուրիշ կողմ մըն ալ բանալ։

—Դիւրին է ըսելը, բայց գիտէ՞ք ինչ նեղութիւններ կրեցի։ Գիտէ՞ք որ չորս տարի զոհեցի՝ միայն գործիքներս շինելու համար․ գիտէ՞ք որ երկու տարիէ ի վեր պնդաքարի նման խիստ հող մը քերելով կը փորեմ․ գիտէ՞ք որ այնպիսի քարեր տեղէն հանելու ստիպուեցայ, զորս առենօք չէի կրնար շարժել իսկ․ ամբողջ օրեր այս հսկայական գործով զբաղած եմ․ ինքզինքս երջանիկ կը համարէի երբ շատ անգամ մինչեւ իրիկուն աշխատելով, քարի պէս քարացած գաճէն քառակուսի բթաչափ մը փորէի։ Գիտէ՞ք որ հողը և քարերը թաղելու համար, սանդուխի մը գմբէթը ճեղքելու ստիպուեցայ, և անոր խոռոչին մէջ փորածներս կը լեցնէի հետզհետէ, այնպէս որ հիմայ այդ լեցուած ըլլալուն, բուռ մը փոշի դնելու տեղ չկայ։ Գիտէ՞ք վերջապէս թէ ես իմ աշխատութեանցս մէջ նպատակիս հասած կը կարծէի, և այս գործը վերջացնելու հազիւ ոյժ ունէի, և ահա Աստուած ո՛չ միայն նպատակէս հեռացուց զիս, այլ և չեմ գիտեր ուր պիտի տանի վերջս։ Ա՛հ, ես ձեզի ըսի, և դարձեալ կը կրկնեմ, ազատութիւնս նորէն ձեռք ձգելու համար այսուհետեւ ուրիշ փորձ մը չպիտի ընեմ, որովհետեւ Աստուծոյ կամքը այն է որ յաւիտեանս բանտարկուած մնամ։

Էտմոն գլուխը խոնարհեցուց, որպէս զի չյայտնէ ընկեր մը ձեռք բերած ըլլալուն համար զգացած ուրախութիւնը, որ չէր թողուր զինքը կարեկից ըլլալ ազատիլ չկրցող բանտարկեալին զգացած ցաւին։

Աբբայ Ֆարիա Էտմոնի անկողնին վրայ ինկաւ, և Էտմոն կանգուն մնաց։

Երիտասարդը բնաւ մտքէն չէր անցուցած փախչիլ։ Այնպիսի գործեր կան, որոնք այն աստիճան անկարելի կ'երեւին որ փորձ մը ընել իսկ չի խորհիր մարդ, և բնազդումով ետ կը կենայ անկէ։ Գետնին տակ յիսուն ոտք փորել, այդ գործին համար երեք տարի աշխատիլ, յաջողելու պարագային, ծովու վրայ նայող անդունդ մը հասնիլ, յիսուն, վաթսուն, կամ դուցէ հարիւր ոտք բարձրութենէ վար գահավիժիլ, ինկած ատեն

գլուխը ժայռի մը վրայ ջախջախել, եթէ պահնորդներուն գնդակը արդէն հոն գետինը չփռէ զինքը․ և եթէ այդ ամէն վտանգներէն ազատէր, մղոն մը տեղ լողալով անցնելու հարկադրուիլ, այդ ամէն դժուարութիւնները բաւական էին անոր միտքը փոխելու, և տեսանք որ Տանթէս այդ գործին վրայ չմըտածելէն զատ՝ մեռնելու անգամ պատրաստուած էր։

Բայց հիմա որ երիտասարդը այնպիսի ծերունի մը կը տեսնէր որ կեանքին հետ կը կառչէր եռանդով, դիտաւորութեանց մէջ օրինակ կ'ըլլար իրեն, սկսաւ մտածել և իր զօրութիւնը կշռել։ Ուրիշ մը իր մտքէն չանցածը փորձած էր․ իրմէ աւելի տարիքոտ, աւելի տկար և աւելի անյաջող մէկը ճարտարութեամբ և համբերութեամբ ձեռք ձգած էր այդ անյուսալի գործին համար պէտք եղած բոլոր գործիները․ բայց սխալհաշիւով մը չէր կրցած յաջողիլ․ ուրիշ մը այդ ամէնը ի գործ դրած էր․ ուրեմն Տանթէսին համար ալ անհնարին բան մը չկար․ Ֆարիա յիսուն ոտք տեղ փորած էր, ինքը հարիւր ոտք կրնար փորել․ Ֆարիա իր յիսուն տարեկան հասակին մէջ երեք տարի զոհած էր այդ գործին, ինքը Ֆարիայի կէս տարիքը ունէր, և վեց տարի կրնար աշխատիլ․ Ֆարիա, աբբայ, գիտուն և եկեղեցական ըլլալով, բնաւ չէր վախնար Իֆ դղեակէն մինչև Րաթօնօ կամ Լըմէր կղզին լողալով անցնելու վտանգէն, ինքը, Էտմօն, նաւաստի և աներկիւղ սուզակ, որ այնչափ անգամ ծովուն խորը իջած էր բուստի ճիւղ մը փնտռելու համար, պիտի տատամսէ՞ր մղոն մը տեղ լողալու, ո՞րչափ ատեն պէտք էր մղոն մը տեղ լողալով անցնելու համար․ ժա՞մ մը։ Շատ անգամ ամբողջ ժամեր ծովու վրայ մնացած չէ՞ր միթէ, առանց ոտքը ծովեզրը դպցնելու։ Ո՛չ, ոչ, Տանթէսի օրինակ մը պէտք էր միայն, որպէս զի քաջալերուէր ան։ Ինչ որ ուրիշ մը ըրած էր կամ կրնար ընել, նոյնը Տանթէս կրնար ընել։

Տանթէս մտածեց պահ մը։

—Փնտռածնիդ գտայ, ըսաւ ծերունիին։

—Ֆարիա սարսռաց, ու այնպիսի կերպարանքով մը գլուխը վեր առաւ որ կարծես կ'ուզէր յայտնել Տանթէսի ըսածը

ճշմարիտ է, իր վհատութիւնը երկար ատեն պիտի չտևէ, ու ըսաւ․

—Տեսնե՛նք, ի՞նչ գտաք։

—Ձեր սենեակէն հոս գալու համար ծակած ճամբանիդ արտաքին ճեմագաւիթին երկայնութեամբն է, այնպէս չէ՞։

—Այո՛։

—Կարծեմ հազիւ տասնըհինգ քայլի չափ հեռու պիտի ըլլայ հոսկէ։

—Գրեթէ։

—Ուրեմն ձեր բացած ճամբուն մէջտեղէն խաչի մը մէկ թևին պէս ճամբայ մը կը բանանք։ Այս անգամ հաշիւները աղէկ կ'ընէք։ Արտաքին ճեմագաւիթին վրայ ծակ մը կը բանանք։ Պահնորդը կը սպաննենք և կը փախչինք։ Այս գաղափարին յաջողութեան համար քաջութիւն պէտք է միայն զոր դուք ունիք, և իմ ուժս ալ տեղն է։ Համբերութեան մասին բան չեմ ըսեր․ ձեր փորձերը ըրիք, և ես իմս պիտի ընեմ։

—Կեցէ՛ք, պատասխանեց աբբան, չէք հասկցեր, սիրելի ընկեր, թէ ի՛նչ տեսակ է իմ քաջութիւնս և ի՛նչ գործի մէջ կը գործածեմ ուժս։ Իսկ համբերութեանս համար ըսելիք չկայ․ կարծեմ բաւական համբերութիւն է գիշերուան աշխատութիւնը ամէն առտու և ցերեկուան աշխատութիւնը ամէն գիշեր վերսկսիլը։ Բայց այն ատեն, երիտասարդ, կը կարծէի թէ Աստուծոյ ծառայութիւն մը ըրած կ'ըլլայի իր արարածներէն մէկը ազատելով, որ անմեղ ըլլալուն, պէտք չէր դատապարտուէր։

—Ի՞նչ կ'ըսէք, հարցուց Տանթէս, այդ ալ նոյն միտքը չունի՞․ ուրեմն ըսէք, ինծի պատահելնէդ ի վեր յանցաւո՞ր կը ճանչնաք ինքզինքնիդ։

—Ո՛չ, բայց չեմ ուզեր յանցաւոր ըլլալ։ Մինչև հիմա կը կարծէի որ գործի վրայ կը դառնայ մեր խօսքը, սակայն կը տեսնեմ որ մարդոց կեանքին վտանգ հասցնել կ'առաջարկէք ինծի։ Կրցայ պատ մը ծակել և սանդուխ մը փլցնել, բայց չեմ կրնար կուրծք մը ծակել և էակ մը ջնջել։

Տանթէս զարմանքի թեթև չարժում մը ըրաւ։

—Ի՞նչպէս, ըսաւ, եթէ կարենայիք ազատիլ, այդպիսի մտածումով մը ե՞տ պիտի կենայիք։

—Եւ դուք, ըսաւ Ֆարիա, ինչո՞ւ իրիկուն մը ձեր սեղանին ոտքովը բանտապահը չսպաննեցիք, ու անոր զգեստները հագնելով փախչելու չջանացիք։

—Որովհետեւ միտքս չեկաւ այդ բանը, ըսաւ Տանթէս։

—Պատճառը սա է որ այդ տեսակ մեղք մը գործելու համար այնպիսի բնազդական սոսկում մը ունիք, որ միտքերնիդ անգամ չբերիք, յարեց ծերունին. պարզ և ներելի գործերուն մէջ մեր բնական յօժարութիւնը մեզ կ'ազդարարէ որ պէտք չէ իրաւունքի սահմանէն դուրս ելլենք։ Վագրը, որ բնութեամբ արիւնռուշտ գազան մըն է, քանի որ իր վիճակը, իր ճակատագիրը այդպէս է, միայն մէկ բանի պէտք ունի, այսինքն հոտոտելիքը իմացնէ իրեն թէ ճիրաններուն մօտ որս մը կայ։ Իսկոյն դէպի այդ որսը կը վազէ, անոր վրայ կը յարձակի և կը յօշոտէ զայն։ Այդ է իր բնազդը և անոր կը հնազանդի։ Բայց մարդս ընդհակառակը արիւնհեղութենէ կը խորշի. ընկերային օրէնքը չէ որ մարդասպանութիւնը կ'արգիլէ, այլ բնական օրէնքը։

Տանթէս շփոթած մնաց, իր մտքին և սրտին մէջ անգիտակից զգացումներ ունեցաւ. ոեւէ գաղափար երբեմն գլխէն կը ծագի և երբեմն սրտէն։

—Ասկէ զատ, շարունակեց Ֆարիա, գրեթէ տասներկու տարիէ ի վեր որ այս բանտին մէջ եմ, փախչելու բոլոր ծանօթ ճամբաները մտքիս առջեւ բերած եմ. փախուստը շատ քիչ անգամ յաջողած գտայ։ Յաջողութեամբ փախչելու համար պէտք է աղէկ մտածել և կամաց կամաց պատրաստուիլ. այդ կերպով փախած է Պօֆոր դուքսը Վէնսանի դղեակէն, Պիւքուա աբբան Լ'Էվէք աշտարակէն, և Լաթիւր՝ Պասթիյլէն։ Փախչելու ուրիշ ճամբաներ ալ կան, զորս բախտը կրնայ ներկայացնել, և ատոնք լաւագոյն են. ուրեմն առիթի մը սպասենք. հաւատա՛ ինծի. եթէ այդ առիթը մեզի ներկայանայ չփախցնենք զայն։

—Դուք կրցաք սպասել, ըսաւ Տանթէս հառաչանք մը արձակելով, որովհետեւ այսչափ ատեն երկար աշխատութիւն մը ունէիք. երբ հանգչելու համար աշխատութիւննիդ դադրեցնէիք, ազատութեան յոյսովը կը մխիթարուէիք։

—Ասկէ զատ, ըսաւ աբբան, ուրիշ զբաղում մըն ալ ունէի։

—Ի՞նչ կ'ընէիք։

—Գիր կը գրէի կամ գիտութիւններով կը պարապէի։

—Ուրեմն թուղթ, գրիչ և մելա՞ն կու տա՞ն ձեզի։

—Ո՛չ, ըսաւ աբբան, բայց ես շինեցի։

—Թուղթ, գրիչ և մելա՞ն շինեցիք, գոչեց Տանթէս։

—Այո՛։

Տանթէս զարմանքով նայեցաւ այդ մարդուն երեսը. դժուարութիւն կը ցուցնէր անոր ըսածին հաւատալու։ Ֆարիայի աչքին զարկաւ այդ թեթեւ տարակոյսը։

—Երբ սենեակս գաք, ձեզի ամբողջ աշխատասիրութիւն մը պիտի ցուցնեմ, որ Հռոմի Քոլիզէի աւերին տակ, Վենետիկի Սուրբ-Մարկոսի սիւնին ստորոտը և Ֆիօրէնցայի մէջ Արնօ գետին եզերքը ըրած խորհրդածութիւններս և քննութիւններս կը պարունակէ. բնաւ մտքէս չէր անցներ որ օր մը իմ բանտապահներս գիս պարապ պիտի թողուն՝ Իֆ դղեակին չորս պատերուն մէջ ի գլուխ հանելու համար։ Այդ աշխատասիրութիւնս Իտալիոյ մէջ ընդհանուր ինքնակալութիւն մը հաստատելու կարելիութեան վրայ խորհրդածութիւն մըն է, որ քառածալ մեծ հատոր մը կ'ըլլայ։

—Ի՞նչ բանի վրայ գրեցիք։

—Երկու շապիկի վրայ։ Հնարքով մը՝ կտաւը մագաղաթի պէս ողորկ և հարթ կ'ընեմ։

—Ուրեմն քիմիագէ՞տ մըն ալ էք։

—Քիչ մը. Լավուազիէ քիմիագէտին հետ ծանօթացայ և Քապանիի բժշկին հետ բարեկամացայ։

—Բայց այդպիսի աշխատասիրութեան մը համար անշուշտ պատմական քննութիւններու պէտք ունեցած էք. պէտք եղած գիրքը ունէ՞ք քովերնիդ։

—Հռոմի մատենադարանիս մէջ հինգ հազար գիրք ունէի․ շատ անգամ կարդալով հասկցայ որ հարիւր յիսուն խիստ ընտիր գիրքերով մարդ կրնայ եթէ ոչ մարդկային գիտութեանց ամբողջ համառօտութիւնը, գոնէ մարդու մը պէտք եղածները սորվիլ։ Կեանքիս երեք տարին այդ հարիւր յիսուն հատոր գիրքերը կարդալու զոհեցի, այնպէս որ բանտարկութեանս միջոցին գրեթէ բերնուց գիտէի, ու բանտիս մէջ աշխատեցայ զանոնք միտքս պահել։ Ամէնէն ականաւորներէն ոմանք յիշեմ, որոնք են Քսենոփոն, Պլուտարքոս, Տիտոս-Լիվիոս, Թասիտ, Սթրատա, Տանթէ, Մօնթէնեը, Շէյքսփիր, Սփինոզա, Մաքիավէլ եւ Պոսիւէ։

—Շատ լեզուներ գիտէք ուրեմն։

—Հինգ կենդանի լեզու կը խօսիմ, ինչպէս՝ գերմաներէն, ֆրանսերէն, իտալերէն, անգլիերէն և սպանիերէն. հին յունարէնին օգնութեամբը արդի յունարէնը կը հասկնամ. միայն թէ դէշ կը խօսիմ. բայց հիմա կ'աշխատիմ սորվելու։

—Սորվելո՞ւ կ'աշխատիք, ըսաւ Տանթէս։

—Այո՛, գիտցած բառերուս բառգիրք մը շինեցի, և խօսքեր շարադրեցի, որպէս զի կարենամ միտքս յայտնել։ Գրեթէ հազար բառ գիտեմ. ինծի պէտք եղածն ալ այդչափ է, թէև բառարանները հարիւր հազար բառ կը պարունակեն կարծեմ։ Միայն պիտի չկրնամ պերճախօս ըլլալ, բայց միտքս բաւական աղէկ պիտի կարենամ հասկցնել. այդքանը բաւական է ինծի։

Էտմոն ա՛լ աւելի ապշած. այդ զարմանալի մարդուն կարողութիւնները գրեթէ գերբնական կը կարծէր։ Ո՛ր և է կէտի վրայ անոր սխալը բռնել ուզելով, շարունակեց.

—Քանի որ գրիչ չեն տուած ձեզի, ի՞նչպէս կրցաք այս մեծահատոր աշխատասիրութիւնը գրել։

—Պահք օրերը երբեմն մեզի բերուած մեծ գայլաձուկերուն գլխի կռճիկներովը խիստ գեղեցիկ գրիչներ շինեցի, որոնք սովորական գրիչներէն աւելի ընտիր պիտի համարուէին, եթէ նիւթը ճանչցուած ըլլար։ Ուստի մեծ ուրախութեամբ երեքշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերուն կը սպասեմ միշտ, քանի որ այդ օրերը գրիչներս աւելցնելու յոյսը կ'ունենամ. ճշմարիտ կ'ըսեմ որ իմ պատմական աշխատութիւններս խիստ քաղցր զբաղում մըն են։ Անցեալին մէջ իջնելով, ներկան կը մոռնամ. պատմութեան մէջ ազատ և անկախ քալելով՝ բանտարկեալ ըլլալս ալ չեմ յիշեր։

—Բայց մելանը ի՞նչպէս շինեցիք, հարցուց Տանթէս։

—Ատենօք բանտիս մէջ կրակարան մը կայ եղեր, ըսաւ Ֆարիա, այս կրակարանը անտարակոյս իմ հասնելէս քիչ առաջ գոցած ըլլալու են, բայց շատ տարիներ մէջը կրակ վառած ըլլալով, ներսի կողմը մուրով ծածկուած էր Այդ մուրը քիչ մը գինիի հետ խառնելով, զոր ամէն կիրակի ինծի կու տան, խիստ ընտիր մելան մը առաջ կու գայ։ Մասնաւոր և ուշադրութեան արժանի ծանօթութեանց համար մատերս կը ծակեմ ու արիւնովս կը գրեմ։

—Ե՞րբ պիտի տեսնեմ ատոնք, ըսաւ Տանթէս։

— Երբ որ ուզէք, պատասխանեց Ֆարիա։

—Ո՛հ, հիմա անմիջապէս, գոչեց երիտասարդը։

—Ետեւէ՛ս եկէք ուրեմն։

Աբբան ստորերկրեայ նրբանցքին մէջ մտնելով աներեւոյթ եղաւ, Տանթէս ալ անոր ետեւէն գնաց։

ԺԷ. ԳԼՈՒԽ

ԱՐՔԱՅԻՆ ՍԵՆԵԱԿԸ

Ստորերկրեայ անցքէն ծռելով, բայց բաւական դիւրութեամբ անցնելէն յետոյ, աբբային սենեակը հասաւ Տանթէս։ Այդ անցքը աբբային սենեակին մօտ այնչափ նեղ էր որ սողալով անցնելու չափ հազիւ տեղ կար։

Սրբային սենեակը սալաքարերով յատակուած էր․ խիստ մութ անկիւնէն այդ սալաքարերէն մէկը հանելով՝ Ֆարիա տաժանելի գործը սկսած էր, որուն վերջը տեսաւ Տանթէս։

Երիտասարդը վեր ելլելով և կանգնելով, մեծ ուշադրութեամբ զննեց սենեակը, որուն առաջին երևոյթը արտակարգ բան մը չունէր, աչքի զարնելու համար։

—Աղէկ, ըսաւ աբբան, դեռ կէսօրը քառորդ անցած է, առջևնիս քանի մը ժամ ունինք դեռ։

Տանթէս չուրջը նայեցաւ որպէսզի տեսնէ թէ պատի ո՞ր ժամացոյցին վրայ աբբան կրցած էր ճիշդ ժամը հասկնալ այդպէս։

—Տեսէ՛ք սա պատուհանէս ներս թափանցող լոյսի ճառագայթը, ըսաւ աբբան, և պատին վրայ քաշած գիծերս դիտեցէք։ Այս գիծերով, որոնք երկրիս կրկին շարժմանը, այսինքն իր առանցքին և արևուն բոլորտիքը ըրած շրջանին վրայ յարմարցուած են, ժամացոյց մը ունենալէս աւելի ճիշդ գիտեմ ժամանակս․ ժամացոյցը կրնայ չփոթիլ, իսկ արեգակը և երկիրը երբէք չեն չփոթիր։

Տանթէս բան մը չհասկցաւ այդ խօսքէն․ լեռներուն ետևէն արևուն ելլելն ու Միջերկրական ծովուն մէջ մարը մտնելը տեսնելով, Էտմոն միշտ այնպէս կարծած էր թէ արևն է քալողը և ոչ՝ երկիրը։ Իր բնակած աշխարհին երկու կերպ շարժումը, զոր ինքը չէր զգար բնաւ, գրեթէ անկարելի կը թուէր իրեն։ Սրբային իւրաքանչիւր խօսքին մէջ գիտութեան գաղտնիք կը տեսնէր, որոնք աւելի զարմանալի կը թուէին իրեն, քան թէ ոսկիի և ադամանդի այն հանքերը, զորս իր մանկութեան ժամանակ դէպ ի Կիւզարաթ և Կոլքոնտ ըրած ճամբորդութեան մէջ տեսած էր։

—Օն, շատ փափաք ունիմ ձեր գանձերը դիտելու, ըսաւ Տանթէս։

Աբբան դէպի կրակարանը գնաց, և միշտ ձեռքը բռնած գրոցովը կրակարանին առջև իբր կափարիչ դրուած քարը տեղէն հանեց, որ բաւական խորունկ խոռոչ մը կը ծածկէր․ հոն պահած էր բոլոր այն առարկաները, որոնց մասին խօսած էր Տանթէսի։

—Նախ ի՞նչ կ՚ուզէք տեսնել, հարցուց ծերունին։

—Իտալիոյ թագաւորութեան վրայ ձեր յօրինած մեծ աշխատասիրութիւնը ցուցուցէ՛ք ինծի։

Ֆարիա իր թանկագին պահարանէն հանեց մագաղաթի թերթերու պէս գալարուած կտաւի երեք չորս պատառներ, որոնք գրեթէ չորս բթաչափ լայնութեամբ և տասնըութը բթաչափ երկայնութեամբ կտաւի երիզներ էին։ Այս երիզները թուագրուած և այնպիսի գրով մը գրուած էին որ Տանթէս կրցաւ կարդալ․ աբբային մայրենի լեզուովը գրուած էին, այսինքն գաւառական իտալերէն․ Տանթէս շատ լաւ կը հասկնար այդ լեզուն։

—Տե՛սէք, ըսաւ, բոլոր աշխատասիրութիւնս ասոնց մէջն է․ գրեթէ ութ օր է որ վաթսունևութերորդ երիզին տակը Վերջ բառը գրեցի։ Շապիկներէս երկուքը և բոլոր ունեցած թաշկինակներս այս բանին գործածած եմ։ Եթէ բանտէն ազատիմ, և Իտալիոյ մէջ այնպիսի տպագրիչ մը գտնուի որ զայն հրատարակելու համարձակի, մեծ համբաւ պիտի շահիմ։

—Այո՛, պատասխանեց Տանթէս, ակներև է։ Հիմա, կ՚աղաչեմ ձեր գրիչները ցոյց տուէք, որոնցմով այս աշխատութիւնը գրած էք։

—Ահա՛, ըսաւ Ֆարիա։

Ու վեց բթաչափ երկայնութեամբ և վրձինի մը կոթին հաստութեամբ փոքր գաւազան մը ցուցուց երիտասարդին, որուն ծայրը դերձանով մը այն աճառներէն մէկուն կապուած էր, որոնց վրայ աբբան խօսած էր Տանթէսի․ ծայրը բարակցած և սովորական գրչի մը պէս ճեղքուած էր։

Տանթէս քննեց զայն, և չուրջը կը նայէր, հասկնալու համար թէ ի՛նչ գործիքով կրցած էր այդպէս ճիշդ կերպով կտրել զայն։

—Ո՛հ, այո՛, ըսաւ Ֆարիա, զմելին է փնտռածնիդ, այնպէս չէ՞․ տեսէ՛ք, իմ գործերուս գլխաւորը աս է․ երկաթէ հին աշտանակէ մը շինեցի այս զմելին և այս դանակը։

Զմելին ածելիի պէս կը կտրէր։ Իսկ դանակը աս առա-

ւելութիւնը ունէր որ թէ՛ դանակի և թէ դաշոյնի տեղ կրնար գործածուիլ։

Տանթէս զանազան առարկաները միեւնոյն ուշադրութեամբ քննեց, ինչպէս Մարսիլիայի հնաքրքրական առարկաներու խանութներուն մէջ յաճախ աչքէ անցուցած էր այն գործիքները, որոնք վայրենիներու կողմէ շինուած են և զորս երկար ճամբորդութիւն ընող նաւապետներ իրենց հետ բերած են Հարաւային ծովերէն։

—Իսկ մելանս, ըսաւ Ֆարիա, գիտէք թէ ի՛նչպէս կը շինեմ։

—Հիմա մէկ բանի վրայ կը զարմանամ, ըսաւ Տանթէս, բոլոր այդ գործերը կատարելու համար ինչպէս ժամանակ ունեցաք։

—Գիշերներն ալ կ'աշխատէի, պատասխանեց Ֆարիա։

—Գիշերնե՛րը․ ուրեմն կատուներու բնութիւն ունիք, և գիշերուան մթութեան մէջ ալ կը տեսնէք։

—Ո՛չ, բայց Աստուած մեր մտքին աղքատութիւնը դարմանելու համար խոհականութիւն տուած է, որով կարողացայ լոյս հնարել։

—Ի՞նչպէս։

—Ինծի բերուած մսին իւղը կը զատեմ, կը հալեցնեմ, և տեսակ մը պինդ իւղ կը պատրաստեմ։ Ահա՛, մոմս։

Աբբան Տանթէսի ցոյց տուաւ փոքր կանթեղ մը, որ հասարակ ճրագի կը նմանէր։

—Բայց կրակը ո՞ւրկից կը գտնէք։

—Հոս երկու գայլախազ և այրած կտաւ կան։ Օր մը մորթային հիւանդութիւն ձևացնելով, ծծումբ ուզեցի, զոր տուին ինծի։

Տանթէս այդ առարկաները սեղանին վրայ դրաւ, և գլուխը կախեց՝ աբբային յարատևութեանը և մտքին կարողութեանը վրայ ապշած։

—Ամէնը աս չէ, շարունակեց Ֆարիա․ բոլոր այս գանձերը մէկ գաղտնի խորշի մէջ դնելու չէ․ գոցենք այս պահարանը։

Քարը տեղը դրին․ աբբան քիչ մը հող ցանեց անոր վրայ և ոտքովը կոխեց, որպէս զի քարին բացուելուն հետքը աներևոյթ ըլլայ, դէպ ի անկողինը յառաջացաւ և տեղէն հանեց զայն։

Սնարին ետին ծակ մը կար այնպիսի քարով մը գոցուած․ գրեթէ ամենևին յայտնի չէր, և այս ծակին մէջ քանըհինգ կամ երեսուն ոտք երկայնութեամբ չուանէ սանդուխ մը կար։

Տանթէս քննեց զայն, և տեսաւ որ շատ ամուր էր։

—Այս զարմանալի գործիդ պէտք եղած չուանը ո՞վ տուաւ ձեզի։

—Նախ իմ ունեցած քանի մը շապիկներովս, յետոյ անկողնիս սաւաններովը շինեցի, որոնց թելերը Ֆենէսթրէլի բերդին մէջ երեք տարուան բանտարկութեանս միջոցին մէկիկ մէկիկ քակած եմ։ Երբ Իֆ դղեակը փոխադրեցին զիս, այս թելերը միասին բերելու միջոցը գտայ, և հոս ջարունակեցի գործս։

—Բայց չէ՞ք տեսներ անկողնիդ սաւաններուն եզերքը քակուած ըլլալը։

—Նորէն կը կարէի զանոնք։

—Ինչո՞վ։

—Այս ասեղով։

Ու աբբան զգեստները բանալով, երկայն, բարակ ու դերձանը անցուցած ձուկի փուշ մը ցուցուց, զոր միշտ վրան կը պահէր։

—Այո՛, շարունակեց աբբան, սկզբան մտածեցի որ այս վանդակները քակեմ և պատուհանէն փախչիմ, որ ինչպէս կը տեսնէք, ձեր պատուհանէն քիչ մը լայն է, և եթէ ուզէի՝ փախչելու ատեն կրնայի լայնցընել, բայց գիտցի որ այս պատուհանը ներքին բակի մը վրայ կը նայի, և այդ վտանգաւոր գաղափարէն ետ կեցայ։ Սակայն սանդուխը անակնկալ պարագայի մը համար պահեցի։

Տանթէս սանդուխը քննելու միջոցին այս անգամ ուրիշ բանի վրայ կը խորհէր․ գաղափար մը կ'անցնէր մտքէն։ Այդ

համարել, հնարագէտ և խորամանկ մարդը գուցէ իրմէ աւելի լաւ կարենար հասկնալ իր դժբախտութեան պատճառը, զոր ինքը չէր կրցած աղէկ մը ճշդել։

—Ի՞նչ բանի վրայ կը խորհիք, հարցուց աբբան ժպտելով, և Տանթէսի մտածումներու մէջ խորասուզուիլը զարմացումի արդիւնք կարծելով։

—Նախ կը մտածեմ թէ այսչափ բարձր խելքով ինչպէս չազատեցիք ինքզինքնիդ։

—Հնարը չգտայ գրեթէ, իմ բոլոր հանճարս սպառեցի։ Դժբախտութիւնը մարդկային մտքին մէջ պահուած գաղտնի հանքերը դուրս հանել կուտայ։ Բանտարկութեանս մէջ մտքիս բոլոր կարողութիւնները մէկ կէտի վրայ կեդրոնացան ու նեղ միջոցի մը մէջ իրարու զարնուեցան. ինչպէս գիտէք, ամպերը իրարու զարնուելով ելեքտրականութիւն առաջ կուգայ, ելեքտրականութենէն՝ փայլատակում, և փայլատակումէն լոյս։

—Ո՛չ, բան մը չեմ գիտեր, ըսաւ Տանթէս, ագիտութենէն պարտուած. ձեր արտասանած բառերուն մէկ մասը անհասկնալի բառեր կը թուին ինծի։ Շատ երջանիկ էք գիտուն ըլլալնուդ համար։

Աբբան ժպտեցաւ։

—Հիմա կ'ըսէիք թէ երկու բանի վրայ մը մտածէք, այնպէս չէ՞։

—Այո՛։

—Առաջինը միայն իմացուցիք ինծի. ո՞րն է երկրորդը։

—Երկրորդը սա է որ ձեր կենսագրութիւնը ըրիք, մինչդեռ իմս չէք գիտեր։

—Բարեկամ, կեանքերնիդ խիստ կարճ եղած ըլլալուն՝ չի կրնար երևելի դիպուածներ պարունակել։

—Կեանքս խիստ մեծ թշուառութիւն մը կը պարունակէ, ըսաւ Տանթէս, այնպիսի թշուառութիւն մը, որուն ես արժանի չէի. այսուհետև Աստուծոյ հայհոյութիւն չընելու համար, ինչպէս երբեմն ըրի, կ'ուզէի իմ ձախորդութեանս պատճառը մարդիկ համարել։

—Ուրեմն ձեր վրայ եղած ամբաստանութիւնը անիրա՞ւ կը կարծէք։

—Աշխարհիս մէջ ունեցած երկու սիրելի անձերուս վրայ, այսինքն՝ հօրս և Մէրսէտէսի վրայ կ'երդնում որ բոլորովին անմեղ եմ։

—Օն, ըսաւ աբբան իր գաղտնի դարանը գոցելով և անկողինը դարձեալ տեղը հրելով, պատմեցէք նայինք։

Տանթէս սկսաւ իր պատմութիւնը ընել, որ կը պարունակէր մէկ անգամ դէպ ի Հնդկաստան և երկու երեք անգամ դէպ ի արևելք ըրած ճամբորդութիւնները, վերջապէս խօսքը իր վերջին ուղևորութեանը վրայ դարձաւ, Լըքլէր նաւապետին մահուանը, անկէ մեծ մարաջախտին համար իրեն յանձնուած ծրարին, մեծ մարաջախտին հետ ունեցած խօսակցութեանը, այս վերջնոյն կողմէ իրեն յանձնուած և Պ. Նուարթիէին ուղղուած նամակին վրայ մանրամասնութիւններ յայտնեց. յետոյ խօսեցաւ Մարսիլիա հասնելուն, հօրը հետ ունեցած խօսակցութեանը, Մէրսէտէսի նկատմամբ զգացած սիրոյն, իր նշանտուքի ճաշին, ձերբակալուելուն, հարցաքննուելուն, դատական պաշտօնատան մէջ առժամանակեայ բանտարկութեանը, և վերջապէս Իֆ դղեակին մէջ բանտարկութեանը վրայ։ Տանթէս չէր գիտեր ո՛րչափ ատեն բանտի մէջ մնալը։

Պատմութիւնը աւարտելուն, աբբան վայրկեան մը խորունկ մտածելէն յետոյ, ըսաւ.

—Խիստ խորունկ ճշմարտութիւն մը կայ, որ արդէն ըսածիս կը պատշաճի. թէ մարդկային բնութիւնը ոճրի հակառակ է, եթէ գէշ մտածում մը միացած չըլլայ մարդկային խանգարուած կազմի մը։ Սակայն քաղաքակրթութիւնը պէտքեր, մոլութիւններ, կեղծ ախորժներ տուած է մեզի, որոնք շատ անգամ մեր բարի բնազդները խեղդելու ազդեցութիւնը ունին, և որոնք մեզ դէպի չարը կ'առաջնորդեն։ Անկէ կը հետևի սա առածը. եթէ կ'ուզես յանձաւորը գտնել, փնտռէ նախ այն անձը, որ կրնայ օգտուիլ գործուած ոճիրէն։ Ձեր աներևոյթ ըլլալը ո՞րու կրնար օգտակար ըլլալ։

—Ո՛չ, և ո՛չ մէկուն, քանի որ աննշան մարդ մըն էի։

—Այսպէս մի՛ պատասխանէք, որովհետեւ այդ պատասխանը տրամադրութենէ ու փիլիսոփայութենէ զուրկ է. ամէն բան իրարու հետ յարաբերութիւն ունի, սիրելիս, Թագաւորէն սկսեալ, որ իր ապագայ յաջորդը կը նեղէ, մինչեւ պաշտօնեան, որ իր ստորակարգ անթոշակ պաշտօնեան կը նեղէ։ Երբ Թագաւորը մեռնի, յաջորդը կը ժառանգէ Թագը, երբ պաշտօնեան մեռնի, ստորակարգ պաշտօնեան անոր տասներկու հազար ֆրանք թոշակը կը ժառանգէ։ Այդ տասներկու հազար ֆրանքը իր սովորական եկամուտն է, ապրուստին համար այնչափ անհրաժեշտ, որչափ տասներկու միլիոնը՝ Թագաւորի մը։ Ընկերային սանդուխին բարձրագոյն աստիճանէն մինչեւ ամէնէն ստորինը գտնուող անձը իր շուրջը ունի շահախնդիր անձերու փոքրիկ աշխարհ մը իր յորձանքներովը ու հիւլէներովը Տէքարթի աշխարհներուն պէս։ Միայն թէ այդ աշխարհները ո՛րչափ բարձրանան, այնչափ կը լայնան, սակայն հաւասարակշռութեան կէտ մը ունին։ Դառնանք ուրեմն ձեր աշխարհին։ Փարաոն նաւուն նաւապետ պիտի ըլլայիր, այնպէս չէ՞։

—Այո՛։

—Գեղեցիկ ու ծաղկատի աղջկան մը հետ պիտի ամուսնանայի՞ր։

—Այո՛։

—Փարաոնի նաւապետ չըլլալնուդ և Մէրսէտէսի հետ չամուսնանալնուդ մէջ շահ ունէ՞ր մէկը։ Նախ առաջին հարցմանս պատասխան տուէք. կարգը ամէն խնդիրներուն բանալին է։ Փարաոնին նաւապետ չըլլալնուդ մէջ շահ ունէ՞ր մէկը։

—Ո՛չ. նաւուն մէջ խիստ սիրելի էի ամէնուն։ Եթէ նաւաստիները կարենային իրենց պետ մը ընտրել, հաւաստի եմ որ զիս պիտի ընտրէին։ Միայն մէկը կար որ ինծի հակառակելու պատճառ ունէր. քիչ առեն առաջ մէջերնիս կռիւ մը ծագելով, մենամարտ մը առաջարկած էի և ան չէր ընդունած։

—Ի՞նչ կ'ըսէք։ Այդ մարդուն անունը ի՞նչ էր։

—Տանկլար։

—Նաւուն մէջ ի՞նչ պաշտօն ունէր։

—Համարակալ էր։

—Եթէ նաւապետ ըլլայիք, իր պաշտօնին մէջ պիտի պահէ՞ իք զինքը։

—Ո՛չ, եթէ գործը ինէ կախում ունենար, որովհետեւ իր հաշիւներուն մէջ քանի մը նենգութիւններ դիտեցի։

—Լաւ։ Հիմա ըսէք թէ Լըքլէր նաւապետին հետ ունեցած ձեր խօսակցութեան մէկը ներկա՞յ էր։

—Ո՛չ, մինակ էինք։

—Ձեր խօսակցութիւնը մէկը կրցա՞ւ լսել։

—Այո՛, որովհետեւ դուռը բաց էր. նոյն իսկ, կեցէ՛ք... հիմա միտքս եկաւ, այո՛, այո՛, Տանկլար ճիշդ այդ միջոցին դրան առջեւէն անցաւ, երբ Լըքլէր նաւապետը մեծ մարաջախտին համար ծրար մը կը յանձնէր ինծի։

— Լաւ, ըսաւ աբբան, ճամբուն մէջ ենք։ Էլպա կղզին խարիսխ նետելէն յետոյ, մէկը ցամաք տարի՞ք հետերնիդ։

—Ո՛չ։

—Նամակ մը յանձնուեցա՞ւ ձեզի։

—Այո՛, մեծ մարաջախտէն։

—Ի՞նչ ըրիք այն նամակը։

—Թղթապանակիս մէջ դրի։

—Թղթապանակը վրանի՞դ պահած էիք. ինչպէս կ'ըլլար որ պաշտօնական նամակ մը պարունակող թղթապանակ մը նաւաստի մը իր գրպանը պահէ։

—Իրաւունք ունիք, թղթապանակս նաւուն մէջն էր։

—Ուրեմն նաւը դառնալէ՛դ յետոյ նամակը պահարանին մէջ դրիք։

—Այո՛։

—Փորթօ-Ֆէրրայօէն մինչեւ նաւը ո՞ւր դրիք նամակը։

—Ձեռքս բռնեցի։

—Երբ Փարաոնը վերադարձաք, ուրեմն ամէն մարդ տեսա՞ւ այդ նամակը։

—Այո՛։

—Տանկլար ալ տեսա՞ւ։

—Այո՛։

—Հիմա մտի՛կ ըրէք· բոլոր յիշատակնիդ ամփոփեցէք· կը յիշէ՞ք ամբաստանութեան նամակին ի՛նչ կերպով գրուած ըլլալը։

—Ո՛հ, այո՛․ երեք անգամ կարդացի, և բառ առ բառ կը յիշեմ զայն։

—Կրկնեցէք ուրեմն զայն։

Տանթէս քիչ մը մտածելով,

—Ահա, ըսաւ, ամբաստանութեան նամակին բուն օրինակը·

Արքայական գահի եւ կրօնքի բարեկամ մը ընդհանուր դատախազի օգնականին կ՚իմացնէ թէ Փարաւոն նաւուն երկրորդ նաւապետը Էտմոն Տանթէս, որ այս առտու Իզմիրէն եկաւ, Նեապօլիս եւ Բորթօ-Ֆէրրայօ հանդիպելով, Միւրայէն Յափշտակիչին նամակ մը տարաւ. եւ Յափշտակիչէն Բարիզի Պոնապարդեան ժողովրդեան ուղղուած նամակ մը բերած էր:

Տանթէսի ոճիրին ապացոյցը ձեռք կրնայ բերուիլ զայն բանտարկելով, որովհետեւ նամակը կա՛մ իր վրայ, կամ հօրը տունը եւ կամ Փարաւոն նաւուն մէջ իր սենեակը պիտի գտնէք:

Աբբան ցնցեց ուսերը։

—Ցերեկուան լոյսին պէս պայծառ է որ ըսաւ, դուք խիստ միամիտ և բարեսիրտ ըլլալու էք որ այդպիսի բան մը անմիջապէս չէք կռահած։

—Իրա՞ւ կ՚ըսէք, ըսաւ Տանթէս։ Ա՜հ, գարշելի բան է։

—Տանկլարի սովորական գրութիւնը ի՞նչպէս էր։

—Գեղեցիկ հոսող գիր մը ունէր։

—Անանուն նամակին գիրը ի՞նչպէս էր։

—Ծուռ գրով գրուած էր։

Աբբան ժպտեցաւ։

—Կեղծուած, այնպէս չէ՞։

—Ի՞նչպէս կրնայ կեղծուած ըլլալ։

—Սպասեցէք, ըսաւ։

Աբբան առաւ գրիչը կամ գրիչ ըսածը, մելանին մէջ թաթխեց և իբր թուղթ պատրաստուած կտաւի մը վրայ մատնութեան նամակին առաջին երկու կամ երեք տողը գրեց ձախ ձեռքով։

Տանթէս ետ քաշուելով աբբային երեսը նայեցաւ սարսափով։

—Ո՜հ, զարմանալի բան, գոչեց, այդ գիրը որչափ կը նմանի միւսին։

—Որովհետեւ մատնութեան նամակը ձախ ձեռքով գրուած է։ Բան մը դիտեցի, ըսաւ աբբան։

—Ի՞նչ բան։

—Աջ ձեռքով գրուած բոլոր գիրերը այլազան են, իսկ ձախ ձեռքով գրուածները իրարու կը նմանին։

—Ուրեմն դուք ամէն բան գիտէք, և ամէն բանի տեղեակ էք։

—Շարունակենք։

—Ո՜հ, այո՛, այո՛։

—Երկրորդ խնդրին անցնինք։

—Պատրաստ եմ պատասխանելու։

—Մէրսէտէսի հետ չամուսնանալնուդ մէջ շահ ունէ՞ր մէկը։

—Այո՛, երիտասարդ մը, որ կը սիրէր զայն։

—Անունը ի՞նչ էր։

—Ֆէրնան։

—Սպանիացիի անուն է ատ։

—Քաթալանցի էր։

—Կը կարծէ՞ք որ այդ Քաթալանցին կարենար գրել նամակը։

—Ո՛չ, զիս դանակով զարնելէն ուրիշ բան չէր կրնար ընել։

—Այո՛, Սպանիացիներու բնութիւնն է ատ․ մարդասպանութիւն կ՚ընեն, իսկ վատութիւն՝ ո՛չ։

—Ասկէ զատ, շարունակեց Տանթէս, ամբաստանութեան նամակին մէջ նշանակուած մանրամասն դէպքերէն բնաւ տեղեկութիւն չունէր։

—Բայց դուք մէկուն չյայտնեցի՞ք բնաւ։

—Բնաւ։

—Ո՞չ իսկ ձեր սիրուհիին։

—Ոչ իսկ նշանածիս։

—Տանկլարն է։

—Ո՛հ, հիմա ապահով եմ որ ան է։

—Կեցէ՛ք... Տանկլար կը ճանչնա՞ր Ֆէրնանը։

—Ո՛չ... բայց... այո՛... կը յիշեմ...

—Ի՞նչ բան։

—Ամուսնութեանս առջի իրիկունը Բամֆիլի դալարազարդ հովանոցակին տակը նստած տեսայ զանոնք։ Տանկլար ուրախ և զուարճախօս կ'երեւէր, իսկ Ֆէրնան գունատ և վրդոված։

—Երկուքնին մինա՞կ էին։

—Ո՛չ, ուրիշ ընկեր մըն ալ ունէին, Կատրուս անունով շատ լաւ ծանօթս. անշուշտ անոնց հետ ծանօթացած էր. բայց արդէն խմած էր ան. կեցէ՛ք... կեցէ՛ք... ի՞նչպէս միտքս չեկաւ։ Իրենց նստած սեղանին քովը կաղամար մը, թուղթ և գրիչներ կային։ (Տանթէս ձեռքը ճակտին տանելով։) Ո՛հ, հո՛ն այո՛, հո՛ն գրուած ըլլալու է այդ նամակը, ո՛վ թշուառականներ։

—Ուրիշ բան կ'ուզէ՞ք գիտնալ, ըսաւ աբբան ծիծաղելով։

—Այո՛, այո՛, դուք ամէն բանի խորը կը թափանցէք, և ամէն բան յայտնի կերպով կը տեսնէք։ Կ'ուզեմ գիտնալ թէ ի՛նչ պատճառաւ մէկ անգամ հարցաքննուեցայ, ինչո՛ւ համար զիս չդատեցին, և ի՛նչպէս դատապարտուեցայ առանց վճռի։

—Ո՛հ, ըսաւ աբբան, քիչ մը աւելի ծանրակշիռ է աս. ատենականութիւնը մութ և գաղտնի ընթացքներ ունի, որոնց մէջ թափանցելը դժուարին է։ Ձեր երկու թշնամիներուն վրայ մինչեւ հիմա կատարած քննութիւննիս տղայական խաղալիկ մըն էր. այդ մասին խիստ ճշգրիտ տեղեկութիւններ կ'ուզեմ ձենէ։

—Շատ լաւ, հարցուցէք և կը պատասխանեմ. որովհետև ստուգիւ կեանքիս մէջ պատահածները ինէ աւելի պայծառ կը տեսնես։

—Ո՞վ հարցաքննեց ձեզ. ընդհանուր դատախա՞զը, անոր օգնակա՞նը թէ հարցաքննիչ դատաւորը։

—Օգնականը։

—Երիտասա՞րդ էր թէ ծեր։

—Քսանըհօթը կամ քսանըութ տարեկան երիտասարդ մը։

—Այդ հասակին մէջ կաշառակեր մէկը չի կրնար ըլլալ, բայց փառասէր ըլլալու է արդէն։ Ի՞նչ կերպով վարուեցաւ հետերնիդ։

—Աւելի մեղմ քան թէ խիստ։

—Ամէն բան պատմեցի՞ք անոր։

—Այո՛։

—Հարցաքննութեան ատեն անոր վրայ փոփոխութիւն մը նշմարեցի՞ք բնաւ։

—Ինծի դէմ եղած նամակը կարդալէն յետոյ վայրկեան մը փոխուեցաւ. իմ դժբաղդութեանս վրայ ցաւելու երեւոյթ ունէր։

—Ձեր դժբախտութեա՞ն վրայ։

—Այո՛։

—Ապահով է՞ք այդ մասին։

—Գոնէ իր համակրութեանը մասին մեծ ապացոյց մը տուաւ ինծի։

—Ի՞նչ ապացոյց։

—Ինծի դէմ եղած գրութիւնը այրեց։

—Ո՞ր գրութիւնը, մատնութի՞ւնը։

—Ո՛չ, նամակը։

—Լաւ գիտէ՞ք։

—Աչքերուս առջեւը այրեց։

—Այդ ուրիշ խօսք. բայց այդ մարդը ձեր կարծածէն աւելի մեծ մարդասպան մը կրնայ ըլլալ։

—Իրաւ որ կը սարսափեցնէք զիս. ուրեմն աշխարհս վագրերով և կոկորդիլոսներով լեցո՞ւն է։

—Այո՛, միայն թէ երկոտանի վագրերը ու կոկորդիլոսները աւելի վտանգաւոր են։

—Շարունակենք, շարունակենք։

—Շատ լաւ, նամակը այրե՞ց, ըսիք։

—Այո՛, սապէս ըսելով այրեց. «Կը տեսնէ՞ք, ձեզի դէմ եղած միակ ապացոյցը աս է, և ես բնաջինջ կ'ընեմ զայն։»

—Այդ վարմունքը խիստ վեհանձն ըլլալուն՝ չկրնար բնական ըլլալ։

—Այնպէ՞ս կը կարծէք։

—Ապահով եմ։ Այդ նամակը որո՞ւ ուղղուած էր։

—Պ. Նուարթիէի, Քօք-Հէրոն փողոցը, թիւ 13, ի Բարիզ։

—Կը կարծէ՞ք որ ընդհանուր դատախազին օգնականը նամակին ոչնչանալուն մէջ շահ մը ունենար։

—Գուցէ, որովհետեւ այդ նամակին վրայ մէկուն բան մը չըսելու համար՝ երկու երեք անգամ խօսք առաւ ինէ, ըսելով թէ իմ օգտիս համար է, և հասցէին վրայ նշանակուած անունը բերանէս չհանելու համար, երդում իսկ ընել տուաւ։

—Նուարթիէ՛ ըսիք, կրկնեց աբբան... Նուարթիէ՛ ըսիք, Ետրուրիոյ նախորդ թագուհիին պալատին մէջ Նուարթիէ մը ճանչցայ. այս Նուարթիէն յեղափոխութեան մէջ ժիրոնտեան եղած էր։ Ընդհանուր դատախազին օգնականին անունը ի՞նչ է։

—Տը Վիլֆոր։

Աբբան սկսաւ քրքջաձայն ծիծաղիլ։

Տանթէս ապշութեամբ անոր երեսը նայելով ըսաւ.

—Ի՞նչ ունիք։

—Լուսոյ սա ճառագայթը կը տեսնէ՞ք, հարցուց Ֆարիա։

—Այո՛։

—Ինծի համար ամէն բան այս թափանցիկ ու լուսաւոր ճառագայթէն աւելի յստակ կ'երեւայ հիմա։ Խե՛ղճ տղայ, հեգ երիտասարդ։ Ուրեմն այդ դատաւորը աղէ՞կ վարուեցաւ հետերնիդ։

—Այո՛։

—Այդ ազնիւ դատաւորը նամակը այրեց և ջնջե՞ց։

—Այո՛։

—Այդ պարկեշտ դահճապետը Նուարթիէի անունը ձեր բերնէն չհանելու համար երդո՞ւմ ընել տուաւ ձեզի։

—Այո՛։

—Ի՞նչ խեղճ կոյր մըն ես եղեր. գիտէ՞ք ո՛վ էր այն Նուարթիէն։ Այդ Նուարթիէն հայրն էր Վիլֆորի։

Եթէ Տանթէսի ոտքերուն տակ կայծակ մը իյնալով, անդունդ մը բանար, և անդունդին տակ դժոխքը երեւէր, դարձեալ չէր կրնար այնչափ յանկարծական, այնչափ ելեկտրական և այնչափ ջախջախիչ ազդեցութիւն մը առաջ բերել որչափ այդ անակնկալ խօսքերը։ Ոտքի ելաւ գլուխը երկու ձեռքերուն մէջ բռնած, անոր ճաթիլը արգիլելու համար կարծես։

—Անոր հա՞յրը, անոր հա՞յրը ըսիք, գոչեց Էտմոն։

—Այո՛, անոր հայրն է, և անունը Նուարթիէ տը Վիլֆոր է, յարեց աբբան։

Այն ատեն՝ բանտարկեալին մտքին մէջ չանթարձակ լոյս մը ծագեցաւ. մինչեւ այն ատեն մութ մնացածը նոյն միջոցին պայծառ լոյսի պէս յայտնուեցաւ։ Հարցաքննութեան ատեն Վիլֆորի խուսափանքները, ջնջուած նամակը, բռնի երդումը, դատաւորին գրեթէ աղերսարկու ձայնը, որ փոխանակ սպառնալու՝ կարծես կ'աղաչէր, ամէն բան իր յիշողութեանը մէջ ներկայացաւ. ճիչ մը հանեց, գինովի մը պէս վայրկեան մը դանդաղելէն յետոյ՝ աբբային սենեակէն իր սենեակը տանող անցքին մէջ խոյանալով.

—Ո՛հ, ըսաւ, բոլոր այդ բաներուն վրայ խորհելու համար պէտք է որ առանձին ըլլամ։

Ու իր զնտանը հասնելով, անկողնոյն վրայ նետուեցաւ, ուր մինչեւ բանտապահին իրիկուան այցելութիւնը մնաց, աչքերը սեւեռուն դէմքը կծկուած բայց արձանի պէս անշարժ և համր։

Այդ խոկումի ժամերուն մէջ, որոնք երկվայրկեաններու պէս անցած էին, մտքին մէջ ահռելի որոշում մը տուած և սոսկալի երդում մը ըրած էր։

Յանկարծ ձայն մը իր մտածումներէն սթափեցուց զինքը. աբբայ Ֆարիա բանտապահին այցելութենէն յետոյ եկած էր Տանթէսը հրաւիրելու իր հետ ընթրելու համար։ Ծերունի

բանտարկեալը իբր խելագար, և մանաւանդ իբր զուարճացնող խելագար ճանչցուած ըլլալով, քանի մը առանձնաշնորհներ ունէր. քիչ մը աւելի ճերմակ հաց և կիրակի օրերը սրուակ մը գինի կուտային իրեն։ Ճիշդ այդ օրը կիրակի ըլլալով, աբբան իր երիտասարդ ընկերը կը հրաւիրէր որ իր հացին և գինիին մասնակից ըլլայ։

Տանթէս անոր ետևէն գնաց։ Երիտասարդին դիմագիծները հանդարտած էին, միայն թէ անկուն և խիստ արտայայտութիւն մը կը նշմարուէր հոն, որով յայտնի կը ցուցնէր թէ որոշում մը տուած էր։ Աբբան սևեռագին նայելով ըսաւ.

—Ձեր հետազօտութեանց օգնելուս և ըսածներուս վրայ շատ կը ցաւիմ։

—Ինչո՞ւ համար, հարցուց Տանթէս։

—Որովհետև ձեր սրտին մէջ այնպիսի զգացում մը մտցուցի, որ գոյութիւն չունէր, այսինքն՝ վրէժխնդրութիւնը։

Տանթէս ժպտելով ըսաւ.

—Ուրիշ բանի վրայ խօսինք։

Աբբան դարձեալ վայրկեան մը անոր վրայ յառեց իր նայուածքը և տխրօրէն գլուխը շարժեց. յետոյ, Տանթէսի խնդրանքին համաձայն՝ ուրիշ նիւթերու վրայ սկսաւ խօսիլ։

Ծերունի բանտարկեալը այն մարդոցմէ մէկն էր, որուն խօսակցութիւնը, շատ նեղութիւններ կրող մարդոց խօսակցութեան պէս անթիւ դասեր և մեծ շահեկանութիւն կը պարունակէ. բայց անոր խօսակցութիւնը իր անձին վրայ չէր, և այդ տարաբախտը իր թշուառութեանց վրայ չէր խօսիր երբեք։

Տանթէս զարմանքով ականջ կը դնէր անոր խօսքերուն, որոնց մէկ քանին արդէն ունեցած գաղափարներուն և նաւաստիութեան պաշտօնին մէջ ստացած ծանօթութիւններուն կը համապատասխանէին. մէկ քանին իրեն համար անծանօթ խնդիրներու վրայ էր, և այն հիւսիսայգներուն պէս՝ որոնցմով երկրագնտի հարաւային լայնութեանց տակ նաւագնացները կը լուսաւորուին, մտացածին լոյսով լուսաւորուած նոր բնանկարներ և նոր հորիզոններ կ'երևէին երիտասարդին։ Տանթէս

հասկցաւ թէ ուշիմ մտքի մը համար որքա՜ն երջանկութիւն էր Ֆարիայի հետևիլ այն բարոյական, իմաստասիրական կամ ընկերային բարձրութեանց վրայ, զորս միշտ ծաղրեր էր։

—Պէտք է որ ձեր գիտցածէն քիչ մը բան սորվեցնէք ինծի, ըսաւ Տանթէս, որպէսզի ինծի հետ չձանձրանաք. այնպէս կ'երևի թէ ինծի պէս անուս և տգէտ ընկերէ մը աւելի առանձնութիւնը կ'ընտրէք. եթէ խնդրածիս հաւանութիւն տաք, կը խոստանամ այսուհետև փախչելու մասին խօսք չընելու։

Աբբան ժպտելով ըսաւ.

—Ափսո՜ս, տղաս, մարդկային գիտութիւնը սահմանափակ է, և երբ մաթեմաթիկական, բնագիտական և պատմական ուսումները ու իմ խօսած երեք կամ չորս կենդանի լեզուներս սորվեցնեմ, բոլոր գիտցածս պիտի սորվիք. այդչափ գիտութիւնը գրեթէ երկու տարուան մէջ կրնամ ձեր մտքին հաղորդել։

—Երկո՛ւ տարուան մէջ, ըսաւ Տանթէս. կը կարծէ՞ք որ երկու տարուան մէջ այդչափ ուսումները կարենամ սորվիլ։

—Ոչ թէ կիրարկութիւնը, այլ անոնց սկզբունքը. սորվիլը գիտնալ ըսել չէ. սորվողներ կան գիտուններ կան. առաջինները յիշողութեան շնորհիւ կ'ըլլան, իսկ վերջինները՝ փիլիսոփայութեան։

—Բայց չե՞մ կրնար փիլիսոփայութիւն սորվիլ։

—Փիլիսոփայութիւնը չի սորվուիր, փիլիսոփայութիւնը՝ ձեռք բերուած գիտութեանց հաւաքումն է, զոր մարդկային միտքը կը կիրարկէ։ Փիլիսոփայութիւնը այն լուսափողփող ամպն է, որու վրայ Քրիստոս ոտքը դրաւ, երկինք վերամբառնալու համար։

—Տեսնենք, ըսաւ Տանթէս, ամէնէն առաջ ի՞նչ պիտի սորվեցնէք ինձ։ Շատ փափաք ունիմ շուտով սկսելու. գիտութեան ծարաւի եմ։

—Ամէն բան, ըսաւ Աբբան։

Իրօք, նոյն իրիկունը, երկու բանտարկեալները կրթական

ծրագիր մը պատրաստեցին և հետևեալ տարուէ սկսան ի գործ դնել զայն։ Տանթէս զարմանալի յիշողութիւն մը և խիստ դիւրին ըմբռնում մը ունէր· մաթեմաթիկական ուսման մէջ ունեցած յարմարութիւնը ամէն բան հաշուով ըմբռնելու կարող կ'ընէր զինքը, իսկ իր բանաստեղծութիւնը կը մեղմացնէր չոր ու ցամաք ապացուցումներու վերածուած թուանշանները և երկրաչափական խիստ գիծերը։ Արդէն իտալերէն գիտէր և քիչ մըն ալ յունարէն, զոր դէպի Արևելք ըրած իր ճամբորդութեանց ատեն սորված էր։ Այս երկու լեզուներով բոլոր միւս լեզուներուն կազմութիւնը շուտով ըմբռնեց և վեց ամիս ետքը սկսաւ սպաներէն, անգլիերէն և գերմաներէն խօսիլ։

Ինչպէս աբբայ Ֆարիայի ըսած էր, կա՛մ ուսման պատճառած մտային զբօսանքը ազատութեան տեղ բռնելուն համար, և կամ ինչպէս տեսանք, խիստ անաչառ խոստմնապահ մը ըլլալուն փախչելու խօսք չէր ըներ, և օրերը իրեն համար արագասահ և հրահանգիչ կ'երևէին։ Տարի մը ետքը կարծես թէ ուրիշ մարդ եղած էր ան։

Տանթէս դիտած էր որ թէև իր ներկայութիւնը աբբայ Ֆարիայի սփոփանք պատճառած էր իր բանտարկութեան մէջ, սակայն անոր վրայ տխրութիւն կը տեսնէր ամէն օր։ Ցարատև ու մշտնջենական գաղափար մը միտքը պաշարած կ'երևար· խորունկ երազանքներու մէջ կ'իյնար, ակամայ կը հառաչէր, յանկարծ ոտքի կ'ելլէր, բազուկները կուրծքին վրայ խաչաձև կը դնէր, և բանտին բոլորտիքը կը շրջէր մռայլ դէմքով։

Օր մը սենեակին շուրջը գծած շրջանակներուն մէկին մէջտեղը յանկարծ կենալով, գոչեց·

—Ա՜հ, եթէ պահնորդ չըլլար։

—Եթէ ուզէք՝ չպիտի ըլլայ, ըսաւ Տանթէս, որ բիւրեղի մէջէն տեսնելու պէս անոր ուղեղին խորշին մէջ գտնուող մտածումին թափանցած էր։

—Ա՜հ, ես ձեզի ըսի, յարեց աբբան, մարդասպանութեան հակառակ եմ։

—Սակայն եթէ այդ մարդասպանութիւնը գործուի, ինքնապաշտպանութեան բնազդումով պիտի ըլլայ։

—Ինչ որ է, ես չեմ ուզեր։

—Այսու հանդերձ միշտ այդ բանին վրայ կը մտածէք։

—Ո՜հ, միշտ և անդադար, մրմնջեց աբբան։

—Անշուշտ միջոց մը գտար, այնպէս չէ՞, ըսաւ աշխուժով Տանթէս։

—Այո՛, եթէ կարելի ըլլար արտաքին ճեմադաւիթին վրայ կոյր և խուլ պահնորդ մը դնել։

—Եթէ ուզես՝ պահնորդը կոյր ալ կ'ըլլայ, խուլ ալ, պատասխանեց երիտասարդը այնպիսի հաստատամիտ շեշտով մը որ աբբան սարսափեցաւ։

—Ո՛չ, ո՛չ, գոչեց Ֆարիա, անկարելի է։

Տանթէս ուզեց այդ մասին խօսքը շարունակել, բայց աբբան գլուխը շարժեց և չուզեց ուրիշ պատասխան տալ։

Ասոր վրայ՝ երեք ամիս անցան։

—Ոյժ ունի՞ք, հարցուց օր մը աբբան Տանթէսի։

Տանթէս, առանց պատասխանելու, գրիչը առաւ, ու փայտի պէս գլորեց ու նորէն ուղղեց։

—Խօսք կու տա՞ք որ պահնորդը վերջին կէտին սպաննէք միայն։

—Այո՛, պատուոյս վրայ կը խոստանամ։

—Ուրեմն, ըսաւ աբբան, կրնանք ծրագիրնիս ի գործ դնել։

—Որչափ ատենի պէտք կայ ատոր համար։

—Գոնէ տարի մը։

—Ե՞րբ պիտի սկսինք։

—Անմիջապէս։

—Կը տեսնե՞ս, տարի մը կորսնցուցինք, գոչեց Տանթէս։

—Կը կարծե՞ս որ կորսնցուցած ըլլանք։ ըսաւ աբբան։

—Ո՜հ, ներողութիւն, գոչեց Տանթէս կարմրելով։

—Լռեցէք, ըսաւ աբբան· մարդս միշտ մարդ է, և դուք լաւ ճանչցածներէս մէկն էք։ Ահա շինած յատակագիծս։

Աբբան այն ատեն իր շինած գծագրութիւնը ցուցուց, որ իր և Տանթէսի խցիկին ու այդ երկու բանտերը իրարու միացնող գետնափորին յատակագիծն էր։ Այս գետնափորին մէջտեղէն ուրիշ ճամբայ մը պիտի բանար հանքի մէջ եղած ճամբայի մը նման։ Այս ճամբայէն երկու բանտարկեալները պահնորդին պտըտած ճեմագաւիթին տակը պիտի հանէին. հոն լայն խոռոչ մը պիտի բանային, ու ճեմագաւիթին յատակաքարերէն մէկը տեղէն պիտի հանէին, ու յարմար առիթին սպասելով, երբ զինուորը այն քարին վրայ կոխէր, քարը զինուորին ծանրութեամբը խոռոչին մէջ գահավիժելով աներևոյթ պիտի ըլլար։ Այն միջոցին որ զինուորը իր անկումին վրայ շփոթած, պիտի չկրնար ինքզինքը պաշտպանել, Տանթէս անոր վրայ պիտի յարձակէր, պիտի կապէր զայն ու անոր բերանը պիտի խցէր. այն ատեն՝ երկուքնին մէկտեղ այն ճեմագաւիթին պատուհաններէն մէկուն մէջէն անցնելով, չուանէ սանդուխին օգնութեամբ արտաքին պատէն վար պիտի իջնէին և պիտի ազատէին։

Տանթէս ձեռքերը իրարու զարկաւ, և աչքերը ուրախութենէն շողացին. այդ յատակագիծը այնչափ պարզ էր որ անպատճառ պիտի յաջողէր։ Ուստի նոյն օրը, երկու ականափորները աւելի մեծ եռանդով գործի սկսան, սա պատճառաւ որ երկարատև հանգիստ մը առած էին. հաւանականաբար այդ ներքին մտածումը չարունակ կը զբաղեցնէր զիրենք։

Բանտապահին այցելութեան ժամէն զատ՝ զիրենք ընդմիջող արգելք մը չունէին. բանտապահին եկած ատեն իւրաքանչիւրը պարտէր իր սենեակը գտնուիլ։ Բարեբախտաբար անոր քայլերուն հազիւ լսելի ձայնէն վարժուած էին բանտապահին գալու ատենը որոշել. ո՛չ մէկը և ոչ միւսը յանկարծակիի չեկան բնաւ։ Այդ նոր անցքէն հանուած հողը քիչ քիչ և մեծ զգուշութիւններով կա՛մ Տանթէսի և կամ Ֆարիայի բանտին պատուհաններէն դուրս կը նետէին. հողը կը փշրէին և գիշերուան հովը առանց հետք մը ձգելու՝ կ'առնէր կը տանէր զայն։

Իրենց ունեցած բոլոր գործիներովը, այսինքն՝ մէկ գրո-

ցով, մէկ դանակով և մէկ փայտէ լծակով տարիէ մը աւելի այս գործով պարապեցան չարունակ։ Այդ մէկ տարուան միջոցին և իրենց աշխատութեան մէջ իսկ Ֆարիա չէր դադրած Տանթէսի սորվեցնելէ, անոր հետ երբեմն մէկ և երբեմն միւս լեզուաւ խօսելով, և սորվեցնելով ազգերու և այն երևելի անձերուն պատմութիւնը, որոնք մերթ աշխարհ գալով, լուսաւոր հետք մը ձգած են, որ փառք կը կոչուի։ Աբբան, ի՛ր աշխարհի մարդ, որ բարձր դասուն հետ շփման մէջ գտնուած էր, իր ձևերուն մէջ տեսակ մը մելամաղձոտ վեհութիւն ունէր. Տանթէս իւրացնելու կարողութեամբ օժտուած, կարողացաւ ստանալ այն վայելուչ քաղաքավարութիւնը զոր ինքը չունէր. և վարուելու այն ազնուապետական կերպերը, որոնք միայն բարձրագոյն դասու անձերուն կամ մեծամեծներուն հետ շփմամբ ձեռք կը բերուին։

Տասնըհինգ ամսուան մէջ ստորերկրեայ նոր ծակը բացին. ճեմագաւիթին տակի խոռոչը բացած էին. պահնորդին անցնիլ դառնալը կը լսէին, և երկու բանտարկեալները, որոնք աւելի յաջողութեամբ փախչելու համար մութ և անլուսին գիշերուան մը սպասելու ստիպուած էին, միակ վախ ունէին, մի՛ գուցէ ճեմագաւիթին յատակը իրենց ուզելէն առաջ զինուորին ոտքերուն տակը փլէր։ Այդ վտանգին առաջքը առնելու համար՝ անոր տակը իբր յենարան փոքր գերան մը դրին, զոր հիմերուն մէջ գտած էին։ Տանթէս զայն տեղաւորելու կը զբաղէր, երբ յանկարծ Ֆարիայի տագնապալից ձայնով մը զինքը կանչելը լսեց, որ երիտասարդին սենեակը կեցած, չուանէ սանդուխը հաստատելու համար գամ մը սևելու վրայ էր։ Տանթէս աշխուժով անոր մօտ փութաց և տեսաւ որ աբբան գունատած, ճակատը քրտինքով ծածկուած, և ձեռքերը կծկած, սենեակին մէջտեղը կեցած էր։

—Ո՛հ, Տէր Աստուած, գոչեց Տանթէս, ի՞նչ կայ, ի՞նչ ունիք։

—Շո՛ւտ, շո՛ւտ, ըսաւ աբբան, մտի՛կ ըրէք։

Տանթէս տեսնելով Ֆարիայի կապուտցած երեսը, կապ-

տորակ ծիրով շրջանակուած աչքերը, ճերմկած շրթունքները և ցցուած մազերը, գրոցը սարսափով մը գետինը ձգեց։

—Բայց ի՞նչ կայ, գոչեց Էտմոն։

—Կորսուեցա՛յ, ըսաւ աբբան, մտի՛կ ըրէք. սոսկալի և գուցէ մահացու հիւանդութիւն մը պիտի գայ վրաս. անոր հասնիլը կը զգամ. արդէն բանտարկութեանս նախընթաց տարին այս հիւանդութիւնը վրաս եկաւ, որուն մէկ դեղ կայ, հիմա կ՚ըսեմ. շուտով սենեակս գացէք, մահճակալիս ոտքը վերցուցէք. այդ ոտքը խոռոչաւոր է. անոր մէջ կարմիր ըմպելիով կէս լեցուն փոքր սրուակ մը պիտի գտնէք։ Հոս բերէք այն սրուակը, բայց ո՛չ, ո՛չ, աւելի աղէկ է որ ես երթամ, ոյժս բոլորովին չկորսնցուցած օգնեցէք ինծի որ սենեակս վերադառնամ։ Ով գիտէ ի՞նչ պիտի պատահի, և ո՞րչափ ատեն պիտի տեւէ։

Տանթէս առանց խելքը կորսնցնելու, թէև պատահած դժբաղդութիւնը անհուն էր, նրբանցքին մէջ իջաւ, ետեւէն քաշելով իր խեղճ ընկերը, և մեծ դժուարութեամբ մինչև դիմացի ծայրը աբբային սենեակը հասաւ, ու անկողնին վրայ դրաւ զայն։

—Շնորհակալ եմ, ըսաւ աբբան, որ սառած ջրէ մը դուրս ելածի պէս, բոլոր անդամներովը կը դողդղար։ Ահա ջերմը կը սկսի, անզգայութեան մէջ պիտի իյնամ հիմա. գուցէ շարժում մը չընեմ, գուցէ բերնէս տրտունջ մը չհանեմ, բայց գուցէ փրփրիմ, պրկուիմ, պոռամ. նայեցէք որ ձայնս չլսուի, կարևոր բանը այդ է. այն ատեն գուցէ ուրիշ սենեակ մը փոխադրեն զիս, և յաւիտեան իրարմէ բաժնուինք։ Երբ զիս անշարժ, կամ սապէս ըսեմ, սառած և մեռած տեսնէք, միայն այն ատեն, կը հասկնաք, ակռաներս դանակով բացէ՛ք, այն հեղուկէն ութը կամ տասը կաթիլ լեցուցէք. թերևս սթափիմ։

—Թերե՛ւս, գոչեց Տանթէս ցաւագին ձայնով մը։

—Հասէ՛ք, հասէ՛ք, գոչեց աբբան, կը... մե...։

Ջերմը ա՛յնքան յանկարծական և ա՛յնքան սաստիկ եկաւ որ հէգ բանտարկեալը չկրցաւ սկսած բառը լմնցնել. ծովու

մրրիկի մը պէս արագ և մութ ամպ մը անոր ճակատէն անցաւ. նոյնպէս անոր աչքը մեծցուց, բերանը գալարեց, այտերը ծիրանեգոյն ներկեց. յուզուեցաւ, փրփրեցաւ, կարմրեցաւ. բայց ինչպէս Ֆարիա պատուիրած էր, Տանթէս անոր ձայնը վերմակին մէջ խափանեց։ Ջերմը երկու ժամ տեւեց. այնուհետև ղանդուածէ մը աւելի անշարժ, մարմարիոնէ մը աւելի սառած և գունատ, և ոտնակոխ եղած եղեգէ մը աւելի ջախջախուած, վերջին ջղաձգութեան մը մէջ պրկուեցաւ և կապոյտ դարձաւ։

Էտմոն սպասեց որ այդ երեւութական մահը անոր մարմինը գրաւէ և մինչև սիրտը սառեցնէ. այն ատեն դանակը առաւ, ծայրը անոր ակռաներուն մէջ խոթեց, կծկուած ծնօտը խիստ մեծ դժուարութեամբ բացաւ, կարմիր հեղուկէն մէկիկ մէկիկ տասը կաթիլ լեցուց և սպասեց։

Մէկ ժամ անցաւ և ծերունին ո և է շարժում չէր ըներ։ Տանթէս շատ սպասելուն համար կը վախնար, և ձեռքը մազերուն մէջ խոթած, անոր կը նայէր։ Վերջապէս անոր այտերուն վրայ թեթև գոյն մը երեւցաւ. միշտ բաց և անշարժ մնացած աչքերը ստացան իրենց նայուածքը, բերանէն տկար հառաչանք մը ելաւ, և շարժում մը ըրաւ։

—Ազատեցա՛յ, ազատեցա՛յ, գոչեց Տանթէս։

Հիւանդը տակաւին չէր կրնար խօսիլ, բայց ակներեւ անձկութեամբ մը ձեռքը դէպ ի դուռը երկնցուց։ Տանթէս ականջ դրաւ և բանտապահին քայլերուն ձայնը առաւ. ժամը եօթը գացած էր, և Տանթէս ատեն չէր ունեցած ժամը հաշուելու։

Երիտասարդը դէպ ի բացուածքը վազեց, անոր մէջ նետուեցաւ, քարը նորէն տեղը դրաւ գլխովը և սենեակը քաշուեցաւ։

Վայրկեան մը ետքը իր դուռն ալ բացուեցաւ, և բանտապահը ըստ սովորութեան, անկողնին վրայ նստած գտաւ զայն։

Հազիւ թէ բանտապահը կռնակը դարձուց, հազիւ թէ քայլերուն ձայնը բակին մէջ կորսուեցաւ, Տանթէս անհամբե-

րութենէն չկրնալով կենալ, առանց կերակուրը ուտելու ելած ճամբուն մէջ մտաւ ու գլխով քարը վերցնելով, աբբային սենեակը մտաւ։

Ֆարիա սթափած էր. բայց միշտ անկողնին վրայ երկընցած, անշարժ և ուժաթափ մնացած էր։

—Չէի յուսար որ վերստին ձեզ տեսնեմ, ըսաւ Ֆարիա։

—Ինչո՞ւ համար, հարցուց երիտասարդը. ուրեմն կը կարծէիք որ պիտի մեռնէ՞իք։

—Ո՛չ, բայց ամէն բան պատրաստ է և կը յուսայի թէ կը փախչիք։

Տանթէսի այտերը կարմրեցան բարկութենէն։

—Առա՞նց ձեզի, գոչեց Տանթէս. այդ բանը ընելու կարող կարծեցի՞ք զիս։

—Հիմա կը տեսնեմ որ սխալած եմ, ըսաւ հիւանդը։ Ա՛հ, խիստ տկար եմ, ուժասպառ և ոչնչացած եմ։

—Քաջալերութի՛ւն, ուժերնիդ տեղը կու գայ, ըսաւ Տանթէս Ֆարիայի անկողնին քով նստելով և անոր ձեռքը բըռնելով։

Աբբան գլուխը շարժեց։

—Վերջին անգամ, ըսաւ, նոպան կէս ժամ տեւեց. յետոյ անօթեցայ և մինակս ոտքի ելայ. այսօր ոչ ոտքս կրնամ շարժել և ոչ ալ՝ աջ թեւս. գլուխս տեղը չէ. ասիկէ կը հետեւի որ արիւնը ուղեղիս մէջ ժողվուած է։ Եթէ երրորդ անգամ նոպան վրաս գայ, կա՛մ բոլորովին անդամալոյծ պիտի ըլլամ, և կամ անմիջապէս պիտի մեռնիմ։

—Ո՛չ, ո՛չ, ապահով եղէք, չպիտի մեռնիք։ Եթէ երրորդ անգամ նոպան բռնէ, ասկէ ազատելնէդ յետոյ պիտի գայ։ Այս անգամուան պէս և այս անգամուընէ աւելի աղէկ պիտի ազատենք ձեզ, քանի որ պէտք եղած բոլոր օգնութիւնները պիտի ունենանք։

—Բարեկամ, ըսաւ ծերունին, ինքզինքնիդ մի՛ խաբէք, ունեցած տագնապս մշտնջենական բանտի մը դատապարտած է զիս։ Փախչելու համար պէտք է որ քալելու կարողութիւն ունենամ։

—Շատ լաւ, ութ օր, մէկ ամիս, և եթէ պէտք ըլլայ երկու ամիս կը սպասենք։ Այդ միջոցին ոյժերնիդ տեղը կու գայ։ Փախչելու համար ամէն բան պատրաստ է, ու ո՛ր ժամը և ո՛ր վայրկեանը ուզենք՝ կրնանք ազատիլ բանտէն։ Այն օրը որ լողալ կարենալու չափ ոյժ կը զգաք, նոյն օրը մեր ծրագիրը ի գործ կը դնենք։

—Ալ չպիտի կարենամ լողալ, ըսաւ Ֆարիա. այս թեւս բռնուած է, ոչ թէ միայն օրուան մը համար, այլ միշտ այսպէս մնալու համար։ Վերցուցէ՛ք զայն եւ տեսէ՛ք որչափ ծանր է։

Երիտասարդը անոր թեւը վերցուց, և անզգայութիւնը տեսնելով, հառաչանք մը արձակեց։

—Հիմա համոզուեցաք, այնպէս չէ՞, Էտմօն, ըսաւ Ֆարիա։ Հաւատացէ՛ք ըսածս գիտեմ, առաջին անգամ այս ախտը վրաս գալէն ի վեր միշտ անոր վրայ կը մտածէի, և կ'ըսպասէի անոր, որովհետեւ ընտանեկան ժառանգութիւն մըն է. հայրս երրորդ նոպային մեռած է. մեծ հայրս ալ՝ նմանապէս։ Այս ըմպելիքը պատրաստող բժիշկը, որ նոյնինքն հռչակաւոր Քապանիսն է, նոյն վիճակը ինծի համար ալ գուշակեց։

—Բժիշկը սխալած է, գոչեց Տանթէս։ Գալով ձեր անդամալուծութեան, ան արգելք չպիտի ըլլայ ինծի. ուսերուս վրայ առնելով ձեզ, պիտի լողամ։

—Տղա՛ս, ըսաւ աբբան, դուք նաւաստի էք և լողորդ. հետեւաբար գիտնալու էք որ այդչափ ծանրութեամբ բեռնաւորուած մարդ մը ծովուն մէջ յիսուն գրկաչափ տեղ չկրնար երթալ։ Այսպիսի մտացածին խորհուրդներով մի խաբէք ինքզինքնիդ. ձեր ազնիւ սիրտը չի կրնար դիւրութեամբ խաբուիլ. ուստի ես հոս պիտի կենամ մինչեւ իմ ազատութեանս ժամը, որ գուցէ այսուհետեւ մահուանս ժամը ըլլայ։ Իսկ դուք փախէ՛ք, գացէք։ Դուք երիտասարդ էք, ճարտար և հուժկու, ինծի համար անհանգիստ մի ըլլաք, տուած խօսքերնիդ կը վերադարձնեմ։

—Շատ աղէկ, ըսաւ Տանթէս։ Եթէ այդպէս է, ես ալ ձեզի հետ կը կենամ։

Էտմօն ոտքի ելաւ և ձեռքը հանդիսաւորապէս ծերին երկնցնելով.

—Քրիստոսի արեանը վրայ կ'երդնում որ ձեր մահուընէն ետքը միայն պիտի բաժնուիմ ձենէ։

Ֆարիա այդ ազնիւ, վեհոգի, անմեղ երիտասարդը դիտեց, և անոր խիստ մաքուր անձնուիրութեամբ տոգորուած դէմքին վրայ իր սիրոյն անկեղծութիւնը և երդման ուղղամտութիւնը հասկցաւ։

—Երդումիդ կ'ընդունիմ, ըսաւ հիւանդը. շնորհակալ եմ։

Յետոյ ձեռքը անոր երկնցնելով, ըսաւ.

—Ձեր այդ անշահախնդիր անձնուիրութեան վարձքը թերեւս ստանաք. բայց քանի որ ես չեմ կրնար և դուք ալ չէք ուզեր փախչիլ, պէտք է որ ճեմադաւիթին տակ մեր բացած ստորերկրեայ խոռոչը լեցնենք. կարելի է որ զինուորը քալելու ատեն փորուած տեղին հնչական ձայնէն կասկածի, և քննիչի մը ուշադրութիւնը հրաւիրէ. այն ատեն պիտի յայտնուի ամէն բան և իրարմէ պիտի բաժնեն մեզ։ Գացէ՛ք այդ գործը կատարեցէ՛ք, որուն մէջ դժբախտաբար չեմ կրնար ձեզի օգնել. եթէ հարկ ըլլայ՝ բոլոր գիշերը աշխատեցէ՛ք և միայն վաղը առտու բանտապահին այցելութենէն յետոյ քովս դարձէք. ձեզի ըսելիք կարեւոր խօսք մը ունիմ։

Տանթէս աբբային ձեռքը բռնեց, և ժպիտով մը վստահացուց զայն. յետոյ հլութեամբ և յարգանքով հեռացաւ իր ծերունի բարեկամին քովէն։

ԺԸ. ԳԼՈՒԽ

ԳԱՆՁԸ

Հետեւեալ առտու Տանթէս իր բանտակիցին սենեակը մտնելով, Ֆարիան նստած գտաւ հանդարտ դէմքով։

Ցերեկուան տկար լոյսը խցիկին նեղ պատուհանէն ներս կը թափանցէր, և Ֆարիա իր ձախ ձեռքը, որովհետեւ ինչպէս կը յիշէք, միւս ձեռքին գործածութիւնը կորսնցուցած էր, կտոր մը թուղթ բռնած էր, որ փոքր դիրքով պլորուած ըլլալուն, գլանի մը ձեւն ունէր, և կարծես կ'ընդդիմանար բացուելուն։

Թուղթը Տանթէսին ցուցուց անձայն։

—Ի՞նչ է ատ, հարցուց Տանթէս։

—Աղէ՛կ նայեցէք, ըսաւ աբբան ժպտելով։

—Լաւ կը նայիմ, ըսաւ Տանթէս, և կէս մը այրած թուղթէ մը զատ ուրիշ բան չեմ տեսներ, որուն վրայ գոթական գիրեր կան՝ արտասովոր մելանով մը գրուած։

—Պիտի կրնամ ամէն ինչ յայտնել ձեզի, բարեկամ, ըսաւ Ֆարիա, քանի որ ես ձեզ փորձեցի. այս թուղթը իմ գանձս է, որուն կէսը այս օրուընէ սկսեալ ձերն է։

Պաղ քրտինք մը Տանթէսի ճակատը ծածկեց։ Մինչեւ այն օրը և այնչափ ատենէ ի վեր խուսափած էր Ֆարիայի հետ այդ գանձին վրայ խօսելէ, որ խեղճ աբբային իբր յիմար ամբաստանուելուն պատճառ եղած էր։ Էտմօն իր բնազդական ազնուութեամբը աւելի յարմար դատած էր այդ ցաւալի նիւթին վրայ խօսք չբանալ, և Ֆարիա լռութիւն պահած էր։ Տանթէս ծերունիին լռութիւնը տեսնելով, կարծած էր թէ զգաստացած է ան. բայց այդ օրը, տաժանելի ճգնաժամէ մը յետոյ, Ֆարիայի բերնէն այդ խօսքերը լսելով, Տանթէս կարծած էր թէ ծերունին յիմարութեան մէջ կ'իյնար նորէն։

—Ձեր գա՞նձը կ'ըսէք, կակազեց Տանթէս։

Ֆարիա ժպտելով պատասխանեց.

—Այո՛, դուք կատարելապէս ազնիւ սիրտ մը ունիք, Էտմոն, և ձեր դողդողանքէն և սարսուռէն կը հասկնամ թէ այս պահուս ինչ կ'անցնի ձեր սրտին մէջ: Ո՛չ, անհոգ եղէք, ես խելագար չեմ: Այս գանձը իրօք կայ, Տանթէս, և եթէ ես չկրցայ վայելել, գոնէ դուք վայելեցէք զայն, այո՛, դուք. ոչ ոք չուզեց մտիկ ընել և հաւատալ ինծի, քանի որ խելագարի տեղ դրած էին զիս. բայց դուք իմ յիմար չըլլալս աղէկ գիտէք, մտիկ ըրէք ինծի և եթէ կ'ուզէք, ետքը հաւատացէ՛ք:

—Ափսո՛ս, մրմնջեց Էտմոն ինքնիրեն, նոյն յիմարութեան մէջ ինկա՛ւ նորէն. այս դժբախտութիւնն էր պակաս:

Յետոյ բարձրաձայն ըսաւ Ֆարիային.

—Սիրելի բարեկամ, կ'երեւի թէ հիւանդութիւնիդ յոգնեցուցած է ձեզ. չէ՞ք ուզեր քիչ մը հանգչիլ: Եթէ կը հաճիք, պատմութիւնիդ վաղը մտիկ կ'ընեմ. բայց այսօր միայն ձեզ խնամել կ'ուզեմ: Մանաւանդ որ, շարունակեց ժպտելով, այդ գանձը այնչափ ստիպողակա՞ն է հիմա մեզի համար:

—Խիստ ստիպողական է, Էտմոն, պատասխանեց ծերունին: Ո՞վ գիտէ վաղը կամ միւս օրը ջերմի երրորդ նոպայ մը կ'ունենամ. այն ատեն ամէն ինչ լմնցած պիտի ըլլայ: Այո՛, իրաւ է որ շատ անգամ դառնագին հաճոյքով մը խորհած եմ այդ հարստութեանց վրայ, որոնք զիս հալածող մարդոց համար կորսուած են, մինչ տասը ընտանիք կրնան հարստացնել. այդ գաղափարը վրէժխնդրութիւնս կը գրգռէր, ու իմ զնտանիս մթութեան և բանտարկութեան յուսահատական վիճակին մէջ միշտ կ'ըմբոշխնէի զայն: Բայց հիմա որ ձեր սիրոյն համար բոլոր աշխարհի ներեցի, հիմա որ ձեզ երիտասարդ և խոստմնալից ապագայով կը տեսնեմ, հիմա որ կը մտածեմ թէ այդպիսի գանձ մը ի՛նչ երջանկութիւն կրնայ պարգեւել ձեզ, կը վախնամ որ գուցէ ուշացած ըլլամ, կը դողամ որ գուցէ թաղուած այնչափ հարստութեանց ժառանգութիւնը չկարենամ ձեզի պէս արժանաւոր անձի մը թողուլ:

Էտմոն գլուխը դարձուց հառաչանք մը արձակելով:

—Ձեր թերահաւատութեանը վրայ հաստատ պիտի կենա՞ք, Էտմոն, ըսաւ Ֆարիա, և ձայնս բնաւ չհամոզե՞ց ձեզ: Կը տեսնեմ որ ապացոյցներու պէտք ունիք: Ուրեմն կարդացէ՛ք սա թուղթը, զոր ոչ ոքի ցուցուցած եմ:

—Վաղը, բարեկամ, ըսաւ Էտմոն ծերունիին յիմարութեանը ականջ կախել չուզելով. կարծեմ թէ աւելի յարմար է այդ մասին վաղը խօսիլ:

—Վաղը կը խօսինք, բայց այսօր այս թուղթը կարդացէ՛ք:

—Աւելի չգրգռենք զայն, ըսաւ Էտմոն ինքնիրեն:

Ու թուղթը առնելով, որուն կէսը պակաս էր, և որ անշուշտ դիպուածով մը այրած էր, կարդաց. «Այդ գանձը որ գրեթէ երկու հռոմէական սկուտի հեռաւորագոյն անկիւնն է ...երկրորդ ծակին... սեփականութիւնս կը թողում... այն գործիս... 25 ապրիլ 149

—Ասոր ի՞նչ պիտի ըսէք, յարեց Ֆարիա, երբ երիտասարդը աւարտեց ընթերցումը:

—Բայց, պատասխանեց Տանթէս, ծայրակտուր տողերէ և հետեւութիւն չունեցող բառերէ ուրիշ բան չեմ տեսներ. խօսքերը կրակէն ընդհատուած են, և անհասկնալի կը մնան:

—Այդ բանը ձեզի համար կրնաք ըսել, քանի որ առաջին անգամն է որ կը կարդաք. բայց ես որ շատ գիշերներ տքնած եմ անոր վրայ, վերակազմեցի բոլոր պարբերութիւնները և իմաստը ամբողջացուցի:

—Կը կարծէ՞ք ընդհատուած իմաստը գտած ըլլալ:

—Հաւաստի եմ որ գտած եմ. դուք ինքնին կրնաք վճռել. բայց նախ այս թղթին պատմութիւնը մտի՛կ ըրէք:

—Լռեցէ՛ք, գոչեց Տանթէս...: Ոտնաձայն կը լսեմ... կը մօտենան... ես կ'երթամ... մնաք բարով:

Տանթէս անոր պատմութենէն և տալիք բացատրութենէն ազատելուն վրայ ուրախանալով, որ իր բարեկամին դժբախտութիւնը պիտի հաստատէր, նեղ նրբանցքէն սահելով օձի պէս աներեւոյթ եղաւ. իսկ Ֆարիա, երկիւղէն, ճարտարւորած,

ոտքովը քարը տեղը հրեց, վրան փխաթ մը ծածկեց, որպէս զի քարայատակէն բաժնուած ըլլալը չտեսնեն՝ անոր հետքը անհետացնելու ատեն չէր ունեցած։

Կառավարիչը, Ֆարիայի հիւանդութիւնը բանտապահէն իմանալով, եկած էր անոր հիւանդ ըլլալը ստուգելու։

Ֆարիա նստած էր. վտանգաւոր շարժում մը ընելու ըզգուշացաւ և մինչև իսկ կառավարչէն ծածկեց անդամալուծութիւնը, որ իր մարմնոյն կէսը արդէն մահացուցած էր. կը վախնար որ մի գուցէ կառավարիչը, իր վրայ գթալով, զինքը աւելի առողջարար բանտի մը մէջ դնել ուզէր, և այսպէս երիտասարդ ընկերէն բաժնէր. բայց բարեբաղդաբար այդպէս չեղաւ. կառավարիչը հեռացաւ, համոզուած ըլլալով որ խեղճ խելագարը, որուն համար սրտանց գորով մը կը զգար, թեթև տկարութիւն մը ունեցած էր։

Այդ միջոցին, Էտմոն, անկողնին վրայ նստած, գլուխը ձեռքերուն մէջ կռթնցուցած, կը ջանար մտածումները ամփոփել. Ֆարիան ճանչնալէն ի վեր, ամէն գործի խելամուտ, և խոհեմ գտնելով զայն, չէր կրնար հասկնալ թէ ինչպէս բոլոր բաներու մէջ բարձր իմաստութիւն ունեցող անձ մը մէկ կէտի վրայ մոլորի։ Չէր կրնար ըմբռնել թէ արդեօք Ֆարիա՞ իր գանձին վրայ կը սխալէր, թէ ամէն մարդ Ֆարիայի մասին։

Տանթէս իր բարեկամին քով դառնալու չհամարձակելով, բոլոր օրը սենեակին մէջ անցուց։ Կը ջանար ժամանակը երկարաձգել մինչև որ հաւաստի ըլլար թէ աբբան իրօք խելագարած էր. այդ համոզումը սոսկալի պիտի ըլլար իրեն համար։

Բայց իրիկունը, սովորական այցելութենէն յետոյ, Ֆարիա տեսնելով որ երիտասարդը չդարձաւ, փորձեց անոր մօտ երթալու։ Էտմոն, ծերունիին սողալով գալու համար ըրած ցաւագին ջանքերը լսելով, սարսռաց. իր մէկ ոտքը և մէկ թևը անգործածելի դարձած էին։ Էտմոն ստիպուեցաւ քաշելով վեր հանել զայն. ան չպիտի կրնար Տանթէսի սենեակին վրայ գտնուող նեղ ծակէն դուրս ելլել մինակը։

—Ահա՛ չարաչար տանջուելով մինչև հոս ետեւնուդ եկայ,

ըսաւ Ֆարիա, բարեացակամ ժպիտով մը։ Կարծեցիք որ պիտի կարենա՞ք պատմութիւնս լսելէ խուսափիլ. մտիկ ըրէք։

Էտմոն տեսաւ որ չպիտի կրնար խուսափիլ. ծերունին իր անկողնոյն վրայ նստեցուց և ինքը աթոռակին վրայ անոր մօտ նստաւ։

—Գիտէք արդէն, ըսաւ աբբան, որ ես Սբատա կարտինալին քարտուղարը, մտերիմը և բարեկամն էի։ Սբատա այդ անունը կրող իշխաններուն վերջինն էր։ Կեանքիս մէջ վայելած բոլոր երջանկութիւնս այդ ազնիւ իշխանին կը պարտիմ։ Ինքը հարուստ չէր, թէև իր գերդաստանին հարստութիւնները առածի կարգ անցած էին, շատ անգամ լսած եմ. «Սբատայի մը պէս հարուստ էր։» Բայց ինքը հանրային կարծիքին չափազանց ճոխութեան համբաւովը կ'ապրէր։ Իր պալատը իմ արքայութիւնս եղած էր։ Իր եղբօրորդիները կը կրթէի, բայց անոնք ամէնքն ալ մեռան, և երբ ինքը մինակ մնաց աշխարհի վրայ, տասը տարուան մէջ ինծի ըրածները փոխարինեցի, ամէն կամքը կատարելու անձնուիրութեամբ։

«Կարդինալին տունը ինծի համար գաղտնիք չունէր. շատ անգամ կը տեսնէի որ տէրս հին գիրքերը պրպտելու և մեծ եռանդով՝ ընտանեկան փոշելից ձեռագիրները քրքրելով կը զբաղէր։ Օր մը երբ կը մեղադրէի զինքը՝ առջի իրիկուան ըրած անօգուտ աշխատութեանը և անոր յաջորդող վհատութեանը համար, դառն ժպիտով մը երեսս նայեցաւ, և Հռոմ քաղաքին պատմութեան գիրքը առջևս դրաւ։ Աղեքսանդր Զ. պապին կենսագրութեան քսաներորդ գլխին մէջ, հետևեալ տողերը կային, զորս երբէք չեմ կրցած մոռնալ.

«Հռոմանիայի մեծ պատերազմները վերջացած էին։ Կեսար Պորճիա իր յաղթութիւնը տանելէն յետոյ, բոլոր Իտալիան գնելու համար ստակի պէտք ունէր։ Պապն ալ նոյնպէս ստակի պէտք ունէր՝ Լուի ԺԲ. Ֆրանսայի թագաւորին հետ գործը լմնցնելու համար, որ հակառակ վերջին ձախողուածներուն, տակաւին ահարկու էր։ Ուստի մեծ շահադրութիւն մը ընելու պէտք կար, բայց այս բանը դժուար էր թշուառ Իտալիոյ մէջ։

«Նորին Սրբութիւնը գաղափար մը յղացաւ: Որոշեց երկու կարտինալ կարգել:

«Հռոմի երկու մեծ անձնաւորութիւնները, մանաւանդ երկու հարուստ անձերը կարտինալ կարգելը սրբազան Հօր համար շահադիտութիւն մըն էր. որովհետեւ այդ երկու կարտինալներուն արդէն ունեցած մեծ և փառաւոր պաշտօնները ուրիշի ծախելէ զատ, անոնց շնորհած երկու խոյրերուն փոխարէն խիստ կարեւոր գումար մը պիտի ստանար:

«Շահադիտութեան երրորդ կէտ մըն ալ կար, զոր հիմա պիտի ըսեմ:

«Պապը և Կեսար Պորճիա նախ գտան կարտինալ ըլլալիք երկու անձերը, որոնք էին Ժան Ռոսբիլիոզի, որ արդէն վատիկանի խիստ բարձր աստիճաններէն չորսը ունէր, և Կեսար Սբատա, որ խիստ ազնուատոհմ և շատ հարուստ Հռոմայեցիին մէկն էր: Երկուքն ալ կը զգային Պապին կողմէ իրենց եղած այդ շնորհին արժէքը, որովհետեւ փառասէր էին: Ատոնք գտնելէ յետոյ, Կեսար շուտով գտաւ անոնց պաշտօնները գնել ուզողներ:

«Ուստի Ռոսբիլիոզի և Սբատա կարտինալութեան գինը վճարեցին, և ութ ուրիշներ ալ երկու կարտինալներուն նախորդ պաշտօնները գնեցին: Այսպէս՝ շահադէտներուն գանձը ութը հարիւր հազար սկուտ մտաւ (1 սկուտ կ'արժէ 3 ֆրանք):

«Հիմա շահադիտութեան վերջին կէտին անցնելու ատենը եկաւ: Պապը Ռոսբիլիոզին և Սբատան գգուելով, և կարտինալութեան պատուանշանները շնորհելէն յետոյ, հաւատի ըլլալով որ իրենց երախտագիտութեան անկեղծ պարտքը կատարելու և Հռոմի մէջ հաստատուելու համար՝ իրենց հարստութիւնը հնչուն դրամի վերածած և հետերնին բերած են անոնք, Պապը և Կեսար Պորճիա ճաշի հրաւիրեցին երկու կարտինալները:

«Այն ատեն սրբազան Հօր և իր որդիին միջեւ վէճ մը ծագեցաւ. Կեսար աւելի յարմար կը գտնէր այն միջոցներէն մէկը գործածել, զոր միշտ իր մտերիմներուն համար կը պահէր, այսինքն՝ նախ բանալի մը տալ անոնց որ երթան պահարան մը

բանան: Այդ բանալիին վրայ, շինողին անհոգութեամբը, երկաթի սուր ծայր մը կը գտնուէր: Պահարանին փականքը դըժուար բացուելուն, երբ բանալիին վրայ ոյժ կու տային, անոր սուր ծայրէն կը ծակէր մատերնին և հետեւեալ օրը կը մեռնէին: Կար նաեւ առիւծի գլուխ ունեցող մատնին, զոր Կեսար իր մատը կ'անցնէր՝ երբ մէկուն ձեռքը սեղմել ուզէր: Առիւծը կը խածնէր այդ նպաստաւորուած ձեռքին վերնամաշկը, խածուածքը քանիչորս ժամէն մահացու կ'ըլլար:

«Ուստի Կեսար առաջարկեց իր հօրը որ կա՛մ կարտինալները ղրկել պահարանը բանալու և կամ անոնց ամէն մէկուն ձեռքը սիրալիր կերպով սեղմել, բայց Աղեքսանդր Զ. պատասխանեց անոր.

«Սբատա և Ռոսբիլիոզի կարտինալներու պէս պատուական կարտինալներուն գործը լմնցնելու համար՝ անոնց ճաշ մը տալէն աւելի յարմար միջոց չկայ: Կը զգամ որ անոնց հարստութիւնը ձեռք պիտի ձգենք: Ատկէ զատ կը մոռնա՞ք, Կեսար, որ դժուարամարսութիւն մը անմիջապէս կը յայտնուի, իսկ խայթուածք մը կամ խածուածք մը մէկ կամ երկու օրէն ազդեցութիւն կ'ընէ:»

«Կեսար իրաւունք տուաւ այդ պատճառաբանութեան: Ուստի կարտինալները ճաշի հրաւիրուեցան:

«Սեղանը պապին սիրուն ամարանոցին մէջ պատրաստեցին. որ Սէն-Բիէր-Լա-Լիէն կը գտնուէր: Կարտինալները այդ ամարանոցին անունը միայն լսած էին:

«Ռոսբիլիոզի իր նոր աստիճանին փառքէն շլմորած, փութաց այդ հրաւէրը պատուել: Սբատա, որ խոհեմ մարդ մըն էր և իր եղբօրորդին կը սիրէր, յուսատու երիտասարդ հարիւրապետ մը, թուղթ և գրիչ առաւ ու կտակը ըրաւ:

«Ատիկա ընելէն յետոյ՝ ծառայ մը ղրկեց իր եղբօրորդիին՝ իմացնելու համար որ ամարանոցին շրջակաները իրեն սպասէ, բայց կ'երեւի թէ ծառան զայն չէր գտած:

«Սբատա այս հրաւէրին սովորութիւնը գիտէր: Քրիստոնէութիւնը, որ աշխարհիս գերագոյն քաղաքակրթիչն է, Հռոմը

լուսաւորելէն ի վեր, ալ հարիւրապետ մը բանակային կողմէ չէր գար ձեզի ըսելու. «Կեսար կ'ուզէ որ մեռնիս» այլ Պապին կողմէ ղրկուած արտակարգ նուիրակ մը կուգար, և ժպտուն շրթունքով կ'ըսէր. «Նորին Սրբութիւնը կ'ուզէ որ իր հետը ճաշէք»:

«Սպատա ժամը երկուքին սուրբ Պետրոսի ամարանոցը գնաց, ուր Պապը իրեն կը սպասէր: Սպատայի աչքին զարկած առաջին դէմքը եղբօրորդին եղաւ, որ հագուած շքուած, շնորհալի կ'երեւէր և Կեսար Պորճիա զգուանքներ կը շռայլէր անոր: Սպատա գունատեցաւ, և Կեսար հեգնական նայուածք մը ուղղելով անոր, իմացուց թէ ամէն բան գուշակած էր, և թէ ծուղակը աղէկ լարուած էր:

«Ճաշը աւարտեցին. Սպատա միայն սա՛ հարցումը կրցաւ ընել իր եղբօրորդիին. «Ղրկած մարդս ձեզ գտա՞ւ:» Եղբօրորդին «Ոչ» պատասխանեց, և այս հարցման նպատակը կատարելապէս հասկցաւ: Սակայն շատ ուշ էր, որովհետեւ Պապին մատռուակը իր առջեւ բաժակ մը ընտիր գինի դրած և լիքը խմած էր զայն: Սպատա նոյն միջոցին տեսաւ որ ուրիշ սրուակ մը ևս բերին, և անտարբերութեամբ իրեն ներկայացուցին: Ժամ մը ետքը բժիշկ մը յայտարարեց որ երկուքին ալ թունաւոր սունկերէ թունաւորուած են: Սպատա ամարանոցին սեմին վրայ կը մեռնէր, իսկ եղբօրորդին դրան առջեւը հոգին կը փչէր նշան մը ընելով, զոր կինը չհասկցաւ:

«Անմիջապէս՝ Կեսար և Պապը հանգուցեալներուն թուղթերը փնտռելու պատրուակով՝ փութացին անոնց ժառանգութիւնը կողոպտել: Բայց անոնց բոլոր ժառանգութիւնը կտոր մը թուղթի վրայ սապէս գրած էր Սպատա.

«Իմ սիրեցեալ եղբօրորդիիս կը թողում իմ արկղերս և գրքերս, որոնց հետ նաև ոսկի անկիւններով իմ գեղեցիկ աղօթագիրքս, փափաքելով որ միշտ պահէ իր սիրելի հօրեղբօր այս յիշատակը:»

«Ժառանգորդները ամէն կողմ փնտռեցին, աղօթագրքին վրայ զմայլեցան, կահ կարասիներուն վրայ ձեռք դրին և

զարմացան թէ ի՛նչպէս Սպատայի նման հարուստ մէկը այդչափ ողորմելի ժառանգութիւն մը ձգած է իր մօրեղբայր: Գանձ մը չգտան բնաւ. միայն մատենադարանին և աշխատանոցներուն մէջ փակուած գիտութեան գանձեր կային:

«Ատ էր ամէնը: Կեսար և իր հայրը փնտռեցին, պրպըտեցին և լրտեսեցին, բայց բան մը չգտան, և կամ գտածնին ոչինչ բան էր, գրեթէ հազար սկուտի չափ գոհարեղէն, թերեւս նոյնչափ դրամ. բայց եղբօրորդին, տուն դարձին, հազիւ ժամանակ ունեցած էր սա խօսքը ըսելու կնոջը.

«Հօրեղբօրս թուղթերուն մէջ փնտռեցէք. բուն կտակը հոն պիտի գտնէք:»

«Եղբօրորդիին ընտանիքը գուցէ օգոստափառ ժառանգորդներէն աւելի փնտռեցին, բայց ի զուր: Բալաթէն բլուրին ետին երկու պալատ և ամարանոց մը իրենց ձեռքը մնացին, բայց այդ միջոցին՝ անշարժ կալուածները միջակ արժէք մը ունենալնուն, Պապը և որդին այդ երկու պալատներն ու ամարանոցը իրենց ընչաքաղցութեան անարժան նկատած էին:

«Ասոր վրայ տարիներ անցան. Ալեքսանդր Զ. թունաւորուելով մեռաւ. գիտէք արդէն ի՛նչ սխալումով եղած ըլլալը: Իսկ Կեսար միեւնոյն միջոցին թունաւորուելով, ազատեցաւ, բայց օձի պէս փոխեց մորթը, և կարծես թէ նոր շապիկ մը հագաւ, որու վրայ թոյնը բիծեր ձգած էր վագրին մուշտակին ունեցածին նման. վերջապէս Հռոմէն մեկնելու ստիպուելով, գիշերային կռուի մը մէջ աննշանօրէն սպաննուեցաւ և գրեթէ անյիշատակ մնաց պատմութեան մէջ:

«Պապին մահուընէն և անոր զաւկին աքսորումէն յետոյ, ընդհանրապէս կը յուսացուէր որ Սպատա ընտանիքը կարտինալ Սպատայի ապրելակերպը պիտի շարունակէր, բայց այնպէս չեղաւ, Սպատայի ընտանիքը կասկածելի բարեկեցութեան մէջ ապրեցաւ. մշտնջենական գաղտնիք պատած էր այդ տխուր գործը, և հասարակութեան մէջ զրոյց մը տարածուած էր որ Կեսար իր հօրմէն աւելի քաղաքագէտ ըլլալով, Պապին ձեռքէն երկու կարտինալներուն հարստութիւնը յափշտակած

էր, որովհետեւ Ռոսփիլիոզի կարտինալը նախազգուշութիւն մը չընելուն համար՝ բոլորովին կողոպտուած էր։

—Մինչեւ հոս, ընդմիջեց Ֆարիա ժպտելով, այս պատմութիւնը անիմաստ չերեւիր ձեզի, այնպէս չէ՞։

—Ո՛հ, բա՛րեկամ, ըսաւ Տանթէս, ընդհակառակը ինծի այնպէս կ'երեւի թէ շահեկան քրոնիկ մը կը կարդամ. շարունակեցէք, կ'աղաչեմ։

—Շատ լաւ։

«Սբատայի ընտանիքը վարժուեցաւ այդ աննշան կեանքին։ Տարիներ անցան, և անոնց սերունդէն ոմանք զինուոր եղան, ոմանք քաղաքագէտ, եկեղեցական, կամ սեղանաւոր. ոմանք հարստացան, և ուրիշներ աղքատացան։ Վերջապէս կոմս Սբատային գանք, որ այս գերդաստանին վերջին շառաւիղն էր, և որուն քով ես գրագիր էի։

«Կոմս Սբատա իր հարստութեանը և իր աստիճանին միջեւ գտնուած անհամեմատութեանը մասին շատ անգամ կը տրտնջար ինծի. ես խորհուրդ կուտայի որ իր ունեցածը շահու դնէ. խորհուրդիս հետեւեցաւ, և այս կերպով կրկնապատկեց եկամուտը։

«Կեսար Սբատայի համբաւաւոր աղօթագիրքը որդւոց որդի անցնելով, ընտանիքին մէջ մնացած էր և կոմս Սբատայի ձեռքը կը գտնուէր։ Միակ կտակագրին պարունակած անհեթեթ պայմանին պատճառաւ ճշմարիտ նշխար մը դարձած էր ան, զոր պատկառելի աւելորդապաշտութեամբ մը կը պահէին ընտանիքին մէջ։ Աղօթագիրքը խիստ ընտիր գոթական պատկերներով զարդարուած էր, և վրան եղած ոսկին այնչափ ծանր էր որ հանդիսաւոր օրերու մէջ, ծառայ մը միշտ կարտինալին առջեւէն կը տանէր զայն։

«Գերդաստանական արխիւին մէջ պահուած ամէն տեսակ թուղթեր, դաշնագիրեր, մագաղաթներ տեսնելով, որոնց ամէնքն ալ թունաւորուած կարտինալին ժամանակէն մնացած էին, ինձմէ առաջ եկող դուցէ քանի ծառաներու, քանի վերակացուներու և քանի քարտուղարներու ըրածին պէս ես ալ

սկսայ այդ թուղթերու անհագին ծրարները քրքրել։ Թէև խիստ մեծ խնամքով և եռանդով հետազօտութիւններ ըրի, բայց բան մը չգտայ բնաւ։ Այսու հանդերձ, Պօրճիայի գերդաստանին պատմութիւնը կարդացած էի. ուրիշ ճիշդ և գրեթէ ժամանակագրական պատմութիւն մըն ալ ես գրեցի, միայն ապահովուելու համար թէ արդեօք Կեսար Սբատա կարտինալին մահուընէն յետոյ՝ այդ իշխաններուն հարստութիւնը յանկարծ աւելցած էր. միայն իր դժբախտութեան ընկեր եղող Ռոսփիլիոզիի կարտինալին հարստութեան աւելնալը դիտած էի։

«Ասոր վրայ՝ գրեթէ ապահով եղայ որ Սբատայի ժառանգութիւնը ոչ իր ընտանիքը վայելած էր և ոչ ալ Պօրճիաները, այլ արքայական պատմուածքներու մէջ անտէր մնացած այն գանձերուն նման, որոնք երկրին ծոցը, ոգիի մը պաշտպանութեան ներքև կը քնանան։ Երեք հարիւր տարիէ ի վեր, գերդաստանին եկամուտները և ծախքերը հազարաւոր անգամ խառնեցի, հաշուեցի, գումարեցի. բայց անօգուտ. ես ագիտութեանս մէջ մնացի և կոմս Սբատան՝ իր թշուառութեանը մէջ։

«Վերջապէս տէրս մեռաւ. իր եկամուտէն զատ՝ գերդաստանին թուղթերը, հինգ հազար հատորէ բաղկացած գրադարանը և իր համբաւաւոր աղօթագիրքը պահած էր։ Իր մահուընէն յետոյ՝ այդ ամէնը ինծի թողուց հազար հռոմէական սկուտով, պայմանաւ որ ամէն տարի իրեն համար պատարագ ընել տամ, և իր գերդաստանին ազգաբանական պատմութիւնը շինեմ, զոր մեծ ճշդութեամբ գրեցի.

«Մի՛ նեղանաք, սիրելի Էտմոնս, պատմութեանս վերջին կը մօտենանք։

«1807ին, բանտարկութենէս ամիս մը առաջ և Սբատա կոմսին մահուանէն տասնըհինգ օր ետքը, դեկտեմբերի 25ին, հիմա պիտի հասկնաք թէ ի՛նչպէս այդ յիշատակելի օրուան թուականը յիշողութեանս մէջ մնաց, այդ թուղթերը իբր հարիւրերորդ անգամը ըլլալով կը կարդայի, և կարգի կը դնէի, որովհետեւ պալատը այնուհետեւ օտարականի մը ձեռքը անցած ըլլալով, Հռոմէն պիտի մեկնէի ու Ֆիօրէնցա պիտի հաս-

տոտուէի, և միասին տանելու էի տասներկու հազար ֆրանքի չափ ունեցած գումարս, գրադարանս և հռչակաւոր աղօթագիրքս՝ այդ բազմաչխատ զբաղումէն յետոյ՝ կերած ծանր կերակուրէս անհանգիստ ըլլալով գլուխս երկու ձեռքերուս մէջ կրթնցուցեր էի՝ քունս տարաւ. կէս օրը երեք ժամ անցած էր:

«Ժամացոյցը վեց կը զարնէր, երբ քունէս արթնցայ:

«Գլուխս վերցուցի. խոր մթութիւնը ամէն կողմ պատած էր: Զանգակը հնչեցուցի որ ճրագ մը բերեն, բայց մէկը չեկաւ. այն ատեն որոշեցի անձամբ ճրագը վառել: Փիլիսոփայի սովորութիւն մըն էր ատ, զոր անպատճառ ի գործ պիտի դնէի: Մէկ ձեռքով պատրաստած ճրագս բռնեցի և տուփին մէջ ոլէթ չգտնելուն՝ միւս ձեռքով թուղթի կտոր մը կը փնտռէի որ կրակարանին վրայ պարող վերջին բոցէն վառէի. բայց մթութեան մէջ վախնալով որ անպիտան թուղթի մը տեղ թանկագին թուղթ մը այրեմ գուցէ, կը մտածէի թէ ինչ թուղթ առնեմ, երբ միտքս ինկաւ որ թանկագին աղօթագիրքին մէջ, որ քովս սեղանին վրայ դրուած էր, հին թուղթի կտոր մը կար՝ մէկ ծայրը բոլորովին դեղնած. կ'երեւի թէ իբր նշան կը գործածուէր և քանի մը դարերէ ի վեր իր տեղը մնացած էր, ի յարգանս ժառանգորդներուն: Խարխափանքով փնտռեցի այդ աննշան թուղթը գտայ զայն, ճմրթկեցի, և նուաղուն բոցին, ներկայացնելով վառեցի:

«Բայց թուղթին բոցավառած միջոցին, կարծես մոգական զօրութեամբ, մատներուս տակ ճերմակ, թուղթին վրայէն դեղնորակ գրեր կ'ելլէին և թուղթին վրայ կ'երեւէին. այն ատեն թուղթը ձեռքերուս մէջ սեղմեցի սոսկումով, բոցը մարեցի, մոմը ուղղակի կրակարանէն վառեցի, և անպատում յուզումով ճմրթկած թուղթը բացի, և նայեցայ որ գաղտնի և խորհրդաւոր մելանով մը գիրեր գրուած էին և բոցին չփումով միայն երեւան ելած էին անոնք:

Թուղթին երրորդ մասէն քիչ մը աւելին բոցէն մոխիր դարձած էր, այս առտու ձեր կարդացած թուղթն էր ան. նորէն կարդացէք զայն, Տանթէս, և երբ լմնցնէք, ընդհատուած խօսքերը և անկատար իմաստը կ'ամբողջացնեմ:»

Ֆարիա թուղթը ուրախութեամբ Տանթէսին ներկայացուց, որ այս անգամ անյագօրէն կարդաց յետագայ բառերը, որոնք ժանգի նման շիկագոյն մելանով մը գրուած էին.

Այսօր 1498 ապրիլ 25ին ար
ըլլալով, եւ վախնալով որ մի գուցէ ինծի ծախուած
ստացուածներուս ժառանգն ըլլալ ուզէ, եւ Գաբր
գլուխը բերած դժբախտութիւնը ինծի ալ
կը յայտարարեմ իմ միակ ժառանգորդ
ինծի հետ շրջագայած այն տեղը զոր
թէ-Քրիսթօ կղզեակին քարայրին մէջ ի
կտրուած ստակներս, զոհարեղէններս, ադա
այդ գանձին հնն ըլլալը, որ գրեթէ երկու միլիոն
արեւելեան խորշին ուղղութեամբը քսաներորդ ժ
Այդ քարայրին մէջ երկու ծակ բացուած է.
գոյն անկիւնն է, եւ ես իբր
միակ ժառանգորդիս:

1498 ապրիլ 25

ԿԵՍ

—Հիմա, յարեց աբբան, սա միւս թուղթը կարդացէ՛ք:

Եւ ընդհատուած տողերով ուրիշ թերթ մը ներկայացուց Տանթէսին:

Տանթէս առաւ զայն ու կարդաց.

պապան Աղեքսանդր Զ.էն ճաշի հրաւիրուած
կարտինալական խոյրի գինն զոհ չըլլալով,
արա ու Պենթիվոլեօ կարտինալներուն
հասցնէ, որոնք թունաւորուելով մեռան,
Կուիտօ Սպատա եղբօրորդիիս թէ
ինքը կը ճանչնայ, այսինքն Մօն-
մ բոլոր ունեցած ձոյլ ոսկիներս,
մանեղներս թաղած եմ, եւ միայն ես գիտեմ

Հռոմէական սկուտի կը հասնի. կղզեակին
այռը վերցնելով պիտի գտնէ զայն:
գանձը երկրորդ ծակին հեռաւորա-
սեփականութիւնս կը թողում զայն իմ

ԱՐ † ՍԲԱՏԱ

Ֆարիա իր եռանդուն նայուածքը անոր վրայ յառեց։

—Հիմա, ըսաւ, տեսնելով որ Տանթէս մինչեւ վերջին տողը կարդացած լմնցուցած էր, երկու կտորները իրարու մօտեցուցէ՛ք, եւ դուք ինքնին վճռեցէ՛ք։

Տանթէս հնազանդեցաւ. երկու թուղթերը իրարու մօտեցնելով, սա ամբողջութիւնը կարդաց.

Այսօր 1498 ապրիլ 25ին սր . . . բազան Աղեքսանդր Զ.էն ճաշի հրաւիրուած ըլլալով, եւ վախնալով որ մի գուցէ ինծի ծախուած . . . կարտինալական խոյրի գինէն գոհ չըլլալով. ստացուածներուս ժառանգն ըլլալ ուզէ եւ Գաբր . . . արա ու Պենթիվոլեօ կարտինալներուն գլուխը բերած դժբախտութիւնը ինծի ալ . . . հասցնէ, որոնք թունաւորուելով մեռան. կը յայտարարեմ իմ միակ ժառանգորդ . . . Կուիտօ Սբատա եղբօրորդիիս, որ ինծի հետ շրջագայած այն տեղը զոր . . . ինքը կը ճանչնայ. այսինքն Մօնթէ-Քրիստօ կղզեակին քարայրին մէջ ի . . . մ բոլոր ունեցած ձոյլ ոսկիներս, կտրուած ստակներս, գոհարեղէններս, ադա . . . մանդներս թաղած եմ, եւ միայն ես գիտեմ այդ գանձին հոն ըլլալը որ գրեթէ երկու միլիոն . . . հռոմէական սկուտի կը հասնի, կղզեակին արեւելեան խորշին ուղղութեամբ քսաներորդ ժ . . . այռը վերցնելով պիտի գտնէ զայն: Այդ քարայրին մէջ երկու ծակ բացուած է . . . գանձը երկրորդ ծակին հեռաւորագոյն անկիւնն է, եւ ես իբր սե . . . փականութիւն կը թողում զայն իբր միակ ժառանգորդիս:

1498 ապրիլ 25 ԿԵՍ . . . ԱՐ † ՍԲԱՏԱ

—Հասկցա՞ք վերջապէս, հարցուց Ֆարիա։

—Այնչափ երկար ատենէ ի վեր փնտռածնին կարտինալ Սբատային յայտարարութիւնն ու կտա՞կն էր, հարցուց Տանթէս տակաւին հաւատ չընծայելով։

—Այո՛, այո՛, հազար անգամ այո՛։

—Այդ խօսքերը ո՞վ ամբողջացուցած է։

—Ես, ձեռքս գտնուած հատակոտոր բառերով թուղթին լայնութիւնը տողերուն լայնութեանը հետ չափելով, մնացեալ կորսուած բառերը գուշակեցի, ամբողջացուցի զայն, ինչպէս որ երկրի տակ վերէն եկած լոյսին օգնութեամբ մութ տեղ մը կը յառաջանանք։

—Ի՞նչ ըրիք երբ այդ համոզումը ունեցաք։

—Ուզեցի գանձը պահուած տեղը երթալ. ճամբայ ելայ՝ Իտալիոյ միացեալ թագաւորութեան վրայ գրել սկսած մեծ աշխատութիւնս միասին տանելով. բայց երկար ատենէ ի վեր կայսերական ոստիկանութիւնը, որ Նաբոլէոնի զաւակ մը ծնելէն յետոյ ունեցած կամքին հակառակ, այդ միջոցին գաւառները իրարմէ բաժնել կ'ուզէր, իր բոլոր ուշադրութիւնը իմ վրաս դարձուցած էր. իմ ստիպողական ճամբորդութիւնս, որուն պատճառը չէին գիտեր, կասկած արթնցուց. Բիոմպինօյի մէջ նաւ մտած միջոցիս ձերբակալուեցայ։

«Հիմայ, շարունակեց Ֆարիա գրեթէ հայրական նայուածք մը ուղղելով Տանթէսի, հիմա դուք ինծի չափ գիտէք. եթէ երբեք ասկէ միասին փախչինք, գանձիս կէսը ձերն է. եթէ հոս մեռնիմ, դուք առանձին փախչիք, ամբողջ ձերը թող ըլլայ։

—Բայց, հարցուց Տանթէս, ընդդիմութիւն ցուցնելով, այդ գանձը աշխարհիս մէջ մեզմէ աւելի օրինաւոր ժառանգ մը չունի՞։

—Ո՛չ ո՛չ, անհո՛գ եղիք, Սբատայի ընտանիքը ամբողջապէս մարած է. ասկէ զատ՝ վերջին Սբատա կոմսը իր ժառանգորդն ըրաւ զիս այս աղօթագիրքը ինծի շնորհելով, պարունակութիւնն ալ ինծի շնորհեց. ո՛չ, ո՛չ, անհոգ եղիք. եթէ այդ հարստութիւնը ձեռք ձգենք, առանց խղճի խայթի, կրնանք վայելել զայն։

—Եւ այդ գանձը կը պարունակէ ըսի՞ք...

—Երկու միլիոն հռովմէական սկուտ, որ մեր դրամովը գրեթէ տասներեք միլիոն կ'ընէ։

—Անկարելի է, ըսաւ Տանթէս, գումարին մեծութենէն ահաբեկած։

—Անկարելի՞ և ինչո՞ւ, յարեց ծերունին։ Սպատայի ընտանիքը ԺԵ. դարուն ամենէն հին և ամենէն զօրաւոր ընտանիքներէն մէկն էր։ Անկէ զատ, այն շրջանին, ո՛ւր չահագիտութիւնն ու ճարտարարուեստը գոյութիւն չունէին, ոսկիի և գոհարներու այս կոյտերը հազուագիւտ չէին. տակաւին այսօր Հռոմայեցի ընտանիքներ կը գտնուին, որոնք գրեթէ միլիոնի մը արժէքով ադամանդ և գոհարեղէն ունին, բայց անոնք անվաճառելի ըլլալով, չեն կրնար անոնց դպչիլ ու անօթութենէ կը մեռնին։

—Էտմօն կարծեց թէ երազ կը տեսնէր. թերահաւատութեան ուրախութեան միջեւ կը տարուբերէր։

Այսչափ երկար ատեն այս գաղտնիքը ձենէ պահեցի, սա պատճառաւ որ, չարունակեց Ֆարիա, նախ ձեզ փորձեմ, և յետոյ յանկարծակիի բերեմ։ Եթէ անդամալուծութեան մէջ իյնալէս առաջ փախչիլ կարենայինք, Մօնթէ-Քրիսթօ կղզին պիտի տանէի ձեզ. բայց հիմա, աւելցուց հառաչանքով, դուք հոն պիտի տանիք զիս։ Ըսէք ուրեմն, Տանթէս, շնորհակալ չէ՞ք ըլլար ինծի։

—Այդ գանձը ձերն է, բարեկամ, ըսաւ Տանթէս, բայց միայն ձերը, և ես բնաւ իրաւունք չունիմ անոր մէջ. քանի որ ձեր ազգականը չեմ։

—Դուք իմ զաւակս էք, Տանթէս, գոչեց ծերունին, դուք գերութեանս զաւակն էք. ասպարէզս չէր ներեր որ ես ամուսնանայի, ու Աստուած ինծի ղրկեց ձեզ, որպէս զի ամուրիի մը և միանգամայն բանտարկեալի մը մխիթարութիւնն ըլլաք։

Ֆարիա իր առողջ թեւը երիտասարդին երկնցուց, որ անոր վիզը փաթթուեցաւ լալագին։

ԺԹ. ԳԼՈՒԽ

ԶԵՐՄԻՆ ԵՐՐՈՐԴ ՆՈՊԱՆ

Այդ գանձը որ երկար ատեն աբբային մտածումներուն առարկան դարձած էր, հիմա աբբային զաւակի պէս սիրած անձին ապագայ երջանկութիւնը ապահովցնելուն համար, աւելի թանկագին երեւցաւ ծերունիին. Ֆարիա ամէն օր ի վեր կը հանէր թէ տասներեք կամ տասնըչորս միլիոն հարստութեամբ մեր արդի ժամանակակից մարդ մը ո՛րչափ բարիք կրնայ ընել իր բարեկամներուն. այն ատեն Տանթէսի դէմքը կը մթագնէր, քանի որ վրէժխնդրութեան համար ըրած երդումը իր մտքին մէջ կը ներկայանար, և ինքը անոր հակառակ կը մտածէր թէ տասներեք կամ տասնըչորս միլիոն հարստութեամբ ժամանակակից մարդ մը ո՞րչափ չարիք կրնար ընել իր թշնամիներուն։

Աբբան Մօնթէ-Քրիսթօ կղզին չէր ճանչնար, բայց Տանթէս կը ճանչնար զայն. շատ անգամ այս կղզիին առջեւէն անցած էր, որ Քորսիքայի և Էլպա կղզիին մէջտեղը Բիանոզա կղզեակէն քսանըհինգ մղոն հեռու կ'իյնայ, և անգամ մը հոն խարիսխ իսկ նետած էր։ Այդ կղզին բոլորովին ամայի եղած է միշտ, կոնաձեւ ժայռ մը, կարծես հրաբխային աղէտի հետեւանքով, անդունդին տակէն ծովուն մակերեսը բարձրացած։ Տանթէս կղզիին յատակագիծը Ֆարիայի կը գծէր, և Ֆարիա գանձը գտնելու միջոցներուն վրայ խորհուրդներ կուտար Տանթէսի։

Սակայն Տանթէս ծերունիին չափ խանդավառ և ինքնավստահ չէր։ Իրաւ է որ հիմա ա՛լ ապահով էր Ֆարիայի խելագար չըլլալուն, և գանձը գտնելու կերպին վրայ կը զարմանար. բայց միանգամայն չէր կրնար կարծել որ այդ պահուած գանձը, ենթադրելով որ ստոյգ է, տակաւին հոն մնացած ըլլար, և

եթէ մտացածին իսկ չհամարէք զայն, գոնէ կ'ենթադրէք որ անկէ վերցուած։

Ճակատագիրը, բանտարկեալներուն վերջին յոյսն ալ փարատելու և անոնց հասկցնելու համար որ մշտնջենական բանտարկութեան մը դատապարտուած են, նոր դժբախտութիւն մը կ'աւելցնէր. ծովուն վրայ նայող ճեմագաւիթը, որ երկար ատենէ ի վեր աւերակ դարձած էր, նորէն ամրացուցին. քարայատակը նորոգեցին և Տանթէսի կիսով չափ լեցուցած ծակը խցեցին խոշոր ապառաժներով։ Ինչպէս կը յիշուի, եթէ աբբայի թելադրութեամբ, երիտասարդը այդ նախազգուշութիւնը չընէր, շատ աւելի մեծ դժբախտութիւն մը պիտի ծանրանար իրենց վրայ. փախչելու համար ըրած փորձերնին երեւան պիտի ելլէր, և անտարակոյս իրարմէ պիտի բաժնէին. ուստի իրենց վրայ աւելի ամուր և աւելի անողոք դուռ մը գոցուեցաւ։

—Կը տեսնէ՞ք, կ'ըսէր երիտասարդը քաղցր տրտմութեամբ մը, ձեզի համար ունեցած անձնուիրութիւնս անգամ Աստուած կ'ուզէ մէջտեղէն վերցնել։ Խոստացայ որ յաւիտեան ձեր քով կենամ, և այսուհետեւ խոստումս չպահելու իսկ ազատ չեմ. այսուհետեւ ոչ ես և ոչ դուք գանձ չունինք, և երկուքնիս ալ ասկէ դուրս չպիտի ելլենք։ Սակայն, լաւ գիտցէք, բարեկամ, որ իմ ճշմարիտ գանձս Մոնթէ-Քրիսթոյի մթին ժայռերուն տակ ինծի սպասողը չէ, այլ ձեր ներկայութիւնը, մեր բանտապահներուն հսկողութեան հակառակ՝ օրուան մէջ հինգ կամ վեց ժամ միատեղ անցուցած կեանքերնիս, իմացականութեան այն ճառագայթները, զորս իմ մտքիս հաղորդեցիք, այն լեզուները, զորս յիշողութեանս մէջ արմատացուցիք, և որոնք բանասիրական ճիւղաւորումներով կ'արդիւնաւորին, այն զանազան գիտութիւնները, զորս ձեր խորին հմտութեամբ դիւրացուցիք, և պայծառ սկզբունքները զորս ինծի սորվեցուցիք։ Ահա՛ ասոնք են իմ գանձերս, բարեկամ, ասոնցմով զիս հարուստ ու երջանիկ ըրիք։ Հաւատացէք ինծի և մխիթարուեցէք. ասոնք աւելի արժէք ունին

ինծի համար քան թէ թօնօներով ոսկի և ադամանդներու արկղեր, որոնք գուցէ առեղծուածական ըլլան այն ամպերուն նման, որոնք առտուները ծովուն վրայ կ'երեւին, և երկիր կը կարծուին, բայց ո՛րչափ մօտենանք, անոնք կը գոլորշիանան, օդին մէջ կը ցնդին, և կ'աներեւութանան։ Կարելի եղածին չափ երկար ժամանակ ձեր քովը կենալս, ձեր պերճախօս ձայնը լսելս, միտքս լուսաւորելնիդ, հոգիս նորոգելնիդ, ազատելէ յետոյ, ընելիք մեծ և սոսկալի գործերը սորվելս իմ միակ հարստութիւններս են. ասոնք մտացածին չեն, և ասոնց համար ձեզի պարտական եմ. երկրիս բոլոր վեհապետները. Կեսար Պորճիաներ իսկ ըլլան, կարող չեն ինձմէ յափշտակելու զանոնք։

Այսպէս՝ երկու դժբախտները եթէ երջանիկ օրեր իսկ չունեցան, գոնէ օրերը շատ շուտ կ'անցնէին։ Ֆարիա, որ այնչափ երկար տարիներէ ի վեր իր գանձին վրայ լռութիւն պահած էր, հիմա անոր վրայ խօսելու առիթը չէր փախցնէր բնաւ։ Ինչպէս գուշակեր էր, աջ թեւը և ձախ ոտքը անդամալոյծ եղած էին. և գրեթէ յոյսը կորած էր որ պիտի կարենար զանոնք գործածել. բայց իր երիտասարդ ընկերին համար ազատութիւն և փախուստ կ'երազէր, ու ատոր համար ուրախութիւն կը զգար։ Վախնալով որ մի գուցէ կտակագիրը օր մը կորսուի, ստիպեց Տանթէսը՝ գոց ընելու զայն, և Տանթէս ծայրէ ծայր գոց գիտէր զայն։ Այն ատեն, թուղթին երկրորդ մասը ջնջեց, ապահով ըլլալով որ եթէ առաջին մասը ձեռք անցուէր, բուն իմաստը չէին կրնար գուշակել։ Երբեմն ժամերով Տանթէսի կը սորվեցնէր թէ ի՛նչ ճամբու պիտի հետեւէր ազատութեան օրը։ Իր ազատութեան օրը, ժամուն կամ վայրկեանին, առանց ուրիշ բանի վրայ խորհելու, պէտք էր ո և է միջոցաւ Մոնթէ-Քրիսթօ կղզին երթալ, հոն մինակ մնալ այնպիսի պատճառանքով մը որ կասկած չներշնչէ. յետոյ ջանալու էր հրաշալի քարանձաւները փնտռել և հոն պրպտել որոշեալ տեղը։ Այդ տեղը, ինչպէս յայտնի է, երկրորդ ծակին հեռաւորագոյն անկիւնն էր։

Այնուհետեւ ժամերը եթէ ոչ արագօրէն կ'անցնէին, բայց գէթ տանելի կ'ըլլային. ինչպէս ըսինք, Ֆարիա թէեւ իր մէկ թեւին և մէկ ոտքին գործածութիւնը կորսնցուցած, իր իմացականութեան պայծառութիւնը պահած էր տակաւին, բացի բարոյական գիտութիւններէն, զորս մանրամասնեցինք, բանտարկեալի համբերատար և վսեմ արուեստն ալ սորվեցուց երիտասարդ ընկերին. ուստի երկուքն ալ իրարմով կը զբաղէին միշտ. Ֆարիա կը վախնար որ կը ծերանայ, և Տանթէս կը սոսկար իր դժբախտ անցեալին վրայ, որ իր յիշողութեան խորը, մթութեան մէջ մոլորած, հեռաւոր լոյսի մը պէս կը ծփար: Այսպէս կ'անցրնէին ատենները այնպիսի անձերու պէս, որոնց կեանքը խանգարուած չէ դժբախտութեամբ, և նախախնամութեան աչքին տակը մեքենական և հանդարտ կեանք մը կը վարեն:

Բայց այդ արտաքին հանդարտ երեւոյթին տակ, երիտասարդին և գուցէ ծերունիին սրտին մէջ կային սրտի խոյանքներ և զսպուած հառաչանքներ, զորս դուրս կուտային, երբ Ֆարիա մինակ մնար, և երբ Էտմոն սենեակը դառնար:

Գիշեր մը Էտմոն քունէն ընդոստ արթնցաւ, կարծելով թէ զինքը կը կանչեն:

Աչքը բացաւ, և փորձեց թանձր մթութիւնը թափանցել աչքերով:

Իր անունը, և կամ զինքը կանչող ցաւագին ձայն մը մինչեւ իրեն հասաւ:

Անկողնին վրայ ելաւ, և ճակատը անձկութեան քրտինքով ծածկուած, մտիկ ըրաւ: Տարակոյս չկար. այդ վշտագին ձայնը իր ընկերոջ բանտէն կուգար:

—Մե՛ծդ Աստուած, մրմռաց Տանթէս, արդեօք ա՞ն է...:

Անկողինը տեղէն վերցուց, քարը մէկդի քաշեց, գետնափորին մէջ նետուեցաւ, և միւս ծայրը հասաւ. սալաքարը վերցուած էր:

Տձեւ և դողդոջուն ճրագին լոյսովը, որուն վրայ արդէն խօսեցանք, Էտմոն ծերունիին գունատ դէմքը տեսաւ. տա-

կաւին ոտքի վրայ էր ան և իր անկողնոյն փայտին կառչած էր: Իր դէմքը, այլայլած, այն սոսկալի նշանները կը կրէր, զոր Տանթէս արդէն տեսած և այնչափ վախցած էր առաջին անգամ:

—Հասկցա՞ք, այնպէս չէ՞, բարեկամ, ըսաւ Ֆարիա. ուրիշ բան մը ըսելու պէտք կա՞յ:

Էտմոն վշտագին ճիչ մը հանեց, և խելայեղ, դէպի դուռը վազեց պոռալով.

—Օգնութի՜ւն, օգնութի՜ւն:

Ֆարիա ուժ ունեցաւ անոր թեւէն բռնելու:

—Լռեցէ՛ք, ըսաւ. եթէ ոչ կորսուած էք: Ա՛լ ձեր վրայ մտածենք, բարեկամ, որպէս զի կարող ըլլանք ձեր բանտարկութիւնը տանելի ընելու, և կամ փախուստը կարելի դարձնելու: Արդէն ըրածներս ձեր կողմէն վերստին կատարուելու համար տարիներու պէտք կայ, և մէկ վայրկեանի մէջ կրնան ջնջուիլ, եթէ մեր բանտապահները եղածը իմանան: Սակայն, անհո՛գ եղէք, բարեկամ, այս բանտը երկար ատեն պարապ պիտի չմնայ. անշուշտ իմ տեղս բերեն ուրիշ թշուառ մը: Այդ բանտարկեալին իբր ազատարար հրեշտակ մը պիտի երեւիք: Նոր եկողը թերեւս ձեզի պէս երիտասարդ, ուժեղ և համբերատար մէկը ըլլայ, և ձեր փախստեանը օգնող, մինչ ես արգելք կ'ըլլայի: Այն ատեն ձեր բոլոր շարժումները արգիլող ինծի պէս կէս դիակ մը պիտի չունենաք: Ստուգիւ, Աստուած վերջապէս օգնութեան կը հասնի ձեզի. կորսնցուցածնուդ տեղը կը լեցնէ, և ալ ժամանակ է որ ես մեռնիմ:

Էտմոն ուրիշ բան չկրցաւ ընել, եթէ ոչ ձեռքերը միացնել եւ ըսել.

—Ո՛հ, բա՛րեկամ, բարեկա՛մ, լռեցէք:

Ծերունիին այդ քաջութենէն և անակնկալ հարուածէն ընկճուած էր. բայց իսկոյն ուժ առնելով, ըսաւ.

—Արդէն անգամ մը ձեզ ազատեցի, դարձեալ պիտի ազատեմ:

Յետոյ անկողնին ոտքը վերցուց, սրուակը առաւ, որուն մէջ դեռ բաւական կարմիր ըմպելիէն կը գտնուէր:

—Այո՛, ըսաւ. այս ազատարար ըմպելիէն տակաւին կայ մէջը: Շո՛ւտ, շո՛ւտ ըսէք այս անգամ ընելիքս. Նոր յանձնարարութիւն մը ունի՞ք, խօսեցէք, բարեկամ, մտիկ կ՚ընեմ:

—Ալ յոյս չկայ, պատասխանեց Ֆարիա գլուխը շարժելով. բայց և այնպէս Աստուած մեր սրտին մէջ ապրելու սէրը խորունկ արմատացուցած է, և կ՚ուզէ որ իր ստեղծած մարդը իր գոյութիւնը պահելու համար, կրցածը ընէ, որ թէև դժնդակ երբեմն, բայց միշտ սիրելի է:

—Ո՛հ, այո՛, այո՛, ըսաւ Տանթէս, ձեզ պիտի ազատեմ կ՚ըսեմ:

—Փորձեցէք ուրեմն, պաղութիւնը վրաս կը տարածուի. կ՚զգամ որ արիւնս ուղեղիս մէջ կը խուժէ. այս ահռելի սարսուռը, որ ակռաներս կը կճրտեցնեն, և կարծես ոսկորներս կ՚անջատէ իրարմէ, կը սկսի բոլոր մարմինս ցնցել. հինգ վայրկեանէն՝ հիւանդութիւնը պիտի պոռթկայ, ու քառորդէ մը՝ դիակ մը պիտի դառնամ:

—Ո՛հ, գոչեց Տանթէս, սիրտը ճմլուած:

—Առջի անգամուան պէս ըրէ՛ք, միայն թէ այնչափ երկար ատեն մի սպասէ՛ք: Կեանքիս բոլոր զսպանակները մաշած են և մահը, շարունակեց ծերունին, իր անդամալուծուած թեւը ու ոտքը ցուցնելով, մարմնոյս մնացեալ մասին վրայ տարածուելու շատ դժուարութիւն պիտի չունենայ: Տասը կաթիլին տեղ տասներկու կաթիլ բերանիս մէջ կաթեցնելնէդ յետոյ՝ եթէ տեսնէք որ խելքս գլուխս չի գար, այն ատեն մնացեալն ալ պարպեցէք: Հիմա անկողնիս վրայ դրէք զիս, որովհետեւ ալ չեմ կրնար ոտքի վրայ մնալ:

Էտմօն ծերունին իր գիրկը առաւ և անկողնին վրայ դրաւ:

— Հիմա, բարեկամ, ըսաւ Ֆարիա, իմ թշուառ կեանքիս միակ մխիթարութիւնը, Աստուծոյ ինծի ընծայած թանկագին պարգեւը, որուն համար շնորհակալ եմ, յաւիտեանս ձենէ բաժնուելու միջոցիս, կատարեալ երջանկութիւն և բարօրութիւն կը բարեմաղթեմ ձեզ, բան մը որուն արժանի էք, զաւա՛կս, և ես կ՚օրհնեմ ձեզ:

Երիտասարդը ծունգի վրայ եկաւ՝ գլուխը ծերունիին անկողնին վրայ կրթնցնելով:

—Բայց ամէն բանէ առաջ. այս գերագոյն վայրկեանին մէջ ձեզի ըսելիքս աղէկ մտիկ ըրէք. Սբատայի գերդաստանի գանձը իրօք կայ. Աստուծոյ հրամանաւն՝ այս վայրկեանին կղզեակին երկրորդ քարանձաւին խորը կը տեսնամ զայն. աչքերս երկրիս խորերը կը թափանցեն և կը շլանան հարստութիւններէն: Եթէ փախչելու յաջողիք, յիշեցէք որ խեղճ աբբան ամենուն կարծածին պէս խենթ չէ: Սլացէ՛ք, Մօնթէ-Քրիսթօ հասէք, վայելեցէք մեր հարստութիւնը, այո՛, վայելեցէք զայն, որովհետեւ շատ նեղութիւն կրեցիք:

Սաստիկ ցնցում մը ծերունիին խօսքը ընդմիջեց. Տանթէս գլուխը վերցուց, և նայեցաւ որ անոր աչքերը արիւնով լեցուած էին. կարծես թէ արեան կոհակ մը կուրծքէն ճակտին վրայ բարձրացած էր:

—Մնա՛ք բարով, մնա՛ք բարով, մրմնջեց ծերունին, ջղաձգութեամբ երիտասարդին ձեռքը սեղմելով, մնա՛ս բարով...

—Ո՛հ, ո՛չ տակաւին, գոչեց Էտմօն, պիտի չթողում ձեզ. ո՛վ Աստուած օգնութեա՛ն հասիր .... օգնութի՛ւն... հասէք ....

—Լռեցէ՛ք, լռեցէ՛ք մրմնջեց հոգեվարքը, որպէս զի եթէ զիս ազատէք՝ չըլլայ որ իրարմէ զատեն մեզ:

—Իրաւունք ունիք, ո՛հ, այո՛, այո՛, անհոգ եղիք, պիտի ազատեմ ձեզ: Թէև շատ կը տառապիք, բայց առջի անգամուան չափ չէ:

—Ինքզինքնիդ մի՛ խաբէք. այո՛, կրած տառապանքս նուազ է, բայց ոյժս ալ սպառած է: Ձեր տարիքին մէջ, կեանքին վրայ կը վստահի մարդ. երիտասարդութեան առանձնաշնորհ է այնպէս կարծել և յուսալ. բայց ծերերը մահը աւելի յստակ կը տեսնեն: Ո՛հ, ահա՛ ... կուգայ ... ա՛լ լմնցաւ ... աչքերուս լոյսը կը տկարանայ .... իմացականութիւնս կը կորսնցնեմ...: Ձեռքերնիդ տուէք, Տանթէս... մնա՛ք բարով.... մնա՛ք բարով ... մնա՛ք բարով:

Ու վերջին ճիգով մը վեր ելլելով, ուր իր մտքին բոլոր կարողութիւնները ամփոփած էր, ըսաւ.

—Մօնթէ-Քրիսթօն, Մօնթէ-Քրիսթօն չմոռնաք։

Անկողնին վրայ ինկաւ դարձեալ։

Նոպան սոսկալի եղաւ. անդամները գալարուեցան, արտեւանունքը ուռեցան, արիւնալից փրփուր մը բերանէն դուրս ժայթքեց, մարմինը անշարժ մնաց՝ ահա թէ ինչ մնացած էր ցուրտ անկողնին վրայ, ուր վայրկեան մը առաջ իմացական էակը պառկած էր։

Տանթէս ճրագը առաւ, անկողնին մարին վերեւ, դուրս ցցուած քարի մը վրայ դրաւ. ճրագին դողդոջուն լոյսը տարօրինակ և գոզցես ցնորական լոյսով մը կը լուսաւորէր այդ աւրուած դէմքը և անզգայ ու պրկուած մարմինը։

Աչքերը յառած անվախօրէն սպասեց ազատարար դեղը մատակարարելու վայրկեանին։

Ժամանակը հասած նկատելով, դանակը առաւ, ակռաները բացաւ, որոնք նուազ ընդդիմութիւն կ'ընէին, մէկիկ մէկիկ տասներկու կաթիլ համրեց և սպասեց. կաթեցուցածին գրեթէ կրկինը կար սրուակին մէջ։

Տասը վայրկեան սպասեց. քառորդ մը, կէս ժամ անցաւ, բայց շարժում մը առաջ չեկաւ։ Այն ատեն սկսաւ դողալ, մազերը քստմնեցան, ճակատը պաղ քրտինքով ողողուեցաւ ու սրտին տրոփումներովը կը համրէր երկվայրկեանները։

Այն ատեն խորհեցաւ որ վերջին փորձը ընելու ատենը եկած է. սրուակը Ֆարիայի կապուտցած շրթունքներուն մօտեցուց, և ծնօտը բանալու համար նեղութիւն չկրելով, որոնք բաց մնացած էին, բոլոր հեղուկը պարպեց բերնին մէջ։

Դեղը ցնցողական ազդեցութիւն մը ըրաւ անոր վրայ, սաստիկ դող մը ծերունւոյն մարմինը ցնցեց. աչքերը սոսկում ազդող կերպով բացուեցան, հառաչանք մը արձակեց, որ ճիչի մը կը նմանէր. յետոյ դողացող մարմինը տակաւ անշարժութեան մատնուեցաւ նորէն։

Միայն աչքերը բաց մնացին։

Կէս ժամ, մէկ ժամ, մէկ ու կէս ժամ անցան. անձկութեան այս մէկ ու կէս ժամուն մէջ, Էտմոն բարեկամին վրայ հակած, ու ձեռքը անոր սրտին վրայ դրած, զգաց որ անոր մարմինը աստիճանաբար կը պաղէր, և սրտին բաբախումը խուլ և խորունկ կը դառնար։ Վերջապէս կենդանութեան նշոյլ չմնաց. դէմքը կապոյտ գոյն մը առաւ, աչքերը բաց մնացին, բայց անոնց փայլը աղօտացաւ։

Առաւօտեան ժամը վեցն էր. տժգոյն լոյսը ստորերկրեայ բանտին մէջ թափանցելով, ճրագին նուաղուն լոյսը կը տժգունէր։ Լոյսի տարօրինակ ցոլքեր կ'անցնէին դիակին դէմքին վրայէն, մերթ Էտմոնի կարծեցնելով թէ կենդանութեան երեւոյթներ կը տեսնէ, և ո՛րչափ ատեն որ մթութեան հետ լոյսին մրցումը տեւեց, Տանթէս տակաւին կը տարակուսէր. բայց երբ լոյսին զօրութիւնը յաղթեց, հասկցաւ որ դիակի մը հետ մինակ մնացած էր։

Այն ատեն խորունկ սոսկում մը պատեց զինքը՝ այնուհետեւ չհամարձակեցաւ անկողինէն դուրս կախուած անոր ձեռքը սեղմել, չհամարձակեցաւ իր աչքերը անոր անշարժ և ճերմկած աչքերուն վրայ յառել, զորս քանիցս ի զուր գոցել ուզած էր, բայց միշտ բացուած էին անոնք։ Ուստի ճրագը մարեց, խնամով պահեց զայն և սենեակը խոյս տուաւ, սալաքարը գլխով տեղաւորելէն յետոյ կարելի եղածին չափ։

Բանտապահին գալու ժամանակը հասած էր։

Այս անգամ այցելութիւնը Տանթէսէն սկսած էր, անոր զնտանէն ելլելով, Ֆարիային պիտի անցնէր, որուն նախաճաշ ու ճերմակեղէն կը տանէր։

Սակայն այդ մարդը եղածէն տեղեկութիւն ունենալու երեւոյթ չունէր բնաւ։

Բանտապահը դուրս ելաւ։

Այն ատեն Տանթէս աննկարագրելի անհամբերութեամբ մը կ'ուզէր գիտնալ թէ իր թշուառ բարեկամին զնտանին մէջ ի՛նչ պիտի պատահի. ուստի գետնափորին մէջ մտաւ նորէն և ճիշդ այն ատեն հոն հասաւ, երբ բանտապահը բացագանչութիւններ կ'արձակէր ընկերները օգնութեան կանչելով։

Իսկոյն բանտապանները ներս վազեցին. քիչ մը ետքը ծանր ու կանոնաւոր քալուածքի ձայնը լսուեցաւ, որ զինուորներուն յատուկ է, նոյն իսկ եթէ պաշտօնի վրայ չըլլան: Զինուորներէն ետքը կառավարիչը հասաւ:

Էտմոն անկողնին ձայնը լսեց, որու վրայ դիակը կը շարժէին. կառավարիչը կը հրամայէր որ երեսին ջուր սրսկեն, բայց տեսնելով որ բանտարկեալը չզարթիր, բժիշկը կանչել տուաւ:

Կառավարիչը դուրս ելաւ: Տանթէս լսեց որ կարեկցական խօսքեր կ'ընեն կատակախառն ծիծաղներով:

—Աստուած բարի ճանապարհ տայ, կ'ըսէր մէկը, խենթը իր գանձերը գտնելու գնաց:

—Իր բոլոր միլիոններովը պատանքին գինը վճարելու կարող չէ, կ'ըսէր ուրիշ մը:

—Ո՛հ, յարեց երրորդ ձայն մը, Իֆ դղեակին պատանքը շատ սուղ չէ:

—Եկեղեցական ըլլալուն, ըսաւ խօսակիցներէն առաջինը, թերեւս քիչ մը ծախք ընեն:

—Ձինքը պարկի մէջ պիտի դնեն, այնպէս չէ՞:

Էտմոն միշտ մտիկ կ'ընէր, առանց ոեւէ խօսք կորսնցնելու, թէեւ բոլոր ըսուածներէն բան մը չէր հասկնար: Քիչ մը ետքը՝ ձայները դադրեցան, եւ իրեն այնպէս երեւցաւ թէ ամէնքն ալ սենեակէն դուրս ելան:

Սակայն չհամարձակեցաւ դարձեալ ներս մտնել. թերեւս մեռեալը պահպանելու համար բանտապան մը թողուցած էին:

Ուստի, անձայն, անշարժ եւ իր շնչառութիւնը բռնած, հոն կեցաւ:

Գրեթէ ժամ մը ետքը՝ լռութիւնը խզուեցաւ տկար ձայնով մը, որ հետզհետէ սաստկացաւ:

Կառավարիչը, իր հետ բժիշկը եւ քանի մը պաշտօնատարներ առած վերադարձաւ:

Վայրկեան մը լուռ կեցան. ակներեւ էր թէ բժիշկը անկողնին մօտենալով դիակը կը զննէր:

Հարցումներ սկսան ընդհուպ:

Բժիշկը բանտարկեալին հիւանդութիւնը բացատրեց եւ յայտարարեց որ մեռած է ան:

Հարցումները եւ պատասխանները այնքան դանդաղօրէն առաջ կը տարուէին որ Տանթէս բարկութիւն կըզգար. իրեն այնպէս կ'երեւար թէ ամէն մարդ պէտք էր խեղճ աբբային համար վշտակից ըլլալ իրեն:

—Կը ցաւիմ այդ մասին, ըսաւ կառավարիչը մահուան հաւաստի յայտարարութիւնը լսելով, որովհետեւ այս բանտարկեալը հանդարտաբարոյ, անվնաս, եւ իր յիմարութեամբ զուարճացուցիչ էր, եւ մանաւանդ փախչելէն բնաւ վախ չկար:

—Ո՛հ, յարեց բանտապանը, անոր վրայ հսկելու անգամ պէտք չկար. եթէ յիսուն տարի իսկ հոս կենար, իրաւ կ'ըսեմ որ, փախչելու փորձ մը իսկ չպիտի ընէր:

—Այսու հանդերձ, ըսաւ կառավարիչը, թէեւ ձեր խօսքին կը համոզուիմ, առանց ձեր գիտութեան վրայ տարակուսելու, այլ իմ մասնաւոր պատասխանատուութեանս համար, կարծեմ ստիպողական է որ ապահով ըլլանք թէ բանտարկեալը մեռած է ստուգիւ:

Վայրկեան մը բացարձակ լռութիւն տիրեց. Տանթէսի այնպէս թուեցաւ որ բժիշկը երկրորդ անգամ դիակը կը զննէր եւ կը շօշափէր:

—Ապահո՛վ եղէք, ըսաւ բժիշկը, որ մեռած է. ես երաշխաւոր կ'ըլլամ:

—Գիտէք, պարոն, յարեց կառավարիչը պնդելով, որ այսպիսի պարագաներու մէջ պարզ քննութեամբ մը գոհ չենք ըլլար. թէեւ ամէն բան յայտնի կը ցուցնէ, սակայն հաճեցէք օրէնքին կողմէ պատուիրուած ձեւակերպութիւնը կատարել:

—Ուրեմն թող տաքցնեն երկաթները, ըսաւ բժիշկը. բայց ստուգիւ բոլորովին անօգուտ է այդ զգուշութիւնը:

Երկաթները տաքցնելու հրամանը սոսկացուց Տանթէսը:

Փութացող քայլերու, գրան բացուելու եւ երթեւեկողնե-

րուն ձայնը կը լսուէր. քանի մը վայրկեան ետքը բանտապահներէն մէկը ներս մտնելով ըսաւ.

— Ահա՛ կրակարան ու երկաթ մը։

Այն ատեն վայրկեան մը լռութիւն տիրեց. այդ միջոցին այրած մարմնի թանձր և գարշելի հոտ մը կարծես կը թափանցէր այն պատէն ներս, որուն ետին Տանթէս, սոսկումով կեցած մտիկ կ՚ընէր։

Երիտասարդը մարդկային մարմնի այրելու հոտը առնելով, ճակատը քրտինքով ծածկուեցաւ, և նուաղելու պէս եղաւ։

—Կը տեսնէ՞ք, պարոն, որ ստուգիւ մեռած է, ըսաւ բժիշկը. ներբանին այրումը վճռական է. խեղճ յիմարը թէ՛ իր խելագարութենէն և թէ իր բանտարկութենէն ազատեցաւ։

—Ֆարիա չէ՞ր անոր անունը, հարցուց կառավարչին հետ ընկերացող պաշտօնատարներէն մէկը։

—Այո՛, պարոն, և եթէ իր խօսքին հաւատանք խիստ հին անուն մըն է եղեր. այսու հանդերձ շատ բանգէտ էր և իր գանձին հետ առնչութիւն չունեցող բոլոր բաներուն մէջ խոհական բայց գանձի մասին հետը խօսիլ չէր ըլլար։

—Այդ ախտին մենամոլութեան անունը կու տանք, ըսաւ բժիշկը։

—Բնաւ գանգատ մը ունեցած չէի՞ք այդ բանտարկեալէն, հարցուց կառավարիչը, աբբային կերակուրները բերող բանտապահին։

—Երբեք, պարոն կառավարիչ, պատասխանեց բանտապահը, բնաւ երբեք, ընդհակառակը երբեմն պատմութիւններ պատմելով կը զբօսցնէր զիս. օր մը կինս հիւանդ ըլլալուն՝ ինծի դեղագիր մը գրեց տուաւ, որմէ կինս առողջացաւ։

—Ի՜նչ կ՚ըսէք, յարեց բժիշկը, չէի գիտեր որ պաշտօնակից մը ունիմ հոս. ուրեմն, պարոն կառավարիչ, կը յուսամ թէ, աւելցուց ծիծաղելով, արժանավայել պատիւը պիտի ընէք անոր։

—Այո՛, այո՛, անհոգ եղէք, գտնուած պարկերուն ամենէն նորին մէջ վայելչապէս պատել կու տամ զայն, գո՞հ էք։

—Այս վերջին արարողութիւնն ալ ձեր ներկայութեա՞մբ կ՚ուզէք որ կատարենք, հարցուց բանտապահ մը։

—Անշուշտ, բայց շո՛ւտ ըրէք, չեմ կրնար բոլոր օրը այս սենեակը մնալ։

Երթեւեկի ձայներ լսուեցան դարձեալ. վայրկեան մը ետքը՝ Տանթէս կտաւին և անկողնին ձայնը առնելով, իրեն այնպէս թուեցաւ որ կը պատանքեն զայն։

—Այս գիշեր կը տանիք զայն, ըսաւ կառավարիչը։

—Եկեղեցական արարողութիւն մը պիտի կատարուի՞, հարցուց պաշտօնատարներէն մէկը։

—Անկարելի է, պատասխանեց կառավարիչը, բերդիս մատռանապետը դէպ ի Հիէր փոքր ճամբորդութիւն մը ընելու համար երէկ ինէ հրաման խնդրեց. բայց ես ի՛նչ գիտնամ որ այս խեղճ աբբան այսչափ պիտի աճապարէ. գոնէ Հոգւոցն հանգուցելոցը կ՚ըսէին իրեն համար։

—Հոգ չէ, ըսաւ բժիշկը, իր պաշտօնին մարդոց ընտանի անկրօնութեամբը. ինքը եկեղեցական է, և Աստուած իր վիճակին համեմատ կը պատուէ զինքը և չի թողուր որ դժոխք երթայ։

Այդ անշահ կատակէն յետոյ ծիծաղի ձայներ լսուեցան։

—Այս իրիկուն կը տանիք զայն, ըսաւ կառավարիչը տեսնելով որ դիապատութիւնը կատարուած էր։

—Ժամը քանիի՞ն, հարցուց բանտապահ մը։

—Տասնին կամ տասնըմէկին։

—Հանգուցեալին քով մարդ պիտի կենա՞յ։

—Ի՞նչ ընելու համար, առաջուան պէս զնդանին դուռը միայն գոցեցէք. ուրիշ բանի պէտք չկայ։

Այդ խօսակցութենէն յետոյ՝ քայլերը հեռացան։ Ոտնաձայները անլսելի եղան. դրան բակին ճռնչիւնը լսուեցաւ, այն ատեն ամէն տեղ մինչև երիտասարդին սառած սրտին մէջ առանձնութենէ աւելի տխուր եղող մահուան լռութիւնը տիրեց։

Ուստի կամաց մը գլխով սալաքարը վերցուց, և իր նայուածքը սենեակին մէջ ուղղեց։

Սենեակը դատարկ էր. Տանթէս գետնափորէն դուրս ելաւ։

Ի. ԳԼՈՒԽ

ԻՖ ԴՂԵԱԿԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Պատուհանէն ներս թափանցող մշուշոտ լոյսովը անկողնին երկայնքին պառկած մարդկային մարմնոյ մը երկար և պիրկ ձեւը կը գծագրուէր հաստ կտաւէ պարկի լայն ծալքերուն ներքեւ: Բանտապահներուն ըսածին պէս, Ֆարիայի այդ պատանքը աժնկեկ բան մըն էր: Ամէն ինչ լմնցած էր: Արդէն Տանթէս նիւթապէս բաժնուած էր իր ծերունի բարեկամէն. այլ եւս չէր կրնար նայիլ անոր աչքերուն, որոնք կարծես անդրշիրիմեան կեանքը դիտելու համար բաց մնացած էին. չէր կրնար այլ եւս սեղմել այն ճարտար ձեռքը, որ իր գաղտնիքները ծածկող վարագոյրը վեր առած էր: Ֆարիա, իր օգտակար և բարի ընկերը, որուն կապուած էր սերտ կերպով, մտքին մէջ յիշատակ մը թողուցած էր միայն: Այդ սոսկալի անկողնին եզրին քով նստաւ, մռայլ և դառն մելամաղձութեան մը մէջ ընկղմած:

Առանձի՛ն, դա՛րձեալ առանձին մնացած էր. լռութիւնը նորէն պատած էր ամէն կողմ. անհունութեան հետ դէմ առ դէմ կը գտնուէր:

Ուրեմն առանձին մնացած էր. այնուհետեւ չպիտի կրնար տեսնել գէթ կեանքին կապող մարդկային էակին դէմքը և ոչ ալ անոր ձայնը լսել. ուրեմն աւելի լաւ չէ՞ր ըլլար որ Ֆարիայի պէս Աստուծոյ երթար հարցնէր իր կեանքին գաղտնիքը՝ տանջանքի աղետալի դռնէն անցնելով:

Անձնասպանութեան գաղափարը, որ իր բարեկամին ներկայութեան պատճառաւ մոռցած էր, վերստին ուրուականի մը պէս Ֆարիայի դիակին քով ցցուեցաւ իր դիմաց:

—Եթէ կարենայի մեռնիլ, ըսաւ, անոր գացած տեղը պիտի երթայի և զինքը պիտի գտնէի անշուշտ: Բայց ինչպէս մեռնիմ: Ո՛հ, շատ դիւրին է, յարեց ծիծաղելով. հոս կը կե-

նամ, մէկը ե՛կածին պէս՝ վրան կը յարձակիմ, կը խեղդեմ զայն. յետոյ կը գլխատեն զիս:

Սակայն մեծ վիշտերու մէջ, ինչպէս մեծ փոթորիկներու ատեն կը պատահի, կոհակներու երկու գագաթներուն մէջտեղը կը գտնուի անդունդը, Տանթէս այդ անարգ մահուան գաղափարը մտաբերելով, սոսկաց անկէ և անմիջապէս յուսահատութեան այդ անդունդէն ելլելով, կեանքի և ազատութեան անյագ ծարաւը գրաւեց միտքը:

—Մեռնի՛մ մի, գոչեց, ո՛հ, ո՛չ, ինչո՞ւ այսչափ ապրեցայ և այնչափ նեղութիւններ կրեցի, որպէս զի հիմա հոս մեռնի՞մ: Ասկէ քանի մը տարի առաջ երբ մեռնելու որոշումս տուի, այն ատեն կ՚ուզէի մեռնիլ. բայց հիմայ եթէ այդ բանը ի գործ դնեմ, ստուգիւ իմ դժբախտ ճակատագրիս օգնած պիտի ըլլամ: Ո՛չ, ես կ՚ուզեմ ապրիլ, կ՚ուզեմ մինչեւ վերջը ճակատագրիս հետ կռուիլ ու նորէն ձեռք ձգել այն երջանկութիւնը զոր ձեռքէս յափշտակեցին: Մոռցայ որ մեռնելէ առաջ պէտք է դահիճներէս վրէժս առնեմ և ո՛վ գիտէ քանի մը բարեկամներս վարձատրեմ. բայց հիմա պիտի մոռցուիմ հոս, և Ֆարիայի պէս այս բանտէն պիտի կարենամ դուրս ելլել միայն:

Էտմոն աչքերը յառած, անշարժ մնաց. կարծես իր մտքին մէջ յանկարծ անանկ գաղափար մը ծագած էր, որմէ կը սոսկար: Իսկոյն ոտքի ելաւ, ձեռքը ճակտին տարաւ, իբր թէ գլուխը դառնար, սենեակին մէջ երկու երեք շրջան ըրաւ, և անկողնոյն առջեւ կեցաւ նորէն...:

—Ո՞վ ինծի կը թելադրէ այս գաղափարը, մրմնջեց ինքնիրեն, միթէ դո՞ւք էք, ո՛վ Տէր: Եւ որովհետեւ միայն մեռեալները ազատ կրնան դուրս ելնել հոսկէ, ուրեմն մեռեալներուն տեղը անցնինք:

Եւ որպէս զի այդ յուսահատական որոշումը չփոխէ, և մտքին մէջ ուրիշ գաղափար մը չծագի, առանց սպասելու՝ ահռելի պարկին մօտեցաւ, Ֆարիայի շինած դանակովը բացաւ զայն, դիակը մէջէն հանեց, և իր սենեակը տանելով,

անկողնոյն վրայ պառկեցուց, գլուխը կապած կտաւի կտորը անոր գլուխը կապեց, վերմակը վրան ծածկեց, վերջին անգամ համբուրեց անոր սառուցիկ ճակատը, ի զուր անոր ըմբոստ աչքերը գոցելու փորձեր ըրաւ, գլուխը պատին կողմը դարձուց, որպէս զի իրիկունը իր կերակուրը բերող բանտապահը կարծէ թէ պառկած է ինք, ինչպէս յաճախ սովորութիւն ունէր ընելու․ յետոյ ճեմելիքը իջաւ, անկողինը պատին առջեւը քաշեց, միւս սենեակը վերադարձաւ, պահարանէն ասեղ մը եւ քիչ մը դերձան առաւ, հագուստները հանեց, որպէս զի կտաւին վրայէն մերկ մարմինը շօշափեն, բացած պարկին մէջ մտաւ, դիակին ուղղութեամբը տեղաւորուեցաւ եւ ներսէն կարելով մէջը փակուեցաւ։

Եթէ այդ վայրկեանին դիպուածով ներս մտնէին, սրտին բաբախման ձայնը պիտի լսէին։

Տանթէս կրնար իրիկուան այցելութենէն ետքը որոշումը ի գործ դնել, սակայն կը վախնար որ կառավարիչը իր դիտաւորութիւնը փոխէ, եւ դիակը վերցնել տայ։

Այն ատեն վերջին յոյսն ալ պիտի կորսնցնէր։

Այսու հանդերձ ի՛նչ ընելիքը որոշած էր։

Եթէ դիակիրները զինքը տարած ատեննին հասկնային թէ կենդանի է, Տանթէս ճանչցուելու ատեն չձգելով, պարկը վերէն վար պիտի պատռէր դանակովը, դուրս պիտի ցատկէր, եւ անոնց սարսափի միջոցին պիտի փախչէր․ եթէ զինքը բռնել ուզէին, դանակով պիտի հարուածէր զանոնք։

Իսկ եթէ գերեզմանատունը տանէին, եւ փոսի մը մէջ դնելով, իր վրայ հող լեցնէին, ձայն պիտի չհանէր, եւ որովհետեւ գիշեր էր, մեռելաթաղները մեկնելնուն պէս՝ կակուղ հողը պատռելով դուրս պիտի ելլէր եւ փախչէր։ Կը յուսար թէ իր վրայ ծածկուած հողը այնչափ ծանր պիտի չըլլար որպէս զի չկարենար վերցնել։

Բայց եթէ ընդհակառակը, հողը խիստ ծանր ըլլար, անոր տակ պիտի խեղդուէր․ աւելի լաւ, այն ատեն ամէն բան պիտի վերջանար։

Տանթէս նախընթաց իրիկունէ ի վեր բերանը բան դրած չէր, եւ ոչ իսկ իր անօթութիւնը մտքէն անցուցած էր․ իր վիճակը ա՛յնքան անհաստատ էր որ ուրիշ բանի վրայ մտածելու ատեն չունէր։

Տանթէսի համար առաջին վտանգը սա էր որ բանտապահը իրիկունը ժամը եօթնին ընթրիքը բերած ատենը կրնար եղած փոփոխութիւնը տեսնել․ բարեբախտաբար շատ անգամ բանտապահին եկած ատեն Տանթէս կամ մարդատեցութենէն կամ յոգնութենէն, պառկած կ՚ըլլար, եւ բանտապահը հացը ու ապուրը սեղանին վրայ կը դնէր, եւ առանց խօսելու կը հեռանար։

Բայց այս անգամ կրնար փոխել համրութեան սովորութիւնը, Տանթէսի հետ խօսիլ, եւ տեսնելով որ Տանթէս բնաւ պատասխան չէր տար, անկողնին մօտենալ եւ ամէն բան իմանալ։

Երբ ժամը եօթնին մօտեցաւ, Տանթէս ճշմարիտ անձկութեան մը մատնուեցաւ։ Ձեռքը սրտին վրայ դրած՝ բաբախումը խափանելու կը ջանար, իսկ միւս ձեռքովը այտերէն հոսած ճակատին քրտինքը կը սրբէր, մերթ ընդ մերթ բոլոր մարմինը կը սարսռար, եւ սիրտը սառուցիկ մամուլի մը մէջ կը ճնշուէր կարծես։ Այն ատեն՝ մահը իր աչքերուն առջեւ կը ներկայէր։ Ժամերը անցան եւ դղեակին մէջ փոքր շարժում մը իսկ չլսուեցաւ․ Տանթէս հասկցաւ որ առաջին վտանգէն ազատած էր։ Այդ բանը լաւ նշան մըն էր։ Վերջապէս կառավարչին որոշած ժամուն՝ սանդուխին վրայ ոտնաձայներ լսուեցան։ Էտմոն հասկցաւ որ ժամանակը հասած էր, բոլոր ուժը ժողվեց, շունչը արգիլելով․ եթէ կարելի ըլլար՝ շնչերակներուն արագ զարկերն ալ խափանել պիտի ջանար։

Եկողները դրան առջեւ կեցան․ ոտնաձայները կրկին էին, Տանթէս գուշակեց որ երկու մեռելաթաղներն էին, որոնք զինքը տանելու կուգային։ Իր կասկածը փարատեցաւ, երբ լսեց պատգարակին գետինը դրուիլը։

Դուռը բացուեցաւ, Տանթէս կարող եղաւ քօղարկուած

լոյս մը նշմարել. պարկին տակէն երկու ոտուեններ տեսաւ, որոնք անկողնին մօտեցան։ Երրորդ մըն ալ դրան առջեւ կեցած էր՝ ձեռքը լապտեր մը բռնած։ Անկողնին մօտեցողները դիակին երկու կողմէն բռնեցին։

— Նիհար ծերունի մըն է, ըսաւ անոնցմէ մէկը, դիակին գլուխէն վերցնելով, բայց որչա՜փ ծանր է մարմինը։

— Կ՚ըսեն թէ ամէն տարի ոսկորները կէս լիպրա կը ծանրանան, ըսաւ միւսը ոտքերէն բռնելով։

—Հանգոյցը ըրի՞ր հարցուց առաջինը։

—Անօգուտ բեռ ընելը անմտութիւն է, ըսաւ երկրորդը, հոն կ՚ընեմ։

— Շատ աղէկ, քալէ՛ ուրեմն։

—Հանգոյցը ի՞նչ պէտի ընեն, հարցուց ինքնիրեն Տանթէս։

Կեղծ մեռեալը անկողնին վրայէն դագաղին վրայ դրին։ Էտմոն մեռեալ ձեւացնելու համար՝ իր մարմինը պիրկ կը բռնէր։ Մեռելակիրները լապտեր բռնողին առաջնորդութեամբ, սանդուխէն վեր ելան։

Յանկարծ զով եւ կծու օդը պատեց զիրենք։ Տանթէս հիւսիսային արեւմտեան հովը ճանչցաւ։ Յեղակարծ զգայութիւն մը ունեցաւ հեշտանքով ու անձկութեամբ լցուած։

Դագաղակիրները քանի քայլ չափ յառաջանալէն յետոյ կեցան, և դագաղը գետնին վրայ դրին։

Իրենցմէ մէկը հեռացաւ և Տանթէս լսեց որ սալաքարերուն վրայ ձայն կը հանէին կօշիկները։

—Ո՞ւր եմ արդեօք, հարցուց ինքնիրեն Տանթէս։

— Գիտե՞ս որ աքքան շատ ծանր է, ըսաւ Տանթէսի քովը մնացողը, դագաղին եզերքը նստելով։

Տանթէս, այդ խօսքը լսելուն պէս ուզեց փախչիլ. բարեբաղդաբար ինքզինք զսպեց։

— Լապտերը հո՛ս բռնէ, անասուն, ըսաւ հեռացող դագաղակիրը, եթէ ոչ՝ փնտռածս չպիտի գտնեմ բնաւ։

Լապտեր բռնողը հնազանդեցաւ այդ հրամանին, թէեւ խիստ տմարդի կերպով տրուած էր հրամանը։

— Ի՞նչ է փնտռածը արդեօք, հարցուց Տանթէս ինքնիրեն. անշուշտ բրիչ մը պիտի ըլլայ։

Դագաղակիրը գոհունակութեան ձայնով մը իմացուց թէ գտած էր փնտռածը։

—Վերջապէս դժուարութեամբ գտար։

—Այո՛, պատասխանեց, բայց ի՞նչ կորսնցուցիր սպասելով։

Ատոր վրայ, Էտմոնին մօտեցաւ, որ իր մօտ ծանր և թրնդացող մարմին մը դրուիլը լսեց. նոյն միջոցին չուան մը կապեցին ոտքերուն, բուռն և ցաւագին սեղմումով մը։

—Հանգոյցը չըրի՞ր տակաւին, հարցուց անգործ կեցող մեռելակիրներէն մէկը։

—Ըրի, ըսաւ միւսը, և քակուելիք չունի։

—Ուրեմն ճամբայ իյնանք։

Այս խօսքին վրայ՝ դագաղը վերցուցին և ճամբայ ինկան։

Գրեթէ յիսուն քայլ յառաջանալէն յետոյ՝ դուռ մը բանալու համար կանգ առին. ետքը վերստին ճամբայ ելան։ Ո՛րչափ կը յառաջանային, Տանթէսի ականջին աւելի որոշ կը հասնէր կոհակներուն ձայնը, որոնք դղեակին ստորոտը գտնուած ժայռերուն զարնուելով կը փշրուէին։

—Օդը գէշ է, ըսաւ մեռելակիրներէն մէկը, այս գիշեր ծովու վրայ գտնուելու օդ չէ։

—Այո՛, աքքան ընկղմելու մեծ վտանգի մէջ է, ըսաւ միւսը, և ամէնքնին սկսան քրքջաձայն խնդալ։

Տանթէս թէեւ աղէկ չհասկցաւ այդ կատակը, սակայն գլխին մազերը քստմնեցան։

—Վերջապէս հասանք, յարեց առաջինը։

—Աւելի՛ հեռու, աւելի հեռո՛ւ երթանք, ըսաւ միւսը. լաւ գիտես որ վերջի նետածնիս կէս ճամբան մնաց ու ժայռերուն վրայ ջախջախուեցաւ, և կառավարիչը հետեւեալ առտու ծոյլ կոչեց մեզ։

Մինչ դէպի վեր ելլելով չորս-հինգ քայլ եւս առին. Տանթէս զգաց որ զինքը գլուխէն ու ոտքերէն բռնած կը ճօճէին։

—Մէ՛կ, ըսին մեռելակիրները։

—Երկո՛ւ։

—Երե՛ք։

Նոյն պահուն Տանթէս զգաց որ իրօք անհուն անջրպետի մը մէջ նետուելով, և վիրաւոր թռչունի մը պէս օդը պատռելով, վար կ'իյնար այնպիսի սոսկումով մը, որ սիրտը կը սառեցնէր։ Թէեւ ծանր առարկայ մը զինքը վար քաշելով, անկումը կը փութացնէր, սակայն իր անկման տեւողութիւնը դար մը երեւցաւ իրեն։ Վերջապէս նետի մը պէս՝ սառուցիկ ջուրին մէջ խորասուզուեցաւ սոսկալի աղմուկով մը. Տանթէս ճիչ մը արձակեց բայց ձայնը ջուրին մէջ խեղդուեցաւ իսկոյն։

Տանթէս ծովուն մէջ նետուած էր, որուն յատակը կը քաշէր զինքը ոտքերուն կապուած 36 քիլօնոց գնդակ մը։

Ծովն է Իֆ դղեակին գերեզմանատունը։

ԻԱ. ԳԼՈՒԽ

ԹԻՊՈՒԼԷՆ ԿՂԶԻՆ

Տանթէս շլմորած և գրեթէ շնչահեղձ, իր շունչը բռնելու արթնամտութիւնը ունեցաւ, և որովհետեւ ինչպէս ըսինք որ և է պատահարի դէմ գործածելու համար, իր աջ ձեռքը դանակը բաց բռնած էր, անմիջապէս պարկը ճեղքեց անով, նախ թեւերը և յետոյ գլուխը դուրս հանեց. հակառակ իր շարժումներուն, ջուրին երեսը ելլելու համար, զգաց որ իր ոտքին կապուած գնտակը կը խորասուզէր զինքը. ուստի ծռեցաւ ու իր ոտքին կապուած չուանը գտնելով, գերագոյն ճիգով մը կտրեց զայն դանակովը ճիշդ այն վայրկեանին երբ շնչահեղձ կ'ըլլար։ Այն ատեն ոտքովը ուժգին մղում մը տալով, ծովուն մակերեսը ելաւ ազատ, մինչ գնդակը անծանօթ խորութեանց մէջ կը տանէր այն հաստ կտաւը, որ քիչ մնացած էր իր պատանքը ըլլար։

Տանթէս միայն շունչ առնելու չափ արդէն ջուրին երեսը մնաց, և երկրորդ անգամ սուզեցաւ. որովհետեւ ամէն բանէ առաջ կը զգուշանար որ զինքը չտեսնեն։

Երբ երկրորդ անգամ ջուրին մակերեւոյթը ելաւ, գրեթէ յիսուն քայլ հեռացած էր իր ինկած տեղէն. գլխուն վրայ սեւաթոյր և մրրկալից երկինք մը տեսաւ, հովը արագաթռիչ ամպերը կը քշէր, և մերթ ընդ մերթ երկնքի կապոյտ անկիւն մը բանալով, աստղ մը երեւան կը բերէր։ Իր առջեւ կը տարածուէր մռայլ և մռնչող դաշտագետինը, որուն կոհակները կը սկսէին եռալ մօտալուտ փոթորկի մը իբր նշան. իսկ իր ետին՝ ծովէն ու երկինքէն աւելի սեւաթոյր, սպառնական ուրուականի մը պէս կրանիթէ հսկան կանգնած էր, որուն մխուր գագաթը կարծես թէ կարկառուն թեւ մըն էր որ կ'ուզէր որսը վերստին բռնել. ամենէն բարձր ժայռին վրայ լապտերի մը լոյսովը երկու ստուեր կը տեսնուէին, որոնք կարծես ծովուն վրայ հակած՝ մտահոգութեամբ կը նայէին։ Իրօք, այդ արտակարգ մահակիրները լսած ըլլալու էին բանտարկեալին ինկած միջոցին հանած ճիչը։ Ուստի Տանթէս վերստին սուզեցաւ, և ջուրին տակէն բաւական երկար ատեն լողաց։ Այդ ձեւով լողալու շատ լաւ վարժուած էր առենօք. Փարոյի ծովախորշին մէջ սուզած ատեն անթիւ հիացողներ կը դիտէին շուրջը, Մարսիլիայի ամենէն յաջողակ լողորդը հռչակելով զինքը։

Երբ ջուրին մակերեսը ելաւ, լապտերը աներեւոյթ եղած էր։

Հիմա պէտք էր ուղղութեամբ մը յառաջանալ։ Իֆ դղեակին շուրջը գտնուած կղզիներուն ամէնէն մօտ եղողներն են Ռաթօնօ և Բոմէկ կղզիները. բայց ատոնց մէջ բնակիչներ կային, ինչպէս նաև Տօմ կղզեակին մէջ։ Ամէնէն ապահովը Թիպուլէն կամ Լըմէր կղզին էր։ Թիպուլէն և Լըմէր կղզիները Իֆ դղեակէն մէկ մղոն հեռու էին։

Ուստի Տանթէս որոշեց այս երկու կղզիներէն մէկը երթալ. բայց ինչպէս գտնել այդ կղզիները իր շուրջը թանձրացող մթութեան մէջ։

Այդ միջոցին Բլանիէի փարոսին աստղի մը նման փայլը տեսաւ։

Ուղղակի փարոսին վրայ երթալով, Թիպուլէն կղզին ձախակողմը պիտի ձգէր, ուստի քիչ մը դէպի ձախ կողմը ուղղուելով, իր ճամբուն վրայ ճիշդ այդ կղզիին առջեւ պիտի հանէր։

Բայց ինչպէս ըսինք Իֆ դղեակէն մինչեւ այդ կղզին մէկ մղոն հեռաւորութիւն ունէր։

Բանտին մէջ Ֆարիա ծոյլ և ընկճուած տեսնելով Էտմօնը, յաճախ ըսած էր.

— Տանթէս, այդպէս մի թուլնար. եթէ ոյժդ լաւ չպահպանես, փախչիլ փորձած ատենդ պիտի խեղդուիս։

Այդ դժնդակ և դառն ալիքներուն տակ զանուած միջոցին այդ խօսքը Տանթէսի ականջին հնչած էր. ուստի փութացած էր ջուրին մակերեսը ելնել և կոհակները ճեղքել, որպէս զի հասկնայ թէ իրօք իր ոյժը կորսնցուցած էր. ուրախութեամբ տեսաւ որ իր բռնադատուած անգործութիւնը չէր վնասած իր ուժին և դիւրաշարժութեան. զգաց որ ինքը միշտ տէր էր այն տարրին, ուր մանկութեան ատեն խաղալով զուարճացած էր։

Մնաց որ, երկիւղը, արագ հալածիչ մը, Տանթէսի ոյժը կը կրկնապատկէր. ալիքներուն վրայէն ականջ կը դնէր թէ արդեօք ո՛ր և է ձայն մը կը լսէ՞։ Ամէն անգամ որ կոհակներուն գագաթը կ՚ելլէր, տեսանելի հորիզոնը կ՚ընդգրկէր նայուածքով և կը ջանար թանձր խաւարին մէջ խորասուզուիլ. իրարու վրայ բարձրացող կոհակները զինքը հալածող մակոյկներ կ՚երեւէին իրեն, և այն ատեն իր զօրութիւնը կը կրկնապատկէր, անոնց ձեռքէն ազատելով. բայց այդպէսով անշուշտ պիտի սպառէր իր ուժը։

Սակայն լողալով կը յառաջանար, և արդէն ահեղի դըղեակը գիշերային զոլորշիներուն մէջ աներեւոյթ եղած էր. չէր տեսներ զայն, բայց միշտ կը զգար։

Տանթէս ազատութեան զգացումով յափշտակուած, ամբողջ ժամ մը ալիքները ճեղքեց բռնած ուղղութեամբ։

— Ահա գրեթէ ժամ մըն է որ կը լողամ, ըսաւ ինքնիրեն,

բայց որովհետեւ հովը ինծի հակառակ է, անշուշտ արագութեանս մէկ քառորդը կորսնցուցած եմ. սակայն եթէ ուղղութեանս մէջ սխալած չեմ, Թիպուլէն կղզիէն շատ հեռու ըլլալու չեմ հիմա...։ Բայց եթէ սխալեր եմ։

Սարսուռ մը պատեց լողորդին ամբողջ էութիւնը. պահ մը հանգստանալու համար՝ կռնակին վրայ լողալ փորձեց, բայց որովհետեւ ալէկոծութիւնը երթալով կը սաստկանար, հասկըցաւ որ հանգչելու այդ միջոցը անկարելի էր։

— Հոգ չէ, ըսաւ, ամէն ճիգ պիտի թափեմ, մինչեւ որ թեւերուս ուժը սպառի և ջիղերս կարկամին. այն ատեն պիտի ընկղմիմ։

Յուսահատութեան թելադրած ուժով և մղումով սկսաւ լողալ Տանթէս։

Յանկարծ այնպէս թուեցաւ որ երկինքը, արդէն մթին, աւելի մթագնեցաւ, և թանձր, ծանր և հոծ ամպ մը դէպ ի իր վրայ կ՚իջնէր. նոյն միջոցին ծունկին վրայ սաստիկ ցաւ մը զգաց. անհաշուելի արագութիւն ունեցող երեւակայութեամբ խորհեցաւ թէ հրացանի մը գնդակէ վիրաւորուած էր, որուն պայթման ձայնը անմիջապէս պիտի լսէր. բայց պայթման ձայնը չթնդաց. Տանթէս ձեռքը երկարեց և ընդդիմութիւն մը զգաց. միւս սրունքը իրեն քաշեց և գետինը կոխեց. այն ատեն հասկցաւ որ ամպ կարծածը ի՛նչ բան էր։

Իրմէ քանի քայլ հեռու այլանդակ ժայռերու կոյտ մը կը բարձրանար, որ սաստիկ բոցբոքումէ քարացած ընդարձակ հնոցի մը կը նմանէր, այն էր Թիպուլէն կղզին։

Տանթէս յառաջանալով ցամաք ելաւ, ու Աստուծոյ փառք տալէն յետոյ, սրածայր կրանիթներուն վրայ տարածուեցաւ, որոնք ամէնէն հանգստաւէտ անկողինէն աւելի հեշտագին երեւցան իրեն նոյն պահուն։

Թէեւ հովը սաստիկ կը փչէր, փոթորիկը կը սաստկանար, և անձրեւը կը սկսէր տեղալ, բայց ինքը ոգեսպառ եղած, հեշտալի քուն մը քաշեց այնպիսի անձի մը պէս, որուն մարմինը թմրած, հոգին անակնկալ երջանկութեան մը յոյսով արթուն կը մնայ։

Ժամ մը ետքը՝ Էտմոն որոտման անեղասաստ ձայնէն արթընցաւ. շղթայազերծ փոթորիկը կը յուզէր ծովը, և սաստկաշունչ թեւերովը կը ծեծէր օդը: Մերթ ընդ մերթ կրակէ օձի մը պէս փայլակը պայթելով կը լուսաւորէր կոհակները և ամպերը, որոնք իրարու վրայ կը թաւալէին անհուն քաոսի մը ալիքներուն պէս:

Տանթէս իր նաւաստիի աչքովը չէր սխալած. այդ երկու կղզիներէն մէկը հասած էր, որ իսկապէս Թիպուլէն կղզին էր: Երիտասարդը գիտէր որ ամայի, մերկ և անպատսպարան ցամաք մըն էր ան: Բայց փոթորիկէն յետոյ վերստին լողալով Լըմէր կղզին պիտի անցնէր, որ նոյնպէս անբեր, բայց աւելի մեծ էր. հետեւաբար ապաստանելու տեղ մը կրնար գտնել հոն:

Կարկառուն ժայռի մը տակ խոռոչ մը գտնելով, հոն վայրկեան մը պատսպարուեցաւ. գրեթէ նոյն միջոցին փոթորիկը պայթեցաւ իր բովանդակ ուժգնութեամբ:

Էտմոն կը զգար որ իր ապաստանած ժայռը կը դողար. կոհակները հսկայական բուրգին դէմ փշրուելով, անոնց սրսկումը մինչեւ իրեն կը հասնէր. Թէեւ ինքը ապահովութեան մէջ էր, սակայն այն սոսկալի ժխորին և փայլակնացայտ շլացումներու միջոցին տեսակ մը թմրութեան մէջ կը գտնուէր. իրեն այնպէս կը թուէր որ կղզին իր ոտքերուն տակ կը դողար, և վայրկեանէ վայրկեան՝ խարսխած նաւու մը պէս, իր պարանը պիտի խորտակէր, և զինքը անհուն յորձանքին մէջ պիտի նետէր:

Այն ատեն յիշեց որ քսանըչորս ժամէ ի վեր բան մը կերած չէր, և անօթութենէն ու ծարաւէն կը տանջուէր:

Տանթէս գլուխը երկարեց և ժայռի մը խոռոչին մէջ փոթորկին ջուրէն խմեց:

Ոտքի ելլելու ատեն՝ փայլակ մը ա՛յնպէս լուսաւորեց անջրպետը, որ կարծես թէ մինչեւ Աստուծոյ շլացուցիչ գահին պատուանդանը երկինքը բացաւ: Նոյն փայլակին լոյսովը՝ Լըմէր կղզիի և Քրուազիլ հրուանդանին մէջտեղը և իրմէ քառորդ մղոն հեռու՝ կոհակի մը բարձրութենէն անդունդին մէջ տանող ուրուականի մը պէս որսորդի նաւակ մը երեւցաւ Տանթէսի, որ հովէն և ալիքներէն կը քշուէր: Երկվայրկեան մը յետոյ, նոյն ուրուականը սոսկալի արագութեամբ մօտենալով վերստին երեւցաւ ուրիշ կոհակի մը գագաթը: Տանթէս ուզեց պոռալ, և լաթի կտոր մը փնտռեց որ օդին մէջ շարժէ, անոնց հասկցնելու համար որ կորստեան պիտի մատնուին. բայց անոնք շատ լաւ կը տեսնէին այդ բանը: Ուրիշ փայլակի մը լոյսովը՝ երիտասարդը չորս հոգի տեսաւ, որոնք կայմերուն և պարաններուն փաթթուած էին. հինգերորդ մը խորտակուած ղեկին ձողը բռնած էր: Այդ մարդիկը անշուշտ տեսած էին զինքը, քանի որ անոնց յուսահատ ճիչերը, սուլող սաստիկ հովին թեւովը մինչեւ իր ականջը կը հասնէին: Եղէգի պէս գալարուած կայմին վերի կողմը՝ բզիկ բզիկ եղած առագաստ մը արագ բաղխումներով օդին մէջ կը շաչէր. յանկարծ անոր վերջին կապերն ալ խզուեցան, ու երկնքի խաւարին մթութեան մէջ աներեւոյթ եղան այն սպիտակ մեծ թռչուններուն նման, որոնք սեւաթոյր ամպերուն վրայ կը նշմարուին:

Նոյն միջոցին ահագին շառաչում մը և հոգեվարքի ճիչեր մինչեւ Տանթէսի ականջը հասան: Տանթէս ուրիշ փայլակի մը լոյսովը տեսաւ որ նաւակը սփինքսի նման կղզիին ժայռին վրայ կառչած, խորտակուած էր, և անոր բեկորներուն մէջ յուսահատ դէմքերով գլուխներ ու դէպի երկինք տարածուած թեւեր կը տեսնուէին:

Այնուհետեւ ամէն բան մթութեան մէջ թաղուեցաւ. ահռելի տեսարանը փայլակի մը տեւողութիւնը ունեցած էր:

Տանթէս ծովուն մէջ գլորելու վտանգը աչք առնելով, վազեց ժայռերուն լպիրծ զառիթափին վրայ ելաւ, և անկէ նայեցաւ, ականջ դրաւ, բայց բան մը չլսեց և չտեսաւ. ո՛չ ձայն և ոչ մարդկային ճիգ. միայն փոթորիկը, Աստուծոյ այդ մեծ գործը հովին հետ կը մռնչէր և ալիքները կը փրփրեցնէր:

Տակաւ հովը մեղմացաւ. մոխրագոյն, կամ թէ այսպէս ըսենք փոթորիկէն ոժգունած խոշոր ամպեր դէպի արեւմուտք գլորուեցան. երկնակամարի կապոյտ գոյնը վերստին երեւցաւ աւելի շողշողուն աստղերով. քիչ մը ետքը՝ արեւելեան կողմը՝

կարմրագոյն երկար երիզ մը հորիզոնին վրայ նկարեց մութ կապոյտ վէտվէտումներ. ալիքները մեղմացան, յեղակարծ լոյս մը անոնց գագաթները լուսաւորեց, և ոսկեգոյն բաշերու փոխեց զանոնք։

Առտու եղած էր։

Տանթէս այդ վսեմ տեսարանին առջեւ անշարժ և լուռ մնաց, որպէս թէ առաջին անգամ տեսած ըլլար. իրօք, Իֆ դղեակին մէջ գտնուելէն ի վեր մոռցած էր զայն։ Դղեակին կողմը դարձաւ, և իր երկար ու շուրջանակի նայուածքովը ծովն ու ցամաքը դիտեց։

Մռայլ շէնքը ծովածուփ ալիքներուն մէջէն դուրս ելած էր, անշարժ իրերու հոյակապ և վեհապանծ դիրքովը, որոնք թէ կը հրամայեն և թէ կը հսկեն։

Առտուան ժամը հինգը կար. ծովը աստիճանաբար կը խաղաղէր։

— Երկու կամ երեք ժամէն, ըսաւ ինքնիրեն Տանթէս, բանտապահը սենեակս պիտի մտնէ, խեղճ բարեկամիս դիակը պիտի գտնէ, պիտի ճանչնայ զայն, և ի զուր զիս փնտռելէն յետոյ՝ իրարանցում պիտի հանէ։ Այն ատեն ծակը և գետնափորը պիտի գտնեն. զիս ծովը նետողները հարցուփորձ պիտի ընեն, որոնք լսած ըլլալու են իյնալու միջոցիս հանած ձայնս։ Զինուորներով լեցուն մակոյկներ տարաբախտ փախստականը պիտի հալածեն, որուն շատ հեռու չըլլալը գիտեն։ Թնդանօթ մը արձակելով՝ պիտի իմացնեն բոլոր ծովեզերքի բնակիչներուն՝ ապաստան չընծայել թափառիկ, մերկ և սովամաշ մարդու մը։ Մարսիլիայի լրտեսներուն և ոստիկանութեան պաշտօնեաներուն իմաց պիտի տրուի որ ծովեզերքը խուզարկեն, ու Իֆ դղեակին կառավարիչը ծովուն վրայ խուզարկութիւններ պիտի ընէ։ Ի՞նչ պիտի ըլլայ վիճակս, երբ թէ ցամաքին և թէ ծովուն վրայ պաշարուիմ։ Անօթութիւնը զիս կը տանջէ, ցուրտէն կը դողամ, զիս ազատող դանակը անգամ ձեռքէս թողուցի որ լողալու ատեն ծանրութիւն չտայ. ամենէն յետին գիւղացին անգամ քանի փրանքի համար կրնայ զիս մատնել,

այսուհետեւ ոչ ոյժ ունիմ, ոչ գաղափար մը և ոչ ալ վճռականութիւն։ Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, դեռ այսքան տառապանքը չէ՞ բաւեր. ինչ որ ես չեմ կրնար ընել՝ դուք կարող էք ի գործ դնելու։

Էտմոն տխրութեամբ Իֆ դղեակին կողմը դարձած՝ զառանցագին վիճակէն ուժաթափ և ուղեղը թմրած, անձկութեամբ այդ ջերմ աղօթքն ընելու ատեն, Բոմէկի կղզիին ծայրը՝ կոհակներուն վրայէն սահելով թռչող որսի մը նման, փոքր նաւ մը տեսաւ, որուն եռանկիւն առագաստը մթնշաղ հորիզոնին վրայ կը նկարուէր, և նաւաստիի մը աչքը հազիւ կրնար որոշել զայն։ Մարսիլիոյ նաւահանգիստէն մեկնած, բացերը կ'ուղղուէր, սուր ցռուկովը փրփրուն ալիքները ճեղքելով, և իր ցայտուն կողերուն համար դիւրասահ ճամբայ մը բանալով։

— Ո՜հ, ըսաւ Էտմոն, կրնայի կէս ժամէն հասնիլ այդ նաւը, եթէ չվախնայի որ զիս հարցուփորձ պիտի ընեն, փախստական ըլլալս պիտի ճանչնան, և նորէն Մարսիլիա պիտի տանին զիս։ Արդեօք ի՞նչ ընեմ, ի՞նչ ըսեմ և ի՞նչ առասպել հնարեմ, խաբելու համար զանոնք։ Անոնք մաքսանենգ և կէս մը ծովահէն են, որոնք նաւարկելու պատրուակաւ ծովեզերքը կ'ասպատակեն. ապահով եմ որ անոնք պիտի նախընտրեն զիս մատնել քան թէ ապարդիւն մարդասիրութիւն մը ընել։

«Սպասենք ուրեմն...։

«Բայց սպասելը անկարելի է. անօթութենէ կը մեռնիմ, քանի մը ժամէն՝ կիսասպառ ոյժս բոլորովին պիտի նուազի. ատկէ զատ՝ բանտային այցելութեան ժամը կը մօտենայ և փախուստի լուրը տակաւին չտրուած, գուցէ չկասկածին. այս գիշեր խորտակուած նաւակին նաւաստիներէն մէկուն տեղը կ'անցնիմ. այս պատմութիւնը անհաւանական չըլլալով՝ ոչ ոք պիտի չկրնայ զիս սուտ հանել, քանի որ բոլոր նաւաստիները խեղդուեցան. առա՛ջ ուրեմն։

Տանթէս աչքերը նաւուն խորտակուած կողմը դարձուց և սարսռաց։ Խութի մը սուր գագաթին վրայ խեղդուած նաւաս-

տիներէն մէկուն փռիւգիական գլխարկը մնացած էր և անոր մօտ կը ծփային ողնափայտին քանի մը բեկորները, որոնք ալիքներէն մղուելով, անզօր խոյերու պէս կղզիին կը զարնուէին։

Տանթէս իր որոշումը տուաւ իսկոյն. Նորէն ծով նետուեցաւ, դէպի գլխարկը լողաց, գլուխը դրաւ, ողնափայտին մարդակներէն մէկը բռնեց, ու սկսաւ յառաջանալ, նաւուն ճամբան կտրելու համար։

—Հիմա ազատեցայ, մրմնջեց ինքնիրեն։

Ու, այդ համոզումը ոյժ տուաւ իրեն։

Ընդհուպ նաւակը որոշ տեսաւ, որ գրեթէ հակառակ հովուն դէմ յառաջանալուն, Իֆ դղեակին և Բլանիէ փարոսին միջև կը ճեմէր։ Տանթէս սկզբան վախցաւ որ չըլլայ թէ նաւը ծովեզերքը ճեմած ատեն՝ բացերը ելլէ, ինչպէս պիտի ընէր, եթէ երթալիք տեղը Քորսիքա կամ Սարտենիա ըլլար. սակայն նաւը կառավարելու եղանակէն հասկցաւ որ նաւը Եարոս կղզիին և Քալասարէնեա կղզիին մէջտեղէն պիտի անցնէր, ինչպէս կ'ընեն Իտալիա գացող նաւերը։

Այսուհանդերձ, նաւը և լուղորդը անզգալաբար իրարու կը մօտենային. նաւը անգամ մը Տանթէսին այնչափ մօտեցած էր որ գրեթէ քառորդ մղոն մը հեռուէն կ'անցնէր. այն ատեն Տանթէս ալիքներուն վրայ ելաւ՝ իբր վտանգի նշան գլխարկը շարժելով, բայց նաւէն չտեսան զինքը, այլ իրենց ընթացքը փոխելով՝ ուրիշ ճեմ մը սկսան ընել։ Տանթէս խորհեցաւ ձայն չհանել, բայց աչքով հեռաւորութիւնը չափելով՝ հասկցաւ որ ձայնը մինչև նաւը չպիտի հասնէր, մանաւանդ որ հովը և ալիքներուն ձայնը պիտի խափանէին զայն։

Այն ատեն նախազգուշութեան համար միասին առած մարդակին վրայ տարածուեցաւ. ա՛յն աստիճան ոգեսպառ եղած էր որ գուցէ չկարենար մինչև նաւը լողալ, և ո՛չ իսկ ծովեզրը հասնիլ, եթէ, ինչպէս որ կարելի էր, նաւը անցնէր երթար, առանց զինքը տեսնելու։

Տանթէս նաւուն բռնած ճամբան յայտնի կը տեսնէր, սակայն մինչև անոր դառնալը ու իր կողմը գալը՝ աչքերը անոր վրայէն չհեռացուց, անձկութեան մատնուած։

Այն ատեն լողալով ընդ առաջ գնաց. բայց իրարու մօտ չհասած՝ նաւը սկսաւ փոխել իր ընթացքը։

Իսկոյն Տանթէս գոգցես գերագոյն ոյժով մը ջուրէն դուրս ցատկելով, գլխարկը շարժեց, և վտանգի մէջ եղող նաւաստիի մը պէս սրտաճմլիկ աղաղակներ արձակեց որոնք ծովու ոգիի մը հեծիւններուն կը նմանէին։

Այս անգամ նաւէն տեսան զինքը և ձայնը լսեցին. Նաւուն ընթացքը փոխեցին և գլուխը դէպի անոր կողմը դարձուցին. Նոյն միջոցին Տանթէս տեսաւ որ մակոյկ մը ծովը իջեցնելու կը պատրաստուէին։

Վայրկեան մը ետքը՝ մակոյկին մէջ երկու հոգի իջան, և իրենց կրկին թիերովը ծովը ծեծելով՝ դէպի իր կողմը ուղղուեցան։ Տանթէս կարծելով թէ մարդակին պէտք չունին այլևս, մէկ կողմ ձգեց զայն, և ամբողջ ուժովը սկսաւ լողալ, որպէս զի իրեն օգնութեան եկողներուն խնայէ ճամբուն կէսը։

Սակայն լուղորդը, որ իր գրեթէ սպառած ոյժին վրայ վստահած էր. այն ատեն հասկըցաւ թէ ո՛րչափ կարևորութիւն ունէր իրմէ հարիւր քայլ անդին ծփացող փայտի կտորը։ Թևերը սկսան բրտանալ. սրունքները իրենց ճկունութիւնը կորսնցուցին, շարժումները դժուար և անկանոն կ'ըլլային, իսկ շունչը բռնուած էր։

Երկրորդ անգամ մեծ ճիչ մը հանեց, երկու թիավարները իրենց ոյժը կրկնապատկեցին, և իրենցմէ մէկը Իտալերէն լեզուով աղաղակեց.

—Արիութի՛ւն։

Այդ խօսքը Էտմօնի ականջին հասաւ այն միջոցին՝ երբ ալիք մը գլխին վրայէն անցնելով՝ զինքը փրփուրներով ծածկեց, և որուն վրայ ելնելու ոյժ չէր մնացած։

Երբ վերստին ջուրին երեսը երևցաւ, խեղդուող մարդու մը անկարգ և յուսահատական շարժումներովը ծովուն հետ կը կռուէր. Էտմօն երրորդ ճիչ մը արձակեց և զգաց որ ծովուն տակը կը սուզէր, կարծես մահացու գնդակը տակաւին ոտքին կապուած ըլլար։

Ջուրը գլխուն վրայէն անցաւ, և անոր մէջէն տեսաւ սև բիծերով կապոյտ երկինքը։

Ուժգին ճիգ մը ջուրին մակերեսը հանեց գլուխը։

Իրեն այնպէս թուեցաւ որ մազերէն կը բռնէին․ այնուհետև բան մը չտեսաւ և ձայն մը չլսեց․ նուաղած էր։

Երբ Տանթէս աչքերը բացաւ, ինքզինքը նաւուն վերնայարկը գտաւ, որ ճամբան կը շարունակէր․ ամէնէն առաջ դիտեց թէ ո՛ր կողմը կ'երթան․ շարունակ Իֆ դղեակէն կը հեռանային։

Տանթէսի ոյժը այնչափ սպառած էր որ իր ուրախութեան բացագանչութիւնը ցաւագին հառաչանք մը կարծուեցաւ։

Ինչպէս ըսինք նաւուն վերնայարկին վրայ պառկած էր Տանթէս․ նաւաստի մը բուրդէ կտաւով մը կը շփէր անոր անդամները, ուրիշ մը, որ գլուխը խրախուսողն ըլլալը ճանչցաւ, դդմակի մը բերանը իր բերանին մէջ կը խօթէր․ երրորդ մը, ծեր նաւազ, թէ նաւուղիղ և թէ նաւապետ, այն եսասէր գթութեան զգացումով Տանթէսի կը նայէր, զոր մարդիկ ընդհանրապէս կը զգան առջի իրիկուն պատահած աղէտէ մը ազատողները, հետեւեալ առտու նոյնին մէջ իյնալու վտանգին մէջ ըլլալնուն համար։

Դդմակին մէջ եղած քանի մը կաթիլ շաքարօղին երիտասարդին դալկացած սիրտը կենդանացուց, իսկ նաւաստիին բրդէ կտաւով կատարած շփումները անոր անդամներուն կուտային իրենց առաձգականութիւնը։

—Ո՞վ էք դուք, հարցուց նաւապետը յոռի ֆրանսերէնով մը։

—Մալթացի նաւաստի մը, պատասխանեց Տանթէս աղճատ իտալերէնով մը․ գինի և պաքսիմատ բեռնաւորուած՝ Սիրակուզայէն կու գայինք, երբ այս գիշերուան փոթորիկը Մորժիոն հրուանդանին առջև պայթեցաւ և ժայռերուն վրայ նաւերնիս խորտակեց։

—Ո՞ւրկէ կու գաք հիմա։

—Այն ժայռերէն, որոնց վրայ ելլելով ազատելու բարեբաղդութիւնը ունեցայ, երբ ձեր խեղճ նաւապետը ժայռերուն

զարնուելով, գլուխը ջախջախուեցաւ։ Մեր միւս երեք ընկերները խեղդուեցան։ Կարծեմ միայն ես կենդանի մնացի․ ձեր նաւը տեսնելով, և վախնալով որ գուցէ այդ անբնակ և առանձնացած կղզիին մէջ երկար ատեն սպասեմ, մեր նաւին մէկ խըլեակին վրայ ելայ և համարձակեցայ մինչև ձեր նաւը գալու փորձը ընել։ Երախտապարտ եմ ձեզի, շարունակեց Տանթէս, որ իմ կեանքս ազատեցիք․ կորսուելու վրայ էի, երբ ձեր նաւաստիներէն մէկը մազերէս բռնեց։

—Ես էի այդ նաւաստին, ըսաւ երկայն, սև կխամօրուքով և համարձակ ու անկեղծ դէմքով նաւաստի մը․ հազիւ հազ հասայ, ընկղմելու վրայ էիք։

—Այո՛, ըսաւ Տանթէս ձեռքը անոր երկնցնելով, այո՛, բարեկամ, և երկրորդ անգամ շնորհակալ եմ ձեզի։

—Իրաւ, որ վարանեցայ, ըսաւ նաւաստին ձեր վեց բթաչափ մօրուքով և մէկ ոտնաչափ մազերով աւելի աւազակի կերպարանք ունէիք քան թէ պարկեշտ մարդու։

Ստուգիւ Տանթէս յիշեց որ Իֆ դղեակը մտնելէն ի վեր ո՛չ մազերը կտրած և ոչ մօրուքը ածիլած էր։

—Այո՛, ըսաւ, վտանգի մը մատնուած միջոցիս ուխտ ըրած էի Կրօթթայի Աստուածածնին որ տասը տարի ոչ մազերս կտրեմ և ոչ մօրուքս ածիլեմ։ Այսօր ուխտիս լրացած օրն է և տարեդարձիս առթիւ մազ մնաց որ պիտի խեղդուէի։

—Հիմա ի՞նչ պիտի ընենք ձեզ, հարցուց նաւապետը։

—Ափսո՛ս, պատասխանեց Տանթէս, ի՛նչ որ կ'ուզէք՝ ըրէք։ Մեր նաւը կորսուեցաւ և նաւապետը մեռաւ․ ինչպէս կը տեսնէք այդ ճակատագրէն ազատեցայ, բայց բոլորովին մերկ մնացի։ Բարեբախտաբար քաջավարժ նաւաստի եմ։ Առաջին նաւահանգիստը որ խարիսխ նետէք, դուրս հանեցէք զիս, ու ես կրնամ առևտրական նաւու մը մէջ պաշտօն մը գտնել։

—Միջերկրականը կը ճանչնա՞ք։

—Մանկութենէ ի վեր նաւարկութիւն կ'ընեմ անոր մէջ։

—Խարսխավայրերը գիտէ՞ք։

—Քիչ նաւահանգիստ կայ, ամէնէն դժուարամատչելիներն

անգամ, որոնց մէջ չկարենամ մտնել, և որոնց մէջէն գոց աչքերով չկարենամ դուրս ելլել:

—Ուրեմն, նաւապետ, ըսաւ Տանթէսը քաջալերող նաւաստին, եթէ բարեկամին ըսածը ստոյգ է, ինչո՞ւ հոս չմնայ:

—Անշուշտ եթէ ըսածը ստոյգ է, պատասխանեց նաւապետը տարակուսական երևոյթով մը. այս վիճակին մատնուած խեղճեր շատ բան կը խոստանան. հաւատա՛ անոնց եթէ կ'ուզես:

—Խոստացածէս աւելի կարող եմ կատարել, յարեց Տանթէս:

—Ի՞նչ կ'ըսէք. աւելցուց նաւապետը ծիծաղելով, կը տեսնենք:

—Երբ որ ուզէք, պատասխանեց Տանթէս, ոտքի ելլելով: Ըսէք ինծի թէ ո՞ւր կ'երթաք:

—Լիվորնօ:

—Ուրեմն փոխանակ անօգուտ պտոյտներ ընելով թանկագին ժամանակ մը կորսնցնելու, ինչո՞ւ կողմնակի չէ՞ք ընդունիր հովը:

—Այն ատեն ուղղակի Րիոն կղզիին վրայ պիտի երթայինք:

—Ո՛չ. քսան գրկաչափ հեռուէն կրնաք անցնիլ:

—Ուրեմն ղեկը ձե՛ռքերնիդ առէք, ըսաւ նաւապետը, և ձեր հմտութիւնը տակէ կը հասկնանք:

Երիտասարդը ղեկը ձեռքը առաւ, թեթև ճնշումով մը ապահով եղաւ որ նաւը կը հնազանդէր իրեն: Թէև շատ լաւ շինուած չէր. բայց կը բանէր:

—Առագաստակալներուն և պարաններուն վրայ ելէ՛ք, գոչեց Տանթէս:

Նաւուն չորս նաւաստիները իսկոյն իրենց հրամայուած տեղը վազեցին, իսկ նաւապետը Տանթէսի ըրածը կը դիտէր:

—Դարձուցէ՛ք առագաստակալները, շարունակեց Տանթէս:

Նաւաստիները բաւական ճշդութեամբ հնազանդեցան:

—Կապեցէ՛ք հիմա:

Այս հրամանն ալ առջի երկու հրամաններուն պէս ի գործ դրուեցաւ, և նաւը փոխանակ պտոյտներ ընելու՝ սկսաւ դէպի Րիոն կղզին յառաջանալ, զոր աջ կողմը ձգելով, անկէ քսան գրկաչափ հեռուէն անցաւ, ինչպէս Տանթէս գուշակած էր:

—Կեցցե՛ս, ըսաւ նաւապետը:

—Կեցցե՛ս, կրկնեցին նաւաստիները, և ամէնքն ալ զարմանքով այդ մարդուն կը նայէին, որուն վրայ մտքի և մարմնի կորով գտած էին անյուսալի կերպով:

—Կը տեսնէ՞ք, ըսաւ Տանթէս ղեկը թողլով, որ ես պիտի կարենամ օգտակար ըլլալ ձեզի. եթէ Լիվորնոյի մէջ ինծի պէտք չունենաք, զիս հոն կը թողուք, և առած առջի ամսականներէս կը վճարեմ մինչև հոն ձեր տալիք կերակուրին և ըզգեստներուն գինը:

—Շատ լաւ, շատ լաւ, ըսաւ նաւապետը, կրնանք համաձայնիլ եթէ պահանջումնիդ չափաւոր ըլլայ:

—Մարդս ուրիշ մարդէ մը աւելի արժէք չունի, ըսաւ Տանթէս. ի՛նչ որ այս բարեկամներուն կը վճարէք, նոյնը վճարեցէք ինծի. ուրիշ բան չեմ ուզեր:

—Արդարացի չէ ատ, ըսաւ Տանթէսը ծովէն հանող նաւաստին, դուք մենէ աւելի բան գիտէք:

—Ժագոբօ, ինչո՞ւ գործին կը խառնուիս, ըսաւ նաւապետը. իւրաքանչիւր ոք իր անձին համար ազատ է ուզած գումարը պահանջելու:

—Իրաւունք ունիք, ըսաւ Ժագոբօ, ըրածս պարզ դիտողութիւն մըն էր:

—Աւելի լաւ կ'ըլլայ որ այս ազնիւ երիտասարդին տաբատ մը և բաճկոն մը տաս, եթէ փոխնորդ ունիս, որովհետև բոլորովին մերկ է:

—Շապիկ մը և տաբատ մը ունիմ, ըսաւ Ժագոբօ:

—Ուրիշ զգեստի պէտք չունիմ, ըսաւ Տանթէս. շնորհակալ եմ, բարեկամ:

Ժագոբօ նաւուն խորշին մէջ սահեցաւ, և վայրկեան մը ետքը՝ երկու զգեստներով վեր ելաւ, զորս Տանթէս հագաւ աննկարագրելի երանութեամբ:

—Հիմա ուրիշ ինչի՞ պէտք ունիք, հարցուց նաւապետը:

—Կտոր մը հաց և ումպ մը այն ազնիւ շաքարօղիէն ուրկէ ինծի տուիք. երկար ատենէ ի վեր բան մը կերած չեմ:

Իրօք, քառասուն ժամէ ի վեր բերանը բան դրած չէր։

Կտոր մը հաց բերին Տանթէսին, և Ժագօբօ դդմակը ներկայացուց անոր։

—Ձախ կողմը դարձո՛ւր ղեկը, պոռաց նաւապետը, դէպի ղեկավարը դառնալով։

Տանթէս ամանը բերանը տանելու միջոցին՝ աչքը դէպի նոյն կողմը դարձուց, բայց ամանը կէս ճամբան մնաց։

—Ի՛նչ կայ հոն, հարցուց նաւապետը, Իֆ դղեակին մէջ ի՞նչ պատահեցաւ արդեօք։

Արդարեւ, սպիտակ փոքր ամպ մը, որ Տանթէսի ուշադրութիւնը գրաւած էր, Իֆ դղեակին հարաւային պարիսպին որմածակին վրայ երեւցաւ։ Երկվայրկեան մը ետքը՝ թնդանօթի պայթման հեռաւոր ձայնը մինչեւ նաւը հասաւ։

Նաւաստիները գլուխնին վեր առին իրարու նայելով։

—Ի՞նչ կը նշանակէ ատ, հարցուց նաւապետը։

—Բանտարկեալ մը փախած ըլլալու է այս գիշեր, ըսաւ Տանթէս, և փախստեան նշանը կուտան։

Նաւապետը երիտասարդին նայեցաւ, որ այդ խօսքը ըսելէն յետոյ դդմակը բերանը տարաւ, և հանդարտօրէն ու գոհունակութեամբ խմեց. եթէ նաւապետը կասկած մը իսկ ունէր, միայն վայրկեան մը մտքէն անցնելով՝ փարատեցաւ իսկոյն։

—Այս շաքարօղին շատ խիստ է, ըսաւ Տանթէս շապիկին թեզանիքովը քրտնաթաթաւ ճակատը սրբելով։

—Այսու հանդերձ, մրմնջեց նաւապետը, անոր նայելով, եթէ փախչողը այս մարդն է, շատ գոհ եմ. որովհետեւ յանդուգն մարդ մը ձեռք անցուցի։

Տանթէս իր խոնջէնքը պատրուակ բռնելով՝ ուզեց ղեկին առջեւ նստիլ։ Ղեկավարը իր տեղը ուրիշի յանձնելէն գոհ, աչքովը նաւապետին հարցուց, որ նշան ըրաւ գլխով թէ կրնայ նոր ընկերոջ յանձնել ղեկը։

Տանթէս այդպէս տեղաւորուելով՝ աչքերը Մարսիլիայի վրայ սեւեռեց։

—Ամսուն քանի՞ն է, հարցուց Տանթէս Ժագօբօյին, որ

Իֆ դղեակին աներեւոյթ ըլլալէն յետոյ իր քովը եկած նստած էր։

—Փետրուար 28, պատասխանեց նաւաստին։

—Ո՞ր տարւոյն, հարցուց դարձեալ Տանթէս։

—Ի՞նչպէս ո՛ր տարւոյն. ո՞ր տարւոյն մէջն ըլլալնիս կը հարցնէ՞ք։

—Այո՛։

—Մոռցա՞ք ո՛ր տարւոյն մէջ ըլլալնիս։

—Այս գիշեր այնչափ վախցայ, ըսաւ Տանթէս ծիծաղելով, որ քիչ մնաց՝ խելքս պիտի կորսնցնէի. այդ պատճառաւ յիշողութիւնս խանգարուած է. ուստի կը հարցնեմ ձեզի թէ ո՞ր տարւոյն փետրուարի 28ն է։

—1829 տարւոյն, պատասխանեց Ժագօբօ։

Ճիշդ տասնըչորս տարի անցած էր բանտարկուելէն ի վեր։

Տասնըինը տարեկան էր երբ Իֆ դղեակը մտած էր, ու անկէ երեսուներեք տարեկան կ'ելլէր։

Այն ատեն ցաւագին ժպիտ մը երեւցաւ Տանթէսի շրթունքներուն վրայ. արդեօք ի՞նչ եղած էր Մերսէտէս, որ կրնար մեռած կարծել զինքը։

Ատելութեան նշոյլ մը շողաց աչքերուն մէջ, երբ այդ երեք անձերը յիշեց, որոնց պատճառաւ այնչափ երկար և տաժանակիր բանտարկութեան մէջ մնացած էր. Տանկլարի, Ֆեռնանի ու Վիլֆորի համար բանտին մէջ ըրած վրէժխնդրութեան անողոք երդումը նորոգեց. բայց այդ երդումը այս անգամ սնամէջ սպառնալիք մը չէր, քանի որ Միջերկրականի ամէնէն արագընթաց առագաստանաւը պիտի չկրնար անշուշտ իր նաւուն ետեւէն հասնիլ, որ բոլոր առագաստները պարզած դէպի Լիվոռնօ կը սուրար։

ԻԹ. ԳԼՈՒԽ

ՄԱՔՍԱՆԵՆԳՆԵՐԸ

Տանթէս նոյն օրը նաւուն ի՛նչ տեսակ մարդիկ ըլլալը ճանչցաւ։ Ճենովացի նաւուն՝ Ժէօն-Ամէլիի ազնիւ նաւապետը թէև աբբայ Ֆարիայի գիտութիւնը չունէր, սակայն Միջերկրական ըսուած այն մեծ լճին շուրջը խօսուած գրեթէ բոլոր լեզուները գիտէր. ուստի թարգմաններու պէտք չունենալով, որոնք միշտ ձանձրացուցիչ և երբեմն անգաղտնապահ կ՚ըլլան, մեծ դիւրութիւններ ունէր հաղորդակցելու թէ՛ ծովու վրայ հանդիպած նաւերուն և թէ ծովեզերքը տեսած նաւակներուն հետ, և թէ վերջապէս այն անանուն, անհայրենիք և յայտնի արձանագրութիւն չունեցող անձերու հետ, ինչպէս նաւահանգիստներու մօտ եղող քարափներուն վրայ միշտ կ՚երեւին և որոնք այնպիսի գաղտնի և անյայտ միջոցներով կ՚ապրին որ կարծես թէ նախախնամութեան մէկ ուղղակի շնորհն է, որովհետեւ ապրուստի ակներեւ միջոց մը չունին։ Ընթերցողները կռահած ըլլալու են որ Տանթէս մաքսանենգութիւն ընող նաւու մը մէջ կը գտնուէր։

Ուստի նաւապետը սկզբան տեսակ մը կասկածով ընդունած էր Տանթէսը. ծովեզերքի բոլոր մաքսաւորները կը ճանչնային զինքը, և որովհետեւ այդ գործակալները և ինքը փոխադարձաբար զիրար կը խաբէին իրարմէ աւելի ճարտար հնարքներով, սկզբան այնպէս կարծեց թէ Տանթէս մաքսային իշխանութեան մը գաղտնի գործակալն է, որ իրենց արուեստին մէկ քանի գաղտնիքները սորվելու համար այս ճարտար միջոցին կը դիմէր. սակայն նաւը յաջողութեամբ կառավարելու կերպէն բոլորովին վստահ եղաւ անոր վրայ. մանաւանդ երբ Իֆ դղեակին պարսպին վրայ գարգմանակի նման ծուխին ծփանքը տեսաւ ու պայթման հեռաւոր ձայնը լսեց, պահ մը այնպէս կարծեց թէ իր նաւը ընդունած մարդուն համար թըն-

դանօթ կ՚արձակուի, ինչպէս որ թագաւորներու կ՚ըլլայ, նաւը մտած ու ելած ատենին։ Այդ բանը ինչպէս նաև անոր մասին գործակալ ըլլալը նաւապետին փոյթը չեղաւ. փախստականին կատարեալ հանդարտութիւնը տեսնելով՝ իր կասկածը փարատած էր։

Ուստի Էտմոն առանց իր ո՛վ ըլլալը ճանչցնելու նաւապետին ո՛վ ըլլալը ճանչնալու առաւելութիւնը ունեցած էր։ Նաւուն մէջ գտնուողներուն հետ խօսած ատեն շատ զգուշացաւ որ ինքզինքը չմատնէ. Նափոլիի և Մալթայի վրայ անոնց տեղեկութիւններ կուտար, զորս Մարսիլիայի պէս կը ճանչնար, և իր յերիւրած առջի պատմութիւնը կը հաստատէր, որ իր յիշողութեանը պատիւ կը բերէր։ Այսու հանդերձ Ճենովացին իր բոլոր կորովամտութեամբը Էտմոնէն խաբուեցաւ, որուն քաղցր բնաւորութիւնը, նաւային հմտութիւնը, մանաւանդ կեղծելու տաղանդը իր վրայ կը փայլէին։

Գուցէ Ճենովացին այն տեսակ խելացիներէն էր, որոնք իրենց պէտք եղածը միայն գիտեն, և միայն այն բաներուն կը հաւատան, ուրկէ շահ մը ունին։

Վերջապէս Լիվորնօ հասան այդ փոխադարձ կացութեան մէջ։

Էտմոն հոն փորձ մը պիտի ընէր, տեսնելու համար թէ տասնըչորս տարիէ ի վեր դէմքը չտեսնելէն յետոյ՝ ինքզինքը պիտի ճանչնա՞ր։ Իր պատանութեան դիմագծութիւնը բաւական միտքը պահած էր, հիմա պիտի տեսնէր թէ չափահաս ըլլալէն ի վեր ի՛նչ փոփոխութիւն կրած էր։ Նաւուն մարդոց ըսած էր որ ուխտը կատարած էր. արդէն քանի անգամ Լիվորնօ խարիսխ նետած ըլլալով՝ Ս. Ֆէրտինանտ փողոցը սափրիչ մը կը ճանչնար. մօրուքը և մազերը կտրել տալու համար անոր խանութը մտաւ։

Սափրիչը զարմանքով նայեցաւ երկար մազերով և թաւ ու սև մօրուքով մարդուն, Տիտիէնի գծած գեղեցիկ գլուխներուն կը նմանէր։ Այն ատեն տակաւին սովորութիւն եղած չէր այնչափ երկար մազ և մօրուք թողուլ. սակայն այսօր

սափրիչ մը պիտի զարմանայ, երբ այդպիսի բնական ձիրքերով օժտուած մարդ մը ուզէ անոնցմէ զրկուիլ:

Լիվոռնացի սափրիչը առանց դիտողութիւն ընելու գործի սկսաւ:

Երբ ծնօտը բոլորովին գերծուեցաւ, և գլխուն մազերը սովորական երկարութեան վերածուեցան, Էտմոն հայելի մը ուզեց և դէմքը դիտեց անոր մէջ:

Ինչպէս ըսինք, Տանթէս երեսուներեք տարեկան էր, և իր տասնըչորս տարուան բանտարկութիւնը բարոյական մեծ փոփոխութիւն մը առաջ բերած էր դէմքին վրայ:

Իֆ դղեակը մտած ատեն Տանթէսի դէմքը կլոր, ուրախ և զուարթ էր երջանիկ երիտասարդի մը դէմքին պէս, որուն կեանքի նախաքայլերը հեշտ եղած էին, և իր անցեալին իբր բնական հետևութիւն՝ ապագային վրայ մեծ յոյս ունէր. սակայն այդ ամէնը փոխուած էր բոլորովին:

Իր ձուաձև դէմքը երկարած էր, ծիծաղկոտ բերանը ամուր և որոշ գիծեր ունէր, որոնք իր հաստատամտութիւնը կը ցուցնէին. յօնքերը աղեղնաձև էին միակ խորշոմի մը ներքև, որ խոկուն երևոյթ մը կ'ընծայէր դէմքին. իր աչքերուն մէջ խորին տխրութիւն մը դրոշմուած էր, ուրկէ մերթ ընդ մերթ մարդատեցութեան և վրէժխնդրութեան մռայլ նշոյլները կը ցայտէին. երկար ատեն ցերեկուան լոյսէն և արևուն ճառագայթներէն զրկուած ըլլալով, երեսին գոյնը անփայլ դարձած էր, ինչ որ հիւսիսային երկիրներու մարդոց ազնուապետական գեղեցկութեան յատուկ է, երբ դէմքերնին սև մազերով շրջանակուած ըլլայ. բանտին մէջ ստացած խորին հմտութիւնը իր ամբողջ դէմքին վրայ բանիմաց ապահովութեան լուսապսակը կը ցոլացնէր. ասկէ զատ՝ թէև բնական բարձրահասակ էր, բայց ոյժերը իր վրայ կեդրոնացնող գէր և կարճ մարդու մը կորովը ստացած էր:

Ջղուտ և ազազուն ձևերուն վայելչութեան յաջորդած էր կլորցած և մկանուտ ձևերուն տոկունութիւնը: Իսկ իր ձայնը՝ ըրած աղօթքներէն, հեծեծանքներէն և անէծքներէն փոխուած

էր. երբեմն տարօրինակ քաղցրութիւն և երբեմն խիստ և գրեթէ բիրտ շեշտ մը կ'առնէր:

Իր աչքերը մթնշաղ լոյսի և խաւարի մէջ տեսնելու վարժուած ըլլալով՝ բուէնի և գայլի պէս գիշեր ատեն առարկաները որոշելու եզական կարողութիւնը ստացած էր:

Էտմոն իր դէմքը հայելիին մէջ դիտելով ժպտեցաւ. անկարելի էր որ իր լաւագոյն բարեկամը զինքը ճանչնար, եթէ սակայն բարեկամ մնացած էր. ինքզինքը անգամ չէր ճանչնար:

Ժէօն-Ամէլիին նաւապետը, որ կ'ուզէր իր մարդոց մէջ ունենալ Էտմոնի պէս արժանաւոր մէկը, առաջարկած էր ապագայ շահերուն ի հաշիւ կանխավճար մը տալ. Էտմոն ընդունած էր: Ուստի սափրիչին խանութէն ելլելով, որ այդ առաջին կերպարանափոխութիւնը տուած էր անոր առաջին գործը եղաւ զգեստեղէնի վաճառատուն մը մտնել և նաւաստիի ձևոք մը զգեստ գնել: Այս զգեստը, ինչպէս յայտնի է, շատ պարզ էր. սպիտակ տաբատ մը, գծաւոր շապիկ մը և փռիւգիական գլխարկէ մը կը բաղկանար:

Այդ տարազին ներքև, Ժագօբոյին փոխ տուած շապիկն ու տաբատը ետ դարձնելէ յետոյ, Էտմոն Ժէօն Ամէլիին նաւապետին դիմաց ելաւ, և իր պատմութիւնը կրկնելու պարտաւորուեցաւ:

Նաւապետը չէր կրնար իր աչքերուն հաւատալ որ այդ կոկիկ և վայելուչ նաւաստին իր նաւուն վերնայարկին վրայ ընդունած խիտ մօրուքով, ջրիմուռով խառնուած մազերով և ջրաթաթաւ մարմնով մերկ և կիսամեռ մարդը ըլլար:

Ուստի Տանթէսի հաճելի կերպարանքէն ազդուած, ըրած առաջարկութիւնները կրկնեց, բայց Տանթէս՝ որ իր ծրագիրները ունէր, միայն երեք ամսուան համար ուզեց ընդունիլ զանոնք:

Սակայն Ժէօն Ամէլիին նաւաստիները խիստ գործունեայ էին և այնպիսի նաւապետի մը հրամանին տակ կը գտնուէին որ սովորութիւն չունէր իր ժամանակը կորսնցնելու: Հազիւ ութը օրէ ի վեր Լիվոռնօ հասած, նաւուն գեր կողերը լցուած էին նկարուն մուսլիններով, արգիլուած բամպակներով, անգլիա-

կան վառօդով և ծխախոտով, որուն վրայ ռէժին մոռցած էր իր կնիքը դնելու։ Այդ բոլոր ապրանքները առանց նաւահանգստի տուրք վճարելու և հետևաբար առանց քննել տալու՝ Լիվորնոյէն դուրս հանելով, Քորսիքայի ծովեզրը հանելու էր, ուր կարգ մը շահադէտ վաճառականներ կային, որոնք ապրանքները Ֆրանսա անցընելու յանձնառու կ'ըլլային։

Ճամբայ ելան. Էտմոն դարձեալ այն կապուտակ ծովէն կ'անցնէր, որ իր երիտասարդութեան առաջին հորիզոնն եղած էր, և զոր այնչափ անգամ իր բանտին երազներուն մէջ տեսած էր։ Աջ կողմը Կորկոնէ կղզին թողուց, իսկ ձախ կողմը՝ Բիանոզա կղզին. յետոյ դէպի Բաօլիին ու Նաբոլէոնին հայրենիքը յառաջացաւ։

Հետևեալ օրը, նաւապետը, ըստ սովորութեան, առտուն կանուխ նաւուն վերնայարկը ելլելով, նայեցաւ որ Տանթէս նաւուն պատուարին կռթնած՝ մեծ ուշադրութեամբ կը դիտէր կրանիթէ ժայռերու կոյտ մը, որուն վրայ արևը իր վարդագոյն ճառագայթները կը սփռէր։ Մօնթէ-Քրիսթօ կղզին էր ան, որմէ գրեթէ երեք քառորդ մղոն հեռուէն անցան, իրենց աջ կողմը ձգելով զայն, և ճամբան շարունակեցին դէպի Քորսիքա։

Այդ կղզիին առջևէն անցնելու ատեն, որուն անունը բարձրաձայն կը հնչէր իր ականջին, Տանթէս կը մտածէր որ եթէ ծովը նետուէր, կէս ժամ լողալով պիտի կրնար այդ աւետեաց երկիրը հասնիլ։ Բայց իր գանձը գտնելու համար առանց գործիքի ի՞նչ պիտի ընէր հոն, և առանց զէնքի ի՞նչպէս պիտի պաշտպանէր զայն։ Մնաց որ, ի՞նչ պիտի ըսէին նաւաստիները և ի՞նչ կարծիք պիտի խորհէր նաւապետը։ Ուրեմն սպասելու էր։

Բարեբախտաբար Տանթէս վարժուած էր սպասելու, իր ազատութեան համար տասնըչորս տարի սպասած էր, հիմա որ ազատ էր, կրնար վեց ամիս կամ մէկ տարի ալ իր հարստութեան համար սպասել։

Եթէ առանց հարստութեան իրեն ազատութիւն առաջարկէին՝ պիտի չընդունէ՞ր միթէ։

Ասկէ զատ՝ այդ հարստութիւնը մտացածին չէ՞ր. այդ հարստութիւնը խեղճ աբբայ Ֆարիայի հիւանդ ուղեղին մէջ ծնունդ առած, իրեն հետ մեռած չէ՞ր։

Ստոյգ է որ Սբատա կարտինալին նամակը զարմանալի ճշդութեամբ գրուած էր, և Տանթէս ծայրէ ծայր, առանց բառ մը մոռնալու, միտքը պահած էր զայն։

Իրիկուան, վերջալոյսին բոլոր երանգները անցաւ կղզիին վրայէն և մթութեան մէջ աներևոյթ եղաւ ան, բայց Տանթէս բանտին մթութեան մէջ տեսնելու վարժուած ըլլալով՝ անտարակոյս կը տեսնէր զայն. որովհետև մինչև վերջը վերնայարկին վրայ մնաց։

Հետևեալ առտու արթնցած ատեն Ալէրիոյ բացերը կը գտնուէին. բոլոր այն օրը ճեմեր ըրած էին մինչև որ իրիկունը ծովեզերքէն կրակ վառելով նշան տուին. լոյսերու ուղղութենէն հասկցան որ կրնան ապրանքները ցամաք հանել. Նաւուն ցռուկին վրայ դրօշակի տեղ լապտեր մը կախեցին, և ծովեզրին մօտեցան հրացանի հեռաւորութեամբ։

Տանթէս դիտեց որ այդպիսի պարագաներու մէջ պատրաստ ըլլալու համար անշուշտ, նաւապետը երկու փոքր թընդանօթները չփակել տուած էր, որոնք պատնէշի հրացաններու նման առանց բարձր ձայն հանելու կրնային հազար քայլ հեռաւորութեամբ գնդակ արձակել։

Բայց այդ գիշեր ձեռք առնուած նախազգուշութիւնը աւելորդ եղաւ, որովհետև ամէն ինչ խաղաղ անցաւ։ Չորս մակոյկներ նաւին մօտեցան յուշիկ. անտարակոյս նաւը զանոնք պատուելու համար՝ իր մակոյկը ծով իջեցուց. ճիշդը ըսելու համար՝ այդ հինգ մակոյկները զիրար գերազանցելու համար ա՛յնպիսի ջանքեր ըրին որ առտուան ժամը երկուքին բոլոր նաւուն բեռը ցամաք փոխադրուած էր։

Նաւապետը ա՛յնչափ ճշդապահ մարդ մըն էր որ նոյն գիշերն իսկ ամենուն ալ իր վարձքը բաժնեց. իւրաքանչիւրին հարիւր թոսկանեան ֆրանք, այսինքն ֆրանսական գրեթէ ութսուն ֆրանք։

Բայց գործերնին լմնցած չէր դեռ. Սարտենիա երթալով՝ նաւը պիտի բեռնաւորէին նորէն։

Երկրորդ գործողութիւնը առաջինին պէս յաջող անցաւ. Ժակօ Ամէլի նաւը խիստ բարեբախտ էր։ Նաւուն այս անգամուան բեռը Լուքքայի դքսութեան համար էր, և ամբողջովին Հավանայի գլանիկներէ, Քսէրէսի ու Մալակայի գինիէ կը բաղկանար գրեթէ։

Հոն ստիպուեցան մաքսաւորներուն հետ կռուելու, որոնք նաւապետին յաւիտենական թշնամիներն են։ Մաքսաւորներէն մէկը սպաննուեցաւ, և երկու նաւաստի վիրաւորուեցան։ Այս երկու նաւաստիներէն մէկն էր Տանթէս. գնդակ մը ձախ ուսին միսին մէջէն անցած էր։

Տանթէս գրեթէ գոհ էր այդ կռիւէն և իր ընդունած վէրքէն. ասոնք թէև խիստ դառն էին, բայց իրեն հասկցուցած էին թէ ի՛նչ աչքով վտանգին կը նայէր և ի՛նչ սրտով կը համբերէր ցաւին։ Վտանգին վրայ ծիծաղած էր և հարուածը ընդունած ատեն յոյն փիլիսոփային պէս ըսած էր, «Չարիք մը չես դուն, ո՛վ վիշտ։»

Ասկէ զատ, մաքսաւորը մահացու կերպով վիրաւորուած տեսնելով, կամ կռիւէն արիւնը տաքցած ըլլալուն և կամ մարդկային զգացումներուն պաղութենէն, աննշան տպաւորութիւն մը կրած էր Էտմոն։ Ճամբուն մէջն էր ան և իր նպատակին պիտի կրնար հասնիլ. սիրտը սկսած էր քարանալ կուրծքին մէջ։

Սակայն Ժագոբօ, որ Տանթէսի իյնալը տեսնելով, մեռած կարծեր էր զայն, օգնութեան հասնելով գետնէն վերցուցած, և իբր ազնիւ ընկեր մը, դարմանած էր զայն։

Ուրեմն այդ մարդիկը տոքթ. Բանկլոսին կարծածին չափ բարի չէին, բայց Տանթէսի կարծածին չափ ալ չար չէին, որովհետև Ժագոբօ, որ իր ընկերին բաժինը ժառանգելէն ուրիշ բան չէր կրնար սպասել անկէ, մեծ ցաւ մը կը զգար որ մի գուցէ Էտմոն մեռնի։

Բարեբախտաբար, ինչպէս ըսինք, Էտմոն վիրաւորուած

էր միայն, և իր վէրքը շուտով գոցուեցաւ, շնորհիւ քանի մը խոտերու, զորս Սարտենիացի պառաւ կիներէ գնած էին։ Այն ատեն՝ Էտմոն Ժագոբօն փորձել ուզեց, անկէ ընդունած խնամքներուն փոխարէն՝ իրեն ինկած բաժինը անոր տուաւ, բայց Ժագոբօ բարկութեամբ մերժեց։

Էտմոնը տեսնելուն պէս՝ Ժագոբօյին անոր նկատմամբ զգացած տեսակ մը համակիր անձնուիրութեան հետեւանքը աս եղաւ որ Էտմոն ալ սկսաւ գորով տածել անոր վրայ։ Ժագոբօ ատկէ աւելի բան չէր խնդրեր. բնազդումով գուշակած էր Էտմոնին վիճակին բարձրութիւնը, զոր Էտմոն կրցած էր ուրիշներէն գաղտնի պահել, և Ժագոբօ գոհ էր անոր համակրութիւնը շահելէն։

Ուստի ճամբորդութեան երկար օրերը, մինչ նաւը ապահովութեամբ և յաջող հովով մը կապուտակ ծովուն վրայէն կը սահէր, և միայն նաւուղիղին օգնութեանը կարօտ էր, Էտմոն ձեռքը ծովային քարտէս մը բռնած՝ Ժագոբօյին կը սորվեցնէր, ինչպէս խեղճ աբբայ Ֆարիան իրեն սորվեցուցած էր. ծովեզերքներուն դիրքը, կողմնացոյցին փոփոխումները կը ցուցնէր, և կը սորվեցնէր թէ ի՛նչպէս պէտք է օդին գուշակութիւնները հասկնալ մեր գլխուն վրայ բացուած այն մեծ գիրքին մէջ, զոր երկինք կը կոչենք, և որուն կապոյտ գոյնին վրայ ադամանդեայ գրերով գրած է Աստուած։

— Ինծի պէս խեղճ նաւաստի մը ի՛նչ պէտք ունի այդ ամէն բաները սորվելու, հարցուց Ժագոբօ։

— Ո՞վ գիտէ, թերևս օր մը նաւապետ կ'ըլլաս, պատասխանեց Էտմոն, ինչպէս Պոնաբարդ քաղաքակիցդ կայսր եղաւ։

Մոռցանք ըսելու թէ Ժագոբօ Քորսիքացի էր։

Այս անընդհատ ճամբորդութիւններով երկուք ու կէս ամիս անցած էր. Էտմոն բոլոր մաքսանենգներուն հետ ծանօթացած էր, սորվելով այն ամէն գաղտնի նշանները, որոնցմով այս կէս-ծովահէնները զիրար կը ճանչնան։

Իր Մօնթէ-Քրիսթօ կղզիին առջեւէն քանի անգամ անցած դարձած էր, բայց և ոչ մէկ անգամ առիթ գտած էր ցամաք ելլելու։

Ուստի որոշած էր որ նաւապետին հետ կնքած յանձնառութեան ատենը լրացածին պէս՝ նաւակ մը պիտի վարձէր իր հաշւոյն (որովհետեւ զանազան ճամբորդութիւններու միջոցին շահած գումարներէն հարիւրի չափ դահեկան աւելցած էր) ուէ պտըտելով Մօնթէ-Քրիստօ երթալու և հոն ամենայն ազատութեամբ իր հետազօտութիւնները կատարելու համար։ Բայց գուցէ չկարենար ամենայն ազատութեամբ իր հետազօտութիւնները ընել. զինքը հոն տանողները անտարակոյս իր ըրածները պիտի դիտէին։

Սակայն այս աշխարհիս մէջ պէտք է միշտ վտանգ մը աչք առնել։

Բանտը զինքը խոհեմ դարձուցած էր, և Էտմօն կ'ուզէր իր գործը անվտանգ կատարել։

Սակայն ի զուր իր բեղուն երեւակայութեան մէջ ուրիշ միջոց չէր կրնար գտնել, եթէ ոչ ընկերով երթալ այնչափ բաղձացած կղզին։

Երբ Տանթէս այդ վարանումին մէջ էր, նաւապետը, որ իր վրայ մեծ վստահութիւն ունէր, և շատ կը բաղձար զինքը գործին մէջ պահելու, իրիկուն մը թեւը մտնելով՝ Օլիոյի գինետունը տարաւ զայն, ուր Լիվօրնոյի բոլոր մաքսանենգները սովորութիւն ունէին հաւաքուելու։

Ծովեզերքի գործերը սովորաբար այդ գինետան մէջ կը կարգադրուէին։ Արդէն Տանթէս երկու երեք անգամ նաւաստիներու այդ ծովային սակարանը գացած էր. այդ անվեհեր մաքսանենգները տեսնելով, որոնք գրեթէ երկու հազար մղոն տարածութեան մը վրայ կը գործէին և հոդ կը գումարուէին, կը մտածէր թէ իր կամքը կատարել ուզող մէկը ինչ զօրութեամբ պիտի կարենար զայն ի գլուխ հանել այդ համակարծիք կամ տարակարծիք մարդիկը առաջ մղելով։

Այս անգամ խնդիրը մեծ գործի մը վրայ կը դառնար. Թրքական գորգերով, արեւելեան դիպակներով և քաշմիր ցփսիներով բեռնաւորուած նաւ մը եկած էր. այնպիսի չէզոք երկիր մը կը փնտռէին, ուր այն նաւուն բեռը իրենց նաւը

փոխադրելէն յետոյ կարենային Ֆրանսայի ծովեզրը հանելու փորձ մը ընել։

Եթէ յաջողէին՝ խիստ մեծ վարձք պիտի ստանային. իւրաքանչիւրին յիսուն կամ վաթսուն դահեկան պիտի իյնար իր բաժին։

Ժէօն Ամէլիին նաւապետը Մօնթէ-Քրիստօ կղզին առաջարկեց իբր փոխադրութեան տեղի, որովհետեւ բոլորովին ամայի էր. հոն ոչ զինուոր կը գտնուէր և ոչ մաքսաւոր. կարծես կռապաշտներուն Ողիմպոսի ժամանակէն ծովուն մէջտեղը զետեղուած էր Հէրմէսի կողմէ, վաճառականներու և գողերու աստուածը, դասակարգեր զորս մենք իրարմէ եթէ չենք կրնար զանազանել, գոնէ կը բաժնենք, բայց կ'երեւի թէ նախնի ազգերը միեւնոյն դասակարգութեան մէջ կը դնէին զանոնք։

Մօնթէ-Քրիստօ անունը լսելով՝ Տանթէս ուրախութենէ սարսուռ զգաց. իր այլայլումը չյայտնելու համար՝ տեղէն ելաւ և շրջան մը ըրաւ ծխապատ պանդոկին մէջ, ուր աշխարհիս բոլոր գաւառական լեզուները ֆրանսերէն լեզուին մէջ կը ձուլուէին։

Երբ երկու խօսակիցներուն քով դարձաւ, արդէն անոնք որոշած էին Մօնթէ-Քրիստօ ցամաք ելլել և յաջորդ իրիկունը ճամբայ իյնալ։

Երբ իրեն խորհուրդ հարցուցին, Էտմօն վստահացուց որ կղզին ամէն կարելի ապահովութիւնները կ'ընծայէր, և թէ մեծ ձեռնարկները յաջողցնելու համար պէտք էր աճապարել։

Ուստի որոշեցին հետեւեալ իրիկունը ճամբայ ելլելու. պիտի ջանային, եթէ ծովը հանդարտ և հովը նպաստաւոր ըլլար, երրորդ օրուան իրիկունը չէզոք կղզիին ջուրերուն մէջ գտնուելու։

ԻԳ. ԳԼՈՒԽ

ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՕ ԿՂԶԻՆ

Այնպիսի անյուսալի երջանկութեամբ մը, որուն երբեմն կը հասնին, երկար ժամանակ բախտին խստութիւնները կրող մարդիկ, Տանթէս պարզ և բնական եղանակով պիտի հասնէր իր նպատակին. առանց մէկու ո և է կասկած ներշնչելու, այդ կղզին ոտք պիտի կոխէր։

Գիշեր մը միայն մնացած էր մեկնելու, որուն մեծ անհամբերութեամբ սպասած էր։

Տանթէսի անցուցած ամէնէն տենդոտ գիշերներէն մէկը եղաւ ան, որովհետև բաղդին բոլոր յաջող և անյաջող հաւանականութիւնները հետզհետէ մտքին առջև ներկայացան. աչքերը գոցելուն պէս՝ կարտինալ Սբատային նամակը շողշողուն գրերով պատին վրայ գրուած կը տեսնէր. իսկ եթէ պահ մը քնանար՝ բոլորովին անիմաստ ցնորքներ ուղեղը կը յուզէին։ Այնպիսի քարայրներու մէջ կը մտնէր, որոնց գետինը զմրուխտներով յատակուած էին, միջնորմները սուտակներով պատած էին և կամարները ադամանդներով։ Մարգարիտները ստորերկեայ ջուրերուն մղումին պէս կաթիլ առ կաթիլ կ'իյնային։

Էտմոն հիացած և գոհ, գրպանները թանկագին քարերով կը լեցնէր, բայց երբ լոյսին կ'ելլէր, անոնք խիճեր կը դառնային։ Այն ատեն կը ջանար այդ սքանչելի քարանձաւները մտնելու նորէն, զորս հազիւ ընդնշմարած էր, բայց ճամբան անվերջ և օձապտոյտ դարձուածքներ ունէր և մուտքի տեղը անյայտ էր։ Ի զուր յոգնած յիշողութեան մէջ այն կախարդական և խորհրդաւոր բառը կը փնտռէր, զոր արաբացի ձկնորսը արտասանելով, Ալի Պապայի շքեղ քարայրները կը բանար իր առջև։ Ափսո՜ս, գանձը աներևոյթ ըլլալով՝ երկրին

ոգիներուն սեփականութիւնը դարձած էր վերստին. պահ մը յուսացած էր ատոնց ձեռքէն կորզել։

Առտու եղաւ, ու իր տենդոտ յուզումները բնաւ չդադրեցան. սակայն երևակայութեանը շնորհիւ սկսաւ տրամաբանել. Տանթէս կրցաւ ծրագիր մը պատրաստել, որ մինչև այն ատեն անորոշ կերպով կը ծփար ուղեղին մէջ։

Իրիկուան սկսաւ մեկնելու պատրաստութիւններ տեսնել։ Այդ պատրաստութիւններ Տանթէսի համար միջոց մըն էին սրտին յուզումները ծածկելու։ Տակաւ ընկերներուն հրամայող հեղինակութիւն մը ձեռք բերած էր, իբր թէ նաւուն տէրը ինքն ըլլար, և որովհետև իր հրամանները միշտ պայծառ, ճշգրիտ և դիւրակատար էին, ընկերները ո՛չ միայն փութով այլ և հաճութեամբ կը հնազանդէին անոր։

Ծերունի նաւապետը կը թողուր որ ուզածն ընէ ան, որովհետև հասկցած էր Տանթէսին ունեցած գերազանցութիւնը, միւս նաւազներուն և նոյն իսկ ինքզինքին հետ բաղդատմամբ։ Կը տեսնէր որ այդ երիտասարդը պիտի կրնար իրեն յաջորդել և շատ կը ցաւէր աղջիկ մը չունենալուն, որուն հետ Էտմոն ամուսնանալով իր հետ կապուած պիտի մնար միշտ։

Իրիկուան ժամը եօթին ամէն բան պատրաստ եղաւ. տասը վայրկեան ետքը փարոսին առջևէն կ'անցնէին ճիշդ լապտերը վառուած ատեն։

Ծովը հանդարտ էր. հարաւային արևելեան զով հովով ճամբայ ելած էին կապոյտ երկինքին ներքև, ուր Աստուած հետզհետէ իր փարոսները կը վառէր, որոնց իւրաքանչիւրը մէյ մէկ աշխարհ է։ Տանթէս յայտարարեց իր ընկերներուն թէ ամէնքնին ալ կրնան երթալ քնանալ, և ինքը ղեկավարութեան հոգ կը տանի։

Երբ Մալթացին (Տանթէսը այդպէս կը կոչէին) այդ առաջարկը ըրաւ, ամէնքնին ալ գոհ եղան և գացին հանգիստ պառկելու։

Երբեմն ատանկ կը պատահէր։ Տանթէս առանձնական կեանքէն յետոյ մարդոց խառնուելով, երբեմն երբեմն առանձ-

նութեան սոխազղական պէտքը կը զգար։ Գիշերուան մթութեան և անհուն լռութեան մէջ ու Աստուծոյ աչքերուն ներքեւ ծովուն վրայ առանձին ծփող նաւուն առանձնութենէն աւելի ինչ անհուն, միանգամայն աւելի ինչ բանաստեղծական առանձնութիւն կայ։

Այս անգամ՝ միայնութիւնը ոգեւորուեցաւ իր գաղափարներով, գիշերը՝ իր պատրանքներով, լռութիւնը՝ իր խոստումներով։

Երբ նաւապետ արթնցաւ, նաւը բոլոր առագաստները պարզած, կը յառաջանար. մէկ ժամուան մէջ երեք ու կէս մղոն կ'ընթանար։

Մոնթէ-Քրիսթօ կղզին հորիզոնին վրայ կը մեծնար։

Էտմոն նաւուն կառավարութիւնը յանձնեց նաւապետին և գնաց անկողնին վրայ երկնցաւ. բայց վայրկեան մը չկրցաւ աչքերը գոցել, բոլոր գիշերը անքունութեամբ անցուցած ըլլալուն հակառակ։

Երկու ժամ ետքը դարձեալ վեր ելաւ. նաւը Էլպա կղզիին առջեւէն անցած էր և Մարէչիանայի բացերը ու Բիանոզայի հարթ և կանաչագեղ կղզիին առջև կը գտնուէր։ Մոնթէ-Քրիսթօ կղզիին ճաճանչագեղ գագաթը երկինքի կապոյտին վրայ կը խոյանար։

Տանթէս հրամայեց նաւուղիղին որ ղեկը դէպ ի ձախակողմը դարձնէ, որպէս զի Բիանոզա կղզին աջ կողմերնին թողուն. հաշուէ ըրած էր որ այդ կերպով երկու կամ երեք մղոն պիտի շահէին իրենց ճամբէն։

Ժամը հինգին առենները կղզին երեւցաւ լիովին. արեւուն մարը մտնելու առեն. մթնոլորտին պայծառութեանը շնորհիւ կղզիին ամէն կողմերը մանրամասնօրէն կը տեսնէին։

Էտմոն ակնապիշ և անյագ նայուածքով կը դիտէր այն ժայռերու կոյտին, որոնց վրայ վերջալոյսին բոլոր գոյները, այսինքն բաց վարդագոյնէն մինչեւ մութ կապոյտ գոյնը կը փայլէին. մերթ ընդ մերթ դէմքը կը կարմրէր. ճակատը ծիրանեգոյն կը դառնար աչքերուն առջեւէն ծիրանեգոյն ամպ մը կ'անցնէր։

Ոչ մէկ խաղարկու, որուն բաղդը խաղէն կախում ունի, նարտին նետելու ժամանակ այնչափ անձկութիւն զգացած չէ որչափ Էտմոն իր յուսոյ գագաթնակէտին մէջ։

Գիշերուան ժամը տասն էր երբ Մոնթէ-Քրիսթօ հասան. Ժէօն Ամէլի ամենէն առաջ հասած էր ժամադրավայրը։

Տանթէս, հակառակ իր պաղարիւնին, չկրցաւ ինքզինքը զսպել. ամենէն առաջ ինքը ծովեզր ցատկեց, և եթէ համարձակէր, Պրուտոսի պէս հողը պիտի համբուրէր։

Գիշերուան մթութիւնը ամէն կողմ պատած էր. բայց ժամը տասնըմէկին լուսինը ծովուն ետեւէն ծագելով՝ ալիքները արծաթափայլ լուսաւորեց, և տակաւ բարձրանալով՝ սպիտակ լուսայայտումներ ցրցքնեց ուրիշ Բէլիօնի մը ժայռերուն վրայ։

Կղզին անծանօթ չէր Ժէօն Ամէլիի նաւաստիներուն. իրենց սովորական կայաններէն մէկն էր ան. իսկ Տանթէս դէպի արեւելք ըրած ամէն ճամբորդութեանց միջոցին տեսած էր զայն, բայց ցամաք ելած չէր բնաւ։

—Գիշերը ո՞ւր պիտի անցընենք, հարցուց Տանթէս, խօսքը Ժագոպոյին ուղղելով։

—Անշուշտ նաւուն մէջ, պատասխանեց նաւաստին։

—Աւելի հանգիստ չէ՞նք ըներ քարայրներուն մէջ։

—Ո՞ր քարայրներուն մէջ։

—Այս կղզիին քարայրներուն մէջ։

—Այս կղզիին մէջ քարայր չեմ ճանչնար ես, ըսաւ Ժագոպօ։

Պաղ քրտինք մը պատեց Տանթէսի ճակատը։

—Մոնթէ-Քրիսթօ կղզիին մէջ քարայր չկա՞յ, հարցուց Էտմոն։

—Ո՛չ, պատասխանեց Ժագոպօ։

Տանթէս պահ մը շլմորած մնաց. յետոյ մտածեց որ երկար ժամանակէ ի վեր որ և է արկածով կրնային լեցուիլ այդ քարայրները, և կամ կարտինալ Սբատան կրնար անոնց մուտքը գոցած ըլլար ամենամեծ զգուշութեամբ։

Այդ պարագային, ամէն ինչ այդ կորսուած մուտքը գտնելուն մէջ կը կայանար։ Անօգուտ էր գիշեր ատեն փնտռել զայն։ Տանթէս այդ հետազօտութիւնը հետեւեալ առտուան թողուց․ մանաւանդ որ ծովուն վրայ կէս մղոն հեռուէն տրուած նշան մը, որուն Ժէօն Ամէլի իսկ անմիջապէս նոյն նշանով պատասխանեց, կ'իմացնէր որ գործի սկսելու ատենը հասած է։

Յապաղած նաւը տրուած նշանէն ապահով ըլլալով որ մօտենալու վտանգ մը չկայ, քիչ մը ետքը լռիկ և սպիտակ ուրուականի մը պէս երեւցաւ, ու ծովեզրէն հարիւր քայլ գրկաչափ հեռաւորութեամբ խարիսխ նետեց։

Անմիջապէս սկսաւ ապրանքներու տեղափոխութիւնը։

Տանթէս աշխատած միջոցին կը մտածէր թէ իր մէկ խօսքով ուրախութեան ինչ աղաղակներ պիտի բարձրացնէր, այդ մարդոց մէջ, եթէ սրտին և ականջին միշտ բզզացող մտածումը անոնց հաղորդէր։ Բայց ընդհակառակն՝ փոխանակ այդ սքանչելի գաղտնիքը յայտնելու, կը վախնար որ մի գուցէ իր երթեւեկութիւններովը, կրկնակի հարցումներովը, մանրակրկիտ դիտողութիւններովը և իր շարունակական մտազբաղումովը կասկածներ արթած ըլլայ անոնց։ Բարեբախտաբար՝ գէթ այդ պարագային՝ ցաւագին անցեալ մը իր դէմքին վրայ անջինջ տխրութիւն մը դրոշմած էր, և այդ ամպին տակէն երբեմն ընդնշմարուած ուրախութեան նշոյլները փայլակներ էին իսկապէս։

Ոչ մէկը չկասկածեցաւ իր վրայ, և երբ հետեւեալ առտու Տանթէս հրացան մը, գնտակներ և վառօդ առած՝ փափաք յայտնեց իր ընկերներուն թէ կ'ուզէ երթալ և վայրի բազմաթիւ այծերէն մէկը սպաննել, որոնց ժայռէ ժայռ ցատկելը կը տեսնէին, անոնք այնպէս կարծեցին թէ Տանթէս որսորդութիւնը սիրելուն և կամ առանձնութենէ ախորժելուն համար կ'երթայ։ Միայն Ժագօբօ աղաչեց որ ընկերանայ։ Տանթէս չուզեց հակառակիլ, վախնալով որ այդ դժկամակութիւնը կասկած մը չներշնչէ։ Բայց քառորդ մղոն չյառաջացած՝ ուլ մը տեսաւ․ հրացանը պարպելով սպաննեց զայն, և Ժագօբոյին տուաւ որ ընկերներուն տանի, որպէսզի եփեն, և երբ պատրաստ ըլլայ՝ հրացանը պարպելով իմացնեն, միասին ուտելու համար․ քիչ մը չոր պտուղով և սրուակ մը Մօնթէ-Բուլչիանոյի գինիով ճաշերնին պիտի ընէին։

Տանթէս մերթ ետին նայելով՝ ճամբան շարունակեց։ Ժայռի մը գագաթը հասնելով՝ իրմէ հազար ոտք հեռուն տեսաւ որ Ժագօբօ ընկերներուն քով հասած էր, որոնք արդէն նախաճաշին պատրաստութեամբը զբաղած էին փութով, և ինքը ճարտարօրէն կարեւոր համադամ մը աւելցուցած էր անոր վրայ։

Էտմօն գերազանց մարդու մը քաղցր և տխուր ժպիտով անոնց նայեցաւ պահ մը։

— Երկու ժամէն, ըսաւ, այդ մարդիկը յիսուն դահեկան շահելով ասկէ պիտի մեկնին, որպէս զի կեանքերնին վտանգի մէջ դնելով պիտի փորձեն նոյնչափ ալ շահիլ․ յետոյ վեց հարիւր դահեկանի հարստութեամբ մը ո և է քաղաք պիտի երթան, սուլթաններու կամ նախարարներու պէս այդ գումարը վատնելու համար հպարտօրէն։ Բայց այսօր յոյսը ինծի արհամարհել կու տայ անոնց հարստութիւնը, իբր յետին թշուառութիւն մը․ վաղը երբ յուսախաբ ըլլամ, այդ յետին թշուառութիւնը գուցէ գերագոյն երջանկութիւն մը համարելու պարտաւորիմ․․․։ Ո՛հ, ո՛չ, գոչեց Էտմօն, չըկրնար ըլլալ այդ բանը․ անկարելի է որ այն հանճարեղ և անսխալ Ֆարիան միայն այս կէտին վրայ սխալած ըլլայ։ Մնաց որ՝ կը նախընտրեմ մեռնիլ քան թէ շարունակ այսպիսի թշուառ և ստորին կեանք մը վարել։

Այսպէս Տանթէս, որ երեք ամիս առաջ միայն ազատութեան կը փափաքէր, կատարեալ ազատութիւն չստացած՝ հարստութեան կը ցանկար․ յանցանքը Տանթէսինը չէր, այլ Աստուծոյ, որ մարդուս զօրութիւնը սահմանափակելով, անսահման փափաքներ տուած է անոր։

Այսու հանդերձ, երկու ժայռերու միջեւ հեղեղէն փորուած արահետի մը մէջէն յառաջանալով՝ ուր հաւանաբար

մարդկային ոտք մը կոխած չէր, Տանթէս այնպիսի տեղի մը մօտեցաւ որ քարայրներն ըլլալը կ'ենթադրէր: Ծովեզերքին երկայնքը քալելով և մեծ ուշադրութեամբ ամենափոքր առարկաները զննելով կարգ մը ժայռերու վրայ մարդու ձեռքով փորուած նշաններ տեսաւ:

Ժամանակը, որ ամէն նիւթական իրերու վրայ կը ձգէ իր մամուէ վերարկուն ինչպէս բարոյական իրերու վրայ ալ մոռացութեան վերարկուն, կարծես յարգած էր հետք մը ցուցնելու նպատակաւ և կանոնաւորաբար գծուած այդ նշանները: Սակայն տեղ տեղ այդ նշանները աներևոյթ կ'ըլլային մացառներու խուրձերուն մէջ, որոնց ծաղիկները մեծ փունջեր կը կազմէին և կամ իբր մակաբոյծ աճող լօեներուն տակ: Պէտք էր որ Էտմոն ոստերը մէկ կողմ քաշէր կամ մամուռները հանէր, որպէս զի միւս բոյսերուն մէջ տանող նշանները գտնէ: Այսուհանդերձ այդ նշանները յոյս տուած էին Էտմոնի: Ինչո՞ւ կարտինալը պիտի չըլլար զանոնք գծողը, որպէս զի անոնց առաջնորդութեամբը եղբօրորդին գանձը գտնէր մեծ աղէտի մը ժամանակ, զոր չէր կրցած կատարելապէս գուշակել: Այո՛, այդ ամայի տեղը շատ կը յարմարէր գանձը պահել ուզող մարդու մը: Միայն թէ այդ անհաւատարիմ նշանները իրմէ ուրիշ մարդ մը տեսա՞ծ էր արդեօք, և այդ գաղտնի սքանչելիքներ պարունակող կղզին հաւատարմօրէն պահա՞ծ էր իր շքեղ գանձը:

Սակայն Էտմոն, որ միշտ կղզիին բարձր մասերուն կողին, ընկերներէն պահուելով, կը քալէր, գիտեց որ նաւահանգստէն գրեթէ վաթսուն քայլ հեռուն, այդ նշանները դադրեր էին, և ծայրը քարայր մը չկար բնաւ: Միայն կլոր մեծ ժայռ մը կ'երևէր հոն, ամուր հիման վրայ զետեղուած: Էտմոն մտածեց որ փոխանակ վերջը հասած ըլլալու՝ ընդհակառակը սկիզբն էր գուցէ. ուստի իր ուղղութիւնը փոխեց և սկսաւ ետ դառնալ:

Այդ միջոցին ընկերները կը պատրաստէին նախաճաշը, աղբիւրէն ջուր լեցուցած էին, նաւէն հաց և պտուղ բերած էին, և ուլը կ'եփէին: Ճիշդ այն վայրկենին որ շամփուրին վրայէն

կը հանէին զայն, Էտմոնը տեսան, որ լեռնայծի մը պէս թեթևաշարժ ու աներկիւղ, ժայռէ ժայռ կը ցատկէր. ուստի անոր նշան տալու համար հրացան մը պարպեցին: Որսորդը իր ճամբան փոխեց, և վազելով անոնց մօտեցաւ. մինչ ամէն ոք աչքը յառած, անոր աներկիւղութեանը վրայ կը զարմանար, և իրաւամբ կը վախնար, Էտմոնի ոտքը սահեցաւ, ժայռի մը վրայէն վար ինկաւ և ճիչ մը հանելով աներևոյթ եղաւ:

Մէկ խոյանքով՝ ամէնքն ալ վազեցին անոր օգնութեան, որովհետև՝ ամէնքնին ալ կը սիրէին զայն. սակայն ամենէն առաջ Ժագօբօ հասաւ անոր քով:

Էտմոն գետինը պառկած և արիւնլուայ գրեթէ զգայազիրկ. տասներկու կամ տասնըհինգ ոտք բարձրութենէ վար գլորած էր: Բերանին մէջ քանի մը կաթիլ չաքարօղի կաթեցուցին, և այդ դեղը, որ այնչափ զօրութիւն տուած էր անոր, առաջին անգամուան պէս ազդեցութիւն ըրաւ:

Էտմոն աչքերը բացաւ, և յայտնեց թէ ծունկին, գլխուն և կողերուն վրայ անտանելի ցաւեր կը զգար: Ուզեցին մինչև ծովեզրը տանիլ զայն, բայց երբ բռնեցին, թէև Ժագօբօն էր ամէնէն առաջ մօտեցողը, Էտմոն հեծեծալով յայտնեց որ պիտի չկրնայ տեղէն շարժիլ:

Դիւրին է հասկնալ որ Տանթէս չպիտի կրնար նախաճաշը ընել. ուստի խնդրեց որ ընկերները, որոնք իրեն պէս պատճառ մը չունէին ծոմ մնալու, իրենց տեղը դառնան: Իսկ ինքը քիչ մը հանգիստի պէտք ունէր, և իրենց վերադարձին՝ ցաւերը ամոքած պիտի գտնէին:

Նաւաստիները հաւանեցան, որովհետև անօթի էին, ուլին հոտը մինչև իրենց քիթը կը հասնէր. միայն որ՝ ծովու գայլերը զիրար մեծարել չեն գիտեր: Ժամ մը ետքը վերադարձան: Էտմոն ուրիշ բան չէր կրցած ընել, եթէ ոչ տասը քայլ հեռու մամռապատ ժայռի մը մօտենալ քաշքշուելով:

Բայց Տանթէսի ցաւերը փոխանակ հանդարտելու աւելի սաստկացեր էին: Ծերունի նաւապետը, որ ստիպուած էր այդ առտու ճամբայ ելլելու, որպէս զի իր նաւուն բեռը Բիէմոն-

Թէի և Փրանսայի սահմանները հանէ, Նիսի և Ֆրեժիւսի միջև, աղաչեց Էտմոնին որ ոտքի ելլելու ջանայ։ Տանթէս գերմարդկային ճիգեր ըրաւ, բայց ամէն անգամուն ալ ցաւագին ձայներով և գունատած վար կ'իյնար։

—Կողերը խորտակուած ըլլալու է, ըսաւ կամաց մը նաւապետը, բայց ի՛նչ ընենք, լաւ ընկեր մըն է, և պէտք չէ զինքը հոս թողուլ. ջանանք նաւը տանիլ զայն։

Բայց Տանթէս յայտարարեց որ կը նախընտրէր եղած տեղը մեռնիլ քան թէ ամենաթեթև շարժումներով իր տեղը փոխելու ատեն՝ սաստիկ ցաւեր կրել։

—Շատ աղէկ, ի՛նչ կուզէ թող ըլլայ, ըսաւ նաւապետը, բայց ես չեմ ուզեր որ ըսուի թէ ձեզի պէս լաւ ընկեր մը առանց օգնութեան ձգած ենք։ Ուրեմն իրիկունը ճամբայ կ'ելլենք։

Այս առաջարկը շատ զարմացուց նաւաստիները. ո՛չ մէկը ընդդիմացաւ։ Նաւապետը այնչափ խիստ մարդ մըն էր որ առաջին անգամն էր որ ձեռնարկէ մը ետ կը կենար և գործը կը յետաձգէր։

Բայց Տանթէս չուզեց որ իր պատճառաւ նաւուն կարգապահութեան հակառակ օրինազանցութիւն մը ընեն։

—Ո՛չ, ըսաւ նաւապետին, ես ձախաւեր գտնուեցայ, ու պէտք է որ պատիժը կրեմ։ Քիչ մը պաքսիմատ, ուլեր մեռցնելու և ինքզինքս պաշտպանելու համար հրացան մը, վառօդ և գնդակներ տուէք ինծի, և բրիչ մը, որ եթէ ուշանաք գիս առնելու համար, տունի պէս բան մը շինեմ հոս։

—Բայց անօթութենէ պիտի մեռնիս, ըսաւ նաւապետը։

—Կը նախընտրեմ մեռնիլ, պատասխանեց Էտմոն, քան թէ տեղէս շարժելով՝ անլուր ցաւեր կրել։

Նաւապետը նաւուն կողմը ուղղեց աչքերը. նաւահանգրուանին մէջ առագաստները բանալու և ճամբայ ելնելու պատրաստութիւնները կը տեսնէր։

—Վերջապէս ի՞նչ կ'ուզես որ ընենք, Մալթացի, ըսաւ նաւապետը. չենք կրնար այսպէս հոս թողուլ քեզ, սակայն չենք ալ կրնար հոս մնալ։

—Գացէ՛ք, գացէ՛ք, պատասխանեց Տանթէս։

—Ութ օրէն առաջ պիտի չկրնանք դառնալ, և քեզ գալու առնելու համար ալ պէտք է շեղինք մեր ճամբէն։

—Մտիկ ըրէք, ըսաւ Տանթէս. եթէ երկու կամ երեք օր յետոյ ձկնորսի և կամ այս կողմերը եկող նաւու մը հանդիպիք, յանձնարարեցէք որ գան զիս առնեն։ Զիս Լիվորնօ տանելու համար՝ քսանըհինգ դահեկան կուտամ. իսկ եթէ մէկը չգտնէք՝ դուք եկէք։

Նաւապետը գլուխը ցնցեց։

—Մտի՛կ ըրէք, նաւապետ Պալտի, ուրիշ յարմար միջոց մը կայ, ըսաւ Ժագօբօ. դուք գացէք, ես վիրաւորը դարմանելու համար քովը կը մնամ։

—Հոս մնալով բաժինէդ ե՞տ պիտի կենաս, ըսաւ Էտմոն։

—Այո՛, ըսաւ Ժագօբօ, և առանց ցաւ զգալու։

—Ազնիւ սիրտ մը ունիս Ժագօբօ, ըսաւ Էտմոն, և Աստուած բարի կամեցողութիւնդ կը վարձատրէ. բայց ես մարդու պէտք չունիմ. շնորհակալ եմ. մէկ-երկու օր հանգստանալով պիտի առողջանամ, և կը յուսամ թէ այս ժայռերուն մէջէն կարենամ քանի մը օգտակար խոտեր գտնել մարմնոյս վէրքերուն համար։

Տանթէսի շրթունքներուն վրայ տարօրինակ ժպիտ մը երևցաւ. փղձկումով սեղմեց Ժագօբոյին ձեռքը. բայց հոն և առանձին մնալու դիտաւորութեանը վրայ հաստատ մնաց։

Մաքսանենգները Էտմոնին ուզածը թողուցին, և անկէ բաժնուեցան յաճախ ետևնին դառնալով, և ամէն անգամուն մտերմական նշաններով մնա՛ս բարով կը գոչէին. Էտմոն ձեռքովը կը պատասխանէր, իբր թէ մարմնոյն միւս մասը չկարենար շարժել։

Ու երբ աներևոյթ եղան,

—Զարմանալի բան որ, մրմնջեց Տանթէս ծիծաղելով, այս կարգի մարդոց մէջ այս տեսակ բարեկամութիւն և անձնուիրութիւն կարելի է գտնել։

Այն ատեն ծովին տեսքը իրմէ արգիլող ժայռին գագաթը

զգուշութեամբ ելլելով, տեսաւ որ նաւուն բոլոր ուղեւորները պառկելով, խռմփոցը կը քաշէին եւ ան կը սկսէր օրօրուիլ շնորհալիօրէն թռչող որորի մը պէս։

Ժամէ մը ետքը բոլորովին անհետացած եղաւ ան կամ գէթ վիրաւորեալին գտնուած տեղէն անկարելի էր տեսնել զայն։

Տանթէս այծէ մը աւելի թեթեւաշարժ եւ ճկուն՝ մրտենիներուն եւ հերձիներուն մէջէն ժայռերուն վրայ ցատկեց. մէկ ձեռքով հրացանը առաւ, միւս ձեռքով բիրը, եւ վազեց այն ժայռին քով, ուր իր տեսած նշանները կը վերջանային։

—Հիմա, գոչեց Տանթէս Ֆարիայի կողմէ իրեն պատմուած արաբացի ձկնորսին պատմութիւնը յիշելով, հիմա, ո՛վ Սէզամ, բացուէ՛։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻՆ

ԳԼԽՈՒԽՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

Գլ.		Երես
Ա.	Փարաոն նաւը	3
Բ.	Հայրը եւ որդին	15
Գ.	Գաթալանները	24
Դ.	Դաւադրութիւն	38
Ե.	Նշանտուքի ճաշը	46
Զ.	Ընդհանուր դատախազին օգնականը	62
Է.	արցաքննութիւնը	76
Ը.	Իֆ դղեակը	91
Թ.	Նշանտուքի իրիկունը	106
Ժ.	Թիւիլըրիի պալատին փոքրիկ դահլիճը	115
ԺԱ.	Գորսիքայի գազանը	126
ԺԲ.	Հայր եւ որդի	137
ԺԳ.	Հարիւր օրեր	146
ԺԴ.	Կատաղի բանտարկեալը ու խելագար բանտարկեալը	158
ԺԵ.	34 թիւը եւ 27 թիւը	173
ԺԶ.	Հանճարեղ իտալացին	195
ԺԷ.	Աբբային սենեակը	207
ԺԸ.	Գանձը	233
ԺԹ.	Ջերմին Գ·րդ նոպան	249
Ի.	Իֆ դղեակին գերեզմանատունը	262
ԻԱ.	Թիպուլեն կղզին	268
ԻԲ.	Մաքսանենգները	284
ԻԳ.	Մոնթէ-Քրիսթօ կղզին	294

3.—

ՀՀ Ազգային գրադարան
NL0319111

5702

84
7--60